

# УКРАЇН



Г. Крізьман  
9 1893

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|  |  |        |
|--|--|--------|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ   |  |        |
| ՈՒՆՔԻՆԵԱՆ ՀԱՐՄԱՆԸՆԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՀԻՆգՀԱՐԻՎՐԱՄԵԱԿԻ<br>առթիւ, Ս. Գուլամիլյանց . . . . .                 |  | 3      |
| ՍՊԱԼՈՐ ԿԻԼԵԼիա, Օչն. . . . . . . . . . .   |  | 16     |
| ՏԵՂԱԳՐԱԿԱՆ   |  |        |
| ՄԻ ՔԱՆԻ Խօսք ՋԱւախիք զաւտոի մասին. Ա. Բ. . . .   |  | 17     |
| Ս. ՄԵԽՐՈՎ ԹԱՐԳՄԱՆՔ ԿԿԵՂԵՋԲԻՆ.   «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՄԱՆԸՆԹԵԱՆ» բաժնի մէջ:                                |  |        |
| Ս. Թովմայ առաքելոյ վանքը . . . .   |  |        |
| ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  |  |        |
| ԵՐԱԿ Թէ Ճշղրիտ, Պ. Պուշկանց . . . . .  |  | 33     |
| ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԹԻՒՆՆԵՐ  |  |        |
| ՔՇԵՐԵՂԲԱՅՐ, ՀԱՅ-ԱՆՁն. . . . . . . . .  |  | 52     |
| ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՄԱՂԵԼ, Առելուի հասկալիւան. . . .  |  | 54     |
| ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՈՄԻՒ, „ „ „ . . .   |  | 56     |
| ԵԱ Ուղեցի Տաղիկներով, ՈՆԿԵՐԵՍ ԱՆԿԵՐԵԱՆ. . . .  |  | 112    |
| ԾԱՆՐԸ ԹՄԱԼԻԾ պատեց Հողուս, „ „ . .   |  | 120    |
| ԿԵՆԱՍԱԿԱՆ  |  |        |
| Տ. Խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյ.   |  |        |
| Բ. Գրական մարդը, Առելու. . . . .   |  | 57     |
| Տիկ. Սաթենիկ Զմշկեան, Կռնչցի. . . . .  |  | 105    |
| ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ   |  |        |
| Ֆ. Դօստուսկի. Ցիշատակարան մէռեալ տանից.  |  |        |
| (Յաւելուածում). Գլուխ Դ., Եռաջին տպաւութիւններու գլ. և Զ. Առաջին ամփու. (Աշ շարուանակութ). . . . . |  | 73—134 |
| ՄԱՏԵՆԱԽՈՍԿԱՆ   |  |        |
| ԹՐԵԱՀԱՅ զրահանութիւնը 1893-ին, Առելու. . . .   |  | 113    |
| Ա. Զ. Գ. Ա. Յ. Յ. Ե. Ա. Ս. Կ. Ա. Ր. Ա. Ն. . . . .  |  | 121    |
| Նորին Վեհ. Տ. Տ. Մկրտիչ Ս. անդրանիկ կոնդակը  |  |        |
| (Պատրաստուած աւաստիպական միջոցով):   |  |        |
| ԳԵՂԱՐՈՒԿԵՍԱԿԱՆ   |  |        |
| Այս զրքի նկարների մասին, Լ. Մ. . . . .   |  | 1—8    |
| ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ  |  |        |



# Ա Ր Ա Գ Ս

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ  
ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1893

ԳԻՐՔ Բ

Հ Յ Ա Գ Ե Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ե



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՏՊԵՐԱՆ Յ. Ի. ԼԻԲԵՐՄԱՆ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Декабря 1893 года.


---

Паровая Скоропечатня Я. И. Либермана, [Вознесенский пр., № 38-4].



A large, ornate signature in cursive Gothic script, likely belonging to Patriarch Mkrtich I. The signature is highly decorative, with many loops and flourishes.

Верховный патріархъ и католикосъ всѣхъ армянъ  
Мкртичъ I.



oo

ll

rr

rr

uu

sh

ss

ll

rr

ll

rr

ll

rr



ԿՐՏԻՉ ՆՎԱՒՅՑ ՔՄԴ ԵՒ ԱԱՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈԳՆ ԱՅ ԵՊԻՄՊՈՍԱԳԵՏ ԵՒ  
ԱՄԵԽԵ ՀԱՅՈՅ ՆԵՑՑՈԳՈՅ ՊԱՏՐԻՑՐՔ ՀԱՄԱԳՈՅԿՈՅ ՆԱԽԱՏԵՇՈՐ ՍԹՈՌՈՅ ԱՐԱԲԵԿ  
ԱԹԱ-ԳԵԼԵԿՈՅ ՄՈՅԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԵԿԵ ԵԶՄԻՄԾԵՒ

Ա. ՁԻՇՆ. Քեզ Առաքելական Նէկրոգի Հայութանեացյ Թագէսուի Բարգովովիմուն և Գրիգորի աւելացառանան ծննաբ ի Քրիստո առաւել և պարտական Հայութան Առաւելացառան և անոն Ա. ՁԻՇՆ. Քայլ Սիօն Հայութ Առաւելացյ Երկու երեսներու մէջ աշխարհական ան իրաւ ինքներէն մի սկսաւ անօնի մը մաս զարդու և գոյսեա ընդ քարարուա կելէ՞ առապար այշաբին, այնիւ նոյն իդ կարծեցին մարդիկ թէ խապա

Ուղարկեցի Զելի, քաշանայք Խորդություն, Աստավայք, ու մատուկարտ էք առեք Խորհրդայ Նիկուղայուն, զատարագրած և պաշտամ Ընտառիկան որութիւնն առ գիրքի թէ մեջ մեջ է պատուն ձեր Ուղարկեցի Զելի Աստավայք, որ խոնակ արինեած առաք Անեանուն Աստաւայք և մատուկարտ էք որոյն և ապահով, իշխանց դաստ ասրկաւան մեջն Նիկուրի ննանց ը Խորդ ննանց զովուրդ Հայոց և գիրքի թէ քանի յառ բազմացին և բարդ-պատիք էն չսի և կը պարաւուն Այ Ան մին Հաստին կամ ի ծերութիւն և անապատ զեօթասառան ամս մինչ եռա շվեր կիսակ այլքն ածին ինձ ուսուցի, ին կարստի թէ կարստի զանցափ պարու զնեն փարաման առազադին լափուն զոր ինչ աւանդեա ի ձեր ու պաշաճ շատ ասրկաւան մեջն Նիկուրի ննանց ը Խորդ ննանց պարագին և պարագին ին առաք ապահովունքն

արար չեմ ընդ իս և գիտեք արդեն զի հոգածեցաւ ընդ ամենան աշխարհէ  
Այ ըրբէ կամին մարդուի ամբողջ առևտ Տէրը ոյ պրոբի թիզ կամ և ով կործ հասաւ լինէլ անդնդն  
խորհուց նորաւ զի ո գտան զիշտա ենաւ և ո եղաւ նոն խորհութիւնը թէ խելամուտ արարտ զնաւ  
Սկզ փորբի և կրտսէ իք ո մէջ եղորդ և արտեհի զիմ փորբի համ ի թամաւ արարաւ առ Հօն

Դիմուա սնցըթեմիկ լուսակար օրինաւունեան թ 15 դեկ. 1893 ամի քրիչական և ըստ աօմարին ԱՅԵ  
Հ Մայր Աթոռ Հայոստանեաց թ Ա. Լուրիանին

Համարական Յ.Յ. Ավրամի Տ. առիրասրկ կուլտագ  
Հյանաբարձութեան «Արքան» հանդիսէ.







## ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՈՒԽԻՒՆԵԱՆՑ ՀԱՐՄԱՆԻԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՀԻՆԳՆԱՐԻՒԹԵԱԿԻ ԱՐԻԹՈՎ

1393—1893

Սերկայ 1893 թուականի նոյեմբերի 17-ին լրացաւ 500  
տարի այն օրից, երբ Կիլիկիոյ Հայոց իշխանութեան վերջին  
թագաւոր Լևոն Զ-ը՝ երկար տարիներ Եւրոպայում անցոյս  
գեղերելուց յետոյ՝ վախճանուեցաւ Փարիզում, որով և բար-  
ձաւ Ռուբենեանց թագաւորութիւնը:

Կիլիկիոյ Հայոց հարստութիւնը, իր դիւցազնական ըս-  
կղընաւորութիւնից մինչև եղերական վերջաւորութիւնը, մի  
խօսքով՝ իր երեքհարիւր տարուայ տևողութեան ընթացքում,  
այնքան կարեւոր դեր է խաղացել և մեծ նշանակութիւն ունեցել  
ընդհանուր հայութեան համար, որ մեծ իրաւամբ արժէ շարու-  
նակ մեր հետաքրքրութեան խնդիրներից մինն էլ այդ գարձնել  
գէթ մերձակայ անցեալի ուսումնասիրութեան տեսակէտից:

Կիլիկիոյ Հայոց պատմութիւնը, կամ՝ ըստ Հայր Ալեքանի՝  
Սիսուանի, խիստ հետաքրքրական է մեզ համար նաև թէ  
իր յարաբերութիւններով խաչակիրների հետ, որոնց Ռու-  
բենեան թագաւորները նշանաւոր ծառայութիւններ են ա-  
րել թէ այն հազորդակցութիւններով և խնամական կապե-  
րով, որ տեղի են ունեցել Լուղինեան տոհմի հետ, թէ Կի-  
լիկիոյ առևտրական յարաբերութիւններով ձենովայի հա-  
սարակապետութեան հետ և թէ վերջապէս այն կրօնական  
կնճռոտ հազորդակցութիւններով, որ ունեցել է նա Բիւզան-  
դիոնի կայսրների և Հռովմի պապերի հետ:

Սակայն, չընայելով այս բոլորին, մեր արդի կեանքը այնպիսի մի անդոյն կերպարանք է առել ներկայումս, որ ոչ միայն այսպիսի կարեոր հարցերով կամ ուսումնասիրութիւններով զբաղուղներ չըկան, այլ երկար տարիներով առաջ մի երկու հողի եղածներն էլ այնպիսի գյու են տուել իրենց խիստ միակողմանի գործին, որ նոյա աշխատասիրութիւնները միայն ամենանեղ մի շրջանի համար են գոյութիւն ունեցել այն ինչ հասարակութիւնը, որի համար իսկապէս աշխատելու էր այդ գործերը հանդէս բերել միանգամայն անձեռնշատ է այդ բոլորից օգտուելու, ուստի և նորա համար բնաւ գոյութիւն չունին այդ հրատարակութիւնները:

Եյսպիսի մի անուշադրութիւն, ինչպէս ասեցինք, գեռ հասկանալի է դառնում մեր կեանքի սովորական պայմաններում, բայց միանգամայն անհասկանալի և նոյն իսկ աններելի է այժմ, երբ բոլորում է այս տարի Կիլիկիոյ զահի անկրման 500-ամեակը: Հայոց գրականութիւնը, հայ մամուլը, ոչ միայն այս առթիւ լսու չհանեց մի կարգ հրատարակութիւններ կամ զրութիւններ, այլև այս կարեոր 500-ամեակը ուշադրութեան չառնուեց և ոչ մի պարբերական թերթում, որ գեթ անհրաժեշտ մի պատճառ զառնար մեր անտարբեր և իր անցեալին միանգամայն անտեղեակ ժողովրդին ծանօթացնել նուրինեանց այնքան հրահանգիչ կենաց հետ:

Եյս պակասը հայոց մամուլի մէջ վատահանում ենք լրացնել մենք, թէև, ստիպուած ծանրակշիռ պայմաններից, կատարում ենք մեր այս բարոյական պարտականութիւնը թերի:

\* \* \*

Զարմանալի երեսյթներ են պատահում երբեմն աշխարհիս երեսին: Եյսպիսի մի երեսյթի յայտարարն էլ ներկայանում է Կիլիկիոյ հայոց իշխանութիւնը:

Այն միջոցներում էր Բագրատունեանց թագաւորութիւնը իւր վերջին փոթորկալից օրերն է անցկացնում և Վեստ Սարգսի ու այլոց մասնութեամբ անգունդը խորտակվում (1045) Գաղիկ թագաւորի եղերական վախճանով հան-

գերձ, երբ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը փոքրոգութեամբ Արծրունեաց զահը Բիւղանգիոնի Շիրաններին է զոհ թողնում (1021), երբ Կարուց Հայոց թագաւորութիւնն էլ միայնակ մնալով անձարացած նենգաւոր յօն կայսրութեանն է յանձնվում (1065), և այդպիսով Հայի երկիրը, Հայ ժողովուրդը յօնների ու արիւնարբու մահմետական հրոսակախմբերի անդժութիւններին է մատնվում—ահա, այդ ժամանակ, հեռվում, Փոքր Ասիոյ Հարաւ-արեւելեան մասում, ուր մի կողմից Տորոսի երկնասլաց լեռներն են ամբառնում վերև՝ կորչելով ամպերի մէջ, իսկ միւս կողմից Միջերկրականի գեղածիծաղ ծովափունքն են այդ երկրի բնութիւնը գեղազարդում ու նորան փառաւոր ապագայ խոստանում, ահա այգտեղ Ուշնիոյ այդ խրոխտ ու անառիկ լեռներում, Կօլմօզօլայի բարձրունքների վերայ, առաջին անգամ, 1080 թուականին, սկսում է ծածսնել Ռուբինեանց պանծալի գրօշակը Ռուբէն դիւցաղնի քաջութեան շնորհիւ:

\* \*

Կիլեկիան, ուր Կոռիսոսի ամրոցի մսող կայծից 1080 թ. բռնկուց Տաւրոսի լեռնաշղթայն ու այնուհետեւ բովանդակ երկիրը, ինչպէս յիշեցինք, գտնվում է Փոքր Ասիոյ Հարաւ-արեւելեան մասում, պարփակուած գոլով լեռների գոտիներով, բերրի դաշտերով և վերջապէս լայնաստրած ծովով։ Այս երկիրը բաժանվում է երկու մասի՝ Դաշտային և Քարային, որոնցից առաջինը կազմում է Հարաւ-արեւելեան մասը, իսկ երկրորդը արեմտեան, Գէօք-սիւ գետի հովիար։ Ոռոգվում է նա չորս գլխաւոր գետերով՝ Միհուն, Ճիշան, Գէօք-սիւ և Թարսուսայ, որոնք վազում են Տաւրոսի ցրտաշունչ բարձունքներից։ Միջերկրականի ծովափիը տարածուած՝ Կիլեկիան 300 մղոն երկարութիւն և 60—70 մղոն լայնութիւն ունեցող մի երկիր է ներկայանում։ Նորա սահմանները հնումը միշտ միենոյնը չեն եղած. երբեմն ընդարձակվում էին, երբեմն սահմանափակվում։ Այս կախուած էր Ռուբինեանց Հարստութեան իշխողների մասնաւոր յատկութիւններից. սակայն ընդհանրապէս Կիլեկիոյ սահմանները համարվում էին՝ հիւսիսից Փո-

քըզ հայք, արևմուտքից Պամփիւլա և Փռիւգիա, արևելքից  
Ասորիք, Հարաւից Միջերկրական ծովը, որի մի մասը՝ Կիլի-  
կիային կից՝ Հնումը կոչվում էր Կիլիկիոյ ծոց՝ նաև ծով:

Կիլիկիան, շնորհիւ իւր աշխարհագրական բացառիկ զիր-  
քին—գտնուելով Եւրոպիոյ, Ասիոյ, Ափրիկէի սահմանների  
համարեա միջավայրում—և բնութիւնից առատ օժառուած իւր  
տեղագրութեան, գեռ ամենահին ժամանակներից իւր վերայ  
է դարձրել աշխարհակալ ազգերի մասնաւոր ուշագրութիւ-  
նը և դարերից ի վեր կարեոր դեր է խաղացած ընդհանուր  
ազգերի պատմութեան մէջ ընդհանրապէս, իսկ հայ աղղի  
մասնաւորապէս:

Կիլիկիոյ լեռնային դիրքը, նորա ապառաժուտ գահավէժ-  
ները, անձուկ՝ գժուարակոխ մութ ձորերը և բազմախիտ ան-  
տառները իրօք որ այս երկիրը զիւցազների աշխարհ են  
դարձրել, ուր մէկը միւսից անվեհեր, քաջ ու զօրաւոր ազ-  
գեր յաջորդաբար այստեղ են արշաւել և գիւցազներգական ար-  
կածներով յաւերժացրել իրենց անցեալ յաղթապանծ աի-  
րապետութիւնը:

Կիլիկիոյ Հնագոյն պատմութիւնը կամ բնաւ յայտնի չէ  
մեղ կամ թէ յերիւրուած է առասպելախաւոն արկածներով։  
Պէտք է ենթագրել որ այս երկիր հնագոյն տիրապետողները  
եղել են թուրանցիք, որոնք հին աշխարհի ամենաառաջին  
տիրապետողներն են եղել դարերով, յետոյ փիւնիկեցիք, որոնց  
ժամանակ հայերը առեատրական յարաբերութիւն են ունեցել  
Կիլիկիոյ հետ, ուր հայաստանի ջորիները և ձիերը ամենա-  
աչքի ընկնող ապրանքներն էին կաղմում։ Թուրանցիներից  
և փիւնիկեցիներից յետոյ այլ և այլ ընդմիջումներով յաջոր-  
դաբար հանդէս են եկել ասորեստանցիք, մարք, պարսիկը,  
սելեկացիք, հռովմայեցիք, յոյնք, եզիպատացիք, արաբացիք, և  
վերջապէս դարձեալ յոյնք, ու սելջուկեան մահմետականք՝ ֆԱ.  
դարում, երբ արդէն Կիլիկիան փոքր առ փոքր անյնու մէ է  
հայոց իշխանութեան ներքոյ մինչեւ ժԴ դարու վերջերը, երբ  
այդ ժամանակ զօրացող մամլուքները մահացու հարուած  
են տալիս հայոց անկախութեանը, և Կիլիկիան ձգում իրենց

ձեռքը, մինչև որ Կոսնեայի սելջուկեան սուլթանութիւնը զօրանալով թուրք կամ տաճիկ անուան ներբռյ, խլումէ Կիլիկիան մամլուքներից և տիրումնորան մինչև մեր օրերը:

Սակայն եղել են միջոցներ, երբ Կիլիկիային տիրել են կարծ ժամանակով և այլ իշխողներ, ինչպէս Աղէքսանդր Մակեդոնացին 333 թ. նախ քան Քրիստոս, Հայոց Արշակունի Մեծն Տիգրան՝ Միհրդատի օրով 62 թ. և նոյն իսկ Կիլիկիոյ վրանաբնակ բնիկները, որոնք յառաջ են գալիս Սեմի ցեղեց, և այլ պելասգեան ազգեր ժամանակ առ ժամանակ կառավարուել են ինքնազլուխ և ունեցել են իրենց բնիկ իշխողները. այսպէս Քրիստոսից վեց (618) նաև մի դար առաջ, կամ նոյն իսկ 68 թ. նախ քան Հռովմայեցիներից նուածուելը, այս երկիրի անզուսապ լեռնականները յայտնի էին արդէն, որպէս յանդուզն ծովային աւազակներ, որ իրենց բաղդախնդիր արշաւանքներով սարսափ էին ազգում մինչև Խտալիոյ սահմանները:

Այս է աշա՝ Կիլիկիոյ պատմական վիճակը ընդհանրապէս: Սակայն այժմ անցնենք այն շրջանին, որը ծանօթացնում է մեղ յաջորդաբար ընթանալով այս երկրի այն դրութեան հետ, որի մեջ մենք գտնում ենք նորան ԺԱ. դարու սկզբներում, երբ մի քանի աշխարհակալ ազգերի հետ հայերը ևս՝ որպէս զօրացող ու նուածող մի ժողովուրդ՝ մուաք են գործում Կիլիկիոյ սահմանները:

\* \* \*

Մեղ իհարկէ հետաքրքրական է կանգ առնել Հայոց արշաւանաց վերայ դէպի Կիլիկիա: Բայց փոքր ի շատէ պարզելու համար Հայոց յառաջխաղացութիւնը դէպի այս նոր երկիրը, որ յետոյ մեղ համար մի նոր Հայրենիք դարձաւ, խիստ կարեոր է ընթերցողին ներկայացնել Կիլիկիոյ այդ միջոցի ժամանակակից կամ նորա մերձաւոր քաղաքական վիճակը, որպէս զի աւելի հասկանալի լինի մեր շօշափած պատմական խորհրդածութիւնը: Բայց, յաւում ենք, որ այս մասին մենք զանազան հեղինակների գրուածքներում որոշ ոչ մի փաստ, ոչ մի տեղեկութիւն չենք գտնում, մտնաւանդ՝ ոչ մի տեղ այս առթիւ ուսումնասիրական մի ակնարկի չենք

պատահում; թէ իրօք Ասիոյ այս մասը իր սահմանակից երկիր-ներով մի որոշ ժամանակամիջոցում ո՞ր ազգի կամ ցեղի ձեռ-քին էր բանվում, ե՞րբ, ո՞ր թուականներին են մուտք դործում՝ և թէ այդ ցեղերը կամ ազգերը ի՞նչ որոշ սահմանների, հողերի էին տիրապետում և այլն. այս բոլորի մասին հանրածառաջըն և հաստատ վկայումներով տեղեկութիւններ, ուր մնաց ճանրագննին հետապնդութիւններ, ոչ մի հեղինակի մօս չենք գտնում, ոչ եւրո-պացոց \*) և ոչ մերոնց, թէե այս բանը աւելի մեր հայ պատմա-գիրների կամ բանասէրների մանրամասն հետազօտութեան ա-ռարկան պէտք է լինէր:

\* \*

Հայոց զրուածքներու մ ուշալրութեան արժանի ներկա-յանում է անշուշտ պատկառելի ծերունի Հ. Ա. Ալիշանի նշանաւոր «Սիսուանը», ուր մեծ խնամքով ի մի է ժողո-վուած այն բոլոր տեղեկութիւնները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապ ունեն Կիլիկիոյ պատմութեան հետ: Բայց թէ այս առաստ պաշարը, այս մեծադիր հատորի անհուն տե-ղեկութիւնները այնուամենայնիւ ոչ մի որոշ և հաստատ գիտնական լոյս չեն սփուռում Կիլիկիոյ ժամանակակից վիճակի վերայ. և այս էլ սպասել անկարելի էր, ինչու որ Հ. Ալիշանի սոսկ նպատակն է եղել հաղորդել միայն հայ զրականութեանը այն ամենը, ինչ որ նա կարողացել է մեծ դժուարութիւններով ժողովել Կիլիկիոյ մասին բաղմնթիւ աղբեւրներից, թէ ազ-գային և թէ օսարազգի, որի համար ի հարկէ իւրաքանչիւր հայ չէ կարող իւր շնորհակալութիւնը չայտնել յարգելի ծե-րունուն. բայց այնուամենայնիւ Հայր Ալիշանը իր որոշ աշ-խարհահայեցողութիւնը յայտնած չըլինելով իւր այնքան մեծ հոգածութեամբ ժողոված նիւթերի և ճառելի խնդրի մա-

\*) Վերերի բազմահատոր ընդհանուր պատմութիւնը, թէե շօշափում է փո-քը ինչ մանրամասնորէն այս կէտերը, բայց և այնուեղ նմանապէս խիստ մութ, չը-պարզուած կողմեր կան, մանաւանդ որ հայոց տիրապետութեան մասին Կիլիկիայում, որ այնքան նշանաւոր գեր են խաղացել այդ պատմական շրջաններում, գեթ հա-րեանցի տեղեկութիւններ չկան, այլ միայն հատ ու կտոր նախադասութիւններ Քող Ասու, Թորոսի, Մլեհի մասին և այլն: Նյուպիսի վերաբերութիւնը եթէ Կիլիկիայում երեք դար իշխող հայոց նման յայտնի գեր խաղացող ազդի համոր է, այնուհետեւ տարա-կուսելի է թէ միւս տեղեկութիւնները որպան բացարձակ ճշգրտութիւն են ունենալու:

սին, «Սխուանը» ևս ներկայ գէպքում որոշ լոյս չէ տալիս մեզ: Այսպիսով, հասկանալի է, որ մենք մեր մի երկառղ գրութեան համար անկարող լինելով օգտուել ու և է մի հեղենակից բաղմակողմանի կերպով պարզելու համար Կիլիկիոյ ժամանակակից քաղաքական կեանքը զիտական փաստերով, պարաւորուած ենք հաղորդել միայն այն տեղեկութիւնները, որոնք այս ու այն եղանակաւ հասել են մեզ մինչև այսօր: Պէտք է այսաւեղ միջանկեալ ասենք, որ մինչև վերջին օրերը մեր Էռլը հեղինակները, որոնք մի ու և է առիթով զրած են եղել Կիլիկիոյ անցեալի մասին, միշտ այս երկրի ամենահին արբապետողներին համարել են փիւնիկեցիներին, այն ինչհիմա անժխտելի է, որ այս երկրի առաջին տիրապետողն եղել է մի ազգ, որին սովորաբար այժմ կոչում են թուրանցիք, որոնք փիւնիկեցիներից գեռ շատ առաջ երկար ժամանակ տակնուվերաց էին անում բոլոր Ասիան: Պէտք է յուսալ, որ փոքր առ փոքր կը պարզուեն Կիլիկիոյ պատմութեան մէջ և այն բաղմաթիւ կէտերը, որոնք մինչեւ այժմն մեզ համար պարզ չեն, քանի որ հետազոտողների բացարձակ բացակայութիւն է տիրում ներկայումն այս խնդրի մասին: Այժմ վերադառնանք մեր նպատակակէտին:

\* \* \*

Այսպէս, նախ քան խօսելը հայոց տիրապետութեան մասին՝ պատմական մեծ հետաքրքրականութիւն է ներկայացնում շօշափել այն մերձաւոր շրջանը, որի՝ հետեանքն է Կիլիկիոյ ԺԱ. գարու վիճակը, երբ միանգամից մի քանի զօրաւոր ազգեր այսաւել են արշաւում յագուրդ տալու թէ իրենց վայրենի քաջութեանը և թէ զայրացած աղքային վրէժինութեանը, որպէս զլսաւոր պատճառը եղան հայոց թշուառութեանը բուն հայրենիքում և նրանց սրտամորմոք գառն աղէաներին:

\* \* \*

Հռովմէական մեծ պետութեան բաժանուելուց յիտոյ, 385 թ., Կիլիկիան անցնում է Բիւզանդիային, որը տիրում

է մի քանի գար շարունակ: Ե գարու առաջին կիսում (638թ.) նուածում են արաբացիք, որ այդ միջոցներում Ասիյ աշխարհակալ ազգերից մինն էին Հանդիսանում և քիչ էր մնում, որ կոստանդնուպոլիսը առնելին ու բովանդակ Բիւզանդիան նուածէին 668 և 718 թ.: Այս ժամանակներում ամբողջ Պաղեստինը, Սիրիան, Ասորիքը և Եգիպտոսը արդէն հեծում են արաբների իշխանութեան ներքոյ: Բայց փոքր ինչ յետոյ թ գարու վերջերից սկսեալ Վասիլ Նիկիփոր Փոկաս և Յովհաննէս Զմշկիկ կայսրների օրով Բիւզանդիան նորից փոքր առ-փոքր նուածում է Կիլիկիոյ քաղաքներին և 971 թ. Ատանայի ու Տարսոնի առնելովը բովանդակ երկիրը անցնում է յունաց, իսկ արաբացիք այս կողմերում պահում են իրենց ձեռքում Իկոնիան և Փուխդիան: Այս յաղթութիւնից յետոյ յոյները այնուհետև մեն միայնակ տիրում են Կիլիկիային մինչև Ժ. գարու կէսը:

Ուստի նախ քան արևելքից և արևմուտքից նորանոր ազգերի յառաջնաղացութիւնը դէպի Կիլիկիա, այստեղ հօթ գար շարունակ տիրապետում էին յոյները և ապանակ արաբացիք:

Աշա այս ժամանակամիջոցում, Ժ. գարում, բովանդակ Փոքր Ասիան ընդհանրապէս, իսկ Կիլիկիան իր սահմանակից երկրներով մասնաւորապէս, մեծ յեղաշրջումն է կրում և նետերի ու սուսերի արհաւիրքը տեղում են այս երկրի զանազան մասերում:

Այսպէս՝ Ժ. գարու սկզբներում, երբ Կիլիկիան գտնվում էր յոյների իշխանութեան ներքյ, արևելքից յառաջ են խաղում դէպի Կիլիկիոյ սահմանները մի քանի նորագոյն ազգեր, որոնց մէջ աշխարհակալ ու աշխարհաւէր սկիւթացիք իրենց ասպատակութիւններով մեծ սարսափ են ձգում Կիլիկիոյ տէրերի և ազգաբնակութեան վերայ: Սկիւթացոց Մելլո-էւան մեծ ցեղը Կիլիկիայում բաւական հողեր ու ամրութիւններ է յափշտակում յոյներից և դեռ Իկոնիայում իշխող արաբներից: Տիրապետելով նաև Նիկիային, սելջուկեան թուրքերը 1072 թ. հաստատում են իրենց սուլթանութիւնը, որի մայրաքաղաքը սկզբում Նիկիան էր, իսկ 1107 թուա-

կանից՝ Իկոնիան։ Սոքա Կիլեկիայում խլում են և Տարտոնը, ուր այդ ժամանակ իշխում էին Հայազգի Ապլղարիպեան Արծրունիք Բիւղանգիշ կայսեր հրամանաւ։ Սելջուկեանց մի ճիւղը զիմում է զէպի Պաղեսաբին, Սիրիա (1075—80) և նուաճում է արաբներից այդ երկիրներն էլ։ Սելջուկները յետոյ Հաստատվում են Ասորիքում և դորանից յետոյ Նաեւ Եղիպատոսում (1090թ.)։ Այս ժամանակներում Բիւղանգիայի ձեռքում մնում է զլխաւորապէս Միջերկրականի ծովափի Հողերը մինչև Նիկոմիդիա և մի քանի ամրոցներ լեռնային մասում։ Իկոնիայի սելջուկներից առաջ են գալիս այժմեան թուրքերը-տաճիկները, որոնք յետոյ այնքան զօրացան, որ կարողացան 1453թ. տիրել բովանդակ Բիւղանգիային։

Սելջուկներից յետոյ, արշաւում են Ռուբիչներ սելջուկների մի այլ ցեղը, (1074թ.), որոնք նյոնպէս Հաստատվում են Կիլեկից և Իկոնից սահմաններում և այսոեղ Հաստատում են իրենց սուլթանութիւնը (1100թ.) սելջուկների իշխանութեան ներքոյ կամ նոցա հետ գաշնակցելով։ Սոքա, թուքմէնները, 1173թ. Ռւճիից գուրս գալով մեծ ջարդ են տալիս Մանուել կայսրին և յունաց Հողերին աիրապեատում են 1180թ.։ Յետոյ զօրանալով նուաճում են Ասորիք, Եղիպատոս և այսպէս այս երկիրները մի ցեղից միւսի ձեռքն են անցնում փոփոխաբար, մինչև որ յետոյ գալիս են մոնղոլները և նուաճելով այս կողմերում սելջուկներին ու թուրքմէններին, նաև Եղիպատոսում՝ զօրացած Փատիմիդներին, աիրապեատում են նոցա իշխած երկիրներին։ 1180թ. Իկոնիան բոլորովին նուաճում է Եղիպատոսի սուլթան Սալահեդդինը, որը հիմնում է մի ընդարձակ պետութիւն, որի մէջ մտնում են Եղիպատոսը, Ասորիքը և Արաբիան։ 1193-ին Սալահեդդինի մահուամբ, նորա որդիքը բաժանում են ժառանգած երկիրները. Սալէհ Եիւք որդին Հաստատվում է Եղիպատոսում, որի թուրքան Շահ որդու օրով, ԺԳ դարում (1260), ոտի են կանգնում զերիներից կազմուած թիկնապահ հածլութերը և իշխանութեան զէկը իրենց ձեռքը առնելով մեծամեծ ասպատակութիւններ են անում Պաղեսաինում, Ասորիքում և վերջը Կիլեկիայում։

Յետոյ, Հեթումի օրով ժամ գարու առաջին քառամեակի վերջում, Պարսկաստանը և Հայաստանը ոտնակոխ անելուց յետոյ, Կիլիկիոյ սահմաններն են արշաւում հոնող Ռաբարձներ, որոնք առջին անդամ 1230 թ. ասպատակում են Իկոնիան և նուածում Սեղուկեան թուրքերից, յետոյ ընդարձակելով իրենց աշխարհակալութիւնները հաստատվում են Ասորիքում:

Խոկ արեմուտքից այս ժամանակները խաղում են գեպի Փոքր Ասիոյ այս կողմերը, զիսաւորապէս Պաղեստին Էրուացին, որոնք պատմութեան մէջ յայտնի են խաղաղիչներ անուամբ, ըստ որում այս արշաւանքները տեղի են ունենում հռովմայ Պապի յորդորանքով այն նպատակաւ, որպէս զի մաշմեգականների ձեռքից ազատեն ս. երկիրը՝ Երուսաղէմը իւր շրջակայքով, ուր քրիստոնէից համար այնքան նուիրական սրբատեղիններ կան: Ուստի և այս արշաւանքները, որը կատարուեցան Երեք-չորս անդամ, վարում էին Երուսալիմ հզօր պետութիւնները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան և այլն: Խաչակիրները առաջին անդամ մուտք են գործում Խուրենի յաջորդ Կոստանդնի օրով, որը Փող Վասիլի և միւս հայ իշխանների հետ օգնութեան է հասնում նոյն Անտիոքի պարիսանների տակ, ուր նոքա սարսափելի վիճակում մեծ կարօտութեան մէջ էին թէ ուտեսաի և թէ այլ կողմից:

Խաչակիրներից շատ առաջ Փոքր Ասիոյ ծովեղերեայ քաղաքներում և Պաղեստինում փոքրիկ կառավարութիւններ ունէին հաստատած ֆրանկ կոչուած այլացեղ Երուսալիմ:

Ահա այն բոլոր զիսաւոր ազգերը, որոնք ժԱ գարում, կամ փոքր ինչ առաջ կամ յետոյ արշաւում են Փոքր Ասիոյ արեմուեան կողմերը ու իրենց ասպատակութիւններով փոփոխաբար նուածում այս կամ այն իշխանութիւնը և Երկիրները:

\* \*

Այս ազգերի հետ միաժամանակ, կամ քիչ առաջ, Կիլիկիոյ սահմաններն են գիմում նաև հայերը, որոնք թէ և արաբացինների, սեղուկների, թուրքմէնների, խաչակիրների և այլոց նըման մեծամեծ բանակներով ու ասպատակութիւններով չեին յառաջանում, բայց այնուամենայնիւ իրենց Երևալով զգա-

լիս սարսափի են ձգում այս կողմերը և նոյն իսկ զօրեղ սել-  
ջուկները միջոց են փնտռում մի կերպ հայոց ոտքը կտրել այս  
երկրից և դուրս վռնակը իսկ յոյները հօ, պարզ է, հաշտ աչ-  
քով չէին կարող նայել հայկական ցեղի յառաջիւազայութեան  
վերայ, որոնց այս կողմեր արշաւելու գլխաւոր նպատակը հենց  
դոցանից դարաւոր վրէժ հանելու մէջն է կայանում: ԺԱ.  
դարու սկզբում հայերի գաղթականութեան հոսանքը կապա-  
գովիխայի վերայով կամաց կամաց մերձենում է Կիլիկիոյ սահ-  
մաններին և մտնում այս երկիրը ու 1080 թ. բռնում լեռ-  
նային մասը: Ամրոցներին, նաև յետոյ դաշտային մասի քա-  
ղաքներին տիրանալով, երկրի գոները բանում են այդ միջո-  
ցին արևմտքից դէպի Երուսաղէմ արշաւող խաչակիրներին,  
որոնք յետոյ տիրանում են մի քանի գաշտային քաղաքների,  
նաև Անտիոքին, որով և զրգում են Բիւզանդիոյ կայսրների  
նախանձը: Բիւզանդիան թէե վերջիվերջոյ սոցա նուաճում է,  
բայց ոչ երկար միջոց, ըստ որում նոր զօրացող հայկական ցեղը  
նուաճելով բովանդակ Կիլիկիա, այդպիսով իսպառ արտաք-  
սում է այդ երկրից յոյներին և նոցա իշխանութեանը մահացու  
հարուած տալիս:

\* \* \*

Կիլիկիայում հայոց հաստատուիլը աւելի որոշ ցոյց տա-  
լու համար, պատմենք փոքր ինչ մանրամասնօրէն հայոց  
գաղթականութիւնը դէպի այս երկիրը:

Հայոց գաղթականութիւնը դէպի Կիլիկիա եղել է զա-  
նազան ժամանակներում, մի քանի գար առաջ, նաև քան  
Ռուբինեանց հարստութեան հաստատուիլը և Կիլիկիոյ տի-  
րանալը, թէե իսկապէս վիստաւոր հոսանքը տեղի է ունե-  
նում ժԱ. դարու առաջին կիսում: Այս գաղթականութիւն-  
ների շարժառիթը, ակներև է, որ բուն Հայաստանում տի-  
րող անկայուն վիճակն էր, մանաւանդ Բաղրատունեաց թա-  
գաւորութեան վերջերում, երբ պարսիկների, յոյների ար-  
շաւանեները ու աւերածութիւնները զլիստորապէս ստի-  
պում էին հայերին դլուխները ազատել այդ չարիքներից, գաղ-  
թելով մի այլ երկիր, ուր կարող լինելին փոքր ի շատ է համ-

գստութիւն և ապահովութիւն գտնել, և ի դէպ՝ աղբային չարեաց համար վրէժինդիր լինել այլազգիներից ընդհանրապէս, իսկ յօյներից մասնաւորապէս:

Այսպէս մի մեծ բազմութիւն Բագրատունեաց, Արձրունեաց, Պահլաւունեաց, Վանանդեան տոհմերից և սասունցիներից, բուն Հայրենիքից գաղթելով, նախ քան Կիլիկիա անցնելը, ապաստանում է Կապազովկիա և Եփրատի նահանգներում, ուր սկզբներում յունաց հետ ունենում է ընդհարութներ, սակայն իր գիւցաղն նահապէտների անվախ ու համարձակ առաջնորդութեամբ քաջօրէն ձեղքում է Տաւրոսի անցքերը ու բարձրանում Կիլիկիոյ լեռների գագաթները, արձիւների և ազատասուն աւազակների այդ բնակատեղիները, և փոքր առ փոքր նուածում մի կարգ ամրութիւններ: Սոցանից իւրաքանչիւր տոհմի պարագլուխը իւրայիններով հաստատվումէ այս ու այն բերդում ու տիրանում նոյն շրջակայքի հողերին: Տիրանալով լեռնային ամրութիւններին, նոքա յետոյ իջնում են երկրի հարթավայրերը, յաջորդաբար նուածում են մինը միւսի յետեից երկրի դաշտային և ծովափնեայ մասերը այլ և վերջը և բովանդակ Կիլիկիան բառի ամենաընդարձակ իմաստով:

Իեռ Փ գարու վերջերում Հայերը այնքան բազմաթիւ են լինում Կիլիկիոյ մօտերքում, որ Անույ Խաչեկ կաթողեկոսը 972 թուականին եպիսկոպոսներ է ձեռնադրում Անտիոքի, Տարսոնի և Սելինոնդ քաղաքների վերայ այդ կողմերի հայոց հովուելու նպատակաւ: ԺԱ. գարու սկզբում Հայերը արդէն բաւական ընդարձակ տեղեր ունեին բռնած զիւաւորապէս Մարաշում, Եփրատեան գաւառում, Առաջին Հայքում, Միջագետքում, և Հաստատուելով լեռներում ու կիրճերում, բռնած էին Ասորիքի, Փոքր Ասիոյ և Եփրատի անցքերը:

Վատահացած երկրի անմատչելի լեռների ու կիրճերի վերայ, Հայերը այնպիսի քաջութիւն ու պատերազմական ոգի են ցոյց տալիս, որ կարծ միջոցում Կիլիկիոյ այլ և այլ մասերում նուածում են յօյներից և արաբներից ընդարձակ հողեր և իշխում կէս կամ բոլորովին անկախ:

Այսպիսով ԺԱ գարում, նախ քան Ռուբինեանց Հարբա-  
տութեան սկզբնաւորութիւնը, Կիլիկիոյ այլ և այլ մասե-  
րում, իշխում էին կէս անկախ Բիւզանդիոնի հովանաւորու-  
թեան ներքոյ կամ բոլորովին ինքնազուլս մի քանի հայ գիւ-  
ցազն իշխաններ, որոնցից Վասպուրականի Սենեքերիմ իշխան-  
ներից սերեալ Աղյալանի Արքունիքն իշխում էր Տարսոնում;  
որը յետոյ անցաւ Լամբրոնի տէր Օշինին, որը եկած էր Գան-  
ձակից 1071 թ.: Օշինը այս անուանի բերդը Խլել էր ա-  
րաբներից և նուէր ստացել յունաց կայսրից: Փէլարտուու իշ-  
խում էր Մարաշում և տիրապետել էր շատ բերդերի և  
այսպէս շատերը, սակայն աւելի նշանաւորն է Գող Վա-  
սիլ մականուանեալ հայոց մեծ իշխանը, որը տիրում էր  
Քեսունին: Այս ազնիւ և քաջ հայկաղնի իշխանութեան ներ-  
քոյ էին պատսպարուել Բագրատունեաց և Պահլաւունեաց  
մնացեալ զօրքը և հայոց թագաւորազները իրենց զնտերովը  
և նոյն իսկ հայոց հոգեորականութիւնը կաթողիկոսով հան-  
գերձ: Գող Վասիլը բոլոր հայ իշխանների մէջ ամենազօրա-  
ւորն էր և իւր քաջութեամբը տիրացել էր բազմաթիւ հո-  
գերի: Գող Վասիլը յետոյ յաջորդեց Տղայ մականուանեալ  
Վասիլը քսանուշինդ տարու քաջասիրտ ու պատերազմասէր  
մի գիւցազն, որը իւր ընտիր յատկութիւններովը, մանա-  
ւանդ առատաձեռնութեամբ, բոլոր հայերի՝ նաև իւր զօրքի,  
սիրելին գարձաւ: Իւր արշաւանքներովը Տղայ Վասիլը մեծա-  
մեծ միասներ էր հասցնում՝ Ռւոհայ քաղաքի կոմս Բաղդինին,  
որը մի կերպ նորա ձեռքից ազատուելու համար, մասնու-  
թեամբ ձերբակալեց և գրաւեց նորա հողերը, իսկ Վասիլն  
էլ գէպքերի ձախորդ բերմունքից սահիպուած փախաւ Պոլիս:

Առաջանայ ամրոցում իշխում էր քաջազն Ռուշէն, ո-  
րին փոքր ինչ յետոյ վիճակուած էր հիմնազիրը լինել հայոց  
վերջին անկախութեան, որը իւր անուան ներքոյ զոյութիւն  
ունեցաւ երեք երկարուձիգ փոթորկալեց դար շարունակ:

## ՍՊԱՀՈՐ ԿԻԼԻԿԻԱ

17 Հունիսի 1893, Կապան աճքոց.

Մէջ սուդի մը հինգհարիւրամեակն է այսօր:  
Մէռելական զանգակի մը զօդանջը կը հասնի Երևանուոքեն և կը պատռէ Կիւ-  
լիկիոյ մառախլապատ միջնուորաբ:

Քօթաբեր արձագանք մը կ'անդրագառնայ Տորոսի ծործորներուն մէջ ու մահա-  
գուշակ հծծիւն մը կը տարածուի Սիսուանի գաշտերուն վրայ:

Հինգհարիւր տարին բոլորեցաւ պաօտ 1393-ի նոյեմբեր 17-ը այն չարաբաս-  
տիկ օրն էր, յորում մարիցաւ մեր աշխարհին լցուի: Եյն օրեն ՚ի մեր այժիցաւ Հայ-  
կական Կիլիկիոյ գահը:

Հնա, Փրանսիայի մայրաքաղաքին մջ, Սէն-Տընիի Երասմարանին հովանիին ներ-  
քեւ, կը ննջէ յաւիտնապէս Նեռն Առափնիւանը:

Իր գէմքին վրայ կը կարդար արդար բողոք մը քրիստոնեայ եւրոպյի գէմն որ  
անտարբեր դիմոց մահկին աղետաբեր յաղթանակել, և իր կուրծքին մօտ կը տեսնելք  
արքայական մականը, զոր կը հսկեն տակաւին զցդ մը առիւծներ. . . :

\* \*

Ոչ հոգեհանդիսու մը կատարեցինք այդ վոտարանդի արքային համար, ոչ բառ մը  
արտասանեցինք այդ ահաւոր կորուստին վրայ: Շղթայուած են մեր սրտերը, սրկուած  
են մեր շրթունքը: Խարայել ի ծածուկ կուլայ իր «մեծ լալիւնը»:

\* \*

Նուռ ենք մենք, բայց քարերը կ'աղաղակեն: Կը սարսին Վապանի հիմերը, կը  
պղողորին Սարոսի ջրերը, կը միան Նմանոսի սարերը: Անարգարայի բարձրասալց ար-  
ծիւները տիրագին կը կառաչեն մեր գլխուն միրե, Եյաշի ծովիզերեայ սրբները  
մոլեկին կը խոռվեն ժայռերուն վրայ ու հայ-Նեռան հինաւուրց մայրենիները փո-  
թորկածիծ խօշշիւներով կը թափթիւն իրենց տերեները

Նուռ ենք մենք: Նոիկ մնջիկ կ'որոճանք մեր մանկական օրերու ող րիրոց

Թագըն պարծանաց եղեւ խաւարեաւ

Երդեօր փայլացէ՞ արի ախոյիկան:

Եղիկս պակ փարելի, Նեռն արքայ:

Ո՞ւր ես, տէր իմ, արքայ պատռական:


Արդեօր պիտի լուէ՞ արի ախոյիկան մը:


Ո՞չ վերաւոր է միմնիկը:

Անգուժ որսկանը պիտի տարտընէ անոր սուրբ աճիւններն աւ:

— Օչն. —







Առողին Ա Եհակիառութեան, Տ. Տ. Մկրտիչ Առորբ Օծումը.  
Մ. Փափազեանցի լուսանկարից.

Священное міропомазаніе Его Святейшества Мкртича I-го.





## ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

### ՄԻ ՔԱՆԻ ԽԾՈՒ ԶԱՒԱԽԾ ԳԱԻԱՌԻ ՄԱՍԻՆ

Պատմական և աշխարհագրական ակնարկի. Գաւառի բնական հարասութիւնները—Հողը, կղման և բուսականութիւնը, տարածութիւնը և ազգավնակութիւնը; Հողատիրութեան ձեերը տաճկաց տիրապետութեան ներքոյ և նոցա կերպարանափոխութիւնը նոր պայմաններում;—տաճկահայ գաղթականութիւն, դուխաբորներ, աղաներ և հողաքաշխութեան պետական նոր կանոնագրութիւններ; Հողատիրութեան նոր ձեերի ֆատեանքները ժողովրդի տնտեսական կեանքի համար. տնտեսական անհաւասարութիւն, հողի թանգութիւն, հարկերի անհաւասարութիւն; Անձնական հողատիրութիւն՝ իբրև տիրապետոյ ձե և համայնական հողատիրութիւն վիճակը. Անասնապահութիւն; Տնայնագործութիւն; Դրսի աշխատանքիք; Փայտամութիւն; Տնտեսական վատթար պայմանների հետեանքները; Եղ բակացութիւն:

Մի գաւառի հողագործութիւնը մանրամասնօրէն նը-կարագրելու համար մի քանի հատոր զրուածքներ են հարկաւոր. սակայն մենք այժմ մտազրութիւն ունենք միայն մի ընդհանուր հայեացք ձղել Ախալքալաք գաւառի հողագործութեան պայմանների և հանդամանքների վերայ:

Սյժմեան Ախալքալաք գաւառը, որ գտնվում է Թիֆլիսի նահանգում, հնումը հայոց Գուգարաց աշխարհի մի մասն էր կազմում: Վաղարշակ թագաւորի օրով Գուգարաց աշխարհը, որ կառավարվում էր բղեշխներով,\*) Դարեհ նախարարի սերնդին յանձնուեցաւ: Հայ թագաւորները

\*) Տես Խորենացի, գիրք երկրորդ, գլուխ 3:

այդ բդեշիններին կարողանում էին հնազանդութեան ներքոյ պահել, և մեծ պատուհասի էին հասցնում նրանց՝ ապստամբութեան ժամանակ: Պատահում էր, որ հայ թաղաւորները՝ մինչեւ անգամ քանից՝ այդ երկրի նախարարներին խաչ էին հանում \*): Քաղաքական դէպքերի ներքոյ, երբ այդ երկիրը վերջը վրայ ձեռքն անցաւ, Զաւախէթ անուանուեցաւ, որը Խորենացու աշխարհագրութեան մէջ Գուգարաց նահանգի 8-րդ գաւառն էր, և հայոց մէջյայանի էր Զաւախը անուամբ: Հազար հինդ հարիւր տարի սրանից առաջ դրուած այդ Զաւախէթ անունը մինչեւ այսօր էլ գործ է ածվում ժողովրդի մէջ:

\* \* \*

Այս երկրի մակերեսյթը ներկայացնում է լեռնատափարակներ սարահարթներով բաժաննուած, որոնց շարունակութիւնը հարաւ-արևելեան կողմում Շիրակն է: Զաւախը սահմանն արևմտեան կողմից կազմում է Քուռ գետը: Նրա մէջ հարաւում մտնում է Աղբուբայ լեռնաշղթայի հիւսիսային մասը իր ստորոտներով՝ իսկ հիւսիսային և արեւելեան մասերում այս գաւառի մէջ մտնում են Սամսարի, Դաւագրունի, Աղբիւբայի լեռնաշղթաները իրենց հարաւային և արևմտեան ստորոտներով: Այս գաւառում զետեղուած են Տաբասսորայ (Դմիլայ), Փարվանի, Մատաթովի, Դումայի, Խոնչալուի և Խողափինի մեծ լճերը և մի քանի էլ ուրիշ փոքր լճեր:

Այս գաւառի գլխաւոր լեռնատափարակը՝ Ախալքալաք անուանեալ գետի ձորի մեծ ջրով՝ կարելի է տաել բաժանվում է երկու մասի. մնացեալ ջրերը այդպիսի մեծ ձորեր չեն կազմում:

Մօտ յիսուն տարի սրանից առաջ, այս գաւառի հիւսիսային մասը, — Բարակէթի և Վարեւանի հասարակութեանց

\*.) Տես Փաւառոս Բուգանդ. և դպրութիւն, գլուխիք մն և ու.:

բոնած տեղերի մեծ մասը—ծածկուած էր անտառներով, ո-  
րոնցից այժմ տեղ-տեղ մնացել են միայն թփուտներ (մա-  
ցառներ):

Ահա այս դաւառի մակերեսոյթի կարճ նկարագիրը:

\* \* \*

Լեռնատափարակների և սարահարթների հողը սե է  
և երբեմն հասնում է մեծ խորութեան: Լեռնաշղթաները  
տեղ-տեղ զուտ քար են, ինչպէս և դրանց ստորոտների հողը  
քար է՝ զում, աւաղ և սե հողախառն: Այդ հողի տեսակնե-  
րը զանազան համեմատութեամբ կան զանազան տեղերում:  
Բարձրաւանգակ տեղերում հողը խորութիւն չունի և այդ  
տեղերը ծառայումնեն միայն արօտատեղիի համար. քանի տեղը  
ցածրանում է այնքան հողի շերտն սկսում է աւելի հաստանալ,  
և սկսում են այդտեղ երեան դալ արտեր: Միայն այդ լեռ-  
նաշղթաների ստորոտների արտերը մանր քարերով լիքն են,  
ուստի և հողագործը հերկելուց առաջ նախ արտերը մաք-  
րում է այդ բարերից: Այդպիսի արտերի մէջ մարդ տես-  
նում է բազմաթիւ քարակօյտներ և քարաբլուրներ, որոնք  
հողագործի բազմաքիրտ աշխատանաց և արտերը բարերից  
մաքրելու նշանն են:

Կաւային հող գրեթէ չը կայ այստեղ. կաւային հողակց-  
տը երկրի տակ ծածկու ած է: Երբեմն սարահարթներում և  
լեռնաշղթաների ստորոտներում երեան է դալիս կաւը, որը  
խառն է լինում հողի միւս տեսակների հետ. այստեղ պըտ-  
ղաբերութիւնը աւելի է լինում:

Լեռնատափարակները և սարահարթները 4500 մինչև  
7000 ոտնաչափ, իսկ լեռնաշղթաները իրենց ստորոտներով  
7000—11000 ոտնաչափ բարձրութիւն ունին ծովի մա-  
կերեցից:

Կլիման այստեղ ցուրտ է և խիստ. երբեմն լեռնատա-  
փարակներում և սարահարթներում ապրիլ մայիս և հոկ-  
տեմբեր ամիսներին ձիւն է դալիս:

Արևելեան և Հիւսիսային քամիներն ըստ մեծի մասին մրսեցնում են ցանքսերը: Մօտ 6000 ոտնաչափից աւելի բարձր տեղերում, ցրտի պատճառով, աշնանացան անել չէ լինում: բարձր տեղերում, այսինքն գիւղերում, ձմեռը ամենաքիչը եօթը ամիս է տևում:

Ցրտի խստութիւնից շատ անգամ թէ ցանքսերն են մրսում, և թէ բջյսերի տեսակներն էլ շատ քիչ են:

Սովորական բոյսերն են՝ ցորեն, դարի, կտաւշատ: Բանջարանոյների թիւը քիչ է: Յանում են զետնախնձոր, բազուկ (տակ), շաղգամ, սոխ (գլուխ չէ բռնում), լոբի (նմանապէս միայն կանաչն են բաղում), կաղամբ, զաղար և բողկ: Թուրքաց և վրաց գիւղերում ցանում են չեֆ անուանեալ բոյսը: Այզիներ խսպառ չը կան, բացի Ալսալքալաք և Քուռ գետի ձորերի մէջ եղածներից: Այդտեղ (այդ ձորերում) թուրք, հայ և վրացի ազգաբնակութիւնները զիւաւորապէս պարապում են պարտիզանութեամբ և բանջարաբուծութեամբ: Այդտեղ բջյսերի տեսակները շատ են, — ցանում են ծխախոտ, փորձեր են արել ցանել սուրճի թուրփը և այլն: Այդ ձորերում լինում է և խաղող միայն վատ տեսակից: Եւ որովհեաւ այդ տեղերի տարածութիւնը գաւառի տարածութեան <sup>1</sup> <sub>100</sub> մասն է կազմում՝ ուստի մենք շատ չենք կանգ առնիլ դրանց վրայ:

Գաւառում շատ քիչ անտառներ կան: Մերենիայի անտառի ծառերի տեսակները շատ են, — կան՝ թխտենի, բարդի, կաղնի, սին (պիսականիշ): Ճոպարէթի անտառներում կայնաւ մայրի ու եղենի:

Մերենիայի անտառի ծառերը ցածրահասակ և բարակ են: Սամսար, Բալսա և ծանծղաղ գիւղերի մօտ կան ծառաթիեր: Անտառները հազեւ գաւառի <sup>1</sup> <sub>100</sub> մասը բռնեն, մինչդեռ առաջ տասն անգամ աւելի շատ են եղել: Արշետական անտառներ և ծառատունկեր չը կան: Գիւղերում ջրաղացների մօտ տնկած են լինում ուրի անուանեալ ծառեր: Ուրիշ տեսակ ծառեր տնկելու սովորութիւն չը կայ: Միայն Արակովայ և Մաճաաիայ գիւղերում կան տնկած մի քանի հատ չինարի ծառեր:

Ժողովուրդը կլիմայի խստութեանն է վերազրում ծառատունկերի բացակայութիւնը: Նոյն իսկ քաղաքի արքունական պարտէղում, մօտաւորապէս 1½ գեսեատին տարածութեամբ, նմանապէս՝ բացիյիշած ծառերից՝ ուրիշները չը կան

Գաւառի տարածութիւնը մօտաւորապէս կը լինի 2462 քառակուսի վերստ, մօտ 100—120 քառակուսի վերստ լեռներն են բռնում, իսկ 25 քառակ. վերստ զուտ քարափները. մնացած տեղի ¼ մասը մօտաւորապէս եայլողներ կարելի է հաշուել, այսինքն այնպիսի տեղեր՝ ուր միայն ամառ ժամանակ կարելի է անսասուններ պահել: Այնուամենայնիւ ժողովրդի ձեռքում մնացած արտերը, լայներ, արօտատեղերը և այլ հողերը կարելի է հաշուել մօտ 1500 քառակուսի վերստ:

Բնակիչների թիւը մօտաւորապէս 60,000 է հասնում, ուրեմն մի քառակուսի վերստի վերայ գալիս է 40 մարդ, իսկ ընդհանուր երկրի տարածութեան վերաբերեալ՝ 24 մարդ: Խուսաց կայսերութեան 101 նահանգների և երկրների մէջ Ա. խալքալաք գաւառը իւր ազգաբնակութեան խտութեամբ, կարելի է տաել միջին տեղն է բռնում: Իսկ եթէ երկրի ֆիզիքական զիրքն աչքի առաջ ունենանք՝ այս գաւառը ամենախիտ բնակուած երկրը կարելի է համարել: Նոր աշխարհազրի համեմատ Ա. խալքալաք քաղաքում կայ 619 տուն բնակիչ և գաւառի 107 զիւղերում՝ 6417 տուն. զիւղերից 52-ը հայի են՝ 3458 տուն բնակչով, 8 զիւղ հայկաթողիկ՝ 807 տուն բնակչով՝ տաճիկ, թուրք, քիւրդ և զարափափաղ՝ 19 զիւղ՝ 638 բուն բնակչով, 9 վրաց զիւղ՝ 347 տուն բնակչով՝ 8 զիւղ գուխաբոր՝ 991 տուն բնակչով, 6 զիւղ հայ, թուրք, վրացի և կաթողիկ խառն՝ 276 տուն բնակչով: Այս զիւղերի մէջ 35-ը աղաւըն են, 2-ը խառն՝ աղաւըն-թագաւորական, մնացածները զուտ թագաւորական: Աղաւըն զիւղերի մէջ Կայունի, Սույունի, Դաբէլ և Խառնը եկեղեցապատկան են:

Քսանական թուականների վերջերում, ոռուս-տաճկական պատերազմի ժամանակ, այս երկիրը զրեթէ ամայացած էր:

Տեղացիները վրացիներ, վրացախօս հայեր և տաճիկներ էին: Երեսնական թուականներին իշխան Արդութեանի և Կարապետ արքեպիսկոպոսի հետ եկած հայ և հայ-կաթոլիկ զաղթականութիւնը նորից դարձրեց այս երկիրը մարդաբնակ:

\* \* \*

Տաճկաց ժամանակ հողից օգտուելու երկու տեսակ իրաւունք կար. առաջինը՝ Շահնաւած իրաւունքը, այսինքն այնպիսի իրաւունք, որով հողագործը կարող էր օգտուել հողից՝ եկամաի մասը տիրոջը վճարելով. երկրորդ տեսակի իրաւունքները անուանվում էին Ռիմար, զօնան, Է՞րնլըն և Չառալըն յիսար, ապահ, զօնան-յիսար, անջախ-բէջի և այլն. Վրանք զանազան տեսակ իրաւունքներ էին, որոնցով աէրութիւնը ժամանակաւորապէս տալիս էր զիւղերը և հողերը սանջախ-բէջերին, զինուորներին, բերդերի ծառայողներին, նախկին աղնուականներին և այլոց՝ նշանակելով այդ տեղերից որոշեալ եկամուտ:

Թափուած իրաւունք ունեցողը միայն պարտաւոր էր տիրոջը տալ բերքի մի հինգերորդ մասը և այնուհետեւ նա իրաւունք ունէր անվերջ օգտուել հողից. միայն իւրաքանչիւր տարի նա պարտաւոր էր մշակել իրեն ձեռում եղած հողը: Եթէ նա շարունակ երեք տարի հողը թողնէր ամայի՝ կարող էր այդ հողից զրկուել: Միւս իրաւունքները թէ ժամանակաւոր, և թէ անժամանակ էին: Տաճկաց կայսերութեան մէջ հարկերը եկամաի քանակութիւնից էին կախուած (подаходный налогъ), և աւերութիւնը զիւղերում որոշում էր իրեն այդ ստանալիքը և ամբողջապէս կամ մասամբ տալիս էր որոշ անձնաւորութեան՝ հանդերձ բարաթով: Եռորթլուղ-օջաղը իրաւունքով տուած բարաթը ժառանդաբար կարող էր անցնել: Առհասարակ միւս իրաւունքները (շատերը յմահ) ասիական սովորութեամբ՝ իբրև հօր ստացուածք՝ հեշտութեամբ հաստատում էին որդու վերայ: Ժողովուրդը վճարում էր բահէն՝ հինգերորդ մասը, ապահանը՝ 40 ոչխարից 1 գառը: Երբ

Զաւախքը ոռւսաց ձեռքն անցաւ՝ տաճկաց իրաւունք տուին  
ծախել իրենց ունեցածը և գաղթել: Այդ հիման վրայ շա-  
տերը, որոնք ունէին Բախու, Ալճարչի, Աբարչի, Առա-  
ջարճեկու-Աւան, Աղաբեն-Աւան և այլ իրաւունքներ գիւղերի  
և հողերի վրայ, իրենց այդ իրաւունքները ծախեցին տեղա-  
ցիներին: Միենոյն ժամանակ տէրութիւնը՝ որովհետեւ տաճ-  
կահայերին իրաւունք էր տուել տեղափոխուել այս երկիրը,  
մի մասնաժողով նշանակեց, մեծ դումար յատկացնելով, որ  
տաճիկների ծախած գիւղերի և հողերի իրաւունքները առ-  
նեն այդ նոր գաղթական ժողովրդի համար: Բայց այդ մաս-  
նաժողովը շատ թոյլ գտնուեց: Մասնաժողովի անդամները,  
դրանց բարեկամները և ուրիշները շատ չնչին դներով առան  
տաճիկներից նրանց ծախած հողերը: Կարապետ սրբազանը  
միայն մի կտոր լաւ հող առաւ Ախալցխայի Ս. Փրկիչ եկե-  
ղեցու համար: Ժողովրդի վրայ հարկ եղած ուշագրութիւնը  
չըգարձրին, ուստի և նրա ձեռքը քիչ հող անցաւ: Բայց յի-  
շելու է, որ այն ժամանակ՝ բնակիչների թիւը սակաւ լինելու,  
երկրի պտղաբերութեան և տուրքի էժան լինելու պատճա-  
ռովը ժողովուրդը հողի մեծ պակասութիւն չէր զգում: Այ-  
նուամենայնիւ ժողովրդին բաւականաչափ հող չը տրուեցաւ:

Եյս գաւառում տէրութիւնը հետզհետէ բնակեցրեց  
ոռւս աղանդաւոր դուխաբորներին, որոնք մօտ 1000 տուն  
են. Նրանց յատկացրեց մօտաւորապէս 35000 գեսեատին, այ-  
սինքն 350 քառակուսի վերստ հող: Յետոյ Ախալցխայի կող-  
մերի գաղթականներից գարձեալ մի քանի հարիւր տուն  
նորից եկան այս գաւառը: Եյսպիսով ժամանակի ընթաց-  
քում ժողովրդի բազմանալով՝ զգացուեց հողի մեծ պակա-  
սութիւն: Հողատէրերը, բացի այն՝ որ գիւղերի տէրեր էին,  
զարձան և աւերակների տէրեր: Կառավարութեան 1870 և  
1877 թուականների օրէնքով աղաների կողմից շէն հողե-  
րը գիւղացոց տրուեցան հողաբաժինն, բայց աւերակ հո-  
ղերը մնացին աղաների ձեռքում: Առաջին տեսակ հողերից  
ժողովուրդը պարտաւոր է վճարել տասներորդական, իսկ  
երկրորդ տեսակի հողերից աղաները օգտվում են իրենց կա-

մաց համաձայն։ Այստեղ անտեղի ենք համարում քննել, թէ տուի՞ն արդիօք ժողովրդին բաւարար հողաբաժին, թէ ոչ միայն հաստատ կարող ենք ասել, որ ազալը տեղերի գաղթական ժողովուրդը բաւարար հողաբաժին չը ստացաւ։ Թէև լրիւ հողաբաժիններ չը ստացաւ և տեղացի անշարժ ֆնացած ժողովուրդը, բայց այնուամենայնիւ սրանք համեմատաբար տւելի լաւ հողաբաժիններ ստացան, քան գաղթականներ։

Գաղթական ժողովուրդն ստացաւ ամեն մի արական անձի վրայ՝

**Կարզախ՝**

839 Հոգի—2598 գեսեատին, 395 գեսեատին էլ Սամախորից։

|                  |     |      |      |                   |
|------------------|-----|------|------|-------------------|
| Դառլումայ՝       | 112 | Հոգի | 310  | գեսեատին.         |
| Ժառիայ՝          | 136 | ,,   | 283  | ,, արտ և խոտատեղ։ |
| Փոքր-Արագեալ՝    | 138 | ,,   | 514  | ,                 |
| Խորէնիա՝         | 185 | ,,   | 630  | ,                 |
| Փոքր-Գևոնդուրայ՝ | 218 | ,,   | 272  | ,                 |
| Դուռի-Դատէշ՝     | 436 | ,,   | 1270 | ,                 |
| Խուրզումայ՝      | 151 | ,,   | 279  | ,                 |

Հնուց անշարժ տեղերումը բնակուող գիւղացիք ստացել են՝

**Մրակովալ՝**

104 Հոգի—402 գեսեատին.

|            |     |    |      |    |
|------------|-----|----|------|----|
| Տալանդէն՝  | 20  | ,, | 88   | ,, |
| Դրգնայ՝    | 103 | ,, | 409  | ,, |
| Դոգաշէն՝   | 201 | ,, | 594  | ,, |
| Վճարակի՝   | 114 | ,, | 625  | ,, |
| Դիւլալիս՝  | 126 | ,, | 401  | ,, |
| Ափինիա՝    | 78  | ,, | 363  | ,, |
| Տանդալայ՝  | 53  | ,, | 286  | ,, |
| Դարթայ՝    | 51  | ,, | 255  | ,, |
| Հոքամայ՝   | 322 | ,, | 1378 | ,, |
| Ազմանայ՝   | 119 | ,, | 230  | ,, |
| Խզաբաւրայ՝ | 606 | ,, | 848  | ,, |
| Աազամոյ՝   | 181 | ,, | 921  | ,, |

Գողիա՝ նմանապէս ստացել է լրիւ հողաբաժին։

Մենք տեսնում ենք, որ երկրորդ անսակ զիւղերից լրիւ հողաբաժին ստացել են—հոգուն 5 զեսեատին—Տանդալէն, Դաշնէն, Սապանն, Գոշիսն: Հոգուն 4 գեսեատինից աւել ստացել են—Մըահնձալը, Բալանդէն, Քետրսէնը, Ադինիսն և Հոգածը: Մինչդեռ գաղթական ժողովրդից ոչ մեկը ոչ թէ լրիւ հողաբաժին՝ այլ և հոգուն 4 գեսեատին էլ չէ ստացել:

Թուրքայի, Խա-րա-ճայի, Փուր-Գենդո-րայի, Աղմանայի և Խղաբա-րայի զիւղացիք բաւարար հողաբաժին ստացան:

Արքունական զիւղերում հողաբաժին գեռ չէ տուած, բայց գրութիւնն աւելի վատթար է: Կան զիւղեր, որոնց ձեռքում եղած հողերից մի-մի գեսեատին էլ չէ հասնում հոգուն:

Մեր ասած հողաբաժինները վերաբերում են արտերին, խոտասեղերին (չայիրներին), բանջարնոցներին, աներին, կալին, մարտզին և այլ այգպիսի տեղերին: Արօտատեղերը հողաբաժնի մէջ չեն:

Ասածներիցս մենք տեսնում ենք, որ գաղթական ժողովրդին բնակեցնելով Զաւախիքում՝ նրան հէնց սկզբից չտուեցին բաւարար հողաբաժին: Բայց երբ ժողովուրդը վարվում էր հին իրաւունքով, այսինքն՝ բոլոր հողը հողազործի ձեքուումն էր, որոշ (հնուց կտրուած) չափի տուրք տալով տէրերին՝ ժողովուրդը կառավարվում էր լաւ: Հետզհետէ, երբ ժողովուրդն սկսեց բաղմանալ, զգացուեց հողի պակասութիւն: Աղաները հողի մի մասը՝ աւերակները՝ իրենց յատկացրին, և ժամանակի ընթացքում այդ հողերը ժողովրդի ձեռքից առնելով՝ սկսեցին նշյն ժողովրդին այդ տեղերը տալ ոչ թէ առաջուան հաշուով—հինգերորդով՝ այլ ուղած գներով: Փոքր առ փոքր հինգերորդի տեղ սկսեցին առնել քառորդը, երրորդը, կէսը և աւելի... Մինչ տաճկաց իրաւունքը հողատէրին իրաւունք էր տալիս որոշ չափով հարկ առնելու զիւղացիներից, ոռուսաց իրաւունքը լիովին իրաւունք է տալիս հողատէրերին աւերակներում վարուել՝ ինչպէս իրենց կամքն ուզենայ:

Այսպիսով ժողովուրդը զրկուեց աւերակներից: Միւս կողմից տէրութիւնը մի քանի տեղ «օօրօնայ ստայ» (իւր անմիջական իրաւունքի տակ պահել ածուրդով տալու համար)

շինեց: Դուխաբորների բնակութիւն հաստատելովը և մի քանի հարիւր տուն նոր ժողովրդի և այլ մարդկանց գալովը՝ դաւառում մարդաբնակութիւնը խոտացաւ, իսկ հողը շատ պակասեց. և այսօր միայն մի քանի գիւղեր ունեն բաւարար հողաբաժիններ, մինչդեռ կան գիւղեր, որոնց հողաբաժինները Ռուսաստանի ամենաքիչ հողաբաժինների հետ կարող են հաւասարուել:

Այստեղ կարող ենք յիշել մի քանի աղալըդ աւերակներ. Զրէս, Դախունդայ, Ցրէշ Դէկաչն, Վանիսկոմ, Խիզիսծուար, Միմինէթ, Զէրուլ, Արլար, Քարթուլիս, Վարդիսուրան, Շախթուման Թէղետարաբ: Եկեղեցապատկան աւերակները. Ղաղանայ, Խողափին և այլն. Մուրջիկան, Բիբլեկոյ, Կարանտայ, Մոտիզամ, Մուրճ, Վարդիսցիխէ, Երիսչալայ, Փրթոնդ, Զուարենայ և լն: Սյուլ աւերակներից ոմանք 2000—3000 գեսեատին տարածութիւն ունեն, ոմանք 500—1000, և ոմանք 100 կամ 200—300 կամ 400: Տեղտեղ ժողովուրդը տալիս է  $\frac{1}{3}$ , տեղտեղ  $\frac{1}{4}$ ,  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{2}$ . մի կոտոց տեղին մի կոտ \*) ցորեն, կամ գեսեատինին 8 կոտ: Տեղտեղ էլ արդէն գեսեատինին 10—15 ոուրլի վճար են տալիս տարեկան:

Սյուլ աւերակների համար ժողովուրդը շատ փող է վը-ձարում աղաներին: Վաչիանցիք տարեկան տալիս են մօտ 600—700 սոմար \*\*\*) սերմ: Զէրուլը մօտ 1500 գեսեատին տեղ է. այդ տեղից չայիրների գեսեատինը ծախվում է 15—30 ոուրլիով: Սյուլ տեղեց մօտ 980 գեսեատին արօտատեղ առնում են աղաւրէթցիք տարեկան 700 ոուրլով. նոյն (Զէրուլի) տեղի մի կտորին լոմատուրսցիք վճարում են 600 ռ., չխարուլացիք՝ 400 ռ.: Կարանտան տարեկան ծախվում է 600 ոուրլով, Մեմինէթը՝ 300 ռ.: Խիտիսջուարը 800 ռ. եկամուտ է տալիս, Մոտիկանը՝ 1500 ռ.: Բուսնաշէթում աղան ունի 35 գեսեատին տեղ որը ծախվում է ատրեկան 500 ռ.: Թէղետարաբում խոտի  $\frac{2}{3}$  մասը տիրոջն է,  $\frac{1}{3}$  մասը քաղողինը:

\*) Տեղական կոտը կշռում է միջին թուով 1 պուդ և մի քիչ աւել:

\*\*) Սոմարը 16 կոտ է (16—20 պուդ):

Արէշը տալիս է 60 սոմար ցորեն և 30 սոմար գարի: Քարթոլիան 80 սոմար է տալիս, Վարդիսցինինէն՝ նմանապէս, Աբլարը՝ նմանապէս... Մուրճիկամը և Խողափինը 1500-ական մանէթով են ծախվաւմ: Զրէսուս և Դախունդայում մի կոտնոց տեղից մի կոտ սերմ են առնում երկրորդում, իսկ առաջնում՝ կէս կոտ: Կողցիալան տալիս է 300 սոմար: Թիւրթիւկան կամ Բիբլիկան 700 ռուբլի է տալիս: Քատէշ յիք իրենց մօտի զշայի (արօտատեղի) համար եկեղեցուն տարեկան տալիս են 600 ռ. և լուսում: Մի քանի հազար էլ եկեղեցին ստանում է իւր աւերակներից:

Եյսպիսով՝ քննելով մեր ժողովրդի հողային գրութիւնը՝ տեսնում ենք, որ երեսնական թուականներում նա որոշ ապահովութիւն ունէր, ըստ որում հողազործի ձեռքումն էին բոլոր հողերը:

Սյդ հողերից մի մէծ կտոր անցաւ դուխաբորների ձեռքը, մի մասը աղաների ձեռքը և մի մասն էլ նոր եկածների ձեռքը, այնպէս որ այսօր ժողովուրդը չունի ոչ մի բաւարար հողաբաժին, այլ շատ տեղ մինչեւ անգամ՝ դրա քառորդը, տեղտեղ մինչեւ անգամ տասներորդ մասը:

Հողատիրութիւնը ժողովրդի մէջ անցնական է:

Գիւղը ներկայացնում է անհաւ ասար տներ, որոնք բաժանվում են ոչ միայն օր. տասը՝ զանազան աստիճանի հարստութեան, այլ չքաւոր տներից բռնտծ մինչեւ հարուստ տները՝ բաժանվում են հարիւրից աւելի զանազան աստիճանների: Ամենահարուստները աղջ են անուանվում: իսկ հաճբայ տների ներկայացուցիչները Քէնայ: Կան տներ՝ որ չունեն սերմացու (աստիճանաբար առաջ գնալով), կան տներ՝ որ մինչեւ 100 սոմար հայ են ունենում: կան տներ, որ հալ (տաւար) չունեն (աստիճանաբար առաջ գնալով), կան տներ՝ որ 100 մալ և 400—500 ոչխար ունեն:

Նցնն է և միւս կարողութեան մէջ: Հողի վերաբերմամբ էլ նոյնն է: Ամենայն ոք իրեն բռնտծ հողի համեմատ հալ (միջոց) ունի: Եյսպիսով էլ հարկ են տալիս տէրութեանը: Կայ տուն՝ որ տալիս է 2—3 ռ. հարկ, կայ և տուն, որ խո-

տի, սաբալըղ մախտայ և հողի վարձ կամ բանցայ՝ միասին տալիս է մինչեւ 400 բուբլի: 1854 և 1877 թուականների պատերազմների ժամանակ՝ երբ հարկերը շատացան՝ շատերը չը կարողացան վճարել և որովհետեւ հարկերը հողի վրայ էին՝ շատերը ստիպուած հողերը ձեռքից ձգեցին. և հողերը ընկան այնպիսինների ձեռքը, որոնք հարկերի ծանրութիւնը կարող էին քաշել: Դրանից ոմանք այն կարծիքին հասան, որ հողատիրութիւնը հաճախական է այստեղ: Մինչ գեռ մեր կեանքի մէջ եստիանութիւնն ու անձնական շահի գաղափարն է մարմնացած, և համայնականութիւնը անհասկանալի է: Դրոզգով գաւառապետի ժամանակ ընդունեցին, որ մեր հողատիրութիւնը համայնական է, և սկսեցին թոյլ տալ հողաբաժանմունքը: Այդ կարգագրութիւնները շատ աղմուկներ առաջացրին, և Սմբատովի օրով ժողովրդին շատ տեղ յայտնուեց՝ որ մինչեւ գիւղի բնակիչները միաձայն չը յայտնեն ցանկութիւն հողաբաժանման, հողատիրութեան եղանակի մէջ փոփոխութիւն չի մտցնուի:

Վերջապէս, եթէ հողատիրութիւնը համայնական էլլենի մեր ժողովրդին զգալի օգուտ չի լինի:

Աղքատը իրեն հողը կիսովի է տալիս ցանելու, կամ օրավարը տալիս է 2—3—5 ոռութիւնով կամ ախաց-ֆայտառը հաշուով, այսինքն զրաւ է լնում մի արտը 5—10—20 ոռութիւնով, և պարտքատէրը այդ արտը ցանում է ձրի՝ մինչեւ պարտապանի պարտքը վճարելը. այդ պատճառով ժողովուրդը չէ կարող ընտելանալ համայնականութեան: Ընկերութիւն, սէր և միաբանութիւն չը կայ, որ զարթնի համայնական հողին:

Բայց այստեղ կայ համայնքը. դա մօտաւորապէս այն համայնքն է, որ 2000—3000 տարի առաջ գոյութիւն է ունեցել այն ձեռով, ինչ որ վարդապետում են նորագոյն քաղաքանտեսագէտները: Նատ զիւղերում կան տներ 20—30, 50—60 հոգուց բաղկացած: Դրանք կառավարվում են արքայիքական համայնքի պէս: Դրանք յայտնի են սերնդէ սերունդ: Դրանց մէջ կայ հայրերի, թոռների, թոռան թոռների սերունդ: Տան որդիքը հայր անունն են տալիս իրանց ծնողաց սերնդի անդամներին, թէկուղ իրենց հայրն էլ չը լինի:

Այսպիսի տոհմը կառավարվում է իւր նահապետով: Կարողութիւնը ընդհանուրին է: Այս ինչ կամ այն ինչ անդամի ծախոր կամ պարտքը՝ տան ծախոր կամ պարտքն է. նահապետը և միւս անդամները չեն վեճիլ դրա վրայ: Այդպիսի համայնքի մէջ կայ սէր, միաբանութիւն և համայնական ոգի:

Մեր համայնական ոգին հիմուած է արիւնակիցների շահի վրայ:

Այդպիսի համայնքները կարողանում են յառաջադիմել դրանք շատ հող և անասուն ունեն. կարողանում են և շատ յանել ունեն ջրաղաց, դիմունք, ձուքաննեց: Երբեմն կարողանում են իրենց համար աղայից սեփական աւերակ վարձել և այլն:

Այս, արիւնակիցների շահի գաղափարը դրանց հասկանալի է, իսկ ընդհանրութեան շահը հասկանալի չէ:

Կարելի է ասել՝ վերջին ժամանակներում՝ զիւղերի կէս մասում հողատիրութիւնը անձնական է մնացած, իսկ մնացած զիւղերում նոր հոսանքի Ճնշման ներքոյ սկսել է մըտնել հողաբաժանմունք, որ գուցէ առաջ եկած լինի ընդհանուրի շահը պաշտպանելու ձգառումից:

Հողագործութիւնը շարունակվում է նոյն հին եղանակով: Դաշտերը չեն ոռոգվում, մինչդեռ շատ անգամ տարին երաշտ է լինում և արտերը վշանում են, չը նայելով որ առու անցկացնելը շատ հեշտ է:

Ցանում են ցորեն, գարի և կտաւհատ: Մերմ փոխելու սովորութիւնը շատ քիչ է: Հողի սակաւութեան պատճառով շատ տեղ՝ այս տարուայ յանքար հնձելուց յետոյ՝ նոյն տեղը հերկում են և միւս գարնանը նորից յանում նոյն սերմը և կրկին հերկում: այդ հերկածին հերչ այեւաղի անունն են տալիս, և կրկին ցանում են ապա այդ արտին հանդիսու են տալիս մի տարի: Հողը ուժից ընկել է: Այն հողը, որ առաջ տալիս էր կոտին մի սումար, այսօր կոտին հաղել է տալիս երեք կոտ:

Բանջարաննոցները դրեթէ չը կան: Նոր են սկսել բանջարաբուծութեամբ պարապել:

Այն տեղերում, ուր սերմերը փոփոխում են՝ զգալի օ-

գուտ է երեսում, բայց այդ բանը շատ քիչ է հետաքրքրում ժողովրդին: Թագաւորում է հին սովորութիւնը: Բարձրաւանդակ տեղերում գիւղացիք աւելի անասնապահութեամբ են պարապում: Միջակ տեղերում՝ երկրագործութեամբ և բանջարաբուծութեամբ: Այստեղի անասնապահութիւնը մի գժուար բան է. օ ոչխար գարուն հանելու համար մի որանի սայլ խոս է հարկաւոր: Սայլը քաղողի համար 5 ռ. արժէ, իսկ երբեմն մինչև 10 ռ. է հասնում և աւելի: Հողի պակասութեան պատճառով ոչխարն ամառը իրենց գիւղում պահել չեն կարողանում, այլ քշում են արօտատեղեր կամ եայլաղներ, որոնց համար բաւական փողեր են վճարում: Խոշոր անասուններին ձմեռը յարդ են տալիս: Ունեցած յարդը շատ անգամ չէ բաւականանում և հարկաւոր է լինում գնել: Հողի պակասութեան պատճառով շատերի հացը չէ բաւականանում, իրենց և ստիպուած են լինում ցորեն գնել: Գիւղացին ի՞նչ պէս ապրի հաց, խոտ, յարդ գնելով: Շատ աեղ կարելի է լսել այս խօսքը—«Մէն+ պառ+ էն+ առանց»:

Անասնապահութիւնը մի անհրաժեշտ հարկաւորութիւն է, նամանաւանդ այն գիւղերի համար, որտեղ ցանքսերը մըրսում են. այդ տեղերում շատ անասուններ են պահում: Մնացած գիւղերում անասնապահութիւն գրեթէ չը կայ: Մի քանի գիւղեր՝ տեսնելով իրենց գժուար գրութիւնը՝ սկսել են ձմեռը անասունը ձմբան արօտատեղեր ուղարկել: Խոտի և յարդի գրանով քիչ շատ կը քաշուի. իսկ հացինը... Գիւղն ընդհանրապէս ունենում է 400-ից մինչև 1500 խոշոր անասուն և մինչև 6000 ոչխար:

Դրսի աշխատանք շատ քիչ կայ. զբաղվում են փայտ, աղբերելով, ձանապարհների վրայ մշակութիւն անելով, մասամբ էլ հիւսնութիւն, քարտաշութիւն, և ուրիշ այդպիսի բաներով:

Տնայնագործութիւնը—շատ աննշան է. իրենց մանածքրդից գործում են շալ բրդից թափում են թաղիքներ, զործում են ջէջիմներ, ջուալներ և այլն:—Անտառները շատ հեռու են. 3-7 օր է հարկաւոր, որ գիւղացին գնայ անտառ և ետ գառնայ. գրանից նրանիք ունեն օրական մի երկու ռ. աշխատանք:

Քննելով հողի քանակութիւնը, պտղաբերութիւնը, անասնապահութեան պայմանները և այլն,—մենք տեսնում ենք՝ որ այստեղի գիւղացիք վատ զրութեան մէջ են:

Աղքաների թիւր շատ է: Արդիւնքի սակաւութեան պատճառով մարդիկ զուրկ են ապրում: Մեծ մասը զարէ հայ է ուտում: Շատ անդամ խնայում են մի քանի ոչխար կամ մալ մորթել՝ իրենց համար ձմբան պաշար պատրաստելու:

Նրանք բնակվում են անասունների հետ միևնոյն յարկի տակ: Աղքատութիւնից առաջացել է ժլատութիւն: Ցուսահատութիւնն էլ միւս կողմից է բուն գնում ժողովրդի որոտում: Ժողովուրդը պարտքի տակ խեղզվում է: Նա պարտք է վաշխառուներին, որոնք նրանից կրկնապատիկը ստանում են ամենայն տարի: Նա պարտք է և այն մարդկանց, որոնք՝ համեմտաբար նրանց հանդամանքներին՝ բարեխիղծ տոկոսով են փող տալիս, 100-ին 24 ռ. ստանալով տարենք: Գուցէ մարդիկ աւելի յառաջադիմեին՝ եթէ պարագերը ըլլինեին, տընտեսութիւնը աշխոյժ կերպով առաջ տանեին, որ և իցէ հնար մտածէին իրենց վիճակի համար:

Եցս գաւառի գաղթական հայ ժողովուրդը մի յաղթ մարմին և հոգի է ներկայացնում:

Երեխ նա ունեցած է եղել մի կազմակերպութիւն, որի շնորհիւ աղքատը անտրտունջ բաւական է եղել իւր գրութիւնից, իսկ հարուստը և աղան ժողովրդին խնամք են տարել: Կար ժամանակ, որ այդ ժողովրդի մի զարգացեալ մասը տոկոս չէր առնում: ինքն օրինակ էր լինում ժողովրդեան:—«Նախ ինքներդ արեք, ապա սովորեցրէք»: Պատմում են յայտնի անձնաւորութիւնների մասին, որոնք այդ գաղափարներով են ապրել:

Ամեն մի գիւղ առաջ ուներ իւր մէջ երկու-երեք այդպիսի խնամատար մարդք: Իսկ այժմ Ամեն մի նորահաս գիւղին հոգս քաշող է գտնել՝ ի միաս իւր գործերին: Էլ հարստութեամբ ժողովրդին չեն ծառայում: Հարուստը կամ քաղաքներումն է առևն շինում, կամ գաղթում քաղաք, և

միայն իւր վրայ է մտածում: Գիւղացիներն այժմ երկու դասակարգի մարդկանց են բաժանուել՝ Ճնշողների և Ճնշուածների: Համերաշխութիւնը բացակայում է: Ուստի զարմանալի չէ որ առաջ են եկել գողութիւն, շնութիւն, աւազակութիւն և այլ այսպիսի ախտեր:

Իբրև հետևանք անհամերաշխութեան առաջացել է ըսկամութիւն: Քանի օրինակներ են եղել որ մէկը միւսի ջրադացը զիշերով քանդել է, մէկը միւսի խոտին կրակ է տուել...:

Երդէն խարէութիւնը մտած է ժողովրդի մէջ. մարդիկ իրենց դրութեամբ էլ չեն բաւականանում:

Դրութիւնը յուսահատական է: Եղած կազմակերպութիւնը քայքայուելու վրայ է, իսկ նորը գեռ չէ սաեղծուած: Ժողովուրդը ցանկանում է գուրս գալ իւր խեղդուած դրութիւնից: Մի մեծ ոյժ և ջանք է հարկաւոր: Այս բոլորի մասին հարկաւոր էր մանրամասնորէն գրել բայց այս անդամ բաւականանանք դեռ այսքանով:

||. Բ.



Ի զ ե ա ն հ ։ Ե ն դ ը կ ո վ դ ո ւ կ ա ս ո ւ մ ։





Ս. Մեսրոբ Ժամարդմանը Եկեղեցին (Օշականում).

Մ. Փափազեանցի լուսանկարից.

Церковь во имя Св. Месропа въ Ошаканѣ.

Автотипія Эл. Гонте.





## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱՅ, ԹԷ ՃԵԳՐԻՏ

Ես գեռ աշակերտ էի, Կերպիսեան դպրոցի վերին դասարանի այն տարուայ դասընթացն աւարտողներից մինն ես էի:

Հատ գիտութիւններ չեին աւանդուում այն ժամանակն Աշտարակեցի Կերսէս Ե-ի կառուցած լուսաւորութեան տաճարում։ Հայ եկեղեցւոյ սպասաւորողին, Հայ մանուկ սերնդի մէջ դրագիտութիւն տարածողին պիտանի ուսումն էր ժամանակարարուում։

Հայ կրօն, Հայ լեզու, Հայ ազգային և եկեղեցական պատմութիւն, պետական լեզու, չափաւոր համարագիտութիւն, տարրական բնապատմութիւն։ Ահա այն ամէնն, ինչ որ ժամանակի պահանջն էր զգացուում։

Առորբ գիրքը, ազգային հին մատենագրութիւնը, մայրենի դրականութիւնն և կեանքի վերաբերեալ բոլոր գրուածքներն էին մեր միտքը զեկալարող օժանդակիչ առարկաները։

Վգաթանգեղոս, Խորենացի, Եղիշէ, Փարբեցի, մեր համար Հաց ու պանրի չափ կարեօրութիւն ունեին. Եղիշէն ու Խորենացին հօ, Համարեա, բերան գիտէինք։ Այս ամէնի վերայ բարդէր վենետիկցոնց տպարանից լոյս տեսած փառակազմ ուոմերոս, Աիրդիլիոս, Տելեմակը, Կիկերոնի պատշաճից ճառերը, Աիստայի Քրիստոսական, Քառասնորդականը ասուած Հաստափոր բարողներն են, և այն ժամանակը բոլորեքեանս կատարած էինք մեր աշակերտական պարուը։

Վախակ պարբերական թերթը, որ մեր ձեռքն էր հասնում և  
մենք անկշորէն կլանում էինք, Վախթարեան հայրերի «Բաղդա-  
վէոյ» ամսագիրն էր:

«Բաղմալէոյ»-ի մէջ մեր սիրտը թրթուացնողները չ. Պ. Ա.  
Նահատէոյ կեղծ անուն կրող յօդուածներն ու բանաստեղծու-  
թիւններն էին:

«Փլպուլն Վարայրի, Հայոց աշխարհիկ, Վասիսներ, Շրադ-  
գան», մի քանի ազգային ճառեր՝ վերոգրեալ ստորագրութիւն-  
ներով՝ մեր համար մի և նոյնն էր, ինչ որ կոյր աշուղին իր յօ-  
րինած խաղերը խիկի կը մոռացուի՞ն:

Մեր վարժապետի ասելուց գիտէինք, որ չ. Պ. Ա. Նշանա-  
կում է հայր Պետոդ Վաղաքեան և թէ «Եահապետն էլ ինքը  
հայր Պետոդն է»: (Ի գէալ): Երկու կոչումն ևս այսօր ամփոփուած  
են Վլիշան բառի մէջ:

Ծառ չասենք. մեր մտաւոր աշխարհի շրջանը հայկական  
կեանքի սահմանից այն կողմը չէր անցնում:

Վպրում, սնանում, երազում էինք մեր նախնիքներով, մեր  
ազգայինով, մեր սեպհականով:

\* \* \*

Օշական, Փարրի և Վշտարակ գիւղերի անունները ո՞ր հային  
անյայտ են: Երեքն ի միասին Վրագածոտն գաւառի բաղմաթիւ  
գիւղերի խմբի մէջ այնպէս են, ինչ որ ծաղկազարդ բուրաստանի  
հաղաքեանդ ծաղիկների խմբում զքեղաշուք փառահեղութեամիւ  
փթթող վարդը:

Վրագածոտնի ամրոց գիւղերը ոռոգուում են մեծանիստ, ա-  
նուանի երկճղե Վրագած լեռան ստինքներից բղխած կենսատու  
չեղուկով:

Ա երոգրեալ երեք գիւղերը միմեանց դրացի են, հանդակից  
են, դաշտակից են և իրարից մէկ ժամով, կամ ժամուկիսով, հա-  
զիւ թէ, չեռաւուրութիւն ունենան:

Երեք գիւղի նոսուածքն եթէ գծենք, գուրս կըդայ մի կա-  
նոնաւոր եռանկիւնաշատի. ճիշտ այն չափերից մեկը, որով մա-  
նուկներին գծագրութիւն են ուսուցանում:

Վհա նկարը.

Դէսլի արևմտւտք դարձրած եռանկիւնու սուր ծայրը ունի իւր գլխին Օշական գիւղը: Հարաւ-արևելքի լոյն անկիւնում մեծադիր, այդեղարդ Աշտարակն է բազմած՝ իւր շքեղ երկայարկ դստիկոններով, իսկ հիւսիս-արևելքում՝ Փարբի գիւղն է պարզած:

Եռանկիւնու երկու կողքերին խոր անդունդներ են պատառուած, անդնդաձորերի մէջ երկու օձապտոյտ գետակներ ձայներն երկինք են բարձրացրել և անընդհատ միապաղազ օրօր են երգում մօտի գիւղերին:

Եռանկիւնու հարաւային կողմից՝ Քաստաղ պատմական գետակի փրփրակոյտ պղպճակների արևակեզ փայլերն են նայողի աչքերը ծակծկոտում, իսկ հիւսիսային կողմի մի ձորում Շաղկեր կոչուած գետակն է մրմնալով յառաջ հոսում և Փարբու այդիների ներքել, ոչ շատ հեռու տարածութիւն կտրելով՝ լուսուում, պապանձուում, ձայն ու ձոյնը փորբ ձգում, դաշտի երեսն է լնկնում և սուսիկ-փուսիկ, հանդամեջը ձղելով, գնում խառնուում է՝ Օշականից ցած՝ իւր մեծ քրոջը—Քասախին:

Քասախն ու Շաղկերթն իրար զրկած, իրար համբուրելով, քոյր-եղայրական սիրով անբաժան միացած՝ փոքր ինչ ներքե՝ իրանց մէջ հիւրասիրում են իրանց մայր Արագածի երրորդ գիտ որդուն—Աձրեր վտակին, որ գարունը մարդիկ ու գոմեշներ է խեղզում, իսկ ամառը խոպառ ցամաքում և ամենաշատը՝ մարդի ներքանը հաղիւ թաց անում:

Այս երեք հարազատները՝ մեծ եղբայր Քասախը, միջնակ քոյր Շաղկերթը և փոքրիկ քոյր Ամբերդը խօսքը մէկ արած լիզում են Մայր Ամերին սեպհական դաշտավայրերն ու Արարատեան դաշտի արևմտակողմի գիւղօրայքի հող ու արտերը:

Երեք գետակներն ևս իրանց ժայռակոյտ ձորախոսուներում բաղմաթիւ հնագարեան նշանաւոր յիշտակարաններ են ամիտուում:

Ամբերդի ու Քասախի զարզանդելի ձորերը, մանաւանդ, յայտնի են իւրեանց մեծամեծ, խոր և զժուարամատչելի քարայրներով, որոնցից շատերը սրբատեղիք և ճկնաւորների աղօթարան անուններ են կրում:

Պատկառելի կոչումներ վերլնծայուած են նոյնպէս այն շատ ու շատ աղբիւրներին և աղբակներին, որոնք երեք ձորերի քարածայռերի միջից դուրս հոսելով, խառնուում են գետակներին:

Ծանոնիսէ համեղածաշակ և ականակիտ աղբիւրը՝ Ամբերդի ձորի ականաւոր պարզորակ այդ ջուրը Հայոց հայրապետական վեհարանի յատուկ ըմպելիքն է:

Վմեն առաւօտ՝ Եջմիածնի գոմանոցից երկու ջորեպաններ՝ կըժերը համբերատար և տոկուն գրաստներին բարձած՝ իրանք էլմէջը նստած՝ բարձրանում են Արագածի լանջը և Տիւրական գիւղի գլխից լցնում կժերը ԿՇփանիսի սառնասառոյց ջրով, իջնում Տիւրական, ծերունաղարդ աւագ քահանային սափորների բերանը կնքել տալիս և նորից չորս ժամաշափ տարածութիւնը կտրելով՝ իջնում Արարատեան դաշտն և կաթուղիկոսական վեհարանի յետին դուռը բաղնում:

Մինչեւ հայրապետական աւագ շաթիրն իւր աչքով չըզննի Տիւրականի աւագ երեցի կնքի անկեղծութիւնը, ոչ ոք իրաւունք չունի ջորեպաններից կժերն ստանալ:

Աերեի, երբ և իցէ, ջորեպանների խարդախութիւնը յայտնագործուել է, անհաւատարիմ ծառաներին՝ անձներին նեղութիւն չըտալու չար գիտաւորութեամի՝ գուցէ՛, չեն ուզել Արագածի թումբը բարձրանալ և դաշտավայրի սևահողերից բղնած ճիշմահամ աղբըների ջրերն են վեհարան տարել:

Քանի մի աղբիւրներ, որպիսիք են՝ Արայի ծաղկաշատ լեռան ստորերկրեայ երակներից ծորած և ապա Քասախի ձախակողմեան ձորաթմբի քարափիների միջից գուրս ժայթքուած երկու գոչգոչիւն «Աղբակնելք» կոչուած աղբիւրները, առ-ը՞ Յովհաննիսէ անուն կրող փրկագործ աղբիւրը, նոյնպէս և այլ, մանր ու մեծ, զով ու պայծառ, համեղ ու անհամ, կծպծան ու տտիպ աղբիւրներն ու աղբիւրիները Քասախի մէջ են լցուում, Քասախի ջուրն են աւելացնում: Իսկ առատարուղիս Օխոտնակը, Լաղբվան կոչուած պարսկական գիւղի բազմաթիւ ծմծման աղբիւրիները և Խապիամահաների տակից անհամար բղխուածքները Շաղվերթ գետակը կաղմող ջրերն են:

Ոուրբ Յովհաննիսի աղբիւրն իւր անունն ստանում է Քասախի ձորագլխին կառուցած Յովհաննու վանքի հռչակաւոր մենաստանից, իսկ Օխոտնակը, կամ աւելի Ճիշդը՝ «Եօլն ալը» և Լաղբվանի ջրերը մեր երանաշնորհ՝ Ճարտասան Ղաղար Փարբեցու ծննդավայրի անսպառ պարգևներն են:

Լաղբվան. . . այնտեղ, ուր մի օր փառաշէն բարձրացած է

եղել Պաղարի վանը, կամ առանը, որի հիմքի տակից բղխում են մեր ասած անմահական ջրերը, այսօր 17 փլածածք կիսաւեր տներից կազմուած Աէլտւը կոչուած գող ու տկլոր պարսիկների մի գիւղի ստուերն է մնացել:

Վենք չը մոլորուինք մեր պերձախօս հռետոր թարգմանչին տեղ փարբեցի կոչելսվ, տեղ Վաղրվանը նրան ծննդավայր յատկացնելով:

Փարբին ու Վաղրվանն, եթէ այսօր երկու գիւղ են համարուում, եթէ առաջինը կիսահյալնակ, կիսապարսկաբնակ է, իսկ երկրորդը Սէվդլուների որջ, մի օր երկուսն էլ մի և նոյն առանի արևելքան և արևմտեան թաղերն են եղել:

Երկու գիւղի հեռաւորութիւնը իրարից կէս ժամաշափ տարածութիւն է, մի քանի այդի և նոյնչափ վարելահողեր թոյլ չեն տալիս փարբեցու ձայնը Վաղրվան հասցնելու. երկուսն էլ մի հողի, մի ջրի վրայ են շինուած: Յսել է՝ թէ Փարբին Պաղարի, կամ Վաղարի առանը, կամ վանն է:

Խնչպէս ասացինք՝ երկու գետակները՝ քասախն ու Շաղվերթը միմեանց համբոյր են տալիս հայ տառը գտնելու համար կեանքը յետ դրած, մեր անմահ Մեսրովը թարգմանչի հանգիստ առած Ըշական գիւղի այդիների վերջին՝ ուղիղ՝ եռանկիւնու արևմտեան սուր ծայրումը:

\* \* \*

Վաղը հայերէն շարադրութիւն ունինք ներկայացնելու Յակոբ վարժապետին (խօսքս հայագէտ Քակոր Կարենեանցի մասին է), մտածեցի ես և որդեգրական ընթրիքից յետոյ նստեցի և սկսեցի թուղթը խզմղոտել:

Այդ իմ մտածելու ձեն է, որ մինչև այսօր երկրորդ բնութիւն է գառել մէջս:

Կէս գիշեր անց էր, բոլոր ընկերներս խոր քնի մէջ մրափում էին. իսկ ես ոչինչ չըկարացի գրել միտքս ցրիւ էր ընկած:

— ի՞չ, ի՞նչ գալու է, թող գայ, վճռեցի ես և ձեռքս յուսահատօրէն օդումը ճօճեցի ու ընկայ մահիծ:

Յսում են՝ քնածն ու մեռածը մէկ է, բայց ամէն ժամանակ ճշմարիտ չէ այդ առածը:

Կլուխս բարձին դրած բոպէիցս՝ մինչև առաւօտադէմ բոլոր

ընկերակիցներիցս շուտ զարթնելս, քնած ասեմ՝ քնած չէի, ար-  
ժուն ասեմ՝ արթուն չէի:

Իբր թէ ես Աշտարակումն եմ՝ իմ հայրենի գիւղումը, և  
կարգում եմ Պաղար Փարբեցու թղթի այն երեսները, ուր ճշշ-  
մարտախօս պատմաբանի գանգատներն ու տրտունջներն են մեր  
հոգեռականների դէմ՝ Մովսէս Խորենացու ոսկրները ջուրն ածե-  
լու մասին \*):

Ոիրսու փղձկում է, գրքոյկը համբուրում եմ, ծալում եմ և  
ճանապարհ ընկնում, ուխտ եմ գնում ներկայ Լաղբան մահմե-  
տականաց գիւղը, ուղում եմ համբուրել Պաղարի վանքի աւերա-  
րակի մնացորդները:

Ես, իբր թէ, գնացի Լաղբան, ուխտու կատարեցի, երկու  
ձեռորերս միացրի, (Օխտնակի արծաթափայլ ջրից երեք կուց խմեցի,  
սիրսու հովացրի ու վերագարձայ, Աշտարակայ այդիների կողքով  
գնացքս ուղղեցի դէպի 0շական: Հանկացայ մեր թարգմանի ըների  
հայր թարգմանչի—Մեսրովքի գերեզմանը համբուրել:

Իսյց հէնց որ հասայ Աշտարակի և 0շականի միջառահմա-  
նը, որտեղից՝ եթէ Գլուխ կոչուած բլուրն առաջիս ցցուած  
չըլինէր, ալարդ կըտեսնէի Մեսրովքի այն ժամանակը կիսաւեր,  
իսկ այսօր չէն ու պայծառ՝ վկայարանը, հէնց որ հասայ, ասում  
եմ, այդ տեղը, չըդիտեմ ինչո՞ւ, ծռուեցի դէպի ձախի, դէպի քա-  
սախ գետը:

Երեի, կամենում էի բլոի միւս երեսով մտնել 0շական:

Դեռ չիջած Գերտուա ասուած տափարակը, որտեղից Քասակն  
է վլոչում, հանդիպեցի, ի՞նչ էր կարծում՝ ո՞ւմ. այն ժամանակը  
կենդանի և արդիս հանգուցեալ թափլիսի Զգլալին եկեղեցու րա-  
հանայ Մօյինենց տէր Ցոլհաննէսին, որից ամբողջ գիշերն էլ  
չըբաժանուեցի:

Ձիւնափայլ Լայնադիր, երկար մօրուքով, համեստադէմ ծե-  
րունի էր տէր հայրը:

Կիրա վերին կողմը խիտ և ծայրերը թել թել մօրուքի մաղե-  
րը պաղպամ էին ինչպէս ջինջ սպիտակ և նրբագործ կերպաս, իսկ  
նրա արծաթափայլ գլուխը յիշեցնում էր ինձ ձմեռուան արևոտ  
օրուան Մասեաց սուրբ կատարը:

\*.) Փարբեցու թուղթն այն ժամանակը գեռ տպուած չէր, Կարենեանցն եր  
մեզ պատմել:

Տէր հօր հեղահամբոյր դէմքին, նրա պատկառելի մօրուքին,  
նրա սև ու թուխ գրաւիչ աշքերին նայողի հոգին փառաւորուում  
էր: Գոնէ՛, իմ վերայ տէր Սոյինեանցի պատկերը այդպիսի հրեշ-  
տակային տպաւորութիւն էր թողնում:

Տէրտէրին տեսնելուս՝ ես կարծում էի, թէ տեսնում եմ մեր  
նախնի բաղմաշնատ սուրբ հայրերից մէկն ու մէկին:

Հէնց այդ էր գլխաւոր պատճառը, որ Օժիֆլսի իմ շատ  
ծանօթ քահանաների միջից անծասօթ տէր Սոյինեանցին ընտրեցի  
ինձ խոստովանահայր:

\* \* \*

Այս գիշեր տէր Յովհաննէն իւր սովորական քահանայական  
վերաբկուով չէր, նա հագած ունէր մոխրագոյն զարդար կոչուած  
կտաւի երկայն արխալուզ ոտքերին տրեխ ասեմ՝ տրեխ չէր, պարա-  
կական ճպատան սոլեր անուանեմ՝ սոլեր չէին. երկուսի մէջտե-  
ղը՝ մի տեսակ նորահնար ոսմամաններ էին. իսկ գլխին՝ սև,  
չնմաշ, արեւի ուժից գոյնը կորցրած, անորոշ գոյնի մի փաս էր  
ծածկել:

Տէր Սոյինեանցը միջահասակ էր, բայց այս անգամ սովորա-  
կանից երկու թիզ բարձրացել էր:

—Օրհնեա տէր, ասացի ես և շտապով ու երկիւղածու-  
թեամբ մօտեցայ տէրտէրի աջը համբուրեցի:

—Աստուած օրհնեացէ՛, բայց ես քո կարծած մարդը չեմ.

—Ի՞նչպէս, դու Սոյինեանց տէր Յովհաննէսը իմ խոստովա-  
նահայրը չեմ:

—Ո՞ւ հետո արի, ասաց ծերն ու առաջ ընկաւ Քասախի ձո-  
րամիջով գէպի վեր:

Ես դողացի, ծերունու խօսքերն անձս քստմնեցրին. հրաման,  
քան թէ հրաւէր էին նրա խօսքերը:

Ես հետեւում էի իմ սուաջնորդին և զնդր-զնդր դողացնում:

Ոտքերս ձորաքարերին էին գիշաւամ, քիչ էր մնում՝ վայր ընկնեմ:

Բայց ինքս էլ չէի հասկանում, թէ ի՞նչպէս էր, որ չէի

գլորուում և յաջող թուչկուում էի սալահարթ գետաքարերի և  
խոպտուուն ժայռաքարերի վրայով:

Շատ էի աշխատում, որ մի տեսակ հաւասարուեմ ինձ իւր

ետեից քարը տուող հրամանատուիս, բայց նա եղջերուից ու վայ-

րի այծից աւելի արագ էր իւր քայլերը փոխում սուր և բուժ, կլորակ ու չեցոտ քարերի վրայով:

Ո՞ենք անց կացանք Աշտարակի ձորովն և մտանք Մողնու ձորը: Չորը վերև ենք բարձրանում: Մենք հասանք յիշածս «Ապէտակ» կոչուած գոչգոչիւն աղբրներին:

—Արծարաւես, խմիր այս ազրիւրից, հրամայեց ինձ ծերունին, ուր որ քեզ տանում եմ, ջուր չըկայ:

Ես անզդայօրէն հնազանդուեցի:

—Վհա և «Ապէտակ» բուլքը, ասաց առաջնորդս և կանդ առաւ:

\* \* \*

«Ապէտակ» ասուածս ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրային զանդուած՝ Քասախ գետի ձախակողման ափին:

Քարից փափուկ և հողից պինդ այդ շաղախը սկսուում է գետափինից քեզ վեր և բարձրանում է մինչև անդնդախոր ձորի կէս տեղը: Ո՞սաւորապէս 200 քայլաչափ բարձրութիւն, նոյնչափ ևս լայնութիւն ամբողջովին սպիտակ լլքի նստուածքն է:

Քասախի ձորաթումբն ընդհանրապէս մեծամեծ ժայռերի կոյտերից է կազմուած, իսկ այս մի կտոր տեղը, ուր Ապիտակ լուլքըն է, ինչպէս ասացինք, կրային հողաթումբը է:

Քաջիշում էի ես Ապիտակ բուլքն և նրա վերին ծայրումը լլքի մէջ փորուած «Ճճառապէս»:

Հատ անդամ մանկութեան օրերա՝ բորիկ ոտքով աշխատել էի, արհեստական ոտնատեղերը ճանդուտելով՝ վեր մագլցել բայց ոչ թէ ես, ինձ նման շատ շատ անշնորհը մանուկներ արել և անում են այդ փորձը և գլուխուել ու գլուրուում են:

Հարեւաղդաբար՝ բլքի տակին ոչ մի քար չըկայ, փափուկ հողը՝ կանաչ սէզով ծածկուած՝ իշնում է մինչև գետը, ապա թէ ոչ, շատ վայր սահողների մեծ կտորն ականջը կըմնար և եթէ ժէտարիը դարաստափից հարթատափի չըփոխուած լինէր, գլորուողը գետի մէջ կըլողար:

Եսո՛, եղել են և այսօր էլ կան:

Հասակաւոր երիտասարդները սիրտ չեն անում, բայց հարիւրիցը մէկ ճարպիկ ու անահ, աշտարակցի փոքրիկ սատանայ-մա-

նուկ ոտքերը հանած, պստիկ մատներով ճանդուտելով վեր է բարձրանում և մտնում «Ճնշուռի արդուր»:

(Շ), սարսափելի է նայելը, մանաւանդ Ճ'գնաւորի տեղի մուտքի առաջը, ուր ոչ թէ հարկաւոր է վեր բարձրանալ, այլ ծոռւելու է բլքի լայնութեամբ:

Այդ մի և նոյն է, թէ կիսաբոլորակ մաքուր սուաղած պատի բոլորակածեն լայնութեան վերայ փոքրիկ փոսիկներ լինեն փորուած, ուր ոտքիդ թաթերը հազիւ կըզետեղուին և դու այդ փուներից չոքէչոք անելով՝ պատի արևմտեան ներքին անկիւնից բարձրանաս մինչև արևելեան վերին անկիւնը:

Կատուն իւր սուր ճանգերով հազիւ կըյաջողի, իսկ իմ հայրենակից ճարաձնի, աներկիւզ գժատուտ մանուկների մէջ Ապիտակ բուլքը բարձրացողներ կան:

\* \* \*

Ինչպէս ասացի, մենք ծերունու հետ Սպիտակ բլքի տակին ենք:

— Ետս արի, նորից տուեց նա վճռական հրամանը և ինքը վեր բարձրացաւ:

Ուզում էի ձայնել թէ զուր աշխատանք է քո կողմից, ինքը շատ անգամ եմ փորձել Ճ'գնաւորի տեղը համբուրելու և վայր երմ սահել, բայց լեզուս կապուեց, ես կարկամեցի և ոտքս գրի առաջին ոսնատեղին:

Ով զարմացք, մենք Ճ'գնաւորի տեղումն ենք: Այս անգամ ոտնամաններ հանելու կարիք չեղաւ, ես գնում եմ, որպէս թէ, մի գաշտահովտի ծաղկները տրորելով:

\* \* \*

— Ահա, որդեակ, իմ գիշերային բնակարանս, ասաց ծերը:

Ո՞ի փոքրիկ փորուածք էր այն, ուր կարող էին տեղաւորուել չորս հինգ մարդ:

Այդ տնակը, եթէ կարելի է այսպէս կոչել պատեր չունէր աղուեսի բնի նման արուեստական կերպիւ դուրս էր փորուած Ապիտակ բլքի մէջ:

Վաշուշտ, մեր աղօթամատոյց նախնի սուրբ հայրերի ջերմեռանդութեան մնացորդ յիշատակարաններից մինը. և ի՞նչ յարմար մենարան սաղմոս մրմնջելու և գրաւոր աշխատութիւն արտագրելու: Ընչով կարող ենք հերքել, որ մեր երանելի մատենագիր հայրերի մեղ աւանդած երկասիրութիւններն այսպիսի առանձնարանների ծնունդներ չեն:

Երեակայութիւն չէ ասածս, տեսածս երազի տպաւորութեան պտուղն է. լիիր, որ հաւատաս: Ճգնաւորի տեղի արևելեան կողմը՝ ուղիղ միջավայրումը փորուած էր երկու թզաշափ մի խուլ պատուհան, կամ գարակ: Նրա մէջ դրուած էր մի սեացած կաւէ ճրագ<sup>\*)</sup>: Ամրող պատուհանը ճրագի ծխից ապուխտ էր գարձել:

Պատուհանի աջ ու ձախ կողմերում քանդակուած էին երկու մանր խաչեր, խակ խաչերի տակին յատակից մի ոտնաշափ բարձր մի մարդու պառկելու տեղ էր շինած, որի ոտնակողմում՝ նոյնպիսի բարձրութեան վերայ՝ գրուած էին, չբգիտեմ մագաղաթի, թէ թղթի մի հաստ ժալք և մի հողէ կծուծաձեւ փոքրիկ անօթ, մէջը մի սագի փետուր:

— Ամբուրիր խաչը, ասաց ծերը, սպա ես կըլցնեմ հետաքըբրութիւնդ:

Զէի կարող ըս կատարել տիրոջս հրամանը:

Այս րոպէին այլապէս իրաւունք չունիմ ես նրան կոչչելու. տէրը միայն այսպիսի վստահարար հրամաններ կ'արձակի իւր ծառային:

Խաչը համբուրեցի և ըս կարողացայ բռնել աչքերիցս ակամայ գուրս ցայտած արտասուքները:

Այս րոպէին ես մի անդիտակցական էակ էի: Աչքերիցս ոչ թէ արտասուք, կրակ էր թափուում: Ես հետեւում էի իմ տիրոջը. նա ծնկան վերայ եկած՝ բազկատարած աղօթք էր մրմնջում:

Ա երջապէս նա աչքերը սրբեց իւր արխալուզի քղանցով և ժպտաց երեսիս:

Աստուածառաք, հայրական, օրհնալիր ժպիտ էր այն:

— Տէր հայր, ողեսորուեցի ես ու հարց տուի, դու ո՞րտեղից էիր գալիս, ընչի՞ այստեղ եկանք, ո՞ւր է քո վերարկուն:

Տէրտէրը պատասխանի փոխարէն վերցրեց հաստածալ տետրն և ձեռքս տուեց:

\*) Ճգնաւորի տեղի նկարագրութիւնն այսօր էլ նոյնն է. ճրագն այժմ ես կայ:

Տետրակի վերնագիրը կարգացի և սարսուեցի: Աչքերու շարուեցին, գլուխս պտոյտ առաւ, անձա շարունակ փշփշոտում էր. երակներումն, իբրև թէ, սառն աղբիւրի հոսանք էր վազում, ամող մարմնիս միջով ելեքտրական ցնցիւն էր անցնում:

Տետրի վերնագիրն էր.

### «ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, ՊԱՏՄԱԿԹԻՒՆ ՀՅՑՈՅ»:

Կոր բան չէր իմ տեսածս, Խորենացին, համարեա, բերանացի գիտէի, բայց, այ, թէ ի՞նչ էր ինձ այլայլողը:

Տետրի երեսին, ինչպէս ամենաջինը հայելու մէջ՝ տեսայ ես ցոլացած իմ ուղեկցիս պատկերը: Կա ինքը թղթի երեսից իւր խոր ու սուր աչքերով սլաքի նման շեշտում էր իւր մազնիսալից հայեցըն ուղիղ իմ աչքերիս մէջ:

Հետզիետէ պատկերը մեծանում էր.... Կա արդէն դրբի երեսից հեռանում է.... արդէն դրբոյկն իւր նախկին գրութիւնը չունի. Կա կերպաւորուել է, և փոխուել այն մարդը, որ փոքր յառաջ հետո խօսում էր.... Կա անխօս կանգնել է առաջիս: Աս նրա ճակատին կարգում եմ դրբի վերնագիրը. «Մովսես Խորենացի, Պատմակիւն Հայոց»:

— Այրիկ, ուուրս թուաւ բերանիցս այս խօսքը, զու ևս արդեօք:

Ու մի խօսք:

Օգում եմ, որ սիրտս քաշում են, նուալում եմ, աչքերու սեանում, ուուրերս թուլանում է, ուշըս գնում է:

Եաւ մնացի անզգայութեան մէջ, թէ քիչ չեմ յիշում, այս քանը գիտեմ, որ ծերունին ինձ իւր կողքին նստացըել էր և քներակներս տրուրում:

— Ամյըր....

— Այս, որդեակ, այս, ես եմ, Կա ինքն թշուաս հայ աղղի ապարազդ պատմագիր Մովսէս Խորենացին: Այստեղ եմ արտասուր թափելով գրել մեր անտէր ազգի ցաւալից պատմութիւնը: Այս ծալքը, որ տեսար, և որ ահա դրուած է կաղամարի մօտ, ծայրէ ի ծայր գրուած է գիշերները պատմանում դրած կիսաշէջ վառուող ձիթի ճրագի աղօտ լրսուլ:

— Բնչի գիշերներն և ոչ ցորեկները, հարցըրի ես:

— Հորեկները . . . ցորեկներն ուրիշ պարտականութիւն ունիմ՝ կատարելու, ցորեկները լինում եմ այն բլրի միւս երեսին, որտեղ քեզ հետ բերի:

— (Օշականում:

— Այս, և ոչ ուրիշ տեղ:

— Ի՞նչ գործ ունիս այնտեղ:

— Այս, դառն և սառն ժպիստ արձակեց Քերթողահայրը, հապա էլ ուր կարող եմ լինել եթէ ոչ իմ բարերար Հօր, ազգիս մեծ երախտաւորի սուրբ շիրմի մօտ:

— Այս, այս, գնում ես համբոյր տալու սուրբ Մեսրովի գերեզմանին:

— Ու միայն համբոյր տալու, սիրելի հայի զաւակ, ասաց ծերը, այլ և սպասաւորելու: Երկար տարիներ են ահա, որ ես Մեսրովի վկայարանում ժամակոչի պաշտօն եմ կատարում: Խընկում եմ նրա դամբարանը, մաքրում, աւլում, ջրում, ջրջրհանում եմ տաճարը. Մեսրովի գերեզմանին սպասաւորող քահանաների ամենատեսակ հըռ հրամանակատարն եմ:

Խսկ երբ մութք գետինն է առնում, ծնկան վրայ եմ գալիս սրբի սոգերի տակ, նրա կենդանի օրհնութիւնը հոգեպէս առնում եմ և հոգւով զօրացած՝ գալիս եմ իմ այս մենարանը՝ ազգիս յիշատակն անմահացնելու:

— Հայրիկ, ազգիս ամենամեծ բարերար, գոչեցի ես ու փաթաթուեցի ծերունու սոգերը:

Այս, երանի թէ երկարատև լինէր գիշերը. ես արթնացայ և բազուկներս իրար եկած գտայ:

Երազ էր այս, թէ ճշգրիտ:

\* \* \*

— Ահա շարագրութեան պատուական նիւթ, մոտածեցի ես և թարմ յիշողութեանս վաս արգասիքը գրոշմեցի թղթի վերայ ու սիրտ ի թունդ գտարան շտապեցի:

\* \* \*

— Տղայք, քթախոտը սուր քթի ձուաձև ոնդունքները խցկելով, ասաց բարեյիշատակ Յակովը վարժապետն իւր բազմանշա-

նակ հայեցուածքով ու կիսադողոջիւն ու կիսաժպիտ արտասա-  
նութեամբը:

Տողորեքեան ականջներս սրեցինք և սպասողական անհամբեր  
դիրք առանք. վարժապետի այդ կերպարանքը նշան էր քաղցր  
տրամադրութեան. մենք հասկացանք, որ վարժապետը հետաքրքիր  
նորութիւն ունի հաղորդելու:

Լոյս գառնայ Յակովը Կարենեանցի հոգին. քաղցր յիշողու-  
թիւններ էլ և տպաւորել իւր աշակերտների սրտումը:

Հենց որ հեռութից երեսում էր 60 տարեկան ծերունու վա-  
րժնդամե, ճաղատ գլուխը, բարձր հասակը, ուսագլխներից փոքր  
ինչ դէպի առաջ կորացած, սկսում էինք մեր դիտողութիւններն  
անել ուրածի է այսօր վարժապետը, թէ տիտուր, բարկացած է,  
թէ անդորր: Մեր ենթագրութիւնները համարեա երբէք անձիշդ  
չեին լինում: Եցրբ որ գասարանի գուռը բաց էր անում, և գեռ  
ոտքի մինը շէմքի այս երեսին էր լինում և միւսն այն, քթի սուր  
ծայրը մեզ ամեն բան պարզ ասում էր:

Ա արժապետի հայկական երկայն և ըոր սրածայր քիթը նրա  
տրամադրութիւնը չափող գործին էր:

Նշէ վարժապետը գերերջանիկ Կերսէս կաթուղիկոսից այն  
օրը սիրալիր ընդունելութիւն էր գտած, եթէ տանից ուրախ էր  
դուրս եկել, եթէ իւր բաղմակողմանի գործերի մէջ անհաճոյ դէպ-  
քեր չեն պատահած, այսպիսի յաջողակ դիպուածքներում Կարե-  
նեանցի քիթը լայնանում, բոլորականում էր, իսկ եթէ ինչ և իցէ  
գործում տհաճութեան նշոյլ նշմարած լինէր, քիթը սրուում էր  
և դառնում ձկնկուլու կտուց:

Այդպիսի օրերը մենք մեզ թոյլ չէինք տալիս մտերմական  
կերպարանք առնել կամ գլուխ բարձրացնել մինչև իւր կողմից  
հրաման չէինք ստանում:

— Տղայք, ձեղանից ում ձեռքն է լնկել 1849 թուի Իազ-  
մավէպը, հարց տուեց վարժապետը:

Ատանական, այդ թուի Իազմավէպ ոչ մէկս չէինք տեսել  
գպրոցի մատենադարանից անհետացել էր:

Միջանկեալ ասենք, որ Կերսիսեան գպրանոցի գրատան ճա-  
կատագիրը ձախ ձեռքով է գրուած: Ծատ ու շատ գրքերի գոյու-  
թիւնը յայտնի է միայն մայր ցուցակի ցանկի մեջ: 1849 թուի Իազմա-  
վէպն այսօր ևս չը կայ գպրոցապատկան Իազմավէպների շաբում:

— Ձեզ չեմ հարցնում, ո՞վ է կարգացել 1849 թուի Իշաղ-  
մավելպը, կրկնեց Կարենեանցն իւր հարցը:

— Ո՞իթե ձեզ յայտնի չի, որ գպրոցի գրադարանից Իշաղ-  
մավելպի մի քանի համարները անյայտացել են:

— Ես գտայ ու կարգացի, աշա բերել եմ. և տեսէք, թէ  
ի՞նչ գանձ կայ մէջը, գանձ, որ գետնի խորքերից փորել հանել է  
մեզ համար մեր մեղուածան ազգային քնարը:

— Հ. Պ.— Նահապէտը, միաբերան գոչեցինք բոլորեքեանս:

— Ա. Յ., այո՛, Հ. Պ.— Նահապէտը միանգամայն պարաւառ-  
րացնում է մեզ. լսեցէք, թէ ի՞նչ սրանցելի գիւտ է արել:

Ա արժապետը Իշաղմավելպը ծանր ծանր բանալով, իւր սո-  
վորութեամբ՝ կատակներով սկսեց նախարանը,

— Կարգա՞մ, թէ չըկարգամ, լսելու ախորժակ ունիք, թէ  
թողնենք հետեւեալ գասին: Հապա՛, ո՞վ է կանխօրէն այս նիւթի  
վերայ մի քաղցր, իմ հաւանած շարադրութիւն ինձ կաշառը խոս-  
տանում... ի՞նչ է, փորներդ ե՞փ է գալիս... ատամներդ վրաս  
կրածո՞ւմ էք... շտապո՞ւմ էք շուտով լսել... չէ՛, թանգադին  
ապրանքն էժան չեն ծախում... շարադրութիւն եմ պահանջում,  
շարադրութիւն, տեսնենք ո՞վ է գրում:

— Ե՞ս, ես, ես, ես, ե՛ ե՛ ե՛ սսս...

— Ե՛, Ե՛, Ե՛, հերիք է, ականջս ծակեցիք, նախ կար-  
գանք՝ յետոյ:

Ա արժապետը նորից քթածակերին կերակուր տուեց և սկը-  
սեց իւր ազդու, դողդոջիւն և բոմբ ձայնով կարգալ 1849 թուի  
Իշաղմավելպի 51 երեսը Հ. Պ.— Նահապէտ—Ալիշանի «Մովսէս  
Քէնոնդահայր հայոց» վերնագիր կրող յօդուածը, որը տաճկահայ  
բարբառով լինելու պատճառաւ՝ ես այստեղ համառօտ բոլանդա-  
կութիւնն եմ քաղլուածօրէն գրի առնում:

... Առվակս Կորենացին երբ վերադառնում է Աթէնքից  
և Հայաստանի երկու աշխատաւոր ամողներին— Աահակ Պարթև  
հայրապետին և Մեսրովը թարգմանչին գտնումէ վախճանած, նա խո-  
րին սգի մէջ է մտնսւմ, ողըում է անդառնալի մեծ կորուստը և կամե-  
նումէ՝ իւր բարերարների յիշատակն անջինջ անելու համար, նրանց  
թերի թողած գործը շարունակել ուղում է իւր ստացած գիտու-  
թեան լըյու ծաւալել հայ աշխարհի խաւարը փարատելու:

Ազգասէր երիտասարդի սրտում վասուած կրակը մնում է

մոխրի տակին անթեղած, պահած, նա անդօր է գտնուում իւր նպատակն ի գլուխ հանել, հայ աշխարհի աւերմունքը, պարսից յարուցած հալածանքները, հայ նախարարների անհոգութիւններն ու թշնամութիւնները, եկեղեցականների սառն անտարբերութիւնն և ուսումնատեցութիւնը, այս ամենը միացած՝ խանդավառ երիտասարդ գիտնականի թափը կոտրում են, գործին արգելք են լինում:

Այս ժամանակն էր ահա, որ եռանդաբեկ Խորենացին իւր սրտառոջը ողբն է երգում. «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ. . . . ովկ «այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ովկ ուրախացի ընդ յա- «ռաջազիմութիւնն մասամբ ինչ յաղթահարեալ ովկ զմեզ սիո- «փեսցէ գոչելով. . . . Վկ ոք ի ձենչ թոշակս յաղագս մեր. ովկ ոք «վարդապետացն մաղթանս. ովկ ոք բան յօժարեցուցող կամ յորդո- «րական. ովկ ոք յերթալ մեր բեռնարարն, ովկ ոք ի գալն մե- «րում հանգիստ, կամ տուն, կամ օժանոց մեզ պատրաստեաց»:

Ի՞նչ էր մնում վշտակոծ Քերթողահօրը: Ահա, թէ ի՞նչ: Մի օր էլ յանկարծ լսուում է, որ Խորենացին չը կայ:

Կատ որոնում են, շատ հարց ու խնդիր են լինում, իւրնդ- րակները տեղ չեն թողնում՝ ոտնտառկ են տալիս. չը կայ, որ չը կայ:

Այն ժամանակի կաթողիկոսը Մովսէսի նախկին դասընկեր Գիւտն էր:

Խորենացու կորուստը Գիւտ կաթուղիկոսի սրտին ևս ոչ պա- կաս ցաւ է պատճառում վեհ. Հայրապետն իւր կողմից անում է ամենատեսակ կարգադրութիւն՝ իւր հին ընկերին գտնելու համար, բայց և նա ձեռները ծալած՝ յետ է նստում:

Երեսուն երկար տարիներ Մովսէսից ոչ մի համբաւ չի լսու- ում, Խորենացին իսպատ մնուացուում է:

Ի՞նչ անիութութիւն, երեք տասնեակ տարուայ շրջանում մի- նը չեղաւ, որ շըցանկատ լինէր և աչքի առաջը գիտէր:

Աչ ոքի մորից չէր անցել թէ հեռաւոր օտարութիւն քա- շուած, կամ անողոք մահի հարուածին զոհ համարուած անձնաւորու- թիւնը իւրեանց աչքի առջև շըջումէ: «Աչք են և ոչ տեսանեն». Հայաստանի ապագայ լուսատու ջահն իւր մեջ ամիգովիած լուսով 30 տարի ծածկուած է եղել սուրբ Աջմիածնի Շողակամի հովանու ներբոյ. 30 տարի Մովսէսը Աջմիածնի շըջակայքից չէ հեռուացել:

Բաղդաւո՞ր օր, հայի կորած անգին գանձը՝ 30 տարուց յե- տոյ՝ մի օր գտնուում է (Օշականում):

Ա աշան Ամատունի իշխանի շինած վկայարանը, ուր հանգ-  
շում էին Մովսէս Խորենացու հարազատ քեռի հայոց գիրը գըտ-  
նող Մեսրովը նշխարքը, եղել է Քերմթողահօր կայանը:

Եւ աշա ի՞նչպէս:

Գիւտ կաթողիկոսը նախնի սուրբ և անձնադիր հայրապետ-  
ների օրինակին հետեւլով՝ մի անգամ այցելութիւն է անում վի-  
ճակի եկեղեցիներին:

\*Ա, ա գալիս է և (Օշական՝ (անշուշտ Մեսրովը գերեզմանի  
վերայ հոգեհանգիստ կատարելու, կաւելացնենք մենք):

Տեղական տանուտէրը կաթողիկոսին հիւրասիրում է; Աեղա-  
նակից են լինում բազմաթիւ եկեղեցականներ և իշխաններ:

Խնձոյքի ժամանակ առաջարկուում է, ի պատիւ կաթողիկո-  
սի, մի մի դովեստ երգել, որ և կատարուում է; Երգեցողութիւ-  
նը մեծ հաճոյք է պատճառում բազմականներին և հանդիսատես  
ամբոխին:

Ու որ ուշադրութեան չեւ առնում երկար ժամանակ խուժանի  
մէջ կանգնած, աղքատի ցնցոտիները հագին, լոիկ մնջիկ, հանդի-  
սատես ծերունուն:

Ա երջ ի վերջոյ ալեւորն աննկատ չը մնաց:

Հանդիսատեսների միջից մի երիտասարդ ծերունուն նախօրօք  
ճանաչելիս է եղել. նա բազմիցս տեսած է եղել ծերին (Օշա-  
կանում և գիտեցել է, որ ալեւորը լաւ ձայն ունի; \*

Երիտասարդը մօտենում է անծանօթին և ասում. ծերուկ, ըն-  
ըն մի երգ էլ դու չես երգում ի պատիւ մեր կաթողիկոսի:

Ալեւորը պատկառանքով յետ է քաշուում և ասում. ես մի  
տգէտ պանդուիս ծեր եմ:

Վյու ու այն կողմից ձայնակից են լինում երիտասարդին. մի  
ուրիշն ուղիղ մօտենում է և աղքատի երկար մօրուքը շոյելով,  
ուղղակի քարշում հայրապետի առաջ և ստիպում անպատճառ երգել:

Մէկ էլ ի՞նչ տեսնես, յանկարծ ծերը փոխուում, նոր մարդ  
է գառնում: Մարդը նոյնն է, բայց նոր գէմք, նոր ձայն. կար-  
ծես Մովսէս մարդարէի ճառագայթաւէտ լոյսը ծերի վերայ ի-  
ջաւ: Նա իւր գետնակոր գլուխը վեր է բարձրացնում, կուրծքը  
դուրս է ձգում, երեսը կաս-կարմիր վառուում է, աչքերը կրակի  
ողէս փայլիլում են, շըթունքներն սկսում են վարժ նուագարանի  
նման շարժուիլ:

Ալմորի ծերացած ծոցից մի երիտասարդական աշխուժալի  
ձայն է դուրս գալիս, հնացած քնարի ձայն, որ քանի հնանում է,  
այնքան անուշ և բաղցրահնչիւն է:

Եւ ահա ամենքի ապուշ կտրած ժամանակը ծերունու զան-  
գականման ձայնը՝ երաժշտական ոլորուն և նուրբ ներդաշնակու-  
թիւնով՝ հետևեալ երգն է գեղգեղում.

«Ո՞վ արքայակերպ ը տէր քահանայապետ ը սուրբ

«Եւ ը հովեւ բարի,

«Որ յերկնայինուն նըմանեալ հրեշտակատեսիլ

«Երբգեմըք քեզ ը զերգս, քեզ ը զերգս, երգեմըք

«քեզ ը զերգս, երբգեմըք քեզ ը զերգս:

«Եւ ի շըմանց քոց բըղնեալ ջուր կենդանի

«Երանգ երանգ ներբներական ծաղկօք.

«Երբգեմըք քեզ ը զերգս», և այլն:

«Ա ասն որոյ և զքառիցն աւետարանին գետք

«Օ անուշն և զօդտակարն,

«Երբուցանելով ըզպասքումըն ծարաւեաց.

Երբգեմըք քեզ ը զերգս», և այլն:

«Երբ լուռմ է. նա էլ չի շարժուում, բայց երկար ժամա-  
նակ լսողներն էլ լուռ ու անշարժ են. նոցա թուռում է թէ ծե-  
րունին գեռ դայլայլելով կլկլացնում է իւր «Երդէն+ +էլ պէրդ»:

Հենց այդ ժամանակն էր, որ ծերի մօտ կանգնած մի երի-  
տասարդ, որ ամենքից աւելի էր այլայլուած՝ էլ չի համբերում.  
Նա յառաջ է վազում դէպի կամուղիկոսը, ընդհատում է ամենքի  
լուռութիւնն ու զարմացըն և գոչում է.

— «Ո՞վ սուրբ հայրապետ, սա է 'ի ձէնջ կորուսեալն՝ ծերա-  
ցեալ աշակերտն Սահակայ և Սեարովքայ՝ Աթենացին Մովսէս»:

Կամուղիկոսի խելքը, գրեթէ՛, գլխից թռել էր. նա կէս  
թմրած, կէս արթուն, թէպէտ աչքով տեսածը չի հաւատում;  
բայց լսածը հաւանում է և խոր քնից զարթնածի նման՝ գոչում,  
հառաջում է. «Ո՞վ աւետական ձայնս, ու տայր ինձ տեսանել զնա»:

Երիտասարդի աշքերից արտասուքը գետօրէն հոսում էր, սիր-  
ութ տակն ու վրայ, կիսաշունչ հազիւ կարողանում է նորից գոչել.  
«Երդարութեամբ ասեմ, սա է ծերացեալն Մովսէս»:

Վհա այն ծերն է եղել մեր անմահ խորենացին, որ աղքա-  
տի քրձի մէջ կոլուած՝ 30 տարի երբեմն (Օշական էր գնում և

լիզում իւր քերսի Անեսովվեհ-Եղիսիս անխօնջ բարերարի գերեզմանի հողը, երբեմ լուսաւորչաշէն վկայարաններն ու Կըրարատեան Ապար սուրբ Խջմածինն էր գաղտագողի այցելում:

Իսկ այն երիտասարդը, որ (Օշականումը ճանաչեց Մովսէս Խորենացուն, լինում է նրա խորհրդապահ աշակերտը, որը յուղուած՝ իւր ուժիցը վեր է համարում գաղտնապահ լինելու:

Ենչնարին էր Վերթողահօրն այլ ևս թագչիլ նրա հայեաց-  
քըն իրան մատնեց. Գիւտ կաթուղիկոսն անձամբ ճանաչեց և վեր  
թռաւ տեղիցը, դրկախառնուեց իւր անզուգական աշակերտակ-  
ցի հետ:

Կ՞Նչ տեսարան էր, երկու, մէկը միւսից վեհ և վսեմ ծերունիք խանգակաթ սիրով իրար գուրում գուրգուրում են, իսկ հանդիսատեսները զմայլուած՝ և՛ ուրախ են, և՛ լալիս են, և՛ ժպտում են, և՛ արտասուռում են:

Այս լուրն ամէն տեղ սիռուում է: Ըստապում են այնուհետեւ հեռաւոր տեղերից լշմիածին Պատիթ անյաղթը, Խորենացու ընկերներից շատերն և բազմաթիւ իշխաններ ու ժողովուրդ, համբուրում են, կարօտներն առնում են և հազար տեսակ հարցմունքներ են տալիս ու յանձնաբարութիւններ են անում բազմակարություն:

Պիւտ կաթուղիկոսը նշանաւոր գիւտ էր արել. այլ ևս նա ձեռքից չէր թողնիլ իւր հազուագիւտ գիւտը. նա մեր Վերթողահայր Առողման խորենացուն ձեռնադրեց Իագրեսանդրայ արքեպիսկոպոս, ինչպէս պատմում է գրիչը, (վերջացնում է անոյշյուրուածը և Պ. Ա. Ա. ամափետ-Վ. լիշանը):

三

— Ե՞նչէ, սիրելիս, լսեցի մի ժամանակ Յակովը վարժապետի խօսքն ինձ ուղղած:

Ես ոչինչ չը հասկացայ և ոչինչ չը կարողացայ պատասխանել:  
Օգագի, որ գլուխս թագ գրուած է վարժապետի կունդ:

Ուշքս տեղն եկաւ. գլուխս բարձրացրի և վարժապետի աշքերին նայեցի:

— Ե՞նչ պատահեցաւ թեզ, Հարգը եզ ինձ Լարենեանց:

— Եռ կարդա՞ շարադրութիւնս և կիմանար:

Ոեղանի միջից հանեցի տետրակս և մեկնեցի վարժապետին:  
Յակովը Կարենեանցը ի լուր ամենեցուն բարձրաձայն կար-  
դաց իմ երազը:

Ծողորեցունց բերանը մնաց բաց:

Օանդակը տուին:

— Խորհրդակցութիւնը հետեւալ անգամ, ասաց վարժապետն  
և շարադրութեանս տետրակը Ծաղմալէպի հետ առաւ, դուրս գնաց:  
Այն բերելն է, ինչ բերում է:

ԿՀՀ Հայոց



# ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՅՔ-ԵՂԲԱՑՔ

Եղբայրն ասաց՝ Քյոր ըռւնեմ ես,  
Քյորն ասաց՝ իմ աղքօր արե.  
Երկրիս վրայ է միայն այսպէս,  
Ոչ երկնքում՝ այնտեղ վերե:

Քյոր ու եղբայր, արե լուսին,  
Ապրում էին հաշտ միասին,  
Մինչև Աստծուց նոցա պատուէր  
Հասաւ՝ լոյս տալ օր ու զիշեր:

Լուսինն ասաց. «Եղեղ քուրիկ,  
Ես տղամարդ եմ՝ դու թզյլ աղջեկ,  
Դուրս եկ ցերեկ՝ իսկ ես մըթան»,  
Արեն ասաց. «Հա աղքէր ջան»:

Եշ՝ այն օրից էլ համաձայն  
Կատարում են պաշտօն բաժան.  
Բայց չեն կարող դալ իրար մօտ,  
Ու քաշում են միմեանց կարօտ:

Եւ լուսինը հալմաշ լինում  
Իւր աննըման քըրոջ սիրուն,  
Եւ մոլորուած՝ կէս դիշերին  
Փընտոռում նորան մէջ ամպերին:


Եղբայրն ասաց՝ քոյր չունեմ ես,  
Քոյրն ասաց՝ իմ աղքօր արև.  
Երկրիս վրայ է միայն այսպէս,  
Ոչ երկնքում՝ այնտեղ վերև:

Լուսնակ եղբայրն ջան էր ասում  
Արև քըրոջ և ջան լըսում.  
Մինչև որ ալարտքն՝ հրաման վերից  
Բաժնեց ընդմիշտ արև լուսնից:

Իսկ քոյրն արև կարմրատակում  
Արշալուսին, վերջալուսին՝  
Եւ ցերեկներ ծանրը շըջում,  
Բայց չէ գտնում եղբայր լուսին:

Եղբայրն ասաց՝ քոյր չունեմ ես,  
Քոյրն ասաց՝ իմ աղքօր արև.  
Երկրիս վրայ է միայն այսպէս,  
Ոչ երկնքում, այլ է վերև:

Հայ - այսօն.



ՀԱՅ ԺԱՂՈՎՐԴԱԿԱԽՆ ԱՐԱՍՊԵԼ

Շընկշանկալով հոգին է փրչում  
Զով Բինդեօլի լանջերից,  
Գոչգոչալով ուղինն է վազում  
Խոր Բինդեօլի ձորերից:

Հօրուտ-մօրուտն ծաղկանց ծովում  
Բուրում է բոյր ու երդե՛ր.  
Շուխիկ-հիւրին լըճի ծոցում  
Լողանում է անընկեր:

Հըրեշտակը երկրի կեանքից  
Դիւթուած, ապշած լիուլի՛  
Վայր է ընկնում աստղոտ երկնից—  
Բնկնում զիրկը Բինդեօլի:

Փէրուղ-երկինքն հըրեշտակին  
Կարեկցում է, ցաւակցում,—  
— «Ա՛խ, ափսոս քո անմահ կեանքին,  
Որ չը փայլեց Դըրախտում»...

Բիւրեղ լըճից ցօղն է ելնում  
Ծիածանի ժըպիտով.  
Ծաղիկների ջինջ բողընջում  
Հանդ է առնում շողալով:

Զըմբուխտ երկիրն հըբեշտակին  
Ողջունում է, փաղաքշում.—  
— «Ալս, երնէկ քո մատաղ կեանքին,  
Որ պիտ' ծաղկի Բինգեօլում»...

Վառ անըրջում ուղին է մընչում,—  
Ծըփփում են սէզ ու արօտ,  
Բըլըուլների հցյլքն է շընչում,—  
Նընչում է սէզ ու կարօտ...

Անուշ-անուշ հոն է փրչում  
Զով Բինգեօլի լանջերից,  
Ոլոր-մոլոր ուղին է փախչուս  
Խոր Բինգեօլի ձորերից:



### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒ

Արեն հասաւ սարի գըլխուն,  
Դար ու դաշտում լուս չը կայ,  
Հաւք ու թռչունք մըտան խոր քուն,  
Ալս, ինձ համար քուն չը կայ:

Լուսնեակն ընկաւ երթըկից ներս,  
Կըշեռքն ելաւ երկընքում,  
Զով հովերն էլ մըթընշողէս  
Աստղերի հետ են զըրցում:

Սիրուն աստղե՞ր, անուշ հովե՞ր,  
Եարըս ՞ւր ա էս զիշե՞ր,  
Պարզ երկընքի նրշխուն աչքե՞ր,  
Եարիս տեսա՞ք էս զիշեր...

Լուսը բացուաւ, դուռը բացուաւ,  
Ամպուզամալ է—թօն կուդայ,  
Ալ ձին եկաւ, անտէր եկաւ,  
Եարըս ՞ւր ա, որ չի գայ...

Արքայի բանահայտ.





## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

S. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԵՅ \*

Բ.

Գ. Բ. Կ. Ա. Ն Մ Ա. Ր Դ Ը

Եթէ Նար-Պէյ ուրիշ ծառայութիւններ մատուցած ալ չըլլար՝ իր զրական կեանքը կը բաւէր որ ազգովին երախտապարտ մնայինք իրեն:

Բանաստեղծ ծնած էր ու բանաստեղծ մեռաւ: Մահուան մօտ զրուած իր մէկ ոտանաւորը գոհար մըն է արդի զրականութեան մէջ, և աւելի՛ կը շեշտէ իր վազաժաման կորուստը: Նար-Պէյ տակաւին ապրելու էր՝ օժաելու համար մեր աղքատ զրականութիւնը իր կատարելազոյն երկերովը. մանաւանդ զի ինքը գեռ վերջին ատենները զգացած

\* ) Խնչպէս յայտնել էինք «Ղրաքսի» Ա. գրքում, այժմ տալիս ենք մեր նոյն աշխատակցի կազմած Խորէն «Նար-Պէյի գրական գործունէութեան տեսութիւնը»: Գալ տարուայ Ա. գիրքը պարունակելու է հանգուցեալ արքեպիսկոպոսի հասարակական ընդարձակ և նշանաւոր գործունէութեան մանրամասն տեսութիւնը: Յաւալի է միայն, որ «Գրական Վարդու» ուսումնասիրութիւնը մեծ գժուարութիւններ է հանել մեր աշխատակցի առաջ՝ «Նար-Պէյի կարեոր երկասիրութիւնների և այլ աղքիւների հաղուագիւտ կամ անմատչելի լինելու պատճառով»:

ըլալ կը թուէր ժամանակիս պահանջման ողին, և այդ պատճառաւ իսկ իր վերջին քերթուածները աւելի ժողովրդական լեզուաւ և դիւրընտել ոճով շարագրուած են:

Բանաստեղծի փափուկ սիրտը, ազգասէրի հայրենավառեռանդը, փիլխոփայի տխուր խորհրդածութիւնը և ընկերաբանի լուրջ էրէ-ուր գրած է հոն, իր այնքան անուշ տաղերգներուն մէջ:

Իր մէկ քանի քերթուածներուն տպաւորութիւնը մանաւանդ անհուն է ընթերցողին վրայ: Ափսոս միայն, որ իր երկերու մեծագոյն մասը մեր նախնիքներու լեզուովը շարադրած է Նար-Պէյ, աղէկ գործ մը ընելու ծուռ համոզումով. համոզում մը, որ ստկայն իր ժամանակի բոլոր գրագէտներն ալ առհասարակ մոլորեցուցած է: Նար-Պէյի գործերը եռապատիկ աւելի արժէք պիտի ունենային՝ եթէ ժողովրդի կենդանի լեզուով խմբագրուած ըլային, այն վառվը-ռուն լեզուով որով գրեցին անմահ Ռաֆֆին, Սրովեանը, Պատկանեանը, Դուրեանը, Պէշիքթաշլեանը և ուրիշներ:

Հայերէն և օտար հին ու նոր լեզուներու մէջ Նար-Պէյի ունեցած խորին հմտութիւնը և իր բնաձիր հանձարը՝ պարզեած են իրեն՝ ճապուկ լեզու մը ու բազմերանդ ոճ մը. իր յանգերը շատ քիչ անզամ բռնազբօսիկ, իրենց ճոխութեամբը և բնականութեամբը կը փայլին: Հայրենիքի ցաւերը երգած պահուն՝ կը զգաս թէ արցունքները գետակի պէս կը հոսին իր աչքերէն. և զարնան աւետարեր գալուստը ողջունած ատեն, յաւիտենական ժալիտը նկարուած կ'երեւակայես իր բարեձեւ այտերուն և կեռասի շրթունքներուն վրայ: Աւերբ պատերազմի հրաւերը կը կարդայ քեզ, ոճը կ'ուռեցնէ նիւթին հետ, և ահա զէնքերու շառաջը, ձիերու դոփելը, շեփորներու շունդը կը լսեցնէ քեզ: Եւ այս ոճի բոլոր այլասեռ երագներուն մէջ՝ ներքին մարդն է, որ կը ցոլանայ, կարծես հասաւելու համար Պիւֆօնի հռչակաւոր խօսքը—  
Le style c'est l'homme—Մարդու իշտին իշտանցուի:

Նար-Պէյ շատ քիչ անզամ արձակ կը գրէր: Իրմէ մնացած արձակները, եթէ չեմ սխալեր, քրիստոնէական վարդա-

պետութեան դասազրքեր են որոնք գրական կամ մանկավարժական արժէք չունին, և «Հայոց եկեղեցին և անդրալեռնականք» անուն երկասիրութիւն մը: Մնացածները բոլորն ալ ուսանաւոր են, բացի «Ալաֆանիա» անունով կատակերգութենէն:

Նար-Պէյ թատերական ճիւղը փորձած է առանց յաջողելու. իր գրական զլիսաւոր արժանիքը կը տեսնուի զիւցաղներգութեան և քնարերգութեան մէջ:

Ճշտիւ չենք զիւեր թէ Նար-Պէյ քանի՛ տարեկան հասակէն սկսած է զրել: Տարակըս չկայ որ իր առաջին փորձերը գպրոցի գրասեղաններէն կը սկսին, երբ տակաւին կ'աշշակերտէր 'ի Քենաւիկ, Մսիթարեանց քով, որոնցմէ ծծած է գրաբարամոլութիւնը: Բայց և այնպէս, ինքը առաջին անգամ՝ հրապարակի վրայ երևացած է 1855-ին, որ ժամանակ՝ 'ի Բարիզ հրատարակուիլ սկսաւ ՄԱՍԵՍ.8 Ա.ՂԱ.Խ.Ի անուն պատկերազարդ հանդէսը խմբագրասպետութեամբ Գարրիկ Արքեպիսկ. Այվազովսկիի և աշխատակցութեամբ Տ. Խորէն Նար-Պէյի և իր եղքօր Ամբրոսիոս վարդապետ Գալֆաեանի (այժմ իշխան Գուրիտօն Լուսինեան, որուն կը պատկանի Բարիզի այն շքեղ ապարանիքը ուր ապրեցաւ և մեռաւ մէծ բանաստեղծ և ընկերաբան Վիթօր Հիւկօն): Այն ժամանակ Նար-Պէյ կը ստորագրէր Խորէն վարդապետ Գալֆաեան, և երբեմն ալ Խորիտունի ծածկանունը: Մինչեւ 1862 թուականը շատ մը գեղեցիկ տաղեր գրած է Մասհաց Աղաւնիին մէջ, հանդերձ շատերուն ֆրանսերէն թարգմանութեամբը: Այդ հատակուոր ոտանաւորները յետոյ առանձին հատորներու մէջ ամփոփուած ըլլալով՝ իւրաքանչիւրին վրայ իր կարգին կը խօսինք: Միայն կարժէ աստ յիշատակել թէ, այդ ոտանաւորներէն մի քանին ֆրանսացի հեղինակներու ուշագրութիւնն իսկ հրաւիրած են, որոցմէ ոմանք (հայագէտները) մասնաւոր խնամով ֆրանսերէնի թարգմանած են զանոնք: Օրինակի համար, Թալէս Պէռնար գրագէտը 1858 փետրուարին, ազատ թարգմանութեամբ ֆրանսերէնի վերծանած է Նար-Պէյի «Օրջնեալ որ սիրեն դհէդ Հայաստան»

անունով տաղերգը և համակրական նամակով մը, ուր ջերմ բառերով կը գնահատէ Նար-Պէյի հանձարը, Մասեաց Աղաւնին ղրկած է՝ 'ի հրատարակութիւն։ Թէ՛ նամակը և թէ թագմանութիւնը կ'երեան Մասեաց Աղաւնիի փետրուարի ամսաթուին մէջ։

Նար-Պէյ ձայնազրութեան խորին հմտութիւն ունենալով իր տաղերէն մի քանիին եղանակները ինքը կերտած է, օրինակ «Տէ՛ր, կեցն զայտատան», «Հայկազն մօր օրօր», «Վաշան Մամիկոնեան» և ուրիշներ։

1859 թուականին, Նար-Պէյ 'ի լսու ընծայեց, Բարիզի Արամեան տպարանէն, Լամարթինի հանրահռչակ Դաշնակներուն (Les Harmonies religieuses et poétiques) թարգմանութիւնը, չորս գիրք՝ մէկ հատորի մէջ ամիսովուած։ Ընդհանուր մատենագրութեան փոքր ի շատէ ծանօթ ամէն բանասէրի յայտնի է թէ Լամարթին, ըստ ումանց դարուս ամենէն զգայուն բանաստեղծը, մեծ աղմուկ հանած է իր այդ հյուակապ զործով։ Իմաստներու խորանորհուրդ բարձրութիւն, հաւատքի վսեմ ներշնչում, ոճի հիանալի պարզութիւն և գեղեցկութիւն, ուրեք ուրեք զաղափարներու միամտ անմեղութիւն, ահա ինչ ոչ կը յատկանիշէ այս զործը՝ իր ընդհանուր զիծերուն մէջ։ Եւ Նար-Պէյ հայ գրականութեան գնահատելի ծառայութիւն մը մատուցած է՝ զանի հայերէնի թարգմանելով։ Ցաւալի է որ այս ծառայութենէն շատ քիչեր կրնան օգտուիլ այժմ, քանի որ թարգմանութեան լեզուն զրաբար է, մեծ մասամբ շատերուն անհասկանալի։ Այն ատենները, մասնաւորաբար Մխիթարեան վարդապետներուն մէջ, յամառ նախապաշտում մը կար թէ աշխարհաբար լեզուն անընդունակ է վսեմ զաղափարներ արտայայտելու։ Աւելցնենք ասոր վրայ՝ արդի հայերէնը հետզետէ հին լեզուին մօտեցնելու և անոր հետ նոյնայնելու անզուսպ ու յամառ տենանքը՝ և այն ատեն զիւրաւ կը հասկցուի՝ ամէն ինչ նոյն իսկ գիտական գասազրքերը զրաբար շարադրելու յիմար սովորութիւնը։ Մենք յետոյ իր բառերով ցոյց պիտի տանք թէ Նար-Պէյ ասկէ երեսուն տարի

առաջ, աշխարհաբար լեզուին վեայ ի՞նչ ուրոյն համոզում  
ներ ունէր: Ստոյդ է թէ այն ատենի աշխարհաբարը տա-  
կաւին շատ անկանոն վիճակի մը մէջ էր. անկէ 'ի վեր շատ  
մեծ յառաջդիմութիւններ եղան ոճի գեղեցկութեան ու շա-  
րագասութեան տեսակէտով: Բայց և այնպէս, ինչ որ ալ ըւ-  
լար լեզուին այն ատենի վիճակը, չնք կրնար ըսել թէ ան-  
կարելի էր Դաշնակները ժողովրդի հասկցած լեզուովը թարգ-  
մանելու, մանաւանդ Նար-Պէյի պէս կարող զրադէտի մը  
համար:

Դաշնակներուն թարգմանութիւնը միջակ մէծութեամբ  
400 էջերէ բաղկացած հատոր մըն է, չորս գրքէ բաղկացած,  
ընտիր թուղթի վրայ մաքուր տպագրութեամբ: Ա. Գիրքը  
կը պարունակէ 12 քերթուած, երկրորդը՝ 20, երրորդը՝ 14,  
իսկ չորրորդը՝ 19: Սյն հրատարակութիւնը ձօնուած է  
Նար-Պէյի հօրը, Գէորգ Գալֆայեանի, որու կիսանդրին  
պատկերը կայ գրքին սկիզբը, ոտանաւոր ձօնով մը՝ հանդերձ  
Փրանսերէն թարգմանութեամբ (զոր ինքն ըրած է): Սյն  
ձօնը 'ի ստորեւ կ'արտադրենք:

ԱՌ ՀԱՅՐԻ ԻՄ

Հայր, գողգոշուն աջդ ի մատաղ յիմ և գլուխ,  
Զերդ Խսահակ մինչ կարդացեր զօրչնից ուխ,  
Դիրքս ինձ ածեալ «Որդեակ իմ, և ըթ» ասացեր,  
«Երթ, մի՛ ի հօր քում արտասուս խընացեր:

«Աստուած հօր քո Լեցի Աստուած քո և ուխու.  
Հրեշտակ Տուբեայ կացի զմեռացր, Զէ՞ գ պանդուխու,  
Ծնթառ, և քաղցը ևս քեզ Լեցի յաղթանակ  
Դիտել զի՞ այն լոկ մեղմ զցաւս իմ, որդեակ:

«Երթ, մի՛ դառնալ քոյց յետ երկեակ եօթն՝ ամաց,  
Թէ զերդ Ցակոր Ճըդնել կայցէ փորձանաց.  
Ես յիրանունսդ ըզարդենիս թէ տեսից  
Երկնի տըւեալ փառս և ըզբիթ փակեցից»...

Եւ մեկնեցայ...—Եւ զօրութիւն իմ և կար  
Ի դըժընդակ կացին յաղէտս անվըթար.  
Քան զնսրայէլ տադնապեցայ ևս յուզւոչ  
Եւ քան զիս դառըն ոք նըժունչ եւաց ոչ...

Այլ վերառեալ մինչ հուսկ ըզցուակ և սօլեր  
Յաղթող ի դարձ պատրաստէի ի յարկ մեր,  
Դու խոնջ յանձնուկդ, հայր, և սքօղեալ դու զգլուի  
Թըռեար ի ծոց եին հանդչել յայն կանուի:

Հետ և թըռշուառ որդի թշուառ միոյ հօր...  
Հիմ չը արւա ինձ տեսանել գեթ մի օր  
Յաշաց քոց ցող թանալ զպակս ում մնայիր,  
Եւ զոր արդ, ոհ, բերեմ շիրմիդ արդադիր...

Ասոր կը յաջորդէ նոյն իսկ Լամարթինին ուղղեալ  
Փրանսերէն ձօն մը, ութսուն տողէ բաղկացած, ուր գաղա-  
փարներու գեղեցկութեան հետ կը տեսնուի Նար-Պէյի խո-  
րին հմտութիւնը Փրանսերէն լեզուին մէջ: Առաջին և վեր-  
ջին հատուածները կոկիկ գաղափար մը կուտան ընթերցողին:

### A Lamartine.

#### I.

Je me souviens qu'un jour au lever de l'aurore,  
Un navire français cinglait sur le Bosphore:  
Un jeune homme debout à l'eirrière, les yeux  
Fixés sur le rivage ou levés vers les cieux,  
Comprimait d'une main son cœur dans sa poitrine.  
Ce navire, c'était le vôtre, ô Lamartine!  
Le peuple frémissant, assemblé sur le bord.  
Souhaitait qu'un bon vent vous conduisît au port.  
Moi, je cherchais des yeux le voyageur sublime  
Que la foule acclamait d'un transport unanime...  
Puis, quand je ne vis plus sa voile à l'horizon,  
Ma bouche bégaya vaguement son grand nom.

#### IV.

Ne me demandez pas si je tiens une épée!  
Ou brise en un combat l'arme la mieux trempée...  
Puis comme a dit Jesus: «Qui frappe avec le fer  
Périra par le fer!» Or, demain comme hier,  
Je combattrai sans crainte, avec la certitude  
Que le triomphe est beau lorsque la lutte est rude!  
Mes armes, Lamartine, elles sont dans ma foi,

Dans ma tête et mon cœur où vous régnez en roi!...  
Car vous avez, daignant m'accueillir comme un père,  
Ecoute les accents de ma voix étrangère...  
Dans ma chère Arménie entrez en conquérant!  
Elle a besoin d'aimer celui qu'elle sait grand...  
Que je sois votre guide! Et, comme aux temps antiques,  
L'Eden répétera de sublimes cantiques!....

Paris, le 30 Mai, 1859.

Նար-Պէյ Լամարթինի հետ անձնական բարեկամութիւն  
ունենալով, հեղինակի սոյն երկասիրութեան ինչ ինչ գծու-  
արիմաստ կամ երկդիմի գաղափարներու մասին ուղղակի իր-  
մէն լուսաբանուած է:

Լամարթինի պատկերէն զատ, հանդերձ իր նոյնագիր  
ստորագրութեամբ, գրքին սկիզբը կը գտնուին նաև երկու  
գոհարներ, հանրահոչակ բանաստեղծին երկու նամակները,  
Նար-Պէյին ուղղուած: Այդ նամակներու պատճ էնները, իբր  
թանկագին յիշատակներ, կ'արտասպենք 'ի ստորե:—

M. Corène V. Calfa

Monsieur

Je suis fier d'avoir servi de texte à vos traductions de français  
en arménien, et heureux d'avoir ainsi mon nom présenté à vos compatriotes.

Mes relations fréquentes avec l'Orient m'ont inspiré un grand respect pour la nation arménienne, et surtout pour la religion, la probité et la poésie de ces populations plus rapprochées que nous du berceau et des lumières du monde primitif.

Je vois, par vos études à Paris, que votre famille nationale ne dégénère pas de ses ancêtres; et je me félicite, Monsieur, de connaître en vous l'espérance de l'Arménie future.

Recevez, Monsieur, l'assurance de ma haute et affectueuse considération.

Al. de Lamartine

Paris, le 25 Avril 1859.

(Թարգմանութիւն)

Առ. Խորեն Արդապետ Գալֆական

Տէ՛ր,

Զեր Փանսերէնէ հայերէն թարգմանութեանց իբր ընագիր ծառայելուս համար կը հպարտանամ, և երջանիկ եմ որ իմ անունս այս կերպով ձեր հայրենակիցներուն կը ներկայացնէք:

Արևելքի հետ ունեցած յաճախակի յարաբերութիւններս՝ զայ աղջին նկատմամբ խորին յարդանք մը ներշնչած են ինձ. յարդանք մը մանաւանդ դէսի կրօնքը, առաքինութիւնը և բանաստեղծութիւնը այն աղջին որ մեզմ աւելի մօտ է նախական աշխարհի օրօրոցին և լուսաւորութեան:

Եարիդի մէջ ձեր կատարած ուսումնահրութիւններէն կը տեսնեմ որ Զեր Ազգը իր նախնիքներէն վար մնացած չունի, և ուրախ եմ Զեր մէջը ողջունել, Տէ՛ր, ապագայ Հայաստանի ակնկալութիւնը:

Յաճեցէք ընդունել խորին և սիրազեղ մեծարանացս հաւասարիքը:—

Ալֆօնս դը Լամարթիւն:

Երկրորդ նամակ.

Monsieur,

Je ne sais pas votre langue, mais je sais votre talent par ceux de vos compatriotes qui lisent vos vers et les miens. Je sais aussi l'intelligence et le zèle admirable que vous avez appliqués à ce labeur ingrat d'une traduction, des sens sur les quels vous avez si souvent et si scrupuleusement consulté l'auteur original.

Votre beau travail emporte donc avec lui tous mes voeux et toute mon approbation dans votre cher pays.

Pendant mes voyages en Orient, j'ai été reçu par les Arméniens comme un hôte et comme un frère. Vous allez populariser aujourd'hui parmi eux mon nom et ma poésie qui n'avaient pas de titre à une gloire si lointaine.

Une traduction de vous est un écho qui porte la voix jusqu'à l'Ararat. Puisse la vôtre porter aussi jusqu'à l'immortalité!

Lamartine.

(Թարգմանութիւն)

Տէ՛ր,

Զեր լեզուին հմուտ չեմ, բայց Զեր հանճարը իմացած եմ Զեր այն հայրենակիցներէն՝ որոնք թէ՛ Զեր և թէ՛ իմ քերթուածներս կը կարդան Դիտեմ նաև թէ որչափ խելք և որչափ եռանդ մաշեցուցիք թարգմանութեան մը այդ ապաշնորհ աշխատութեան, որու իմաստներուն մասին այնքան անդամներ խղճմորէն խորհըրդակցեցաք գործին հեղինակին հետ:

Զեր այդ գեղեցիկ աշխատութիւնը իրեն հետ Զեր սիրեցեալ հայրենիքը տառի թողուրեմն իմ սրտի իղձերս և զերմ գնահատումն:

Արեւելքի մէջ ճամբորդութեանս միջոցին, հայերը պատուասիրեցին զիս իրը հեր և իբր եղ բայր: Այսօր իմ անունս և քերթուածս կը ժողովրդականացնէք իւնց մէջ ինչ որ այդշախ հեռաւոր փառքի մը չէր սպասեր:

Զեր մէկ թարգմանութիւնը իմ ձայնս մինչև Արարտ կը տանի. ուր եր թէ Զեր ձայնն աւ մինչև անմահութիւն առաջնորդէր:

### Լամաւթին.

Լամարթին իր Դաշնակներուն համար մեր գովեստին պէտք չունի: Խօսելով Նար-Պէյի թարգմանութեան վրայ, պիտի ըսեմ թէ, իմաստներու ճշգութեան տեսակէտով հաւատարիմ վերծանութիւն մըն է այն: Իրեն համար շատ մեծ բարեպարութիւն մըն էր արդարեւ Լամարթինի կենդանութեանը և անոր քթին տակը կատարել այդ թարգմանութիւնը, ամէն երկդիմի խմաստի կամ խորախորհուրդ պարբերութիւններու համար բուն հեղինակին յաճախակի զիմումները ընկելով: Որչափ թարգմանութիւններ իրենց սխալներէն պիտի փրկուէին եթէ թարգմանիչները վայելէին Նար-Պէյի այս բացառիկ զիւրութիւնը: Բայց լեզուին գալով, ինձ կը թուի թէ Դաշնակները աւելի գաշնակաւոր ոճով կրնային թարգմանուիլ: Առնենք, օրինակի համար, Ա. Գլըքէն «Ազօթք մանկան զարթուցելոյ» անունով հիանալի տաղը և բաղդատենք զայն Մխիթարեաններու ըրած թարգմանութեան հետ: Միենայն տաղն է որ թարգմանած են երկուքն ալ բայց լեզուի ներդաշնակութեան մասին Մխիթարեանց թարգմանութիւնը շատ աւելի գերազանց է: Մխիթարեանց թարգմանութիւնը կ'երեւայ հաւաքածոյի մը մէջ և թարգմանիչն անծանօթ է: Ահաւասիկ քանի մը առւներ այդ թարգմանութիւններէն.

Թարգման. Նար-Պէյի.

Թարգման. Մխիթարեանց.

Աստուած իմ, տուր վիժանս յաղ բիւր,  
Եւ ճընճըլկանց բգիւտուր,  
Պանրիկ գառանց գեղմն ըզմաքուր,  
Յօլ և ըստուեր ի յեղուր:

Բլժըշկութիւն տուր առ հիւանդ,  
Եւ մուրացիկն հաց յոր լսց:

«Արաքս»

Տուր, Տէր, աղբերց յըստակ ըզ ջուր,  
Եւ ըզիկտուր ճընճըլկին,  
Գառանց զըզաթ սուրբ և մաքուր,  
Դաշնաց ըստուեր ցօղագին:

Տուր հիւանդին բլժըշկութիւն  
Եւ մուրացիկն հաց յազուրդ:

Օթեանիկ առ որբ ազդայ,  
Եւ արձակուրդ ոյց ի բանդ:

Տուր քաղմածին որդուոց երաստ  
Հօր երկիւղած առ իբէն,  
Խմաստ և խինդ ինձ տուր աստէն  
Զի մայրս իցէ բարեբաստ:

Տուր ընակարան ովորմ որբոյն  
Եւ գերելոց արձակուրդ:

Բազմածընունդ արա բզուռն  
Հօր առ ի քէն երկիւղած.  
Տուր ինձ լինել զգօն ու իմաստուն,  
Եւ մայրս իցէ անկասկած:

\* \* \*

1861-ին Նար-Պէյ հրատարակեց ի Թէոդոսիա իր Ա.Բ.-  
ՇԱԿ Բ. ողբերգութիւնը: Այս դործը բեմը ելքելու սահմա-  
նուած էր, բայց չգիտենք թէ երբէք ներկայացուած է և  
ինչ յաջողութիւն ունեցած \*):

Ըստ մեզ այս ողբերգութիւն բնաւ բեմի յարմարութիւն  
չունի, նախ որ սպանառ զրուած է, երկրորդ, հակառակ հե-  
ղինակին յայտարարութեան, լեզուն աւելի ժբանացն կը նր-  
մանի քան թէ աշխարհաբարի, և վերջապէս, նիւթը ինք-  
նին այնքան մեծ բան մը չէ, պահանջուած հիւան-սէնը, ողեռ-  
ութիւնը և շահեկանութիւնը չունի:

Խաղին նիւթը պատմելէ առաջ, հոս քաղուածք մը կը  
գնենք յառաջաբանէն որ թէ՝ Նար-Պէյի աշխարհաբար ոճին  
մէկ հաւատարիմ պատկերն է և թէ՝ կը բովանդակէ լեզու-  
աբանական տեսակէտով՝ Նար-Պէյի ուրոյն համոզումները  
ասկէ 30—32 տարի առաջ:

« . . . Առաջարկեալ նիւթոյն վսեմութեանն և հնութեանը  
նայելով յայտնի է որ բնական էր մեր նախնեաց վսեմ լեզուովը  
գրել զայն: Մեզի համար քաղցր էր այս, կարող եմք ասել թէ՝  
և գիւրին, ու մեր անձնասիրութեանն ևս շահաւոր, — որովհետեւ  
վսեմ ու գեղեցիկ լեզուն ինքնին գեղեցկութիւն ու վսեմութիւն  
կուտայ քերթուածոյն, զոր անկարելի է անհարթ ու տկար լեզուէ  
մի սպասել: — բայց այն որ գիւրին էր մեզ ու շահաւոր՝ կիւռա-  
ցուցանէր զմեզ ի մեր նպատակէն, որ է՝ ազգային հին պատմու-

\*) «Երշակ Ի»-ը մեր՝ ոռուսահայոց բեմի սովորական թատերգներից մինն է  
եղել և որքան մեզ յայտնի է, ժամանակով մեր Հոգևոր Ճեմարանի սաների միակ մատո-  
չելի ու զրաւիչ զուարժութիւնը եղել է բեմ հանել և դիմել այդ ողբերգութիւնը.  
Կորա հրապարը եղել է պատմական շքեղ, զ գեստաւորութիւնն ու անցեալի յուղիչ  
յիշատակներ զարթեցնելը: Եյդ կողմից նա հրահանգիչ է եղել մատաղ սերնդի համար:

թեան եղերական մէկ գրուագը մեր այժմու ժողովրդեան առջել հանդիսացուցանելով՝ վառել նորա սիրտը հին յիշատակաց հետ նաև հայրենեաց սէրը: Եւ ի՞նչպէս կարելի էր վառել ժողովրդեան սիրտը երբ մեծագոյն մասին անհասկանալի լեզուով մի աւանդէինք զայն, այն մասին որ գուցէ աւելի ևս կարօտ է հայրենեաց վերայ բան լսելու, հայրենեաց վերայ բան սովորելու ու հայրենեաց վսեմացուցիչ սիրովը վառուելու»:

«... Տայց եթէ Շէքսրիփ մի, Տրայտն մի, Վոոնէյլ մի, Ուասին մի, Շիլէու մի, Վլֆիէրի մի... իրենց ժողովրդեան խօսած լեզուովը կու տան այն հնոց և օտարաց պատմութեան եղերական անցքերը, Շէքսրիփ, Ուասինի, Շիլէուի ու Վլֆիէրիի լեզուներուն ու ձայու նոր լեզուին մէջի անբան զանազանութիւնն ու վիճը ո՞վ չուներ: Ո՞վ չգիտեր նոցա լեզուին կանոնաւորեալ գիւրաթեք, քերթողական, միով բանիւ մշակուած ու ամենայն ճոխութեամբ լցուած լինելը, ու մեր նոր լեզուին՝ անկանոն, անքերթով անզարդ, աղքատ ու պէտք եղած մշակութենէ գրեթէ զուրկ լինելը»:

«Անալեցանք՝ մեր նոր լըստին ասելով, պէտք էր ասէինք նոր բարբառներուն (dialectes). Վասն զի, —յուսահատական մտածութիւն,—, մեք գեռ նոր լըստին չունիմք, հապա բազմաթիւ խառնիսուն նոր բարբառներ՝ իրարմէ տարբեր, մանաւանդ թէ և իրարու արհամարհելի, և գրեթէ իրարու (կամաչեմք ասելու) նաև թշնամի՞...»:

«.... Կարելի՞ էր Աղքերգութեան գիւցաղանց քերանը դնել այն աղջատեալ օտար և խորթ բառերով ու բացատրութեամբ լեցուն լեզուն՝ որ բանիցն անարդ անունը վերան կը կրէ:

«Տարեբազդաբար մեր հայրենի հին լեզուն կեցած է, առաս՝ մանաւանդ թէ անօպան հանք մը՝ ուսկից պէտք է մեր նոր լեզուն իրեն կանոն, հարստութիւն ու զարդարանք փնտոէ: Տղայն իւր մօրը կաթովը կը սնանի. մեր նոր լեզուն այլ ուրիշ կերպով չէ կարող սնանիլ, աճել ու ինքնութիւն առնուլ: Վայ, սովոր միայն կարելի է մեր խօսակցութեան բարբառներէն հանել ձեւցուցանել մատենագրական լեզուն: Եւ մինչեւ որ մէջտեղը լեզու մի չլինի՝ մատենագրիրք ալ չեն կարող ելանել, ուստի և մեր մատենագրութիւնը կմնայ մի՛շտ տկար, մի՛շտ տարտամ՝ ու մի՛շտ աղքատ:

«Վեք այս ողբերգութիւնը պոլսական բարբառով գրեցինք,  
ինչպէս ուրիշ մեր աղքային նոր քերթուածները. բայց ոչ եթէ  
այսու արհամարհել կուղեմք աղքային միւս բարբառները, որոց  
առանձին յատկութիւնները կը ճանչնամք ու կատառուեմք: Եթէ  
նախադասելի բան մի ունի պոլսահայ բարբառը, նորա գիւրընդել  
հլութիւնն է՝ որով կը խոնարհի բանիբուն մատենագրին իրեն  
տուած դարձուածոցն ու փոփոխութեանցը, և այս իսկ է նորա յա-  
ռաջադիմութեան գաղտնիքը, որով վերջի քսան տարուանս մէջ  
նշանաւոր քայլափոխներ ըրած է, հետզիետէ մաքրուելով և մօ-  
տենալով մեր ամեն բարբառներուն ևս հասարակաց աղբիւրին, որ  
է Հայկաղեան լեզուն»:

«..... Պէտք է, ո՞ մատենադիրք, պէտք է ընդարձակեմք մեր  
աշքին հորիզոնը, ու միայն մեր գաւառներուն նեղ և անձուկ սահ-  
մաններուն մէջ չփակուիմք չմնամք: Պէտք է բարձրէն նայիմք  
այսպիսի խնդիրներուն մէջ, ուամկին թողումք ինքնահաճ ցած  
գաւառասիրութիւնը. մեք պէտք է մեր գաւառէն առաջ մեր Ազգը  
սիրեմք, նորա պատիւը, նորա օգուտն ու շահը փնտուեմք ու նախա-  
դասեմք, և ոչ եթէ մեր գաղաքին կամ գաւառին երազեալ պատիւը:

«Խոալացին, Անդղիացին, Գերմանացին, Գաղղիացին, Ոյու-  
սը, ու մեզմէ շատ հետու չեղող ազգ մը՝ Յոյնը, ամենքն ևս մեղ-  
մէ ոչինչ պակաս բարբառներու ճիւղեր ունին, բայց մատենագրու-  
թիւնը բոլորին մէջն ընտրած ու սեպհականած է մէկ բարբառ  
մի. այն եղած է նոցա աղքային լեզուն, ու բոլոր ոյժը նորա վե-  
րայ թափած. որով և հետզիետէ կանոնաւորած են ու զարգարած,  
ամեն մտածութեան ամեն գաղափարի ճկելով ու յարմարեցուցա-  
նելով զայն: Վհա թառըինցին, Միլանցին, Անետկեցին, Ար-  
կիլացին... թէ և բերնով իրենց բարբառը կը խօսին, բայց գըր-  
շով՝ ծնոսքանայի բարբառը կդրեն, ևս առաւել մատենագրական  
գրուածներն որ բոլոր աղքին համար են: «Կոյն պէս և միւս կըր-  
թեալ աղքերը, թէ և ամենքն ալ համոզուած լինին, որ իրենց  
իւրաքանչիւրի տեղական բարբառը գուցէ շատ աւելի գեղեցկու-  
թիւններ ու պատուական հարստութիւններ ունի, բայց երբ գրե-  
լու լինին՝ ընտրուած աղքային մատենագրական լեզուին կհետեին.  
վասն զի գիտէ և ամենայն ոք որ հասարակաց լեզուին պէտք է  
զոհել առանձնական մտածութիւններն ու տեղական անձնասիրու-  
թիւնները:

«Ո՞ւ նոյն կերպով կը մտածէին նաև մեր նախնիքը. չունեի՞ն և նոքա բազմաթիւ բարբառներ, ինչպէս Արարատեան, Կորճայից, Տայոց, Խոռթեցոց, Չորրորդ Հայոց, Ապերացոց, Աիւնեաց, Արցախեցոց, Ուտէացոց, Պարսկահայոց... բայց մեր նախնիք ոչ եթէ այս բարբառներով կընէին իւրեանց մատենագրութիւնները այլ ամենքը միաբան՝ ո՛ր գաւառէ ևս լինէին՝ իրենց գաւառական անձնասիրութիւնը Արարատայ բարբառին զոհ կընէին, և այն կըհամարուէր Ազգային լեզու հայաստանեայց: Վսոր ապացոյց են ոչ միայն մեր թարգմանիչներէն իւլեր նախնեաց մեզի ձգած մատենագրութիւնները, հապա անոնցմէ այլ առաջ Ատրաբոնի յայտնի վկայութիւնը \*):

«Վենչ գժբաղդութիւն է Հայու նոր մատենագրինը: Ո՞ւ որ ազգին հին լեզուովը գրէ, շատ քիչ հասկցող ունի. նոր լեզուով մի գրէ, դարձեալ նոյն պէս մեծ տարրերութիւն չունենար: Ոիրտը լցուած է, կուզէ գուրս թափէ, բայց որո՞ւն.—իւր գաւառին քանի մի հազար ժողովսուեանը, որոյ մեծ մասն արգէն կարդալ չգիտեր: Ուր ընդհակառակն եթէ լինէր ազգային նոր լեզու մի՞ զօր թէ՛ Երմանցին, թէ՛ Ագուլեցին, թէ՛ Աժտէրիսանցին... հասկընային ու գործածէին, որչափ աւելի սիրուը ճիշալով կորէր, գիտելով որ իւր մէկ ոգեշոնչ խօսքը՝ ելեքտրական կայծի պէս՝ երկարաձիգ թելերուն վրայէն պիտի վազէ անցնի աշխարհէ աշխարհ, ուր որ իւր Հայ եղբարքը ցրուած են, ու ամենուն առ հասարակ նոյն մտածմունքը ազգէ, նոյն եւանգը վառէ, նոյն ոգին բորբոքէ:

«Ո՞չ, ամենքս իսկ աշխարհիս ո՛ր կողմն ևս ընկած լինիմք, ամենքս մէկ անուն մի չունի՞մք, վսե՞մ անուն, — ՀԱՅ: Ինչու չունիմք նաև մէկ բարբառ, մէկ լեզու հասարակաց»....: \*\*)

Նար-Պէյի գեղեցիկ յառաջարանէն սոյն հատուածները արտատապելէ յետոյ, անցնինք ուրուադրել խաղին նիւթը:

Ինչպէս յայտնի է՝ պատմական խաղ մըն է ասիկա, որ

\*) Սորաբօնի Աշխարհագրութիւն, Գիրք Ժ. Ա.

Թահօն. Կորպութէ:

\*\*) Հասարակաց լեզու մը ունենալու մասին Նար-Պէյի խորհրդածութիւնները որբան ևս ճիշդ լինին՝ դարձեալ անուրանաւէ և որ, եթէ ինքը, գելժ իր սա յառաջարանին լեզուով տողած ըլլար իր քերթուածները՝ զինքը հասկցողներու թիւը անհամեմատ աւելի շատ պիտի ըլլար քան ինչ որ հիմա է:

իր նիւթը կը քաղէ Բիւզանդ պատմագրէն, որուն վկայութիւնը դրած է նար. Պէյ խաղին սկիզբ:

Արշակ Բ. Տիրանի որդին, գաւաճանութեամբ գերի տարուած է Պարսից Շապուհ թագաւորին կողմէն և խիստ հսկողութեամբ բանտարկուած Անյուշ բերդին մէջ: Գերի տարուած են նաև բազմաթիւ հայ իշխաններ, որոնց մէջ կը գտնուի Դրաստամատն անուն հռչակաւոր ներքինին (կամ հայոց մեծ իշխանը), որ թէ քաջութեամբը և թէ արքայական հաւատարմութեամբը իր տէրերուն սիրելի և հայատանի մէջ ալ նշանաւոր հանգիսացած է:

Շապուհ՝ Արշակը նուաճելէ յետոյ աչքը յառած է Քուշանաց թագաւորին վրայ. իր քաղաքագիտութիւնը կը պահանջէ որ զանի ալ մէջտեղէն վերցրնէ, որպէսզի այլ ևս Արշակունի թագաւոր չմնայ և այդ կողմէն մասածելիք բան մը չունենայ. մոռցանք յիշել թէ Քուշանաց թագաւորը Արշակունեաց ցեղէն է:

Շապուհի ուրիշ մէկ քաղաքագիտութիւնն ալ այն է որ պատերազմին մէջ հայ գերի իշխանները գործածէ խոստանալով անոնց ազատութիւն երբ յաղթող հանգիսանան: Հայ գերիները այս խոստալմէն հրապուրուած, կը մասնակցին պատերազմին և Շապուհ անոնց շնորհիւ ոչ միայն Քուշանաց թագաւորին կը յաղթէ այլ նաև իր կեանքը կը փրկէ քաջ Դրաստամատին ձեռամբ:

Ու Դրաստամատը իր ներկայութեան կանչելով կը հրամայէ որ իր ուզածը խնդրէ իբր վարձատրութիւն: Դրաստամատ ալ կը խնդրէ որ շնորհ ընէ իրեն միայն մէկ օր երթալ Արշակը տեսնել շղթաները քակել և գոնէ օր մը անոր ազատ շունչ առնել տալ: Շապուհ մէծ տհաճութեամբ կը համակերպի:

Դրաստամատ կերթայ Արշակը կը գտնէ, շղթաները կը քակէ, անոր ազատ շունչ առնել կուտայ, և լիախորախկ սկզան մը կը յարգարէ անոր: Սեղանին տակ, Արշակ բաւական զինի խմելով զլուխը կը տաքնայ և իր անցեալը ու ներկան աչքին առջե բերելով, յուսահատական վայրկեանի մը մէջ,

ձեռքը դոնուած մրգեղէնի դանակը սիրտը կը խոթէ և  
շնչասպառ կ'իյնայ գետին։ Դրաստամատ այս տեսնելով, դա-  
նակը Արշակին սրտէն կը քաշէ և միենոյն դանակով ինքն  
ալ անձնասպան կ'ըլլայ. . . .

Եյս վերջին մասի վկայութիւնը կ'արտատպենք Բիւ-  
զանդէն (Դպրութիւն Ե., Գլ. Է.): «Եւ ի ժամ աղանդեր մա-  
տուցանելոյ՝ եղին առաջի նորա միրդ, խնձոր և վարունգ  
և ամիճ, զի կերիցէ. և եղին դանակ նմա, որպէս զի հատցէ  
և կերիցէ զեարդ և կամեսցի։ Եւ Դրաստամատ մեծապէս  
ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մսիթարէր զնա։ Իսկ  
յորժամ արբեցաւ (Արշակ) և զինին եկն զակամք նորա, ար-  
բեցաւ հպարտացաւ և ասէ. «Վայ ինձ Արշակայ. այսպէս և  
այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս»։ Եւ զայս  
ասացեալ, զլանակն զօր ունէր ի ձեռինն, որով զմիրգն կամ  
զամփճն կամէր ուտել եհար ի սրտի իւրում։ և անդէն սա-  
տակեցաւ, և մեռաւ անդէն 'ի նմին ժամուն մինչզեռ կայր  
ի բազմականին։ Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, յար-  
ձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում  
կշաին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ»։

Եյս է ահա խաղին նիւթը, որուն վերջին մասը սա-  
կայն Նար-Պէյ բաւական փոխած է, որպէսզի ողբերգու-  
թիւնը քիչ մը աւելի հրապար ստանայ։ Նար-Պէյի խաղին  
մէջ, Դրաստամատ՝ Անյուշը բերդի պարսիկ իշխան Սուրէնի  
Միհրան որդւոյն հետ խորհուրդ կընէ որ Արշակի մէկ օրու-  
ան աղատութենէն օգուտ քաղելով զանի Հայաստան փախ-  
ցունեն, և անոր տեղը ինքը, Դրաստամատը բանտարկուի։  
Դաւադրութիւնը յաջողելու վրայ էր, երբ Ալանոզան, Մեծ  
իշխան Պարսից և ուսերիմ թշնամի Արշակի, գործը կը կր-  
ռահէ և արդելք կ'ըլլայ. այն ատեն թէ՛ Դրաստամատը և  
թէ՛ Արշակը ճանկին մէջ կ'անցունէ. ու երբ կը հրամայէր  
որ Արշակը շղթայի զարնեն՝ սա, աւելի նախամեծար կը  
սեպէ մեռնելքան թէ անձնատուր ըլլալ ու նոյն հետայն  
սուրը սիրտը խոթելով դիտապաստ կ'իյնայ գետին....»

Նար-Պէյի սոյն ողբերգութեան մէկ եզական երկոյթն

ալ սա է որ մէջը բնաւ կնոջ գեր չկայ. իրաւ, անցողակի Փառանձեմ մը կայ մէջը, Արշակի կինը, որ նշնպէս բանտուած է ուրիշ բերդի մը մէջ բայց տեսարանին վրայ կենդանի գեր չունի. իր դիակը միայն կը բերուի տեսարան՝ պարսիկներէն յօշոտուած...: Արդեօք կզերականի պարկեցութիւնն էր որ կնոջ գեր մը ստեղծելէ կ'արդելէ դՆար-Պէջ, Անդլիական Դրականութեան առաջին մատենագիրներուն պէս, որոնք սիրոյ վրայ բառ մը իսկ չեն տողած... որովհետև վանական էին:

Արշակ Բ. կը բաժնուի Հինգ արարուածի և անձինքն են,

Արշակ, արքայ Հայոց,

Շապուհ, արքայ Պարսից,

Դրաստամատ, մեծ իշխան Հայոց,

Վահան Մամիկոնեան,

Որմզդան, մեծ իշխան Պարսից,

Սուրէն, իշխան Անյուշ բերդին,

Միհրան, որդի Սուրենայ,

Զարեհ

Պատճառ

Գարեգին

Խոսրով

Բարգէն, զինակիր Վահանայ,

Զօրավարք Շապէջ,

Զօրականք Պարսից.

Առաջին Արարուածը Քուշանաց երկրին մէջ: Իսկ Բ. Գ.

Դ. և Ե. Արարուածները՝ Անյուշ բերդին մէջ ի Խուժաստան:

Գաղափար մը տալու համար Գործին վրայ՝ հոս կ'արտադրենք վերջին Արարուածի վերջին Տեսիլը:

### ՏԵՍԻԼ ՎԵՐՋԻՆ

Ալանողան, Միհրան շղթայակապ, Զօրականք զինեալ ջահ' ի ձեռին և Առաջինքն.

ԱԼԱՆՈՂԱՆ

Ահա Միհրան.

Առւրեկն

Երկինք... Սիհրան ի շըզթա՞յս:

Դրաստամատ

Ովլ աչեղ օր, յայտնեցաւ բանն...

Վրշակ

Խեղձ Սիհրան...

Ալանոզան

Այս է վախճան որոց մատնեն զիւրեանց տէր:

Առւրեկն

Սիհրան մատնիշ... երկինք, զի՞նչ էր զոր լուայ...

Սիհրան

Մի՛ հաւատար, հայր, ոչ Սիհրան մատնիշ չէ.

Ենթղութեան երկինք ինքնին են վըկայ,

Որ շատ անդամ թողու զբարին զոհ չարին:

Ալանոզան

Դեռ յանդընես, այ դու ժըպիր՛ պատանի

Ալկայ կոչել զարդարազատ քեղ երկին'

Որ իմ ձեռք՝ այսօր մատնեց քեղ հըրաշքով:

Առւրեկն

Խնչ է յանցանքն... ուր մատնութեանն ապացոյց:

Ալանոզան

Հարց զայն քաջին 'Կրաստամատայ' որ վորդիդ

Պլարտիզին մէջ խորշ մի ձըգեալ հրապուրեց

Մատնել շապուհ' ազատելով զիւր գերին.

Իայց երկինք՝ կասկած ի սիրտ իմ ձըգելով

Օիս շարժեցին գարան մըտնեմ, ու ծածուկ

Լըսեմ նոցա դաւն ու զառաջ այնը առնում:

Վրշակ

Կը լըսե՞ս, երկին, աշա պիզճն այն բերան

Եւր վասութեան՝ քե՞զ յորդորով քարոզէ...

Ենթղութ երկին, յիս թէ ինչո՞ւ խըստանա՞

Կը հասկանամ... լայց անմեզուկ պատանիդ

Խնչ յանցեալ՝ որ և ըղնա անդըթութեամբ

Վյու խուժագուժ գազանին ձեռքը մատնես:

Սիհրան

Մի՛, տէր արքայ, զերկին անդութ մի՛ կոչեր.

Ոչ եթէ անգըթութիւն, զայս համարիմ,  
Այլ մեծ շընորհ որ քո վթաց և ցաւոց  
Այսուհետեւ լինիմ և ես իսկ ընկեր,  
Ու դարձեալ լըւամ քո շըղթաներ արցունքով...  
Ը ըղթայք որ զիս վիճակակից քեզ առնեն՝  
Ը առ աւելի փառաւորեն, տէր, զիմ կեանս՝  
Վան թէ նըսեմ ազատութիւնո առաջին:

Արշակ

Ա ըսեմ մանուկ, վերջին համբոյր զիմ ընկալ (Կպագնէ),  
Տաճատ և Խոսրով  
Աւցցես, Միհրան

Գարեգին

Ով արժանիդ Հայ անուան:

Օարենչ

Միհրան, դու մեր գունդ խառնելով ցուցուցեր  
Թէ քո սիրտ Հայու անուան է արժանի:

Ալանողան

Տարբանջելոյ աստանօր չէ ժամանակ.  
Տանտին մէջ երկար ունիք ձեզ տարիներ...  
Հոն՝ թէ կըրնաք՝ տրվէք զայդ ցուրտ ըսկոփանս.  
Լաւ հասկընայ հոն և անմիտ պատանիդ  
Օլմբոստութիւն իւր և մեղաց ծանրութիւն:

Սուրեն (Լալով)

Յայս ուրեմն՝ ով դիք, յայս վայր զի պահեցեք  
Որ իմ խաղաղ, ոչ, և անպարտ ծերութիւն  
Անվերջ լալենք ողբով մըտնէ գերեզման:

Ալանողան

Ահա, Արշակ, յարբունի քո պալատ-բանտ  
Քեզի նոր պալատական մի պարզեւմ (Միհրանը ցուցնելով)  
Եւ առադաստղ՝ այսուհետեւ չէ թափուր...  
Հինգ տարուան՝ առ ըդքո կարօտ յամուսնոյդ...  
Պանծա՛, Արշակ, բանակն Արեաց բովանդակ  
Ալիւրացաւ յիւր հոլանի գեղեցկութիւն:  
Երբ Ծապուհ արքայաբար փառաւորեալ

Ի՞արձրացնյց ըղնա ի դահու... անարդ վայտի... \*)

Շնորհելով ըղտիկնութիւն... Անյուշ բերդի:

Դիրաստամատ

Լուռ լեռ, անդութ, սանձ գիր լեզուիդ վայրահաչ...

Ծապուհ իշխանութիւն ձեռքրդ տըւաւ,

Վրդարութեամբ գոնէ գիտցիր գործածել:

Ի՞նչ բըւնանաս ի պատանին յայն անմեղ.

Ո՞չ վասութեամբ—ինչպէս պարծել չամաչես—

Դարան մըտեալ ծածուկ լըւար, և գիտես

Որ յորդորով՝ ես ինքն եմ, ես Դիրաստամատ.

Եթէ դաւ կայ՝ ես ապա, ես դաւաճան.

Ի՞նձ անկ են, ի՞նձ շղթայը և ոչ Միհրանայ,

Ի՞նձ այդ պատիւ տեառն իմ լինել յարկակից:

Ի՞այց զի Արեաց արքային այս մատանի

Փըզըէ զալիս քո նախանձուկ կատաղի,

Գիտցիր վատ՝ որ Դիրաստամատ ոչ հանդուրժէ,

Օի անարի համարձակի ոք Պարսիկ՝

Լուսալ հանդէպ շայոց Մեծացն արքայի.

Խոկ թէ ըղչափ ոչ ճանաչես դու անձին,

Ուուր և բաղուկ Դիրաստամատայ՝ ուսուցե՛ն:

Վանովան

Լ՛հ, անցա՞ն և խրոխտալց քո ժամանակը.

Խմի քո սո՞ւր պանձաս, սուսերց ունիմ գունդ.

Ցուսաս բազկի՞դ. ես՝ ի քաջացս իմ բազուկ: \*\*)

Վոյլ զարդունին գիտեմ պատուել մատանի. \*\*\*)

Կուգայ և քո՛ դատաստանիդ ժամանակ.

Օհամար գործոյդ՝ ոչ ինձ, տացես առ Շապուհ,

Գիտէ նա տալ և մատնութեանդ արժան վարձ:

Ցորչափ Պարսիկ եմ, ոչ ես ոչ հանդուրժեմ

Որ Հայ մի մարդ յայն բարձրութիւն ելանէ՝

Մինչև իրոխտալ իբր ազատիչ Արեաց տեառն:

\*) «Շապուհ զոիկինն Փառանձեմ ընդ սայլացից հանեալ սատակեաց», Խորենացի Դ. 35:

\*\*) Զինուորները ցուցնելով:

\*\*\*) Արակեան Դիրաստամատ Շապուհի մատանին ձեռքը դրած բանտին դռնին բը բանալ եկած է Արշակին առջեւ:

Ահա հասաւհ յաղթանակիս իմ նոր օր...  
Ու այնչափ ուրախացայ գերեալ զԱրշակ՝  
Ուշափ ըդքեզ տեսեալ այսօր գահավէժ...  
Այս; Շապուհ որ քեզ գիւցազն ոք կարծեց՝  
Արդ ճանշնայ որ տիրադրուժ ես զու մատնիչ:

Դրաստամատ  
Տիրադրուժ... և ով է տէրս որ կը մատնեմ.  
Տէրն իմ հոս է, ահա՛ Արշակ թագաւոր.  
Ամենայն որ չէ՛ Արշակ՝ այլ սպարսիկ,  
Կամ ոչ իմ տէր՝ այլ է՛ նա իմ՝ բըռնաւոր:

### Ալանողան

Վաջ է. զու զայդ բըռնաւորիդ հասկացո՛:  
— Օօրականք, յառաջ անցէք. արդ ժամ է ձեր.  
Հաղա զարկէք զայդ գերիներն ի շըլթայս \*):

### Օաբեհ

Վաջացարուք, ընկերք, երկին զայդ կամի.  
Վամեմք ըզդառըն բաժակիս և մըրուք:

### Տաճատ

Լեցցէ՛ Արքայ... երկնից թող կամք կատարին:  
Դարեգին և խօսրով  
Լեցցէ՛ արքայն Հայոց, մեռցին Սասանեանք

Պար նախարարաց \*\*)

Ի գնուք են իգնուք, բըռնաւոր,  
Ըսպառնալիք քո ամենայն.  
Ոչ, քո շըլթայք չե՛ն գօրաւոր  
ՅընկՃել զոդիս մեր Հայկական:

Եզմարմին միայն զայս մարմին  
Արքուն գերել քեզ ի նախատ.  
Սակայն սգիք մեր երկնային  
Սիրաք Հայկազանց են միշտ ազնու:

Ազատ են, ազատ մեր լեզուք,  
Մաղթել ըզմանթս Արդարութեան  
Ի գլուխ մեր, ով արիւնարբուք  
Որ աւերէք ըզչայասում:

\*) Զինուորները կակսին շըլթայի զարնել նախարարները:

\*\*) Շըլթայի զարնուելն յատց՝ երգեն գոչելով:

Ի գլժնիս անկցի՞ն թղչնամիք,  
Ենջեւասցի՞ն մինչ յաւիտեան,  
Կեցեն Երբայ և Հայրենիք,  
Կեցե անմահ մերս Հայաստան:

**Ա. Բ Հ ա կ**

Կեցիլք, բաշեր, ցայսօր ձեզմով Հայրենից,  
Ձեզմով և ձե՛րըդ թագաւոր պանծացաւ.  
Ձմով մինչ իսպառ լիցին պարծանքն անտըլինեղձ...  
Յուցէ՛ք՝ ոչ բաղդ երլէլք, և ոչ թշնամիք  
Կարեն նըկուն առնել զոգին Հայկական,  
Եւ ոչ ըզսէր շիջուցանել Հայրենեաց...:  
Հայ դիւցազունք, ի սուրբ անուն Հայրենեաց  
Արշակ ձեզմէ զայդ աղաւէ և յուսայ,  
Եւ խոստանայ ի վե՛հ անուն Հայրենեաց  
Որ ձեր անուանք անմահանա՞ն նորա հետ:  
‘Ե, իս ար արք և Դարաստ ամատ  
Կեցցէ՛ արփայ:

**Ա. Բ Հ ա կ**

Կեցես և դու, Դրաստամատ,  
Արշակ շընորհ ունի սըրտիդ տիրասէր.  
Արշակ՝ որ քո՛ շընորհիւ, ով բարեկամ,  
Արքայաբար յաղատութիւն ելանէ:

**Ա. Լ ա ն ո զ ա ն**

Յաղատութիւն... օն զօրականք և զԱրշակ \*):

**Ա. Բ Հ ա կ**

Ի բաց, ի բաց կացէք, ի բաց, վատք արանց.  
Յո՞ մօտենայք, Արշակ է սա... վատք, ի բաց \*\*).  
Ձեւ յանդրդնիք՝ սուրս պյու ըզձեղ խըրատէ...  
Ալանոզան, ի զուր յուսաս դու զԱրշակ  
Երկրորդ անդամ մատնել ի բանտ ի շըդայս.  
Արշակ ազատ, և թագաւոր է Արշակ,  
Եւ թագաւոր ազատ Արշակ կը մեռնի \*\*\*):  
— Փառանձեմ, աչա կուգամ, կուգամ առ քեզ.

\*) Զինուարները Արշակաց քով կուգան որ շղթայի գարնեն:

\*\*) Սուրբ կըաշէ, զինուարները ես ես կըաշուին:

\*\*\*) Կըարնէ ինքովինքը սրով:

Փառանձեմ, քեզմէ Արշակ ու բաժանի:

Վրաստամամատ

Տէր իմ Արշակ... \*)

Օստրեհ

Երկիցնք...

Տաճատ

Աւազը...

Խոսսրով և Վարեգին

Տէր արքայ...

Վրշակ

Լուս լերուք... մի՛ ողբք և լացք... այլ խլնդացէ՛ք...

Արքայդ Արշակ... արժանաւոր... մեռաւ մահ... :

Վլանողան

Այսպէս որսն ազատի՞... ովկ կատաղութեանս:

Արշակ

Գնա վաստանց, գնա աւետի՛ս տալ Շապհոյ,

Որ Արշակ մեռաւ... Արշակ առիւծն Հայոց...

Թող երթայ՝ արդ ժառանգէ թափուր իմ դահ.

Երթայ նստի աւերակացն ի վերայ:—

Եւ դու, ովկ քաջդ իմ Դարաստամատ, գնա Հայոց

Ասա՞... «Արշակ մեռաւ ըզձե՞զ օրհնելով...»

Դարաստամատ, առ և այս ոուր... տուր իմ որդւոյս \*\*\*)

Ասա՞... «Թէ Պապ՝ ինձ արժանի է որդի՝

Թող այս արեան... հօր իւր արեան... առնու վրէժ»...

Ովկ Տէր... գըթա՞... յԱրշակ... որդւոյս... Հայրենեաց,

Հայե՞ր... արցո՞ւնք մի թափեցէք... յարքանին ձեր:

Վերջ

\* \* \*

1862 թուականին Նար-Պէյ ի Թէոդոսիա հրատարակեց իր տեսակին մէջ եղական դործ մը—ՅԱՆԴԱՐԱՆԸ: Դուցէ եւրոպական աղղաց մէջ իսկ գյուռթիւն չունենայ այսօրինուկ արտադրութիւն մը: ՅԱՆԴԱՐԱՆ կամ ԲԱՌԴԻՔ

\*) Դրաստամատ և նախարարք Արշակայ վրայ կվաղեն և ողբալով կրոնեն:

\*\*) Սուրբ Կուրծքէն Կքաշէ կհանէ, կուտայ Դրաստամատոյ ձեռքը:

ՅԱՆԳԱՅՐ 312 էջէ բազկացած զիրք մըն է, ուր Ա. զիրէն  
սկսեալ մինչեւ 0 ամէն կարգի վերջաւորութիւններու կամ  
յանգերու ճոխ մէկ յուցակը, բառարանը զետեղուած է:  
Բանաստեղծը դժուարութիւն կրէց մի տողի մը յանդը գրտ-  
նելու, թող պարզապէս բանայ իւր փնտուած յանդին յո-  
տուկ յուցակը և հոն անպատճառ պիտի գտնէ իր ուզածը:  
Եյս եղական արտապրութիւնը արդէն շատոնց սպառած է,  
և յօդուածադիրս մեծ դժուարութեամբ մասնաւոր անհա-  
տի մը քով գտաւ զայն: Գագափար մը տալու համար, բա-  
նանը ԱԿ վերջաւորութեան յուցակը և քիչ մը կարգանք:

|            |             |           |           |
|------------|-------------|-----------|-----------|
| Բակ        | Սարակ       | Հմբակ     | Բամբակ    |
| Համբակ     | ստամբակ     | Խստամբակ  | սմբակ     |
| միասմբակ   | սալսամբակ   | Ճամբակ    | ներբակ    |
| հուրբակ    | զանգակ      | նախահոգակ | վաղահոգակ |
| բալմահոգակ | յառաջահոգակ | երգակ     | կուսերգակ |
| նուխերգակ  | կատակերգակ  | քնարերգակ | պարերգակ  |

Ա. Ծ

|           |            |           |          |
|-----------|------------|-----------|----------|
| Ա՛Ճ       | ԱՃ         | ՄԻՒԳԱԿԱԺ  | ԱԿԱՂԱԿԱԺ |
| խորդագաճ  | խորհրդագաճ | միւգակաճ  | քրձաղաճ  |
| մարմնագաճ | լուսագաճ   | խուարագաճ | սւազգաճ  |
| փոշեղգաճ  | անգաճ      | առիզաճ    | ձգաճ     |
| չոգաճ     | հոգաճ      | կարգաճ    | ողուգաճ  |
| լոդաճ     | եղաճ       | բարգաճ    | յօդաճ    |
| խազաճ     | յաղաճ      | և այլն    | և այլն:  |

Ա. Խ

|           |          |          |            |
|-----------|----------|----------|------------|
| Ա՛Խ       | Բախ      | ԿՐՃԱԲԱԽ  | ԲՆԴԴԻՄԱԲԱԽ |
| մուաբախ   | խստաբախ  | արտաբախ  | դիւաբախ    |
| անձրեսբախ | անբախ    | անխարդախ | շետախ      |
| խորպախ    | թաթախ    | ցեխաթախ  | արինաթաթախ |
| գեռաթաթախ | մըաթաթախ | ջըաթաթախ | մօրաթաթախ  |
| ժախ       | բալսխ    | որօն լոխ | ամոխախ     |
| ծախ       | և այլն:  |          |            |

Քնար Պանդիանը բանաստեղծութեանց հաւաքածոյ մըն  
է զոր Նար-Պէյ ի լոյս ընծայեց 1868-ին:

Գործը կը բաղկանայ վաթսուն և ութ տաղէ՝ 448 մի-  
ջակ մեծութեամբ էջերու մէջ ամփոփուած:

Յիշեալ տաղերու մէկ մասը արդէն ժամանակաւ հրա-  
տարակուած էր Մասեաց Աղաւնիի շարքին մէջ: Աղոնք ա-  
ռելի զիւցաղներգութեան հով մը, հայրենիքի անցեալ փառ-  
քին և այժմու կացութեան տխուր մէկ զուգակշիռը ունին  
իրենց մէջ և բաղդատաբար տւելի իսկատիպ (original) գրոշը  
կը կրեն. այնչափ իսկատիպ որ, անոնցմէ ոմանք, ինչպէս իր  
տեղը ըսինք, Փրանսերէնի թարգմանուած են Փրանսացի  
մատենազիրներու կողմանէ: Իսկ տաղերու մեծամասնութիւ-  
նը, բանաստեղծութեան քնարերգական ճիւղին կը պատկա-  
նի և ներշնչուած է Լամարթինի Դաշնակնեցն: Զենք զիւեր  
թէ ժամանակին քննադատները, Նար-Պէջի այս հաւաքածոյի  
մասին զրած ատեննին, երբէք յիշած են իր նմանողութիւ-  
նը Լամարթինին: Ինչ որ ալ ըլլայ հիներուն կարծիքը այս  
գործին վրայ, մենք սակայն, անաշառաբար դատելով չենք  
կարող քողարկել անոր այդ նմանողական ողին: Եւ որպէսզի  
ընթերցողը ինքն ալ տարակոյսի մէջ չմնայ՝ հոս կը դնենք  
«Քնար Պանդստին»-ի թաշնան տաղէն հատուած մը:

... «Նիրջելցն ի քուն,  
Տէր, տաս արթնութիւն,  
Ռկանն արեու  
Բ.զշող լուսատու.  
Եւ ընդ ամեն բիր  
Հար ըգնորուն տիպ.  
Տուր հանուրց հակադ  
Բարբառ ներդաշնակ,  
Զանգակին ըզդանդ  
Յանձաւս արձադանգ,  
Ոստոց շըշնչիւն,  
Եւ հողմոց հնչիւն.

Գետոց տուր հոսանս,  
Ծովուն ըզ բօսանս,  
Ցառակասն հողմիկ  
Եւ ցանցին որսիկ:  
• • • • •  
Ծառոյն տուր սաղարթ  
Եւ բուրումն ի վարդ,  
Թոյր ի մանուշակ  
Եւ ջուր անուշակ,  
Ցորենցն ըզքիստ  
Եւ ըրլըոց ըզնիստ և այլն:

Աւշաղիր ընթերցողը կրնայ դիտել թէ, այս տողերը  
պարզապէս Լամարթինի «Դաշնակներուն» «Աղօթք Մանկան  
զարթուցելոյ» տաղէն ընդլայնում մը ցոյց կուտան, թէպէտ  
սահուն ոձի, Ճոխ յանդի, նկարագեղ բառերու ցուցահանդէս  
մը միանդամայն ի յոյտ կը բերեն:

Այս գործին վրայ գրուած ատեն՝ ի հարկէ չենք կրնար վերստին չդառնալ լեզուին և մեր գանգատը յանկերգի մը պէս չկրկնել ընդունայն այդ գրաբարին համար:

«Թուչունք»-ը տակաւին ամենէն դիւրահասկանալին է, աւելի կնճռոտներն ալ կան: Բայց, ի՞նչ ընէ բանաստեղծը, բանաստեղծութիւնը վսեմ ըլլալուն համար պէտք է վսեմ լեզու գործածել ինչպէս որ ինք կ'ըսէ. արգեօք կա՛մը ու անհատականըն իրարու հետ կը շփոթուին....:

Եւ սակայն, այս տաղերէ միքանին, որքան ևս դժուար-հասկանալի, կատարելապէս ժողովրդականացած են, որովհետեւ եղանակ ունին, կ'երգուին, և ըսինք արգէն թէ, այդ եղանակները ինքը նար-Պէյ հեղինակած է:

Ամենէն սիրուններէն մէկն է «Պատերազմական երգը», որմէ աշաւասիկ քանի մը հատուածներ:

Որդիք Հայկայ, որդիք փառաց,  
Զարթիք... կոչէ զձեզ Աստուած.  
Տեսէք Մասհաց ի գուխ ազատ  
Ըզբաղդ Հայոց նորահրատ,  
Եշք ձեր ի գոյն լուսացին բոց,  
Ոիրաք վառեսցին սի՞րոք Հայոց,  
Եւ մըսիսցին բաղուկք կուռ,  
Քան գեղարդունք բոց ի հուր.

\* \* \* \* \* . և այլն:

Ո՞վ չգիտեր Հայոց հռչակաւոր աղօթքը, «Ճէր, կեցն զ՞այտաստան», այնչափ թրթուուն ու այնչափ մելամաղձիկ եղանակով մը օժտուած: Առաջին տունը գոնէ այս տեղ արտադրենք:

«Ճէր, կեցն ըզհայտան,  
Լուր զորդւոցի առ քեզ ազերս,  
Ճէր, կեցն ըզհայտան,  
Յարն զնա նոր յիւրն աւերս:

Յե՞րբ, Աստուած հըզօր, Աստուած Գրիգորի,  
Աստուած զոր կարդամը ի խորոց սըրտի,  
Թողուցուս զ ի զմեր Հայրենիս թըշուառ.  
Սուր, ֆեռ և հերձուածք առնուցուն յաւար»: և այլն:

Զգացումներու փափկութեան և լեզուի քաղցրութեան  
տեսակէտով «Հայկազն մօր օրօրք»-ը շատ սիրուն տաղ է:

.... «Ո՞չ, ժէ կայծ ի կայծ այդ քո սեաւ աչեր  
Աւսին շըլանաւ ի լցու մըթաբեր,  
Թէ յօտար յառեւ գեղ փառս և երկին  
Եւ ոչ անձկանօք ի գրունտ Երեմին,

Իմ սիրուն մանկիկ,  
Ո՞վ մօրս հրեշտակիկ.

Թէ շըրթունք քո ժերթք գարդից քաղցրաշունչ  
Կամիկին արձակեալ որդեակ իմ, մըրմունչ  
Ոչ ըգչետ անուան երկրի և երկնից Հօր  
Ըգչայտատանի հընչե՛ պՊօր քոյդ մօր,

Իմ սիրուն մանկիկ,  
Ո՞վ մօրդ հրեշտակիկ:

Թէ սիրու քո զեփիւռ՝ որ նընջէ խաղաղ՝  
Զարթուցեալ երեմն յաշխուժից ի խար,  
Յայլ բարախէ սէր, ոչ Հայտատանեաց,  
Դ ոչ գաղէ ընդոստ յանուն Հայրնեաց,

Իմ սիրուն մանկիկ և այլն:

Թէ գասոք քո փափկիկ և ողորկ ծըլիք՝  
Կան անշարժ յորժամ կարդան Հայրենիք.  
Կամ ըզսուրք պարտուցդ բապաս սիրաւիր  
Թըշնամեաց նորա մասուցանին ժիր,

Իմ սիրուն մանկիկ և լւ:

Ո՞չ, լաւ ևս զի քո և իմ բիբք փակին՝  
Զի մի՛ այն աւուրք հասցեն խաւարին,  
Լաւ ևս զի մի՛ այդ շըրթունք անարժան  
Սի՛ բընաւ ուսցին զանուն մայրական.

Իմ սիրուն մանկիկ և լւ:

Լաւ ևս զի այժմէն սիրու այդ ապերախտ  
Թալկասցի՛ զերդ գարդ որդնաքանց ի դրախտ,  
Եւ բեկտին բազկեկքդ այդ անփառունակ՝  
Որ արդ զուլամք մօրդ պատին ի մանեակ.

Իմ սիրուն մանկիկ և լւ:

Եւ այս սիրո որ կեանս ևո՞ւ ուր ըզ գլուխ  
Արդ գլուխս սիրոյն ըմպել զանցյշ ուխ,  
Լաւ ևս զի ասու՛ն սառնուցու յանկարձ,  
Քոն ջեռուցանել զիժ մի Հայրենեաց,  
Իմ սիրուն մանկիկ և լն:

Բայց քո դի՞ երկնից ամբոխի երազ . . .  
Փախեաւ քո ժըպիս . . . հչ, յարտօսր իմ լաւ . . .  
Ոչ, Միջրան, մի՛ ևս այլ այս բանի տըխուր.  
Աշա լըռէ մայրդ յայս անոյշ համբոյր.

Իմ սիրուն մանկիկ և լն:

Նընջեն դու քաղցրիկ իմ խընծիղ և սէր,  
Ո՞վ իմ անդրանիկ երկնատուր նըւեր,  
Իմ երազոց կէտ, լիցի՞ս և յուսոյն,  
Պարծանք ւ օրջնութիւն դու մնորդ ի նոր բոյն.

Իմ սիրուն մանկիկ և լն:

Բայց և Հայրենեաց յաւելցիս դու փառս  
Եւ ես Հայկազնոց օրջնեցոյց իմարս,  
Դի ի քոյդ անուն՝ ոչ չոկ իմ սիրո ի խինդ,  
Այլ Հայոց ողջոյն տացեն թինդ ի թինդ,

Իմ սիրուն մանկիկ և լն:

Եւ օտարք ուսցին զանունդ՝ ի քեզ սիշշ  
Եւ օտարուչիք՝ ի մայրդ մատնանիշ  
Հըծեսցին. «Որդի սա զայս ծընանի.  
Երանի՛ Հայկազն Մօր, երանի՛ . . .

Ով սիրուն մանկիկ,  
Հայոց հրէշտակիկ:»

\* \* \*

«Քնարա-ի ամենին զեղեցիկ քերթուածներէն մին է  
նաև. «Մանուշակա-ը որ ամբողջ գորովի, խանգաղատանիքի,  
փափիութեան և զգացման բուրմունք մըն է կարծիս. և ով  
կը դիմոնայ զանի հոս արտասպելու փորձութեան:

### ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒՇԱԿՆ

Սիրուն՝ մանուշակ,  
Հոտ քո անոյշը եհաս ծանօթ ինձ քո հոտ,  
Զերդ ոք ում սիրո մընայ յանձուկ ի կարօտ,  
Բայց զի՞ ըլքնաղը դիմակ  
Քողածածուկ թմաքչի ի ծերպ և յեմակ:

Ո՞չ, գիտես չեւ ես,  
Զի՞նչ է գարուն որ զքեկ յըղէն աւետիս,  
Քանի՞ ախորժ ծընւցանես տենչ յոդիս,  
Ի՞ ակընկալիս հոգիթես  
Յաղուդ ի գէմս ածհս դալար և ի տերես

Դու՝ զյիս ձըմերան՝  
Այն որ ինչ շող նախկին է զյիս խաւարին,  
Յանապատի՞ խոխնջ զոտիւք պանդըստին,  
Հադադ մ'ի խոր լըսութեան,  
Յուսաց զըրոյց ի յուսաբեկ մըթութեան

Պարկէն շու մանուշակ,  
Դու թնկ լնդ հոյլս գայիր ծաղկանց գեղաթոյր՝  
Ոյց կարապես և անդրանիկ ես զու քոյր,  
Բայց ռոյիր ցանդ անուշակ  
Յանիդ սըրտառունչ ինն էր անուանդ յիշատակ:

Զի յայդ գողոր ի մոյն  
Նմօթագեղ փայլէ կընէք կուսական,  
Եւ հեշտափիւռ քո շունչ՝ նախկին շունչ գարնան,  
Նախկին այն իդ է հոգւոյն՝  
Յանմեղութեան որ գըրգի սիւք հեշտագոյն:

Բայց անցցէ այս օր՝  
Եւ զու վաղիւ յայդ փայլսցին դոյն և բոյր.  
Վաղիւ ես ինձ ժըպտին մինչ տամ զայս համբոյր,  
Եւ ցողքս աշաց սիրածոր  
Եյդուն ընդ ցողս խաւանին յայտից քոց շընորհ:

Թէ՞ մաշագուշակ՝  
Ըզքեղ յարփւոյն գըտից ի ձեմս յանդաստան,  
Հանդոյն աւուրցու իմ գեղազւարձ մանկութեան:  
Ոչ, այն աւուրցս անուշակ՝  
Որ վաղ սրացան զերդ քո կեանք, ո՛վ մանուշակ:



«Առ Մարիամ» տաղին մէջ լեզուի ու յանգի անսպառ  
Ճոխութիւն կայ, աշաւասիկ քանի մը տաղ:

.... Բայց թէ գամ' մի լուսալիս  
Ըսղես առ մեզ ակնարկիս,  
Ի կյս այտիցըդ ժբակիս  
Եւ ի շըրթահց վարդախիս  
Մարդը բահուահոս ծաւալի  
Օրհնից մեզ յօդ ցանկալի.  
Ասուղդ ի քայլ ներդաշնակ  
Փայլուն գըլին պարունակ.  
Լուսնին մաշիկ շողուլիք  
Քեզ ստընկայք լուսասփիս,  
Եւ յարենին ձառնչից  
Գըլթոյդ ուիք գան սիրալից,  
Խընդալըսակ անդ գարուն  
Ծաղ կամըք գըրդեալ հովասուն,  
Եւ ի ծոցոյդ քում զըւարժ  
Թափին շուշանք մեզ և վարդ.  
Ամորան հուր շանթալոց  
Շիջեալ յառաս շաղ արոց,  
Քըսաննածածան յարուրէս  
Շիկին ցորեան ոսկեդէս, և այլն:



«Քնար»-ը կատակա-դիւցաղներդական (heroï-comique) առաջեր ալ ունի իր մէջ. կատուի մը մաշուան վրայ հարի-ը իննուն և ուն տող եղերդ մը զրած է նար-Պէյ: Եթէ թերահաւատներ զանուին՝ պատրաստ ենք այդ հոչակաւոր եղերդէն քանի մը տող արտատպելով զիրենք համոզէլ:

Զիմբոդ, ոչ ևս է Քընքուշ...  
Ո՞չ ևս կատուն մեր անուշ...  
Մեռած փափկեկն այն սիրուն,  
Խինդ և գորով մեր պարուն...

Զիմբոդ մեռաւ մեր Քընքուշ  
Մեր խաղ ճապուկ և քընքուշ:  
Զիմբոդ շիջան այն աշկունք,  
Պաղին անդամը երագունք.

Ո՞հ, զի՞ ևս այլ... մընսցը մաշ  
Ի անխօս ոգւոց սակ և աշ.  
Ո՞չ եղկելոյն հարեալ ձիչ  
Ըզսիրան ի գութ յորդորիչ  
Ո՞չ ի բարուցն աղուենի  
Պատկառեցաւ լըրենի.  
Յօրիորդին ոչ ի գեղ,  
Ո՞չ ի կամար լանջագեղ,  
Ո՞չ յանդամոց լըրութիւն,

Սորթոյն յողորկ փափկութիւն,  
Ոչ շերտ ի շերտ ժապաւեն  
Յուս և ճակատ նըկարէն,  
Ոչ իսկ յաշաց գեղանացին  
Յոր բիր լիւղէր լուսագոյն...  
Եւ ոչ յայսչափ իդք սըրախց  
Ոչ յարտասուաց ինչ թափիծ,  
Ոչ ի վայրից սըրբութիւն  
Ընկրկեցաւ յողդողդուն,  
Ոհ, զայս նախկին՝ քայլ ժըմիրհ  
Խմոր անդ մահ մըշտանիրհ...  
Եհաս... եհար, Ճիշ երարձ...  
Մրացաւ և շունչն... ահ, անդարձ և այլն:

Բայց եթէ այս վաթսուն և ութը տաղերէ իւրաքանչիւրին արժանիքը կամ թերութիւնը թուենք՝ վերջը չի գար,  
ուստի «Քնար Պանդխտին»-ի մասին մեր տեսութիւնը կը վերջացնենք՝ «Ազգատեացը» տաղի վերջին հատուածը դնելով ասու:

Անէ՛ծք ի գլուխդ, անէ՛ծք ի սիրտ,  
Անէ՛ծք յնզգիդ դէմ հեղեաւ քիրտ,  
Անէ՛ծք ի գործ ձեր և ի բան,  
Ցամօթ և ցաւ կեցլիք ծըփան.  
Եւ վաղազ բաւը յերկիր օտար  
Տապանքդ ի փուշ ծածկեսցին չար...  
Եյս է բաժին, այս են վերջայք,  
Որոց չիցեն ճըշմարիտ չայք.  
Եյս է բաժին, ձեր, այս վերջայք.  
Անէ՛ծք ոյց չեք ճըշմարիտ չայք.  
Անէ՛ծք ոյց չեն ճըշմարիտ չայք:

\* \* \*

«Ստուերք հայկականք»-ը ապահովապէս նար-Պէյի զըլուխ զործոցը կրնանք համարել, ոչ միայն համեմատապէս աշխարհաբար լեզուին՝ այլ նաև զգացումներու խորութեան և բանաստեղծական շատ մը զեղեցիկ գիւտերու տեսակէտով: Հեղինակը կարծես աւելի զիտակից է հոս իր հանրային կոչումի վսեմութեան և ըստ այնմ իր երկասիրութիւնն ալ ամենէն աւելի ի՞ր նպատակին ծառայեցուցած է:

Հարիւր վաթսունը ու չորս էջերէ բաղկացած այս սիրուն հաւաքածոյն կը բաժնուի երկու մասի, Վէ ո՞ւ և Եղէ՞ր + թող տանը որ ասկէ անդին հեղինակը ինքը խօսի «յառաջաբան»-ին մէջ: «...Առաջինը անցելոյն, երկրորդը ներկայիս նուիրեալ: Երկութն ևս անկատար, որովհետեւ ոչ մեր բոլոր անցեալ փառքերը կը բովանդակին, ոչ ներկայ թշուառութիւնքը: Ասոր պատճառը ոչ միայն իւր (հեղինակին) տկարութիւնն է՝ նիւթոց անբաւ առատութեանն առջեւ, այլ և գժրաղդ ու ահաւոր հրդեհ մը՝ որ Բերայի մէջ հեղինակին տասնամեայ երկասիրութիւնները բոլոր յաճիւն փոխարկելով վէպերուն մ.ծ մասը, որ մեր Դիւցազնց կենսագրութիւնն էր, յափշտակեց տարաւ, ուրիշքանի մը հատոր քերթողական և բանասիրական աշխատութեանցն հետ: Իսկ այս հատորին մէջ ամփոփուածները՝ բաղդ ունեցան ազատելու, ոմանք ազգային օրագրաց մէջ հրատարակուած լինելով, ոմանը ալ բարեկամաց քով գտնուելու բարեգիպութեամբ»:

«Ստուերը հայկականք»-ը հրատարակուած է 'ի կ. Պոլիս, 1874-ին: Մենք, ինչպէս շատ մը արտատպումներ ըրինք հեղինակին միւս գործերէն՝ նոյնպէս և աւելի՛ շատ արտատպումներ պիտի ընենք այս կարեւոր գործէն ալ երկու գրւխաւոր պատճառներով. նախ, Նար-Պէյի գրական կարողութեան և ոճին վրայ գաղափար մը տալու՝ և երկրորդ, իր երկասիրութիւններէն գոնէ բեկորներ հրատարակուած տեսնելու աենչով. որովհետեւ եթէ գտնուին նոյն իսկ գրասէրներ որոնք փափաք յայտնեն նար-Պէյի գործերը հայթայթել և իրենց հետաքրքրութեան գոհացում տալ չպիտի կը ռնան այս գրքերէ և ոչ մին գտնել. Պոլսի մէջ ոչ մէկ գրատուն ունի զանոնք. թուրք զրաքննութեան ծայրայեղ օրէնքները բացարձակ կ'արգիլեն անոնց վերստին հրատարակուելը և միայն մասնաւորներու ձոխ գրադարաններուն ամէնմէն մթին անկիւնները փոշոտ գարակներու ամէնէն գաղանածածուկ խորշերը պիտի կրնաք հանդիպել նար-Պէյի անունին:

«Ստուերը հայկականք»-ը, ինչպէս ըսինք, երկու գիրքէ կը բաղկանայ, Վէպք և Եղերգք. առաջինը 13 տաղ, իսկ

երկրորդը 17 տաղ կը պարունակէ իր մէջ:—Կընանք ըսել  
թէ տաղերէ իւրաքանչիւրը կատարեալ զգայումնվ և զի-  
տակցութեամբ, օգտակար ըլլալու բուռն տենչով գրուած է:  
Հոն, այդ զգայուն, գողարիկ քերթուածներուն մէջ, Նար-  
Պէյ կ'արտայայտէ այնպիսի ողջամիտ գաղափարներ որոնք  
ամենէն նոր, ամենէն յառաջդիմական եղանակով մեր աղ-  
գային թերութիւնները մատնանիշ կ'ընեն և ուղղութիւն  
մը ցոյց կուտան մեր պարտականութիւններու մասին: Եյդ  
տաղերը, իրենց զիւրահասկանալի լեզուով քիչ ու շատ զար-  
գացած ամէն անհատի հաւասարապէս մատչելի, մեծ տպա-  
ւորութիւն թողած են մեր նոր սերունին վրայ և ա-  
նոնք են որ Նար-Պէյի անունը սիրելի կ'ընծայեն Ազգին:

Առաջին գրքին մէջ նշանաւոր են հետեւեալ «վէպ»-երը.  
Հայէ, Արա Գեղեցիկ և Նոռլարդ, Զարհայը և Շոռլան, Արքա-  
-ուուր Երևորդ, և այլն: Երկրորդ գրքին ամենէն նշանաւոր  
տաղերն ալ հետեւեալները կրնան նկատուիլ—Հայ Հայ Հը,  
Հայ աղջին, Հայ Ջւնին, և այլն:

Հայէ վէպին մէջ հիանալի տողեր կան՝ գաղափարի, ըդ-  
գացումի և ներդաշնակութեան աեսակէտով: «Ազատութեան»  
մասին հետեւեալ քառեակը պարզապէս վսեմ է:

Ազատութիւն և Հայն միմանց են եղ բայր,  
Եւ գերկոսին իսկ մի և նոյն ծընաւ Հայր.  
Միզն՝ տըւաւ ժառանգութիւն դշայաստան,  
Միւսոյն՝ զաշխարհ ամենայն:

Միւսոյն տաղի վերջին մասը, ուր բանաստեղծը խօսքը  
Հայկին ուղղելով՝ Հայերու արգի վիճակը կը պատկերացնէ՝  
այնքան սրտաշարժ է, որ աչքերէն արյունք կը խլէ:

Ու Հայրդ Հայոց, Երբ յերկնակետ քոց աստեղաց  
Բայօնս շարժեալ լուսագ գեաց,  
Եւ ուղրտաթունդ ի վայր նայիս զու յայն երկիր  
Զոր քո նետով փըրկեցիր.



«Արա Դեղեցիկ»-ի գէմքին նկարապրութիւնը զրտկան թանկապին գոհար մըն է, նոյնչափ և աւելի՝ սրտապրաւ է՝ նուվարդինը. իսկ ամբողջ նկարադրի տեռողութեան միջոցին վերասլացիկ երաժշտութեան մը ամենէն մելանոյշ վանդիւն-ները կարծես կուգան փայփայել զգացական նրբին կարողութիւններդ:

«Հանց աղեղ լսրած թուխ լայն լայն յօնքեր,  
ճակատոն հովուին կարծես ցանկ պատեր.  
Ու դռուզ հոպովիք ուրեխով սեւ սեւ  
Կը ծըփան մարմար վազ ին ծաղկաձեւ:

Իսկ երբ բոցափայլ աչվին եռանդնոտ  
Աեր առած հայեր յարփին անազօտ,  
Կարծես գէմ լնդդէմ յերկիր և յերկին  
Զոյգ մի արեներ յիրար պլշնուին:

Այն քաջին ուսոց կըսթընած քընքուչ  
Կին մի տեմնուեր քան շուշանն անուշ-  
Խնչալէս ձիւալթոյր հեղիկ աղաւնի,  
Թեւերն ամփոփած բոյնին քով թառի:

Երշալյան երբ դայ սպոռոց ցողակարդ՝  
Ոչ այնալէս փափկիկ ճակատն ունի վարդ,  
Խնչալէս նէրա սուրբ այտերուն վերան  
Բոսոր ու ձերմակ վարդեր կը ցուան:

Կապոյս աչուլներն են ջինջ աւելի  
Քան թէ այն գարնան մաքուր գէմք երկնի,  
Ո՛չ չըկաց քըրքում մի այնալէս սիրուն  
Որ նորա յաղթե սոկի մազերուն.

Ձէ՛, նա մահացու կարծես թէ չէ՛ր կին,  
Այլ երկնաբարնակ հուշուակն եր քաջին,  
Որ կընոջ առել գողութիկ կերպարանը,  
Լոյս տալ աչքերուն, սըրտին՝ ըսփոփանք:

— Էնուշակ քամին իջաւ մէմըն սցլ  
Եւ ծածանեցան ծամերն սոկեփայլ  
Ու երկու կաթիւ այն ծաւի աչքեն  
Ընկան ինչալէս շիթք ցողոյ երկընքնու»

«Զարմայր և Շուշան» վէպը գեղեցիկ է շատ մը տեսաիւներով: Պատմութիւնը կ'աւանդէ թէ Զարմայր Տրովագայի պատերազմին մասնակցեցաւ տաօն հաղար հայերով և պատերազմի դաշտին մէջ ինկաւ մեռաւ: Բանասաեղ-

ծը այս գէպքին ակնարկելով՝ օտար ծառայութեան մէջ  
դանուողներուն սրտաշարժ բարոյական դաս մը կուտայ հե-  
տագայ տողերուն մէջ:

\* \* \* \* \*

Օտար երկնից տակ նոքա քաջացան,  
Օտար երկնից տակ հալեցան՝ ընկան,  
Ու խեղճ Հայաստան տասն հազար որդւոց  
Եւ ոչ զոսկըրներ ժողովեց ի ծոց:

Իսկ օտարն որոյ օգտին և յօձան  
Զէնքը ու կեանք տըւին այն բիւրք Հայկական,  
Օտարն ո՛չ միայն շեղաւ շնորհակալ  
Այլ և ո՛չ անուանքն է նոցին պահեալ:

Եյն աչեղ կըռուին՝ ամեն քաջ իշխան  
Ունիցաւ իրեն երգի՛ գովաբան,  
Ահ, Զարմայր միայն և տասն հազարիակ  
Չունիցան և ո՛չ մի փոքր յիշատակ. . . :

Ո՞վ գիտցաւ թէ յայն խուռն ազգաց ժողով  
Որ տարան իւրեանց զէնքեր Տրոյյ քով  
Եւ բիւր մի քաջ Հայք յասպարեզ իջն,  
Եւ յանուն Հայոց զաշխարհ սարսեցին:

Ո՞վ գիտաց երբեք թէ Հեկտորին հետ  
Կայր քաջ քան զէտս, Աքելենց հանդէմ  
Որ բիւր յոյն քաջաց զարեւ խաւարեց,  
Եւ յուղարկաւոր իւր շիրիմ նետեցի:

Ոչ զայն ո՛չ յիշեաց ոք և կամ գիտցաւ,  
Եւ ո՛չ ոք յանուն Զարմայրի լացաւ.  
Ո՛չ ոք Հայ վեհից սոկիրաց վերայ  
Բուռ մը հող ցանեց՝ գըժալով նոցա. . . :

\* \* \* \* \*

\* \* \* \* \*

\* \* \* \* \*

Զարմայր խոստայած էր իր Շուշան տիկնոջ որ պատե-  
րազմի երթալէն տարի մը յետոյ կը վերադառնայ իր զիր-  
կը: Պայմանաժամի լըանալուն՝ Շուշան իր իշխանուհիի մե-  
ծաշուք զգեստները կը հագնի և բացօղեայ դաշար կերթայ  
իր ամուսինը դիմաւորել բայց երբ հոն, գուժկան դեսպանի

մը միջոցաւ, Զարմայրի մահուան բօթը կը լսէ՝ սրտին ցաւէն կը մեռնի:

«Կարեն թէ շանթ զարկած սըրտին՝ ընկաւ վայր,  
Աարդ ըըրթունքն ելաւ միայն «Ե՛հ, Զարմայր...»  
Ընկաւ ինչպէս մի լըրթագոյն մանուշակ՝  
Որ յարեւուն թռոմի մարի բոց կըրակ:»

Եյս վէպի վերջին մասին մէջ Հեղինակ-բանաստեղծը  
սքանչելի զիւտ մը ըրած է, որ ինքնին ամբողջ հատոր մը  
կարժէ: Տեսէք թէ շուշան ծաղկին անուան ստուգաբանու-  
թիւնը որպիսի՝ զրաւիչ աւանդութիւնով մը կը մեկնէ:

«Մ'ըսեն թէ Հայերն երբ երկրորդ օրին  
Եկան որ իրենց փըստուն թագուհին,  
Հօն՝ ուր փակեց աչք նազելին Շուշան՝  
Դեղաշող միայն մի ծաղիկ դըտան:

Թագուհոյն ձիւնի պէս դէմքին նըման  
Ունէք նա սպիտակ շրտարչ լուսերինան,  
Եւ տերեններուն անուշիկ բուրում  
Դըշխոյն մաքրիկ սըրտին եր բըղիսում:

Իսկ ծակուին վերև մարգարտի ցողեր՝  
Ենշուշան իւեղձ հարսին վերջին արցո՞ւնքն եր...  
Որով Հեղափայլ ծաղիկն այն օրէն  
Ըզաւանակ անուն առաւ դըշխոյէն:

\* \* \*

Հայեր, երբ Ճերմակ զայն ծաղիկ տեսնեք,  
Չընազ թագուհին ձեր ի միտ բերեք.  
Ու գէթ ձեր աչքէն կաթիւմ՝ մ'ընդունին  
Զարմայր ու նորա թշուառ Ամուսին:



Արդարապետ Բ. վէպին մէջ, գիշերուան նկարազրութիւն  
մը կայ հիանալի ոճով. անոր մէկ քառեակը մանաւանդ՝ նը-  
կարագեղ ու կորովի լեզուի և նյոնչափ ամրակուռ որչափ  
զողտրիկ իմաստներու եղական արտազրութիւն մըն է:

«Զովուկ մէկ փըչէր սիւք ծաւալ ծաւալ  
Զառուակին սահեր ջուր թաւալ թաւալ  
Տերեն ու ծաղիկ սարսին հեղ ի հեղ  
Կազդուրին ի ցող ակոսք աօթակէզ:

Միւնոյն վէպի մէկ ուրիշ հատուածին մէջ, պատերազմի պատրաստութեան նկարագրութիւն մը կ'ընէ հեղինակը, ուր աչքի կը զարնեն բնութեան ձայներէն շինուած բառեր, ճարտարահիւս շարսյարութեամբ:

|                       |                       |
|-----------------------|-----------------------|
| Դափր անդ ի գրչութիւն, | Աղեղանց ձայնթիւն,     |
| Նըժուգից գրնջիւն,     | Նկոցից Ճարճատիւն,     |
| Ուսորդաց գոչիւն,      | Շըռինդ ընդ բոմբիւն,   |
| Բարակաց հաշիւն,       | Անդ յընդուստ թընդիւն, |
| Երեց բաջիւն,          | Ցանտառ, ձոր թըմբիւն,  |
| Զինուց շառաչիւն,      | Դըլորդին գանդիւն:     |

«Սառերք Հայկականք»-ի Բ. Գրքին—Եղերգներուն մէջ, սրտի զազող շատ հասուածներ կան, և հոն է որ հեղինակը իր զգացումներու զէնիթը կը հասնի և տեղ տեղ զրկիթէ կը հաւասարի Ռափայէլ Պատկանեանին ու Ռափֆիին:—Իր ԺԱ. Եղերգը—Թշուառ հայեր—ի՞նչ տիսուր մէկ պատկերն է մեր վիճակին ու մեր հոգեկան նկարագրին:

Ա.



Բ.

Վասպէս են օտարը.—իսկ գուք աւելի՝  
ՈՒթէ գութ ունիք ազդիդ եղելի.  
Հայրենեաց ցաւոց ո՞չ գուք անտարեր  
Օտարի նըման կը նայիք, Հայեր:

Ո՞չ սառած սըրտով եղբարցդ աղետից՝  
Խուլ էք հառաջմանց նոցա մահալից...  
Ոգիք ձեր՝ փոխան զգացմանց ազգասէր  
Չե՞ն լըցեալ ոխով, կըրիւք, ով Հայեր:

Եսութիւն անդութ սըրտերնիդ գրաւած,  
Ժանտ ագահութեամբ հարուստք կարկամած,

ԱՅՆ ատեն միայն կ'իմացվի կեանք ձեր,  
Երբ ձեր եղբօր դէմ վառվիք, ով Հայեր:

Ո՛հ, բայց ձեր այդ կեանք որ տայ մահ եղբօր՝  
Կըզնվք և կեանքիդ բերէ ահաւոր,  
Ո՞ւր, ո՞ւր Ազգութիւն այսպէս կ'երթայ ձեր՝  
Ուշ չէք միանար դուք, թըշուառ Հայեր:

Թըշուառ առաւել էք դուք վահ այնչափ  
Որ թըշուառութեան ձեր չը դիտէք չափ...  
Վւաղ մինչև ցերը ի քուն մահաստուեր  
Պիտի չարթըննայք դուք, թըշուառ Հայեր:



Իսկ Նար-Պէյի հայ առյին+ ու հայ Գւռնին+ը թրքահայոց  
մէջ այնչափ ընդհանրացած են որչափ ընդհանրացած  
է անմահ Պատկանեանի «Արաքսի արտասու քը»: Փոխանակ  
աստ գովեստներ յերիւրելու յիշեալ զայդ մը աննման տա-  
ղերուն համար՝ լաւագոյն է զանոնք նոյնութեամբ և ամ-  
բողջութեամբ արտադրել ի ստորե:

### ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,  
Հայ կընքեր է մեզ Պատմութեան էջը.  
Հայ անուանք ըզմեղ կ'ողջունեն Երկինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք,—Սեր Հայրն է այն Գիւցազուն  
Որ զԱզատութիւն սոլուեցոյց մարդուն,  
Ու մեղ վեհ անուն մը տըւաւ բաժինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Մեր աշխարհն է առերբ:—Մեր հոգուն վըրան,  
Վստուած է քալեր, հանելով զԱզամ:—  
Մեր լեզուն սուեղծեր ու խօսեր նախ Ինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրբան.  
Երկիր փլրկութեան է մերս Հայաստան,  
Ալրօնից նախկին սեղան է Մասիք.—

Եղբարք, Նայ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ ո՞չ միայն յերկիր՝  
Այլ և յեթե՞րց մէջ շողայ լուսալիք.  
Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք,—  
Եղբարք, Նայ ապրինք:

Նայ ապրինք.—Ո՞ր ազգ կայ Հայուն նըման,  
Որ ունենայ հին պարծանքներ այսքան,  
Ո՞ր ազգ Հայուն պէս շքեղ Հայրենիք.—  
Եղբարք Նայ ապրինք:

Ըսէք, ո՞ր Ազգին չորս Առաքեալներ  
Երկնից ֆագաւորն է գեսպան զրկեր,  
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր Խնք.—  
Եղբարք, Նայ ապրինք:

Ո՞ւ կրնայ համրել Սրբոց մեր զանուանք,  
Ո՞ւ պատմութիւնն է Կահանակաց ցանկ.  
Ո՞ւ Եկեղեցին յերկրի է Երկինք.—  
Եղբարք, Նայ ապրինք:

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք.  
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք.  
Հայը զարմացոյց զերկիր և զերկինք.—  
Եղբարք, Նայ ապրինք:

Ո՞ւ ազգ հետեւով է Ճիշդ Յիսուսի,  
Որ Խաչն այսամի դար առած է յուսի.  
Ո՞ւ չընոնարհիր, չըլլար դասալիք.  
Եղբարք, Նայ ապրինք:

Այս, Խաչն կեանք՝ կեանք է վըշտալից,  
Այս, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից.  
Բայց Խաչն յաղթութիւն ունի վեհ կընիք.  
Եղբարք, Նայ ապրինք:

Այեր քաղցր Հայրենիք, մեր թագ, գաւազան՝  
Ամպեր են ծածկեր արևի նըման.

Յուսացէք, արև կուտան մեզ Երկինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Ու ճակատագիր մեր չէ՛ միշտ տըլսուր՝  
Ոզմթշուառութեան ուտեւ հացն ու զուր.  
Վոր երջանկութեան ապագայ մ'ունինք...

Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք, որ մեր որդիք ալ Եղբարք,  
Կարենան պարձիւ որ զմեզ ունին հարք.  
Չըլւանք Հայ անուան չըլւանք նախատինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք.—Օր մը յաղթական մահուն  
Պիտի բարձրանայ անմահ Հայութիւն...  
Ո՞հ, այն օր մեզի շուտ ծագէ, Երկինք...  
Եղբարք, Հայ ապրինք:



### ՀԱՅ ՄԵՌՆԻՒՔ

• • • • • • • • • • • •  
• • • • • • • • • • • •  
• • • • • • • • • • • •  
• • • • • • • • • • • •

Իազդը բարձեր է ձեզի դէմ թըլշնամի,  
Մի՛ վհատիք, ցուցուցէք սիրտ հայեցի.  
Չէ՛ կարող բազդ յաղթեւ ազգին այն քաջի  
Որ բազդին դէմ կը կըռուի:

Չէք դուք որդիք այն գիւցազանց աննըման՝  
Որ հայրենեաց ձենձերեցան ի սեղան...  
Չէք դուք որդիք այն մեծ հայոց որոց կեանք  
Են մարդկութեան իսկ պարձանք:

Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ'ազգային,  
Որոյ վերայ մեծ ազգեր իսկ նախանձին,  
Ինչու այսօր մոռցած զԱնցեալ ձեր փառաց

Օ՞ն, ով կը զբայ ի սիրտ եռանդ և ոգի՝  
Թաղըւ և կը իւր նախնեաց հետեի.  
Մեր կեանքը հոն է՝ ուր կրօնից մեր սեղան,  
Այն է հայոց վառարան:

Ե՞ղաբք, Հայուն կեանքը երբէք չը մարիր,  
Երկինք լեցուն են այն բոցով կենսածիր.  
Որչափ տիրէ մըշտայազթ խաչ Քրիստոսի,  
Այն ալ անոր հետ կ'ապրի:

Կ՞նչ կը վախնայը...—Կրուխնուդ վերայ չէ՞ք տեսներ  
Քառաթեւին դիւսարսուռ վեհ ըստուեր.  
Օայն սուրբ փայտին բուն շաղեցին ձեր հարըը  
Կրենց վըսեմ արեամբը:

Դուք ալ խաչին խարըսիեցէք ձեր յոյսը,  
Եւ հաւտացէք պիտի ծագի՛ ձեր լըյուր.  
Կա ազգութեանդ եղաւ պարիսակ ամրափակ,  
Կա ձեր ըլլայ զէնք դրօշակ. . .

Ա՞շ հընար չէ՛ որ կորսըվի այն ազգը՝  
Որ հաւտարիմ մընաց Խաչին միշտ ոտքը.  
Կորա կեանքը պիտի տեւէ այնչափ դար,  
Որչափ կրօնից կեանք՝ յաշնարչ.:

Այն վեհ կրօնից և Ազգութեան անունով,  
Ամայ եղաբք, ձեռք ձեռքի՛ տըւէք հուր սիրով.  
Վատելութիւն, քէն՝ մերժըվի՛ն օն ի բաց,  
Անիծեցէք զազգատեաց. . .

Վմենուդ սիրո՞ ըզգայ նոյն սէրն Հայրենեաց,  
Վմենուդ միտք թըւչի յօգուտ համազգեաց.  
Ու ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ՝ միշտ  
Ըգբացէք ձեր իբրև վիշտ:

Ուեղի կենաց տըւող և մեր պահապան՝

Լ; Աւազան Հայկական:

Ե, յն Աւազան՝ այն հայութեան կընքատուն,

Ո՛չ չուրանամք, եղբարք, յուսովք զաղփաղփուն...

Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս,

Օձո՞ղ մարի յայն սուրբ կըրկէս:

Օձո՞ղ ամենքս ալ ընդունի նոյն գերեզման,

Ա ասընդի նոյն էր ամենուս ալ օրբան...

Հայ ծընանը մեք, Հայ ապրինք, Հայ և մեռնինք,

(Օ՞ն, Հայ մըտնենք և յերկի՞նք:



Հայ ապրէնին ու Հայ մեռնին+ը սիրուն երաժշտական եղանակներ ունին երկուքն ալ առաջինը՝ զուարժ ու մելանոյշ՝ ու երկրորդը՝ մելամաղձիկ ու արտամանոյշ օ՛չ, այնչափ մելամաղձիկ որ ունինդիրին սիրալ խորապէս կ'այլայլէ և ամենէն քարսիրա մարդուն աչքերը արցունքով կը թրջէ:

«Ստուերք Հայկականը»-ի առաջին մասին մէջ նար-Պէյ Զարձայց և Շոտանի վէպովը արգէն կը բողոքէ օտարասիրութեան դէմ, բայց Հայ մեռնին+ի բողոքը աւելի՛ խուլ, աւելի՛ այլայլէս աւելի՛ զգլիսի բողոք մըն է....

Զգայուն բանսատեղծը, ասկէ քսան տարի առաջ—երբ գեռ մենք հայերս ծայրայեղ ախնկալութիւններ ունինք օտարներէն—ինքը մին մինակ, գուշակած, և այնքան ճշգիւղու զուշակած էր թէ օտարը իր շահէն զատ ուրիշ բանի չի նայիր և մեր յոյսերը ծիծաղելի ըլլալէ անդին չէին անցներ.... Հոս միջանկեալ կերպով ըսենք թէ, այն օրէն ի վեր քանի՛ քանի՛ անդամներ օտարներու գռներ բաղլսեցինք, քանի՛ քանի՛ անդամներ պաշտօնական թէ անպաշտօն այնքան գիմուֆներ ըրինք ասոր անոր, և ինչպէս բանսատեղծը կ'ըսէ՛ «Չեր կը ծաղըն մերկութիւն», այո՛, ծաղըն յանդի, իւրնդացին մեր վրայ և անիրաւ իսկ յայտարարեցին դմեղ մեր

պահանջներուն և բողոքներուն մէջ. այս ամենուն ականատես եղանք, այս ամենը շօշափեցինք, զգացինք, և տակաւին, տակաւին մեր մէջէն կարդ մը մարդիկ, ու ցաւալի բան, զարգացած մարդիկ, հաւատաք ունին թէ օաարը պիտի կարեկցի մեր թշուառութեան և պիտի օգնէ մեզի:



«Վա թ թ է ն է +»-ը Նար-Պէյի բանաստեղծական հաւաքածուներու շարքը կուգայ լրացնել: Այս գործը, գերազանցապէս հովուերգական քերթուածներու ընտիր համախմբում մըն է, ուր լեզուի գաշնակութիւն և զգացումներու փափկութիւն զրբին մէկ ծայրէն միւսը իրենց անջնջելի զրոշմը զետեղած են: Պատոնական, վերացական սէրը իր բոլոր պէս պիսութիւններովը երգուած է հոն, սոխակի մը մեղեղիին պէս անոյշ և զարնան վարդին նման բուրումնավէտ: Ափսոս որ այդ սիրուն հատորը չկրցինք ձեռք ձգել որպէս զի կարհնայինք աւելի արտայայտիչ գաղտիար մը տալ ընթերցողին՝ անոր նկատմամբ \*):

Նար-Պէյ զրած է նաև Փունջ+ Արարատէան անունով ուրիշ հաւաքածոյ մը քերթուածներու, որ սակայն լսու տեսնելու բաղզը չէ ունեցած: Երբ իր մահուանէն յետոյ իր ձոխ զրադարանը մաս առ մաս ծախուեցաւ՝ ձեռագիրները Բարիզ, իր եղօրը, Դուխտօն իշխանին զրկուեցան. Թերես անոնց մէջ գտնուի նաև «Փունջը Արարատէան»-ը: Փափաքելի էր որ Լուսինեան իշխանը, թէ յարգելու համար հանգուցեալ բանաստեղծին յիշատակը և թէ միանգամայն ծառայութիւն մը մատուցանելու աղքատիկ հայ զրականութեան՝ հրատարակէր ողբացեալ արքեպիսկոպոսին ձեռագիրները:

Ա. Հա ֆ լ ա ն է ա անունով կատակերդութեանը մէջ, Նար-Պէյ ձազկած է նորասիրութեան ծայրայեղութիւնները: Իր այս թատերական գործը շատ աւելի յաջող է քան թէ Արշակ

\* ) Այս և միւս երկու գրուածքների մասին, որոնք նոյնպէս մէր աշխատակցի ձևոքը չեն ընկել մենք կը խօսենք առանձին՝ «Ծրացա»-ի յաջորդ գրքում: Դ. Խօն:

Բ. ողբերգութիւնը, որովհետեւ աւելի ճիշտ ըմբռնած է թատերական զրականութեան պահանջումները.—իրական կեանքը բեմագրել ինչպէս որ է, իր բոլոր տառապանքներովն ու զուարթութիւններովը, իր բոլոր ծիծաղելի ու լուրջ կողմերովը: Հոս ևս ընթերցողին հետաքրքրութիւնը գոհ ըստիտի կրնանք ընել քանի որ հակառակ մեր բոլոր ջանքերուն անկարելի եղաւ գէթ մէկ օրինակ գտնել Ալանչանէայէն:

Հայ Եկեղեցն և Անդրաւեւնական+ անուն գործը պաշտպանողական մըն է Հայաստաննեայց Եկեղեցւոյ վարդապետութեանց: Այս գործն ևս սպառուած է և կարելի չեղաւ մեղձեռք ձգել զայն:

\* \* \*

Նար-Պէյ շատ մը օտար թարերգութիւններ ալ հայերէնի թարգմանած է, —ինչպէս Ալֆիէրիի Սառութը, Խասմինի Գոնովնէան, Գոռնէյլի Պոռչիարու (որու տեսարանները Հայաստանի մէջ են և դիւցազանց զլսաւորները՝ հայ իշխաններ), Վոլթէրի Զայշչէն, Առնոլտի Մարտինը, Շէյլսիրի Յուլիուսը, ու Շիլէքրի Սլուտրու: Բայց ասոնց ոչ մէկը հրատարակուած են. և որովհետեւ շատ հին թարգմանութիւններ են՝ հաւանական է որ իր Սառութը՝ Հայէական+-ի յառաջաբանին մէջ նկարագրուած Բերայի հրդեհին զոհ գացած ըլլան:

Գրաբարեան և աշխարհաբարեան ծանօթ պայքարին սկիզբը և ամենէն տաք միջոցին՝ Նար-Պէյ՝ Մասիսի մէջ (որ այն տաեն ամենօրեայ թերթ էր) պարբերաբար հրատարակեց Հոմերոսի Իշխականին աշխարհաբար թարգմանութիւնը, ցոյց տալու համար թէ արգի լեզուն մինչեւ որ աստիճան ընդունակ էր ամենէն վսեմ զիւցազներգութիւններն իսկ՝ ի հայ վերծանելու մասին:

Հոս զանց կընենք խօսիլ Նար-Պէյի գասական գործերուն վրայ, որոնք ի հարկէ զրականութեան մասը չեն կազմեր՝ և որք իբր գասական գործ՝ մանկավարժական տեսակէտով ալ մեծ արժէք չունին:

Վերջին տասը տասնըհինդ տարիներուն մէջ Նար-Պէյ գրական հրապարակին վրայ զրեթէ կատարեալ լռութիւն կը պահէր. տարին մէկ երկու անգամ հաղիւ կը տեսնէինք իր ստորագրութիւնը լրագրական յօկուածի մը ներքեւ, բայց հատորի ձեռվ երկասիրութիւն երբէք 'ի լոյս չընծայեց այդ երկար ժամանակամիջոցին մէջ: Ի՞նչ կ'ընէր. այդշափ բեղմաւոր անցեալ մը ունեցող բանաստեղծը, իր խորհրդածութեան ու դատողութեան ամենէն հասուն շրջանին մէջ պարապ կը նստէր. ոչ ոք զիտէ: Այդ առեղծուածի լուծումը իր եղբօրմէն կը սպասինք\*):

Նար-Պէյի էն վերջին գրական գործը ոտանտոր մընէ, մահուընէն քանի մը շաբաթ առաջ գրուած:

Երբ Աշբեան պատրիարք իր բարբարոսական հարուածով շնորհազուրկ ըրտծ էր տարաբաղդ արքեպիսկոպոսը, երբ ամէն փառքէ, ամէն պերճանքէ մերկայած Նար-Պէյը իր այնշափ յոզնաթիւ ծանօթներէն ու բարեկամներէն լքուած, անտեսուած, առանձինն կ'ապրէր իր քրոջ խոնարհ բնակարանին մէջ, ցերեկը մինչև իրիկուն, և զիշերը մինչև առաւօտ խաչէններու (լրտես) վոհմակով մը շրջապատուած՝ այդ տագնապի օրերուն էր որ Յակոբ Գուրգէն իրեն զիմելով իննդրեց քերթուած մը խմբագրել՝ որպէս զի իր հրատարակած «Պատկեր Ախարհիկ Գրականութեան» անուն գործին Բ. Հատորը զարդարէ: Նար-Պէյի համար միմիթարական էր այդ զիմումը. ըսել է տակաւին ինքը չէր մոռցուած, տակաւին կը հետաքրքրուէին իրմով: Եւ իր անկեալ ու գերազանցապէս տխուր, ջախջախուած կացութեան ուղղակի ազդեցութեանը տակ՝ զրեց հիանալի քերթուած մը, մահաբոյր, տխուր շեշտերով, ու մութ, շատ մութ զցնիրով. գոզցես մարդարէական գուշակութիւնը իր մօտաւոր ապադային. քերթուած մը որ ինքնին անհուն համակրութիւն ապահովեց

\*) 1887 թ. Խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյը ար, և. Եղեանցի առաջարկութեամբ հին ֆրանսերէնից թարգմանել է լնոտիր գրաբարի «Յովանոս Դարդելի ժամանակադրութիւն Հայոց» գիրքը, ինչպէս որ Երևում է ար. Եղեանցի խմբագրութեամբ լցու ընծայած այդ գրքի (Պ. Բուրգ, 1881) յառաջարանից:

տարաբաղդ բանաստեղծին։ Տեսանդին հըմունջը—այս է քեր-  
թուածին խորագիրը—կարծես Միլվուայի մը \*) վրձինէն  
ելած ըլլար։ Բայց Նար.Պէյ Միլվուայի ներշնչման պէտք  
իսկ չունէր և հաւատաք ունինք որ աւելի՛ իր դառն կացու-  
թիւնը ուղղակի ներշնչեց իրեն այն հիանալի քերթուածը՝  
որ ահաւասիկ։

ՀԻՒԱՆԴԻՆ ՄՐՄՈՒԽԶԸ

Ա. Յ. Թ. Յ. Հ. Կ. Կ.

1

Վարնանային սիրք ցօղաթեւ  
Ահա վերջին տըւաւ բարեւ.  
Գերուա աւուրց հասաւ խորշակ,  
Ժառանմեցոյց խեղճ մանուշակ.  
Վարդ և շուշանըն լուսաթոյր  
Ահա զանոյշ կորուսին բոյր,  
Եւ իմ աչքեր արտասուագին  
Հետըզհետէ կը նըւաղի՛ն. . . .  
Ճալուշնիկ իմ սիրուն,  
Ոստեցաւ աշուն.  
Երբ հասնի ձըմեռ,  
Ողջ գըտնե՞ս զիս գեռ։

2

Ո՞հ, ալ չունի սիրտո ո՞չ մի յոյս,  
Ուարի՛ ճըրագ թըշուառ հոգւոյս,  
Եւ տերեոց մէն մ'ի թօմեափ  
Կարծեմ աւուրց իմ պակսի չափ.  
Իմ կարճ կենաց մէն մի վայրկեան  
Վայլ մ'ալ վարէ զիս ի տապան. . . .

\*) Միլվուա (Millevoye), ֆրանսացի բանաստեղծ, որ ծնաւ 1782-ին և մեռաւ 1816-ին. շատ յուզէ եղերգներ գրած է, բայց իր համբաւը կը պարտի անոնցմէ գեռ բագունին, հանրածանոթ La Chute des feuilles(Անկումն տերեոց)-ին, որ հայերէնի ալ թարգմանուած է։

Կ'ըղձամ նորէն տեսնել զԱպրիլ . . . :  
Տայց, ո՞չ, կ'ուզեմ ես գեռ ապրիլ,  
Ժարուհիկ իմ սիրուն,  
Մօտեցաւ աշուն.  
Երբ հասնի ձրմեռ,  
Ողջ գըտնե՞ս զիս գեռ:

3

Երբ նորաբոյս գարուն զուարթ  
Գայ ի ճակատ պըսակազարդ,  
Պիտի կըրկնես դու հըրձուագին  
Ըզքըուողիւն քո զառաջին.  
Պիտի տեսնես բլուրն ու անտառ.  
Եւ ոստոստես ծառէ ի ծառ.  
Տայց ես տի ո՞չ տեսնեմ, առաղ,  
Ո՞չ վարդ, առուակ և ո՞չ քո խաղ. . . :  
Ժարուհիկ իմ սիրուն,  
Մօտեցաւ աշուն.  
Երբ հասնի ձրմեռ,  
Ողջ զիս գըտնե՞ս գեռ:

4

Արտ՛ւն թռչնիկ, քիչ օրէն, ա՞չ,  
Յիմ սիրելեաց կը բաժնէ մահ. . . .  
Ա երջե՞ն անգամ քո դայլայլիկ  
Ես կը լըսեմ մելամաղձիկ. . . .  
Գուցէ քընած հողոյս վերև  
Ուրուր՝ ագռաւ սաւառնեն թեւ.  
Լըսուին բուին գուցէ եղերք,  
Վ. Ս. սըրտառուչ ա՞չ, ո՞չ քո երդ. . . .  
Ժարուհիկ իմ սիրուն,  
Երբ գաս ի գարուն,  
Մարդիկ զիս մոռնան. . . .  
Յեշէ՝ զիմ տապան:

*(Հայոց առաջարկ)*

Եւ երբ ձմեռը հասաւ՝ թռչնիկը զինքը ողջ չգտաւ...  
հէք բանաստեղծը. ու մարդիկ՝ օհ, շատ շուտ մոռցան զին-  
քը. մեր կրեսոսներուն մէջ չգտնուեցաւ գոնէ մէկը որ գէթ  
տասը հատը ծախսէր իր տասնեակ հազարներով ոսկիներէն.  
ողբացիալ արքեպիսկոպոսին համեստ յիշատակարան մը  
կանգնելու...:

Մարդիկ քեզ մոռցան, հէք բանաստեղծ. բայց քու  
սիրելի թռչնիկը, երբ ապերախտ մարդկութենէն աւելի աղ-  
նիւ, գարունին ուղէ քու խոնջած ոսկորներդ հրձուեցնել  
իր անոյշ գայլայլեկներով՝ պիտի կրնայ հողին հետ հարթ  
հաւասար եղած փոսդ զանազանել հաղարաւոր անորոշ ու  
տափակ փոսերու խառնակցափին մէջէն...

Առ-է-ծ.





Տ. ԱՐԹԵԼԻԿ ՀԱՅԿԱՆ.

## Տ. ՍԱԲԵՆԻԿԻ ԶՄՇԵԿԵԱՆ

(ԵՐԵՍԱՍԽԵԱՅ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՌԵԱՆ ԱՌԹԻՒ).

1863—1893

Մեր թատրոնի աղքատիկ պատմութեան մէջ անշուշտ իւր արժանաւոր տեղն ունի բռնած տ. Սաթենիկը, որ երեսուն տարի շարունակ՝ իւր անխոնջ գործունէութեամբ՝ մէծ ծառայութիւն է մատուցել հայկական բեմին:

Տիկին Սաթենիկը ծնուել է 1850 թ. Յովհաննէս և Անթառան Տէր-Աբրահամեան ծնողներից, որոնք Կարինից դաղթելով Ախալցիսայ և Ախալցիսայից Թիֆլիս՝ այսուեղ էին հաստատել իրենց մշտական բնակութիւնը:

1862 թուականին, երբ պ. Պերճ Պոօշեանցի զեկավարութեամբ սկսում են ներկայացումներ տալ Թիֆլիսի քաղաքային թատրոնում, այդ ներկայացումներին մասնակցում էր միայն մի կանացի անուս և անդրադէս ոյժ, մայր զերասանուհի Սովիայ Շահինեանց, որի վրայ և ծանրանում էին տմեն տեսակ կանացի գերեր: Այդ զերասանուհու շնորհիւ Պերճ Պոօշեանցը ծանօթանում է Տէր-Աբրահամեանների ընտանիքի հետ և համոզում է նրանց թոյլ տալ իրենց մատաղահաս աղջկանը մասնակցելու հսցոց ներկայացումներին և ուրիշ երկու օրիորդների հետ ի միասին երգելու պ. Փրիդոնեանցի ձայնագրած երգերից մէկը: Այդ ժամանակ օր. Սաթենիկը 12 տարեկան էր: Հետեւեալ 1863 թ. Պերճ Պոօշեանցի և Տէր-Սիմէօն քահանայ Զմշկեանի աշխատութեամբ և ջանքով Թիֆլիսում բացվում է առաջին հայ օրիորդաց ուսումնարանը, որ մի քանի ժամանակից յետոց տեղափոխվում է բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանի տունը, Գտնովսկի փողոցի վրայ: Օրիորդ Տէր-Աբրահամեանը՝ իբրև աշակերտուհի մտնելով այդ ուսումնարանը՝ շարունակում է միևնույն ժամանակ մասնակցել և ներկայացումներին, այնպէս որ նոյն 1863 թ. ապրիլ ամսուայ վերջերում նա արդէն

համարվում էր որպէս դերասանուհի: Թէ առաջին անգամ օր. Սաթենիկը ինչ դերի մէջ է բեմ գուրս եկել՝ յայտնի չէ մեզ, միայն այսքանը զիտենք, որ նորա առաջին դերը եղել է բժշկապետ Տէր-Գրիգորեանցի թատերգներից մէկում: Այնուհետև օր. Սաթենիկը՝ վայելելով տիկին Եղիսաբէթ Յովհաննիսեանի հովանաւորութիւնը.—որ (ինչպէս երևում է պ. Գրիգոր Իզմիրեանցի մօտ պահուած թատրոնական մասնաժողովի հաշուէմատեանից) նպաստելիս է եղել թէ փողով և թէ գործով այդ նորածին գաղափարի զարգացմանը,—շարունակում է ծառայել բեմին իրրե յայտնի դերասանուհի: Նոյն թատրոնական մասնաժողովի արձանագրութիւններից, հոկտ. 31 թուով ընդ № 5, երևում է, որ խումբը բաժանուած է եղել երկու կարդի, որի երկրորդ կարգի դերասանների թվում հաշվում է և օր. Սաթենիկը մի նշն վարձատրութեամբ:

Բայց հայ թատրոնական խումբը ինչ ինչ պատճառներից, 1863 թուին խոկ, բաժանվում է երկու տարբեր կուսակցութիւնների, —Միրիմանեանց և Իզմիրեանց: Օրիորդ Տէր-Արքահամեանը պատկանելով վերջին կուսակցութեանը, շարունակում է կատարել օր. Սովիայ Մելիք-Ազարեանցի հետ իւր հասակին համապատասխան դերեր:

Հարկաւոր էր, և խիստ կարիք էր զբացվում մի այնպիսի անձնաւորութեան, որ գործին զլուխ կանգնելով եռանդուն կերպով առաջ տանէր սկսուծ զործը, աւելի որոշ ուղղութիւն տար, ընդարձակէր գործունէութեան շրջանը, և որքան կարկի էր՝ աշխատէր ժողովսդի մէջ համակրանք ու սէր զարթեցնել գէպի թատրոնը, որով միայն կարկի էր իսկական նպատակին համնել: Սցյն թուականի վերջերում՝ երբ Իզմիրեանցի խումբը բայբայվում է, և թատրոնական ներկայացումների ղեկը իր ձեռքն է առնում պ. Գ. Զմշկեանը՝ Հիմնելով դերասանական ընկերութիւն որոշ կանոններով և պայմաններով, օրիորդ Սաթենիկը ընկերութեան զլիսաւոր ոյժերից մէկն է դառնում: Զը նայելով որ ընկերութիւնը բազմանդամ չէր և ընդամենը եօթը հոգուց էր բաղկացած, —որք էին՝ տ. տ. Սովիայ Մելիք-Ազարեանց, Քէթեան Արա-

մեանց և օր. Սաթենիկ, պ. պ. Գ. Զմշկեան, Ամերիկեան, Մանդինեան և Սուբիասեան,—բայց այնուամենայնիւ այդ փոքրիկ ընկերութիւնը՝ իւր արտակարդ եռանդուն և համբերատար գործունէութեամբ՝ բարեկարգ վիճակի մէջ զրեց բեմը: Նա՝ թողնելով մի կողմը հին, պատմական—ողբերգական բեպերտուարը, աշխատեց բեմ հանել աւելի նոր և ժամանակակից թէ ինքնուրոյն և թէ թարգմանական բէպերտուար: Այսպէս այս ընկերութիւնը սկսեց ներկայացնել պատկերներ, որ պատահում են առօրեայ կեանքի ամէն քայլափոխում; նոր թատերգներ, որոնց մէջ գուրս են բերվում ժողովրդի լաւ և վատ կողմերը, որով և թատրոնը ժողովրդի մէջ աւելի հետաքրքրութիւն շարժեց և նրա ուշագրութեանն արժանացաւ: Վերջին աեսակի թատերգներից առաջին անդամ ներկայացնում են «Սէր և նախապաշարմունք» կոմեդիան, թարգմանութիւն Աբրահամ Բաբանեանցի, որի կրկին ներկայացմանը\*) օր. Սաթենիկը մեծ յաջողութեամբ կատարեց իւր դերը:

Այս ժամանակամիջոցում, բժշկապետ Տէր-Գրիգորեանցի և Սունդուկեանցի բեղմնաւոր և ինքնուրոյն արտադրութեանց շնորհիւ, ընկերութիւնը մի նոր և շնորհալի բէպերտուար կազմեց, որի մէջ բոլոր էնժէնիու կանացի դերերը, կարելի է վստահ տաել, ստեղծեց օր. Սաթենիկը:

Սունդուկեանցի թատերգներից, օրինակ, «Էլի մէկ զոհ»-ի մէջ, որ առաջ ներկայացուեց մի ուրիշ վերնագրով, Անանուդերը կատարեց օր. Սաթենիկը այն տատիճան կենդանի ու բնական, որ ոչ միայն ամբողջ հասարակութիւնը զգացուեցաւ ու յուղուեցաւ նրա զգայուն խաղեց, այլ և ինքը՝ հեղինակ Սունդուկեանցին իսկ՝ արտասունքն աչքերին բեմ մտաւ և իւր ջերմ ու խորին շնորհակալութիւնը յայտնեց դերասանութուն: Օրիորդը՝ Սաթենիկը մեծ յաջողութեամբ խաղացել և ստեղծել է Արշակ Բ-ի մէջ, առաջին անգամ, խստասիրութանտապետ Ալանողանի բարեսիրու տղայի դերը: Սունդուկեանցի թատերգներում, համարեա բոլոր կանացի դերերը,

\*) Առաջին ներկայացմանը Լ էյիլացի դերը կատարել է կարծեօք, տղայ դերասանուհի Գոյիանէն:

ինչպէս «Պէտք»-ում ձկնորս Պէտօի տարաբախտ քրոջ Կէկէլի գերը, Շուշանի և Էփիմիայի գերերը՝ «Քանդառած օղակ»-ում, Սալոմեի գերը, «Խանաբալա»-ում, որոնց մէջ միատեսակ յաջողութեամբ կատարել է բոլոր կանացի գերերը, որոնցից մանաւանդ Խամփերու գերի ստեղծելու պատիւը պատկանումէ յարգելի տիկնոջը, այժմեան Սաթենիկ Զմշկեանին:

Նա նշանաւոր գերեր է կատարել և եւրոպական թատերզներում, ինչպէս՝ մանկլաւիկ Լազարիլօինը՝ «Դեն-Սէպար»-ի մէջ, Ամալիայինը՝ «Թառ-Շն» խաղացող է կէտեն+»-ի մէջ, Լէյիլայինը՝ «Սէր և նախաղալարծուն+»-ի մէջ, Գնչուհի Մաւրիտանացուն՝ «Դեն Սէպար»-ի մէջ, Ամալիայինը՝ Շիլէրի «Առազիներ»-ի մէջ, Իլիանը՝ «Ծիշիւթ»-ի մէջ, Պօրցիայինը՝ «Վէնետիկ վաճառական»-ի մէջ, Էմիլիայինը՝ «Օքելո»ի մէջ, և լն, որոնց թիւը, — եթէ հաշուելու լինինք սկսած 1863 թ. մինչև այսօր, մի կողմ թողնելով 79—82 թուականների սէզօններին կատարած գերերը, — որոնց թիւը առնուազն 70-ի կը հասնի, և հաշուելով տարեկան հինգ գերակատարութիւն, — հարիւր յիսունի կը հասնի. իսկ եթէ նրա վրայ աւելացնինք և 79—82 թուականների գերերը՝ մօտ 220-ի կը հասնի:

Թէ Պօլսում և թէ Թիֆլիզում, սկսած առաջին հայերէն ներկայացումներից, չի եղել ոչ մի հայ գերասաննուհի, որ այդքան երկար և անձնուիրութեամբ ծառայէր հայ թատրոնական բեմին և կատարէր այնքան բազմակողմանի բնաւորութիւն ունեցող գերեր, — որքան կատարել է յաջողութեամբ յարգելի տիկին Սաթենիկը իւր եւենամեայ գերասանական գործունէութեան ընթացքում:

Իսկ թէ ինչպէս գնահատեցին տիկնոջ արժանաւորութիւնը անցեալ տարուայ թատրոնական երեսնամեակի տօնախմբութեան զեկավարները, այդ թողնենք մեր աղքատիկ թատրոնի անաշառ պատմութեանը:

Յարգանքի արժանի տիկինը չէ վլոցել իւր ծառայութիւնը մատուցանել և վրաց բեմին: Եօթանամնական թուերին կարծեմ, երբ վրաց բեմը կենդանութիւն ստացաւ Ակակիյ և Գէորգի Ծերիթելիների շնորհիւ, — որոնք և սկսե-

ցին մի շաբք ներկայացումներ տալ — այդ բոլոր ներկայացումներին առ Սաթենիկ Զմշկեանը մեծ օգնութիւն է ցոյց առւել, կատարելով նրանց մէջ եղած նշանաւոր կանացի գերերը, որոնցից «Ահաճայ Բժշկ» մէջ Մարթայի գերում և «Մայիս» դրամայի մէջ խեղջ, հասարակութեան նախապաշտմունքի զոհ, խելագար Մայիսիկ՝ դրամայի հերոսուհու՝ գերում; Նշյալիս առ Սաթենիկն է եղել, որ եօթանասնական թուականներին, իւր հանգուցեալ ընկերուհի Քէթեան Արամեանցի հետ, Քութայիսում վրայ առաջին բեմի կանացի գերակատարն է եղել:

Տ. Սաթենիկ Զմշկեանին է պատկանում այն պատիւր, որ նա՝ ունենալով քաղցր՝ միենոյն ժամանակ ուժեղ՝ կօնտրալտօյի ձայն, առաջինն է եղել որ Թիֆլիսի օպերայի երաժշտական խմբի ընկերակցութեամբ, Թիֆլիսի քաղաքային թատրոնում 1874 թուականին, երգել է Տրովագօրի հայերէն թարգմանութիւնից Աղաղէնայի գերի մէջ «Ո՛հ իմ խարոյկիս բոցը....», և նոյն օպերայի մի ուրիշ կտորը: «Ո՛հ իմ խարոյկիս բոցը» երգելու ժամանակ, Թիֆլիսի թատրոնի՝ հասարակութեամբ լի՝ դահլիճը գլուգաց կեցցէներով և ես-երով որով և տիկինը ստիպուած էր երեք անդամ՝ կրկնել նոյն կտորը: Այդ ժամանակ բեմի վրայ գտնվում էին թատրոնի կառավարիչ Հանգ. իշխան Եաղոն Թուամանեանցը և ոռւաց բեմի ներկայացուցիչներից շատերը, որոնց գիմելով իշխանը՝ առաջ ռուսերէն. «Ահա մի քաղցրահնչելն կօնտրալ' տօ, որը կարող էր պատիւ բերել ամեն մի օպերային բեմի»:

Այսպիսով առ Զմշկեանը օժտուած է եղել և քնքոյշ ու քաղցրահնչելն ձայնով, որով թերեւս կարող լինէր օպերայի աչքի ընկնող գերասանուհիների շարքում դասուելու, եթէ նրա միջոցները ներէին նրան կատարելագործել և կրթելիւր ձայնը, որը մինչեւ այսօր էլ չնայելով տիկնոջ քառասուն և երկու տարեկան հասակին, չէ կորցրել իւր թարմութիւնը:

Մատաղ հասակից նուիրուելով հայ թատրոնական բեմին, յարգելի տիկինը մինչեւ այսօր շարունակ տոկունութեամբ է վերաբերուել դէպի իւր սիրած ու փայփայած գործը. թէե նա, իւր ամբողջ գործունէութեան ընթաց-

քում իւր ամուսնու հետ ի միասին զերծ չէ եղել զանազան խոչընդուներից, որոնցով հենց ապացուցանվում է արժանաւոր ամուսինների արժանիքը:

Նա իւր գործունեութեան ընթացքում համեստութեան սահմանից դուրս չէ եկել, չէ արտնջացել. <sup>62 79</sup> թուերի հայ գերասանական խմբին մասնակցելով որի գլխաւոր ոյժերից մէկն էր, նա զարմանալի համբերութեամբ կրել է ամեն տեսակ զրկանքներ միայն գերասանական խմբի անունը բարձր պահելով այն չնչին հասոյթով, ինչ որ տալիս էր նրան թատրոնի եկամուտի մասը: Պատահել է շատ անգամ, որ տիկին Սաթենիկը նոյն իսկ իւր օրիորդ եղած ժամանակ գտնուելով նիւթական աննախանձելի զրութեան մէջ, անտրտունջ և մեծ պատրաստականութեամբ մասնակցել է զանալան բարեգործական նպատակով արուած ներկայացումներին առանց վարձատրութեան: Այդ ներկայացումների ժամանակ, նա ուժասպառ եղած անընդհատ գերակատարութիւնից, յոկնած ու գաղրած, միջոց չունենալով կառքով վերագառնալ, ոտքով է տուն գնացել և ով զիաէ, գուցէ և քաղցած փորով անկողին մտել: Բայց ով է հարցրել նրա վեճակի մասին, կամ ով է հետաքրքրուել նրա նիւթականով:

1879—80 թուականներին, երբ Թիֆլիզում գերասանական խումբ կազմուեցաւ, նախաձեռնութեամբ հռչակաւոր հայ թատրոնական մասնաժողովի, որը չէր զանում Պօլսոյ գերասանութիւններին վճարել երկու հարիւրական ոռութիւններ շքեղ ու փայլուն բենեֆիսներով, տիկին Սաթենիկն էր, որ բաւականանում էր միայն յիսուն ոռութիւն ամսական ռոճիկով և մի բենեֆիսով միայն: Բայց նա երկար ժամանակ չէ կարողանում այդ թատրոնական խմբին անդամակցել և զանալան մեքենայութիւններից ստիպուած 1880—82 թուականներին գաղարում է վարձուած գերասանուհու կոչումը կրելուց, չնայելով որ այդ թատրոնական սեղոններում, նա հարկաւոր եղած ժամանակ մասնակցում էր ներկայացումներին, առանց մի որեւ է վարձատրութիւն ստանալու:

Վերջապէս, երբ այդ sois-disant հռչակուոր թատրոնական մասնաժողովը, նրա հետ և իւր կազմած խումբը, քայլայվում է, որով և հայոց խեղճ թատրոնական բեմը գարձեալ անգործութեան է դատապարտվում, դարձեալ տիկին Սաթինիկը, ձեռք ձեռքի տուած իւր արժանաւոր ամուսին Գ. Զմշկեանի հետ, սկսում է անձնուիրութեամբ գործել տեղական ոյժերից կազմուած նոր խմբի հետ, և մինչեւ այսօր իսկ, չնայելով իւր բազմանդամ ընտանիքին և ընտանեկան հոգսերին, հարկաւոր դէպքում ուրախութեամբ մասնակցում է հայոց ներկայացումներին:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ յարդելի տիկին Սաթինիկը, ուղիղ երեսուն տարի անձնանձիր և տոկունութեամբ ծառայել է հայոց բեմին, նա իւր ծառայութեան համար չէ ստացել զափնի պատկներ կամ մեծազին պարգեներ, նա լուռ ու մունջ կրել է հասարակաց գործիչի ծանր շղթան, համբերելով զրկանքների, աննախանձելի նիւթական վեճակի. մեծահոգութեամբ ներել է բանսարկուների գիտակցական յանցանքները և այդպիսի փշոտ ու տատասկոտ ձանապարհ կտրելով, այսօր նա իրաւամբ կարող է իւր խղճմտանքի առաջ պարծենալ որ ինքը իւր կարողացածին չափ կատարել է այն, ինչ որ պահանջում է հասարակաց համեստ գործիչի կոչումը: Նա այս ամենը արել է միմիայն հայ թատրոնական բեմի օգուտը աչքի առաջ ունենալով ուստի և հայ թատրոնի անտչառ պատմութեան ենք թողնում գնահատել յարդելի տիկնոջ արժանաւորութիւնը և գործունէութիւնը:

|| Պահանջանակ: ||



# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

\* \*

Ես ուղեցի ծաղիկներով  
Քեզ անձկալիս, զարդարել.  
Եւ գեղահիւս թարմ պըսակով  
Գլուխըդ շըբով պըսակել:

Ամենուրեք ես փնտրեցի  
Կանաչ արօտ, ծաղիկներ.  
Բայց չըգտայ. չեին եկել  
Դեռ աղերձ գարնան պարզ օրեր:

Աշա եկաւ չըքնաղ գարուն.  
Պայծառ արփին խաղաղիկ  
Կապուտակից ցոլք է թափում.  
Ծաղկեց արօտ ու ծաղիկ...

Ամենուրեք—վարդ ու շուշան,  
Մեխակ, յափրուկ անպակաս.  
Ես հիւսեցի փարթամ պըսակ,  
Բայց ի՞նչ, հիմա դու չը կաս... .

Առաքել Հայոց





# ՄԱՏԵՆԱԿՈՍԱԿԱՆ

ԹՐԵՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1893-ին

Օրբահայ զրականութիւնը... ի՞նչ հեղնութիւն։ Գրականութիւնը ընդհանրապէս և հայ զրականութիւնը մասնաւորապէս միթէ ժամանակէ մը ի վեր զջութիւն ունին Ցածիաստանի մէջ. միթէ կյուրին համար զոյութիւն ունի լոյսը...։

Գրականութիւն կը սպասէք տաճկահայերէն. զրականութիւն կը սպասէք Թուրքիստէն. բայց զիստէք որ գրականութիւնը սովորած, խեռածած ըրած են հոն...։ Մուլթան Համատ նոյնչափ կը վախնայ զիրէն՝ որչափ կը վախնայ հայկական կարծեցեալ յեղափոխութենէն...։ Մուլհամմէտի յաջորդը նոյնչափ ջղաձգային սարսուռներ կունենայ ՚ի տես երկու տող ոտանաւորի՝ որքան Խուսիոյ պարտուց վճարման սպառնական մէկ ծանուցաղըին...։

Ընդհանուր նոր օրէնքով բանաստեղծութիւն դրելը համարեա արգիլուեցաւ. տեսած էք քանի մը ամիսներէ ՚ի վեր Պոլսի հայ թերթերուն մէջ ոտանաւոր քերթուած մը։ Բանաստեղծութեանց հատորներ խուռներամ կը փոշոտին գրաքնիչի զրասեղանին վրայ և կայսերական իրատէն կը զլացուի անոնց հրատարակութեան...։ Ի՞նչ խսանութիւն որ կայ բանաստեղծութեանց համար՝ նոյնը և աւելին կայ արձակ

գրութիւններու մասին։ Ազգային հնախօսութիւնը, աղգային բանասիրութիւնը ձգենք որ արդիլուտծ են՝ բոյց նոյն խոկ բնազանցական (métaphysique) և բարոյախօսական (éthique) նիւթերու վրայ ազատ գաղափար յայտնելը կը խափանուի՝ ամէնէն տիմար, ամէնէն անբան պատրուակներով։

Բարձրագոյն իշխանութիւնը խալամեռ ոչ խալամ հպատակներու բառարանէն ջնջեց կարգ մը բառեր՝ որոնք, իր կարծիքով, գահը կործանելու զօրաւոր աջակիցներ ենն... կ'ուզէ՞ք օրինակներ. նախ, աղջ բառը օհ, աղիկա շատ վնասակար բառէ, ոչ ապաքէն ազգայնութեան գաղափարը կը ներշնչէ անհատին։ Անոր տեղը, նորին կայսերական վեհափառութիւնը բարեհած եցաւ հրաման ընել որ գործածինը առնձ բառը. հետեաբար թրքահայ հրապարակազիք մը արտօնեալ չէ, օրինակի համար, զրել «Գումգափուի Մայր Եկեղեցին իմ առնձին կը պատկանի», այլ պիտի զրէ «իմ գործիքներ...»։ — Ո՞վ պիտի համարձակի գիտական յօդուածի մը մէջ զրել սա իմաստով բան մը. «Ասուպները պղափիկ ասուզէն են, որոնք վտուելով վառելով վերջապէս կը սպառին և օր մը քար կարելով կ'իյնան վար...» Բարձրագոյն իշխանութեան համար այս ոլարբերութիւնը պարզապէս ակնարկութիւն մըն է կայսերական պալատի քայլայման... բայց մի՛ շուարիք. կառավարութիւնը իրաւունք ունի. չէ՞ մի որ ասուրբառին թուրքերէն Եւլուն կ'ըսնի, ու կայսերական պալատին անունն ալ զուգագիպարար Եւլուն է, ուրիմն հետեւութիւնը գուք հանեցէք... Ուստի այդ Եւլուն բառն ալ շատ վտանգաւոր արարած մըն է...»

Ցեայ կուգան կարգաւ կիրք ցուցնող բառերը. յի՞արունի՞ն, իւ՞ո՞ւնի՞ն, ապուշո՞նի՞ն, բարի՞նի՞ն, պայրո՞նի՞ն, նախանչ, առելո՞նի՞ն։ Միենոյն հատուածին մէջ այս բառերը առ առաւելն միայն մէկ անգամ կրնաք գործածել պայմանաւ սակայն որ անոնցմէ քանի մը հատը միասին չգտնուին. Վէհ. ով զիտէ, զուցէ իրարու հետ միանալով յեղափոխութիւն մը հանեն կամ ողայթուցիկ նիւթ մը արտադրեն...»

Ազագունի՞ն բառը, չէ բարեկամներս, ալ այդ սատիճան յառաջ չէք կրնար երթալ, ամէն բան իր չափին ու

սահմանը ունի, և չք կրնար նոյն խոկ ըսել «Ես ուղած տ-  
տենս գալու ազատութիւն ունիմ»:

Այս օրինակները չեմ բազմապատկեր. եղածը կը բաւէ  
մեր զրաքննութեան վրայ դադափար մը տալու ընթերցողին....:

Հայերէն զրբերը քննելու պաշտօնով տխմար արար զրա-  
քննիչ մը կայ, որ իբր թէ հայերէն զիտէ: Այս մարդուն հայերէ-  
նազիտութեան վրայ դադափար մը կուզէք: Անզամ մը իրեն  
երկասիրութիւն մը ներկայացուած էր, որուն մէջ արարը  
հանդիպեր էր «Մարմական խոշոր պակասութիւն» խօսքին:  
Տեսէք հանճարեղ արարը ի՞նչ մեկնութիւն տուաւ այս խօս-  
քին. «Ասիկա պարզապէս կը նշանակէ, ըսաւ, արական  
ծննդական դործարաններուն արտակարգ մէկ զարգացումը»:  
Բայց մի՛ խնդաք, ոչ ալ բարկացէք: Յարդելի զրաքննիչը  
կերեայ թէ այն խօսքին մէջէն միայն խոշը բառին նշանա-  
կութիւնը բմբռնած էր, և որովհեան թուրքերուն խելքը  
միտքը սեռային հաճոյըներու անձուկ շըջանակէն գուրս  
չելքը՝ հաւանական է որ «խոշոր» ածականը իրենք այդ  
շըջանակին հետ առնջութեամբ ամենէն աւելի կը գործածեն,  
ուստի երբ հայագէտ զրաքննիչը «խոշոր»-ը տեսաւ՝ միտքը  
ուրիշ բան ինկաւ (յաւերժ անմահ Ռաֆֆին ինչպէ՞ս լու-  
ուսութեասիրած էր այս թուրքերը):—Վերջապէս, երկասի-  
րութեան մէջէն «Մարմական խոշոր պակասութիւնը» խօս-  
քը ջնջուեցաւ իբր վնասակար, իբր հանրային բարոյականը  
ապականող խօսք մը...:

1893-ի թրքահայ զրական շարժման վրայ խօսելի տ-  
ռաջ՝ զէթ այսըստի յառաջարան մը անհրաժեշտ էր:

\* \*

1893 տարւոյ սկիզբէն մինչեւ յուլիս ամիսը զրական ո-  
ևէ գործ չէ հրատարակուած թրքահայոց մէջ, բայցի Յա-  
կոր Գուրգինի զրական հաւաքածոյէն: Այս գործին տնու-  
նըն է «Պատկէր Աշխարհի Քրականո-Ռէան Արևմտան հայոց  
է Հերձ իոյ 19-րդ դար» և կը պարունակէ արձակ թէ

ոսամնաւոր զրութիւններ զանազան զրագէտներու և զրասէրներու՝ զանազան նիւթերու վրայ: Գուրգեն ինքը աշխատութեան բաժին չունի, բայցի հեղինակներու և նիւթերու ընտրութենէն. բայց այդ իսկ պէտք եղած խնամով կատարուած չէ. օրինակ, Նար-Պէյի Հոյակապ անունին քովիկը կը տեսնէք Տրդատ վարդապետ Պալեան, շաա միջակ զրիչ մը: Այս գործին աշխատակիցները կամ չափազանց զրաբարեաններն են կամ զրաբարը յարգողները... իսկ «նոր»-երէն, այսինքն կատաղի աշխարհաբարեաններէն ոչ ոք. այլաբանօրէն խօսելով՝ պահպանողականները ու չափառը հանդատվականները հոն մուտք ունին, իսկ արձագականները զրան տոջելն անցած ատենանին կռնակնին կը դարձնեն...: Օտեանի, Նար-Պէյի, Սրուանձտեանցի, Պէրպէրեանի և ասոնց նմաններու դրութիւնները մեծ ախորժով կարգացուեցան այս գործին մէջ, որ սակայն իր երկրորդ հասորը հրատարակելէն յետոյ՝ «Կեցո՛ Տէր»-ը ըսաւ, կամ գուցէ ըսել տուին: Զմոռնանք յիշել թէ Գուրգեն իր աշխատակիցներուն ինքնազիր ստորագրութիւնները կը գնէ իր գործին մէջ:

Յուշիս ամսոյ մէջ եղած հրատարակութեանց մէջ տուջին տեղը կը բռնէ «Անգէս Դպրու-Շին և Առակ» գործը, երկ Վահան վարդ. Տ. Մինասեանի: Ասիկա արդարե ամէն գովիստի արժանի աշխատութիւն մըն է, որ մեր գաւառական հոգեզմայլ բանաստեղծութիւններէն հատուածներ կը պարունակէ և զանոնք մշանջենաւոր կորուստէ կը փրկէ. նոյնպէս շատ գունագեղ ոճով կը պատկերէ հայկական խսկանիպ սովորոյթներ՝ հարսնիքի, մեռելի, ծնունդի աօներու և այլն, և այլն. իր ամբողջութեանը մէջ վերին աստիճանի շահեկան զործ մը, 8<sup>0</sup> կազմեալ, 400 էջէ բաղկացած: Գրաքննութիւնը շատ աշխատեցաւ այս երկասիրութեան հրատարակութիւնը արգիլել (որովհետեւ հրամանը արդէն երկու տարի առաջ միաժամանակ տրուած էր), բայց Վահան վարդապետ այն անուղղակի և յաճախ անպատուաբեր միջոցներով, զորս այնքան լաւ գիտէ գործածել, յաջողեցաւ բարձրագոյն ոլաշտպանութիւն ձեռքբարձր:

Նշյն ատենները օրիորդ Զարուհի Ա. Աէֆէրեան, շնորհիս-  
այն հզօր աջակցութեան զոր կը վայելէ իր վսեմափայլ հօր-  
եղբօրմէն, որ թէ Պետական Խորհրդի անդամ և թէ Օտար  
Մամուլի Դիւանական պետն է, յաջողեցաւ ձեռք բերել իր  
բանաստեղծութեանց հաւաքածոյին արտօնութիւնը — Նուտիւն  
Եւդերդեայ կը յորջորջուի այդ գործը (զի օրիորդ Զարուհի  
«Եւտերպէ» ծածկանունն ունի): Յակով Գուրգենի աշակեր-  
տուհին ըլլալով՝ այս օրիորդը գրաբարամոլ է, և իր քեր-  
թուածները շարագրած է գրաբարախառն ոճով: Իբր առա-  
ջին փորձ մը՝ այս գործը վհատեցուցիչ չէ, մէկ երկու յա-  
ջող կառըներ իսկ կը զանուին հոն, բայց այդ տաղերուն  
մէջ ճշմարիտ բանաստեղծի հանձար մը ցցոլանար:

Սբրահամ Այվաղեան իրարու ետեէ հրատարակեց իր  
«Նար Հայ Կենաագրո-Եւանց» ները երեք հատոր, որոնք անցեալ  
գարու և գարուս սկիզբին նշանաւոր և մեծ մասամբ ան-  
ծանօթ մնացած հայ դէմքերը լուսաւորելով նշանաւոր ծա-  
ռայութիւն մը կը մատուցանեն ժամանակակից հայ պատմա-  
թեան. միայն թէ Պ. Այվաղեանի պլաստոր թերութիւնը սա է որ  
անպէտք մանրամասնութիւններով կը խճողէ իր գրածները:

Տիրան Փափաղեան հրատարակեց իր Երանոս Աղբար կա-  
տակախաղը, ուր տգէտ, ամիրայտական գարու վարժապետը  
կը ձագկուի իր խոշոր թերութիւններուն մէջ: Ախորժով  
կարդացուող բայց միջակ արժանիքով գործ մըն է ասիկա:

Ս. Խ. Պաղասասարեան ի լոյս ընծայեց Ապշէն անունով  
վեպերգութիւն մը, ողորմելի գործ: Վէպ անունին անարժան:

Բարսեղ Էնքսէրձեան յուլիսի վերջերը հրատարակու-  
թեան առաւաւ Դուշեանէ ժողժերը: Վաղամեսիկ բանաստեղ-  
ծին շատ մը սիրուն ոտանաւորները և թատերգութիւնց  
շատերը գուրս ձգուեցան այս զործէն, իբր մնասակար:

Էմմանուէլ էսաեան զրեց իր «Մէժայորի Նէրշնչուն»  
անուն երկասիրութիւնը. բանաստեղծութեանց հաւաքածոյ  
մը, ուռուցիկ գրաբարով խեղճյանդերով և ասփակ իմաս-  
տով այս մարդը շէնք նորհք քերթուած զրելու անկարող  
է, թէպէտ բնաւ չլադիր ինքինքը «պուետ» յորջորջելէ:

Տիրան Փափազեանի հրատարակութեամբ լոյս տեսաւ հանգուցեալ ծանօթ կատակերդակ մշտունիի «Վէց ո- իւ» պողած ժառանձ հայած անդուիը» անունով կատակախաղը. այս գործին մէջ ստորին տեսակէ զաւեշտ կայ. մարդ քիչ շատ կը ծիծաղի զայն կարդալով, բայց բնաւ խմաստալից չէ: «Երիս- որդեր» անունով վիպասանութիւն մըն ալ Տ. Գրիգորեան անուն մէկը հրապարակ հանեց. առանց վիպասանութեան պայմաններուն վրայ որոշ գաղափար ունենալու, կարելի՞ բան է այդ գիւղին վրայ զրել. այս ևս այդ զասակարդէն միջակ դործ մըն է պարզապէս:

Օդոսառոսի մէջ ժրածան Տիրան Փափազեանը իտալերէնէ թարգմանուած կատակախաղ մըն ալ հրապարակ նեսեց— «Բարեկանդանի Անհո- տները», բաւական զաւեշտ կայ միջը, կըզբոսնուի:

Սեպտեմբերի ամսոյն մէջ Պ. Նաղեկեան գերմաներէնէ թարգմանութիւն մը հրատարակեց— «Կէն ինչ ամուսնու»— հեղինակ Բոօֆ. Հէռման Գլէնք.— Ասիկա 8<sup>o</sup>, 430 էջով խիստ օգտակար հրատարակութիւն մըն է, ուր կը զծուի կնոջ բնախօսական ու բարդյական պարտաւորութիւնը ամուսնական յարկին տակ:

Ոուբէն Որբերեան, խարբերդցի երիտասարդ մը, զրեց «Յէլլադակաց ծաղկներ» անունով բանաստեղծութեանց հաւաքածոյ մը. յուսատու զրիչ մըն է Պ. Որբերեան, բայց իր երիտասարդ ու միամիտ հոգին շատ կանուխէն թունաւորուած է Եղիա Տէմիրճիպաշեանի մահաբոյր յոռետեսութենէն. իր քերթուածները ծայրէ ի ծար արուեստակեալ մելամաղձութիւն կը հոտին: Պ. Որբերեան ապահովապէս կը յաջողի ապագային՝ եթէ հոգ տանի իր թերութիւններն ուղղելու:

Հոկտեմբերէն Բարսեղ Էնքսէրճեան սկսաւ հրատարակել Դուշեանի ընդարձակ ինսուադրունը և արդէն՝ ի լոյս ընծայեց առաջին երկու թերթերը. զաղափար յայտնելու համար՝ պէտք է սպասել գործին ամբողջանալուն:

Լեռն Մկրտչեան սկսաւ հրատարակել «Ահուանական նորեներ» խորագրով տետրակներու շարք մը. Ա. և Բ. տես-

րերը գրաքննութեան կողմէն կիսովին ջնջուած ու աղջա-  
տուած լոյս տեսան արդէն. իսկ Գ. և վերջին մասը որ ժա-  
մանակէ մը ի վեր պատրաստ է՝ այն աստիճան խեղաթիւ-  
րուեցաւ և կարատուեցաւ զրաքնիչին մէջ՝ որ հե-  
ղինակը չհաւանեցաւ հրատարակութեան յանձնել զայն: Այս  
տեսրակները զուտ զրական արժանիքէ զուրկ են, այլ ա-  
ւելի՝ ընկերային բարքերու համառօտ ուսումնասիրութիւն-  
ներ կը ներկայացնեն:

Տիրան Փափաղեան սկսաւ հրատարակել «Յուղագետը»  
հասպառաշներ» անունով կարգ մը տեսրակներ, որոնք զրօնե-  
ցուցիչ ոճով մը մեր ստորին խաւերու բարքերը կը նկարա-  
զրեն և բարյական գաս մը կուղեն հանել անոնցմէ: Առա-  
ջին երկու տեսրակները արդէն լոյս տեսած են:

Վահան Գ. Զարդարեան յուլիսէն սկսեալ ամիս կը  
հրատարակէ նոր հրատարակութիւններու, պարբերական  
հանդէսներու և օրաթերթերու ցուցակը: Իրեն արգելուե-  
ցաւ, բացի «Արարատ»-էն, ուսւսահայ միւս թերթերուն, ինչ-  
պէս նաև ուսւսահայ երկասիրութեանց ցուցակը զետեղել իր  
զրացուցակին մէջ: Այս ձեռնարկը օգտակար և գովելի, միայն  
թէ իր կամքէն անկախ պատճառով կիսկատար է:

Ասոնցմէ զատ հրատարակուած են բազմոթիւ զասա-  
զրքեր, որոնք սակայն զրական գործեր չըլսալնուն համար  
զանց կընենք յիշել աստանոր:

\* \* \*

Այսուպին իսկ շատ չէ այնպիսի երկրի մը համար ուր,  
քիչ ատենէն, բացի դասագրքէ՝ ուրիշ ամիսն բանի հրատա-  
րակութիւն արգելելու մտադրութիւններ կան....:

Ա. Ե. Ճ.



# ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ

\* \* \*

Խարխուլ մատուռի գէճ կամարի տակ  
Մեղմ առկայծելով կանթեղ էր վառվում:  
Եւ նորա առաջ կանգնած մի էակ՝  
Լալով ողբալով աղօթք էր անում:

Եւ մելամաղձիկ գիշերուայ մըթին  
Չորս կողմից ըրնաւ չեր լսվում շըշուկ.  
Գեղեցկագալար մարդերի վերայ  
Թափել էր երկինքն առատ արտասուբ:

Յոլք էին թափում աստղերն երկնքից  
Եւ քնքուշ ձայնով հովեկն էր լալիս.  
Իսկ ևս այն արխուր ողբն էի լսում  
Եւ զմնեայ թախիծ ձնշում էր հոգիս:

Պետքքուս Հետքան





## ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Խմբագրութիւնս նոր տարու առթիւ բազկ ունեցաւ  
ընդունել Ս. Էջմիածնից մի ոսկեկաղմ օրացոյց այս նումակաւ.

Խօհանուն-Եկատերինա  
«Արևուս» Հանդիսի.

«Նորին Վեհափառութիւն Հայրապետան ազգիս  
«բարեհաջեցաւ Հրամանցել առաքել առ Խմբագրութիւնդ զմի  
«օրինակ օրացոյց 1894 ամի, առ ի շնորհաւորութիւն նոր  
«տարւոյ»:

Մեր Հանդիսի Խմբագրութիւնը իր նուիրական ջերմ  
պարտականութիւնը Համարեց որդիական ամենախոնարհ ակ-  
նածութեամբ ազգիս Հոգեոր Պետին՝ Նորին Օծութեան, Վե-  
հափառ Մկրտիչ Ա. Կաթողիկոսին՝ յղել երկու շնորհաւորա-  
կան Հեռագիրներ, մինը նոր-տարու, իսկ միւսը նորին Օծու-  
թեան Անուանակօջութեան առթիւ: Անցեալ տարի ևս, Վե-  
հափառ Հայրապետի ս. Օծմանը, Խմբագրութիւնս գարձեալ  
յղեց մի Հեռագիր Գեր. Տեղակալ երեմիա Եպիսկոպոսի մի-  
ջոցաւ: Աւելորդ չնը Համարում ղետեղել այստեղ մեր Հե-  
ռազրների պատճէնները, որպէս մի ամենաթոյլ արացացառու-

Թիւն մեր որդիսական ամենախորին անկնածութեան առազգընտիր Պաշտելի Վեհապետը Համօրէն ազգիս հայոց:

Առ Նորին Գևառապարուսութեան

Տեղակալ Կանողիւսով Երեման.

«Նորին Սրբութեան Ծայրագոյն Կաթողիկոսի Սրբազն Ոծման այս մեծաշանգէս օրը հին հայկական Սրաքս զետի «ափիրում» «Արաքս»-ի խմբագրութիւնը, որ իրեն խորագիր «Է նշանակել Հայոց Համար այդ նուրիբական անունը, խրնդ «րում է Զերդ գերապատութիւնից արկանելյուս Պաշտելի «Հայրիկի իւր անսահման յարգանաց և անձնութրութեան զգացմունքները»:

Առ Ծայրագոյն Պատրիարք և Կանողիւսութեան Ամենայն Հայոց Միջարկել Ա.

«Նոր տարու առթիւ «Արաքս»-ի խմբագրութիւնը վերառաքում է առ Բարձրեալը իւր Զերմ տղերսները՝ մաղ «թելով Հայ ժողովրդի Պաշտելի Հայրիկին երկար բախտաւոր «օրեր Հայ Եկեղեցու բարօրութեան և զարգացման Համար»:

Առ Ծայրագոյն Պատրիարք և Կանողիւսութեան Ամենայն Հայոց Միջարկել Ա.

«Զերդ Սրբութեան Անուանակոչութեան տօնախմբութեան առթիւ «Արաքս»-ի խմբագրութիւնը արկանում է յոսու Հայ ժողովրդի Պատկառելի Հայրիկի իւր ամենաակնածալի շնորհաւորութիւնները, արասյայտելով ամենաջերմ «յանկութիւններ, որ օրհնէ Տէրը Զերդ Սրբութեան բոլոր «բարի սկզբնաւորութիւնները Զերմեռանդութեամբ Զեղ նութիւնած բազմամիլիոն հօտի հոգեոր և բարոյակտն վերածը նութեան Համար»:

Անցեալ աարի, երբ Վեհափառ Կաթողիկոսի Հաստատման կայսերական հրովարասակը հրատարակուեցաւ, այդ առթիւ բազմաթիւ օտարագգի պատկերազարդ հրատարակութիւններ զետեղեցին իրենց թերթերում մեր Պաշտելի Հայրիկի հոյակառ պատկերը ընդարձակ կամ հակիրճ կենսագրականներով և տեղեկութիւններով: Բոլոր հրատարակութիւններով

րումն էլ Հայրիկի ընտիր բարեմասնութիւնների մէջ աւելի շեշտվում էին Նորա քրիստոնէական վեհ ողին, ազգային ընտիր յատկանիչները և բարձր ձգտումները։ Մի կարեռ թերթում, որ Հայրիկի պատկերի հետ միասին զետեղուած էր և ս. Էջմիածնի տաճարը ձեմարանով հանդերձ, տպագրուած էին ի միջի այլօց և այս առղերը։

«...Ճէ ֆիզիքապէս, և թէ բարոյապէս առատ օժտուած գոլով բնութիւնից՝ Խրիմեանը գէպի ինքն է դրաւում հայ ժողովողի համակրանքը ու սէրը, ոչ միայն իր հոգեոր գործունէութեամբ, այլ և որպէս տաղանդաւոր հրապարակախօս, սրտագրաւ բանաստեղծ, հուետոր, մանկավարժ և հասարակական գործիչ։ Վ.Յս պատճառաւ նա միատեսակ վայելում է ընդարձակ ժողովրդականութիւն ոչ միայն պարզ ժողովրդի մէջ, որը «Նորան միանգամայն պաշտում» է, տեսնելով «Նորա մէջ մայրենի եկեղեցու մեծ մարտիրոսներից մէկին, բայց և զարգացեալ դասակարգի մէջ, որը ոգեօրուելով «Նորանով, տեսնում է «Նորա մէջ ճշմարիտ աղնիւ հայ և հաղուագիւտ իգեալիստ», և այլն... «Новое Время» 1893, № 132.

Մի այլ թերթում, ուր զետեղուած է դարձեալ Վեհափառի ընտիր պատկերը ս. Էջմիածնի տաճարով հանդերձ, ամբողջ երկու մեծ սիւնակ է բռնում Հայրիկին նուիրուած զրութիւնը, որտեղից քաղում ենք այս մի քանի տողերը։

«... Այս ժողովուրդի որպէս պարզ դասակարգը, այնպէս և զարգացեալ մասը, պաշտում է իր հոգեոր գլխին. այս երեսում է և նոյն իսկ այն բանից, որ թագաւոր կայսրից կաթողիկոսութեան հաստատման լուրը հայերի կողմից ընդունուեցաւ անսահման մեծ ուրախութեամբ և ամենախորին երախտագիտութեամբ։ ՎԿրտիչ Վռաջնի մէջ հայ ազգը հակուած է տեսնել փառաւոր և եկեղեցուց փառաբանուող Հայրապետներից միոյն, որոնք իրենց բարձր մարդասիրական և բարձր քրիստոնէական գործերով յօգուտ եկեղեցու և ժողովրդեան, յաւերժացրել են իրենց անունը պատմութեան մէջ։

Այնուհետև խօսելով Հայրի անուան ծագման ու գորա մեծ ժողովրդականութիւն վայելելու մասին, ուսւ թերթը շարունակում է։

«Վ.Յսպիսի մեծ ժողովրդականութիւն Կաթողիկոսը ձեռք է բերել գլխաւորապէս այն հզօր պերճախօսութեամբ, որը «Աս, որ-

պէս ներշնչուած հռետոր, արտասանել է եկեղեցական սեղաններից և որը ժողովրդին մատչելի «Առաջ հեղինակութիւններում դէպի իրեն էր գրաւում ընթերցողների և լսողների սէրը:

«Հաւական է միայն մատնացոյց անել Առաջ գրքովների վերայ Վանի հրդեհի և Խայազէտի կոտորածի մասին, որ հասկանալի լինի, թէ ի՞նչ մոգական ոյժով Խրիմեան Հայրիկը իրեն է քաշում Առաջ առաջ ակնածող հայ ժողովրդին:

«Հանաստեղծական արձակ, բայց բարձր ոճով, Աա նկարագրում է վերջին Ռուս Թրքական պատերազմի ժամանակ Թուրքերի և քուրդերի ձեռքով հայոց կոտորածքը բովանդակ Տաճկահայաստանում, մասնաւորապէս Վլաշկերտում և Խայազետում, և այնպիսի սարսափեցուցիչ գոյններով, որ ընդունակ է սառցնել մինչև անդամ ամենապաշտամի ընթերցողի արիւնը.... և այլն»:

«Новости»-ի յաւելուած «Պետերբուրգական Ժամանակագիր» Նո 38, 1893.



Սյապիսի իմաստով զրուած են և միւս թերթերում: «Всемирная Иллюстрация» անուանի շաբաթաթերթի 1279 համարում, յուլիս 24, 1893, զետեղուած է մի խիստ ընդարձակ գրութիւն ո. էջմիածնայ, հայոց հայրապետութեան և այնուհետև հայրիկի մասին: Գրութեան հետ միասին, շաբաթաթերթի երկու մեծ երեսներում զետեղուած են հայրիկի հոյակապ պատկերը իւր հայերէն սատրապրութիւնով և ո. էջմիածնի, էջմիածնի լճի և Գէորգեան Ճեմարանի ընտարնարները, իւրաքանչիւրի մասին էլ մասնաւոր տեղեկութիւններով: Սյս չըրս պատկերներն էլ «Արաքս»ում զանազան ժամանակական գետեղած կլիշաներից է տպագրուած: Նոյնպէս մի համակրալից զրութիւն էլ հայրիկի կենդանապրով տպուած էր «Ծներ» շաբաթաթերթում: Սյս բոլոր չըրս թերթերի նկարները ներկայացնում են սյն հօյակապ նկարը, որը անցեալ տարի զետեղած էինք մեր հանդիսի առաջին զրում Մաթէ անուանի ուսուցչութեամբ:



Վեհափառ կաթողիկոսի պատկերը հպիսկոպոսական խաչը կուրծքին տպուած է «The Anglo-Armenian Gazette» անդլիա-

կան թերթի չորրորդ համարում, յունուարի տեարում։ Պատկերին զուգորդուած է մի հակիրճ պրութիւն նորին Սըրբութեան մասին։

Այս թերթը, որի գեռ չըրս թիւն է զուրս ևկել մինչև այժմ, զբաղվում է հայկական հարցով ու հայ աշխարհով, ինչպէս որ կարելի է ենթադրել նոյն իսկ վերնագրից: Այստեղ գործում է համարեա միւնքն խումբը, հայերից և յայտնի անդղիացիներից, որ մի ժամանակ խմբուած էր երկու տարի առաջ գաղաքարտած «Հայաստանի» շուրջը:

«Արաքս»-ի առաջին գրքում՝ որ տրվեն տպագրվումէ,  
յինելու է նաև այս յօդուածը.

Նորին Վեհափառութեան, Տ. Տ. Մէրտէլ Ա. Կալովէկոս ամենայն հայոց («Փոքա բնաւորագրութեան նորին Սրբութեան Անձնաւորութեան»):



“Առաջին կլինիկական բնույթի համար սպասարկություն” և “Առաջին կլինիկական բնույթի համար սպասարկություն”

## Խ Ն Գ Ի Բ Ք

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՒԹՈՅ ՌԱԶԳՈՒԿԱՎԱԾԻ

(Նորայունաբենից)

Կըում էր հրեշտակն վարդ կարմիր  
Վարսին դեղձան շողջողուն.  
Տուր ինձ, տուր այն, իմ խրնդիր  
Այս է, այլ բան չեմ ուզում:

Կարմրատակ և պատկառուկ  
Պարզեց ձեռքով ինձ ծաղիկ.  
Ձեռը տուր ինձ այդ փափուկ,  
Եւ ես չունիմ այլ կարիք:

Մտերիմ մեկնում է ձեռքը,  
Բայց ամօթխած վայր նայում:  
Ո՞չ թող տեսնեմ քո տեսքը.  
Այլ բան քեզնից չեմ հայցում:

Ճենց վեր նայում ամաչլուտ,  
Ժպիտը բերնին սաւառնում:  
Ա-իս մի համբոյր շըթիգ մօտ,  
Եւ այլ խնդիր չեմ անում:

Բերանս բերնին երբ կըպեց,  
Էզգում էի բարախում:  
Տուր ինձ, տուր քո սիրան անկեղծ,  
Ոչ մի այլ բան չեմ ուզում:

Եւ զըրկիս է մըտերիմը,  
Շըշմնչում եմ սիրաբշխու.  
Իմն ես յաւէտ դու, իմը,  
Չունեմ քեզնից այլ խրնդիր:

❖ ❖ Հայ - այժմ.



## ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Եր ընթերցողներին յայտնի է «Արաքս»ից, որ անցեալ տարի խմբագրութիւնս ուղարկել էր Ամերիկա Զիկագոյի ցուցահանդէսը մեր հանդիսի բոլոր գլուխը սկսեալ առաջին տարեշրջանից ոսկէկաղմով։ Ճամանակին արդէն հայոց թերթերը՝ մայրաքաղաքի թերթերից առնելով հաղորդեցին հայ հասարակութեանը, որ «Արաքս»ը Զիկագոյի ցուցահանդիսում արժանացել է շքագրամի և մրցագրի, նաև, ինչպէս ասուած է մեր մրցագրում, մաքուր տըպագրութեան, և երկրորդ՝ նկարների գեղարուեստօրէն լաւ արտայայտելու համար։ Յուսանք, որ յառաջիկայում «Արաքս»ը և տեխնիկայի, մաքուր գեղարուեստական տպագրութեան կողմից մինչ այնչափ յառաջագիմի, որ իրօք եւրոպական ամենալինութիր հրատարակութիւնների մեջ իր պատուաւոր տեղը բռնի, որով և հայի գիրքը արտաքին կողմից էլ եւրոպական ազգաց գրքերի հետ հաւասար բարձրութեան վերայ կարող լինի կանգնել։

«Նոր-Դար» լրագիրը, որ սկսեց հրատարակուել 1883 թուականից Թիֆլիզում պ. Սպանդար Սպանդարեանցի խրմագրութեամբ, այս տարի՝ 1894 թ. յունուարի 30-ին տօնեց իւր տասնամեայ հրատարակութեան շրջանը։ Թիրթի սյս հանդիսի հետ միասին տօնուեցաւ նաև լրագրի խմբագրի պ. Սպանդար Սպանդարեանցի հրատարակախօսական դորձունէութեան քսանամեայ տարեշրջանը։

Ցանկանում ենք յարգելի հայ լրագրին և նորա մեծարգոյ խմբագրին տոկունութիւն և յարտառ շարունակութիւն իրենց գործունէութեան։

Խոմաղբութեանս մէջ ստացուել են Թէհրանում նոր հրատարակուել սկսած «Շատրվան» շաբաթաթերթի առաջին երկու համարները «մի խումք երիասսարդների» խմբագրութեամբ և արտօնատէր պ. Անդրէս Բէկնաղարեանցի հրատարակչութեամբ: Թէրթի նպատակն է պարսկահայոց աղջային հասարակական զարգացմանը նպաստել ցիրուցան պարսկահայ քաղաքացիներին և զիւղացիներին կապել միմևանց հետ, ինչպէս և զրսի հայերի հետ, և մասնաւորապէս՝ պարսկահայ զիւղացոց կեանքը ուսումնասիրել: Թէրթը «ոչինչ մասնաւոր կուսակցութեան չէ վերաբերում», որն ըստ ինքեան հասկանալի է: Մենք ուրախութեամբ ողջունում ենք անդրանիկ պարսկահայ թէրթի լոյս տեսնելը և ընդարձակ յաջողութիւն ենք մաղթում նրան, որ նա լիուլի իրագործել կարողանայ իրեն առաջադրեալ կարեոր նպատակները: Մեր ձեռքում եղած երկու համարները չեն կարող գեռ ևս գեթ մի թոյլ գաղափար տալ թէ որպէս է կարողանում թէրթը իրագործել իւր ստանձնած գերը, բայց յաջորդ զրքում: «Մամուլի Տեսութեան» բաժնում, մենք մի մանրամասն հաշեւ կը տանք հասարակութեանը պարսկահայ թէրթի ընթացքի մասին:

Լոնգոնի «The Anglo-Armenian Gazette»-ի մէջ կարդում ենք. «Կիրակի, նոյեմբերի 26-ին, Փարիզում ապրող հայերը մէջ հանդիսով տօնեցին Հայաստանում թագաւորող Հուսինեանց վերջին թագաւորի մահուան հինգհարիւրամեակը: Ս. պատարագից յետոյ, որ մատոյց Սահակ վարդապետ իւթիւճեան, ուխաւորները՝ թողնել 50 հոգի՝ զիւղեցին զէպի Ս. Դընիի վանքը: Կարապետ վարդապետը մի զգացուած ճառ տաց Հայոց թագաւորութեան և նորա անկման պատճառների մասին: Պ. Խսկենդեր մի պերճախօս հրաւէր կարդաց, որով խնդրում էր ամենքին՝ յանուն ընդհանուր հայրենի զոշծի՝ մի կողմը թողնել նախանձն ու անմիաբանութիւնը և աշխատել աղնուութեամբ, սիրով և միակամ ու միասիրա՞ սիրեցեալ հայրենեաց համար: Քարոզից յետոյ կարդացուեց մի խրատական թուղթ, որ ծնունդ է մեր յարդելի պաշտօնա-

կից գոքառը Մ. Ա. Գաբրիէլեանի (Նիւ-Եօրքում) զրչի: Մի քանի ծաղկեայ պսակներ, որ ուխտաւորները կամեցան թողնել կեռն թաղաւորի շերմի վերայ, վանքի վանահայրը ըթոյլաւորեց՝ որ մնան այնտեղ:

«Արաքս»-ի 1892 թ. առաջին զրքում, ինչպէս յայտնի է, մենք մի երկու տեղեկութիւն էինք հաղորդել տեղոյս հայոց եկեղեցապատկան տան միանգամայն անյաջող շնութեան մասին, որի առթիւ 203,031 ռուբլի 43 կոպէկ հաշեւ է ցոյց տուած: Որովհետեւ տունը վերաշինուել էր համարեա միայն պ. Գասպար Եաղուբեանի վերահսկողութեամբ և կառավարութեամբ, թէե եկեղեցական խորհրդի անօրինութեամբ, ուստի մեր վերոյիշեալ երկու տեղեկութեան առթիւ հաւանական էր, որ պ. Գ. Եաղուբեանը իսկոյն և եթ պատասխանէր մեղ պաղարիւնութեամբ, որպէս վայել է բարձրագիր անձանց, ինչպէս որ իւր թղթակցութիւններում նու ծփնո-ճ է իրեն ներկայացնել:

Աւելորդ չենք գանում նորից յիշեցնել որ ինքը պ. Գ. Եաղուբեանը իր կառավարութեամբ վերաշինուած այդ տան մասին աճապարել էր «Մշակ»-ի 1891 թ. 87 համարում: օգոստ. 6-ին «Ծխական» կեղծ անուան ներքոյ գովարանել վերաշինութիւնը, թուելով և այդ վերաշինուած մասից ըստանալիք՝ նախկին շնութեան վերաբերմամբ իբր անհամեմատ՝ մեծ վարձը. այն ինչ մենք միանգամայն ժխտած էինք այդ՝ հիմնուած լինելով իրականութեան վերայ. օրինակ, պ. Գ. Եաղուբեանը զրած էր, որ այդ վերաշինուած մասից եկեղեցին արդիւնք կունենայ 33,000 ռուբլի, իսկ մենք պնդած էինք, թէ ոչ միայն ականջն ախորժալուր այդ գումարը չէ ըստացվում, այլ նաև այդ ժամանակիները մի յայտնի թիւ բնակարանների թափուր և անբնակ մնալուց եկեղեցին գեռ վեաս է ունենում մի քանի հազար ռուբլի: Պ. Գ. Եաղուբեանը փոխանակ մեր այս զրածը ջրելու, այսինքն փոխանակ ցոյց տալու թէ վերաշինուած տունը երբէք անյաջող չէ և իրօք երեակայեալ 33000 ռուբլի արժինութ է բերուճ իսճ իւրեւեւ:

որ մի երկտողի բան էր, յանկարծ, մօտ տարի ու կէս անցնելուց յետոյ, մինը միւսի ետևից «Արձագանք»-ում և «Նոր-Դար»-ում տպագրում է մեր տնձի դէմ սպառնալիքներով անուանարկութիւններով լի միաբովանդակ յոյժ խրդակալի թղթակցութիւններ, սակայն որոնց մէջ այնուամենայնիւ մէնք պատասխանի նշայլ անգամ չը գտանք մեր յարուցած պարզուշ հարցն, թէ տունը միանգամայն անյաջող է և ի զուր է վատնուել հարիւր հազարներ, թէ եկեղեցին վերաշնուրած մասից (գումարելով հին շնուրթեան սովորական արդիւնքը 11—12000 ռուբլի և հաշվում ծախս ցոյց տուած 203,031 ռուբլու տոկոսը աւելի քան 10,000 ռուբլի և այդ ժամանակը բնակարաններից մի քանիսի թափուր մնալը՝) մի քանի հազարներ մնաներ է կրում և թէ վերջապէս եկեղեցին այդ վերաշնուրած մասից երեակայեալ 33,000 ռ. ոչ այժմ և ոչ յետոյ բնաւ չէ կարող ստանալ Այնուհետև մեր յիշած փաստին՝ թէ մայրաքաղաքիս առողջապահական խմբերից մինի կարգադրութեամբ ժամկոչն և դռնապանների կացարանները, որոնք պ. Եաղուբեանից գովաբանուած մասի մէջ են գտնվում, առողջապահական պայմաններին հակառակ լինելով փակուել են, — պ. Գ. Եաղուբեանը ոչ մի խօսք չէ տառամ, այլ անմեղ տեղը Թիֆլիսի թերթերում գոռում՝ գոյնիւն է բարձրացնում, մերթ աղերսում, մերթ սպառնում, միենյն ժամանակ շողոքորթում «Մշակի» այլ նախկին աշխատակիցը «Նոր-Դար»-ի և «Արձագանք»-ի խմբագիրների ինքնասիրութիւնը, թէ նոքա չին թողնի որ ազդի իր ազնիւ գործիքը (այսինքն պ. Գասպար Եաղուբեան) իրը թէ յանիրաւի անուանարկուի մեջնից և այլն, և այլն: Է՛հ, պ. Գասպար Եաղուբեան, չափազանց ձանձրալի է Զեղ հետ բանակուի բոնուել ինչու որ թողած փաստերը՝ ով զիտէ ինչերով չէք զբաղվում Զեր իրը պատասխաններում և, որ ծիծաղելին է, գեռ լըագրների սիւնակների համար էք ափսոսում, այն ինչ մեռնոյն անբովանդակ զրութիւնը երկու թերթում միաժամանակ տպել տալը արդէն Զեր անկեղծութեան դէմ է յայտնում:

Եղբակացութիւն։ Եկեղեցական տան վերաշնուրած մասը միանգամյն անյաջող է, հետեւապէս ի զուր են վատնուել կանխիկ հարիւր հաղար ռուբլիներ. ներկայ վերաշնուրածիւնը 33,000 ռուբլի արդիւնք ոչ հիմա է բերում, որի մասին համոզը ենք, և ոչ էլ կը բերի երբէք իւր ներկայ զրութեամբ. զոնապանների ու ժամկոչի կացարանները փակուել են՝ ապրելու համար վասակար նկատուելով պաշոնական մասնագէտներից։ Ահա մեր զրածը։

Խորհուրդ կը տանք պ. Գ. Եաղուրեանին, որ փոխանակ մեր անձով պարագելու, ինչ որ խոստանում էր իւր թղթակցութիւններում, այժմ թողնի իւր այդ ստանձնած գերը և միայն պարզորշ զրական պատասխան տայ սոսկ մեծ զրածին, ի հարկէ եթէ միայն գտնում է անձշտութիւններ, և խորհրդածութիւններով ու այլ և այլ կողմակի, բնաւ ոչ կապ և ոչ պէտք ունեցող, հարցերով չը զրադուի։  
Sapienti sat.

Պ. Գասպար Եաղուրեանը, ինչպէս յիշած ենք վերեւում, մեր մի երկուողի նկատմամբ միաբովանդակ երկու ընդառնակ էր զետեղել «Արձագանք»-ում և «Նոր-Դար»-ում, որոնց մենք պատասխաննեցինք նախ մօտ տասը բառից բաղկացած մի հեռազրով\*) և այնուշետե նամակով («Նոր-Դար» 1893, № 203), որի պատասխանին մինչև այժմ ի զուր ըսպասեցինք։ Կրկնում ենք այժմ պ. Գ. Եաղուրեանին միւնոյնը, ինչ որ ասել էինք յիշեալ նամակի վերջում, այսինքն։

Գալով մեր մանրամասնորէն զրելիքին՝ թէ ե՞րբ ենք զրելու և ինչու ոչ այժմ՝ այդ մեր զիտենալու բանն է, իսկ ձեր բանը, եթէ յիրաւի ուղում էք մեզ հետ բանակոիւ սկսել այդ այն է, որ դուք նախ պատասխանէք միայն մինչև այժմ յարուցած մեր երկու հարցին։

\*) Հետաքրքրական այն է, որ «Աբանուտուն»-ը տեղ տալով պ. Գ. Եաղուրեանի յարձակողական նամակին մեր գէմ զ լացաւ անաշոռ կերպով տեղ տալ մեր մի երկուող պատասխանին, որ ուղղած էինք հեռագրով։

Տեղւոյս հայ ուստանողների նախաձեռնութեամբ յունուարի 26-ին կայացաւ յօդուա Երևանի սովեալների մի հայկական երեկոյթ, որի մի գլխաւոր արժանիքը նորերս տեղի ունեցած մի այլ հայկական երեկոյթի հետ համեմատելով այն էր, որ այդ երեկոյ ներկայացուեցաւ հայերէն մի թատերդ; Խաղացին պ. Գ. Սունդուկիանցի «Եւ Զէ Ան» կատակերգութիւնը, որը անցաւ բաւականին յաջող և հանդիսականների վերայ ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց: Տիկ. Ս. Քատամեանը Սալոմէի գերում այն աստիճան բնական էր և կենդանի, որ աւելին այլ ևս սպասել անկարելի էր նոյն իսկ կոչումով շնորհալի գերասանուհուց: Ներկայացումից յետոյ սկսուեց եւրոպական պարերզութիւնը, որը տեսեց մինչև գիշերուայ ժամի Յը:

Սյս երեկոյթին հասարակութիւն քիչ կար, և այն էլ տեղւոյս հայ հասարակութեան կարեոր մասը համարեա բացակայ էր այդ օրը. թէ ի՞նչ էր պատճառը, դա այլ խնդիր է, սակայն պէտք է ենթագրել որ խնայողութիւնը այդտեղ գեր չէ խաղացել: Ուսւս հասարակութիւնն էլ սակաւ էր և այն՝ ոչ այսպէս կոչուած ընտիր դասակարգից: Առհասարակ վերջին վեց-եօթ տարիների հայկական երեկոյթները կորցրել են նախկին տարիների երեկոյթների հանդիսաւոր բնաւորութիւնը: Ուժսուն թուականների սկզբներում երբ հանգիսականը մտնում էր հայ երեկոյթի դաշլիճը, մի առանձին երկիւղաձութիւն էր զգում, այնքան ընտիր էր հասարակութիւնը, թէ հայ և թէ ուսւս, և առհասարակ երեկոյթների կառավարիչները կարողանում էին պատշաճաւոր փայլ տալ հանդիսին: Սյդ երեկոյթներում կը տեսնէիր խօսքի բուն նըշանակութեամբ տեղւոյս հայ հասարակութեան բոլոր անդամներին, նաև նոցա, որոնք ամուսնացած են օտարազգիների վերայ: Իսկ ի՞նչ ընտիր հասարակութիւն էր յաճախում ուսւսներից: Սյդտեղ կը տեսնէիր բարձրաստիճան պաշտօնեաներից սկսեալ և առհասարակ ուսւս ընտիր դասակարգից մեծ բաղմութիւն: Սյս օտարազգի և ուսւս հանդիսականներին դրաւում էր հայկական երեկոյթը իր հայկական բնաւորու-

թեամբ և հանգիսաւորութեամբ: Աղդային երգերը՝ մենակ կամ խմբովին, որ երգում էին հայ երիտասարդները այս ու այն դահլիճում թէ պարերգութեան ժամանակ և թէ թատերգների միջարարներում, որքան հետաքրքիր հասարակութիւն էին զրաւում իրենց շուջը, որքան զուարձութիւն և կենդանութիւն տալիս երեկոյթին: Մանաւանդ ոչ պակաս կախարդիչ կերպարանք էր առնում այսպիսի խմբի մի այլ երգեցողութիւնը, համերգները կամ պարսկական մելամաղձիկ երգերը թրթռիչ դաշնակի կամ նէյի ներդաշնակութեամբ մի այլ սենեակում; ուր անգամ լուսաւորութիւնը յարմարեցրած էր լինում այդ ասիսկան հանդիսի բնաւորութեանը:

Առշասարակ երգը աղդային երգը, այն ուժեղ տարրերից մինն է, որը կարողանում է միշտ թարմ պահել իւրաքանչիւր անհատի մէջ նորա աղդային ողին, զարթեցնել հայրենի յիշողութիւնները և սրաի առջև այսպիսով բացել նորա ընտանի, պատանեկան աշխարհը, ինչ շրջանի մէջ որ անցել են նորա օրերը: Մեր կարծիքով աղդային երգը մայրենի լեզուից ոչ պահաս զօրեղ տարր է ներկայացնում աղդայնութեան պահպանութեան համար, մանաւանդ հայրենիքից գուրս, ըստ որում սրաի վերայ աղդելն է աշա այն զօրաւոր ներքին ոյժը, որը մարգուս մէջ միշտ կենդանի է պահում նորա աղդայնութեան ինքնուրոյնութիւնը: Երգեցողութեան աղդեցութիւնը թէ լուսաւոր աղդերի համար և թէ թափառաշրջեկ ցեղերի՝ միենոյն նշանակութիւնն ունի: Օտարին, պանդուխային սփոփումէ իւր աղդային երգը, գա է այն աշխարհը, որից գուրս նա իր թշուառ կամ տխուր օրերում հանգստութիւն չի գտնում: Սյսօր մոգական մի ուժով վերացրէք թափառաշրջեկ ցեղերից նոցա երգերը, ստիպէք օրինակ քուրդին տարիների ընթացքում չ'երգել իր ցեղական լէլէները, և հաւասարէք, որ նա այլ ևս նախկին քուրդը չի լինի, կորցրած կը լինի քրդին յատուկ ցեղային աշխուժութիւնը, այլ ևս այնպիսի մի սերա կապակցութիւն չի գտնի իր և իր բնակավայրի հետ ու այդպիսով փոքր առ փոքր կանչետանան նորա ցեղային ինքնու-

բոյն յատկանի շնկը: Այսպէս, մեղ ցանկալի էր, որ երդը, հայ երդը իր ազգային եղանակներով, որքան կարելի է յաճախ հնչուէր ոչ միայն օտարութեան մէջ, հասարակական, մասնաւոր կամ ազգային հանդէսներում, այլև ամեն մի ընտանիքում, նոյն առելի ևս հայրենի կապուտակի տակ՝ թէ հայ քաղաքներում ու զիւղերում և թէ լեռներում ու դաշտավայրներում:

Մեր այս գրքում տպում ենք հայ հասարակութեանը լաւ յայտնի լուսանկար պ. Մ. Փափաղեանի յայտարարութիւնը նորա «Հնութիւնք Հայրենեաց» ընտիր հաւաքածուների մասին:

Պ. Փափաղեանի այս հաւաքածուների վերայ դարձնում ենք մեր հասարակութեան ուշադրութիւնը: Սուղ միջոցներով այս լուսանկարը այնպիսի մէծ ծառայութիւն է արել հայրենիքի ուսումնասիրութեան գործին լուսանկարելով մեր ազդային հնութիւնները, որ բարոյական պարտք կայ ամեն մի զարդացած հայի վերայ խրախուսել պ. Փափաղեանին՝ ձեռք բերելով նորա յոյժ ընաիր գործերը: Այս մասին դեռ կը խօսենք:



Հին Հայոցի գերեզմանաբանութեանը Արտակ աժուն:



ՄԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Արաքս»-ին ուղարկելիք գրութիւնները պէտք է գրուած լինեն պարզ և յստակ: Փոքր գրուածքները, ոտանաւորները և այլն, չենք վերագարձնում, եթէ մինչև անդամ ծրարուած են լինում նամակադրոշներ: Բոլոր գրութիւնները, որոնք տպագրութեան համար յարմար ենք գտնում, կարող են կրծատուել և ուղղագրուել խմբագրութեանս հայեցողութեամբ:

\* \*

Վայն գրութիւնները, արձակ կամ բանաստեղծական, որոնք այլ և այլ պատճառներով չեն յաջողուել Անդրկովկասում տպագրել մասնաւորապէս ինդրում ենք բնաւ մեզ չուղարկել, թէ մեր հանդիսի մէջ տպագրելու համար և թէ առանձին հրատարակելու նպատակաւ թոյլտուութիւն ինդրելու համար:

\* \*

«Արաքս»-ի մուտքը Տաճկաստան արգելուած է հանդիսի հրատարակութեան նոյն իսկ առաջին տարուց, ուստի Տաճկաստանի համար բաժանորդագրութիւն չենք ընդունում:

8անկանալով մեր լնթերցողներին մատչելի անել նորին  
Սրբութեան Տ. Տ. Մկրտիչ Ա. անդրանիկի կոնդակի բնագիրը  
նյոն ձեռով, ինչպէս որ ուղարկուեցաւ ո. Եջմիածնից Հայ ժողո-  
վրդեան աւետելու Համար Հայրապետական նախընծայ օրհ-  
նութիւնը, մենք այս զբքում տալիս ենք կոնդակի պատճէնը՝  
աւատախպական եղանակով պատրաստուած:

«Արաքս»ին ստորագրուող այն անձինք, որոնք 1892 թուականին բաժանորդ ըլլինելով այս վէպի սկիզբը չեն կարգացած, կարող են ստանալ առանձին, գիմելով խմբադրութեանս հանդերձ 50 կոպէէիի նամակադրոշնով:

«Արաքս»ի շապկի վերայ տպուած է, որ վերադիր վճարով (съ наложеннымъ платежемъ) բաժանորդագրութիւն ամնելին չնիք ընկունում, սակայն շատերը դարձեալ շարունակում են զիմել մեղ որ սցդ եղանակաւ նոցա «Արաքս» ուղարկենք: Կրկնում ենք, որ սցդպիսիների խնդիրը միշտ կը մնայ անուշադիր:

Դարձեալ ինզրում ենք մեզ հետ յարաբերութեան մէջ գտնուող անձերից, մեր ազգանունը գրել այնպէս, ինչպէս «Արաքս»-ի շապկի վերայ է տպագրվում, և երբէք չ'աղաւազել մեր ազգանունի տառերը: Որպէս շօշափելի մի փաստ, հարկաւոր ենք համարում հաղորդել որ մեզ ուզզած հեռազիրները ընաւ կամ թէ իսկցին մեզ չեն հասցնում, երբ մեր ազգանունի վերջին յ-Ա տառը զրուած չէ լինում հեռազրում, և այնպէս այլ տառերի համար:

«Արաքս»ը հրատարակուելով հայկական դաւառներից մի քանի հազար վերսա հեռու, Պետերբուրգում, ակներեւ, և, որ բաժանորդագրութեան տեսակէտից ևս յաջող պայմանների մէջ չէ զանվում, ըստ որում շատ յաճախ «Արաքս»ին բաժանորդ գրուել ցանկացողը յարմարութիւն չունի բաժանորդագինը խմբադրութեանս հասցնել փոստային ձանձրալի հոգսերի պատճառով որոնք ժամանակի մեծ կորուսա են պահանջում: ուստի բաժանորդաց զիւրութիւն ընձեռելու համար, մի քանի քազաքներում զործակալութիւններ ենք հաստատած, որոնց ցուցակը տպում ենք այս գրքում:

Այժմ բաժանորդ գրուել ցանկացողներից է կախուած, թէ ով ինչպէս է կամենում ստորագրուել «Արաքս»ին, կամ ուզզակի զիմելով մեղմեր հասցեով Պետերբուրգ, Սimeonу Գուլամիրանց կամ մեր գործակալների և նաև յանձնարարեալ անձանց մօտ:

Մի կարդ յօդուածներ, որոնք նշանակուած էին այս գրքի համար, այժմ, այլ և այլ ծանրակշիռ պատճառներով կուրս մնացին այս գրքից:

Խմբադրութեանս մէջ ստացուած է Փրանսերէն լեզուով հրատարակուած Տիկ. Շանտրի ճանապարհորդութեան գիրը, Ուուսական Հայաստանում, այս վերնագրի ներքոյ.

Madame B. Chantre. A travers L'Arménie Russe. Ouvrage contenant cent cinquante et une illustrations. Paris, 1893.

Թէ այս և թէ մի այլ Փրանսերէն գրքի առիթով Հայաստանի մասին՝ կը խօսենք յաջորդ գրքում:

Խնդրում ենք մեր թէ բարեկամներից և թէ զանազան անձերից, չը դիմել մեղ մասնաւոր խնդիրներով, թէ պետական զանազան պաշտօնատներում այլ և այլ տեղեկութիւններ հաւաքելու, որժամանակի ահագին կորուստ է պահանջում, և թէ դրաքննական կամ տպագրական գլխաւոր վարչութեան ատեաններում գրքեր ներկայացնելու կամ թատերգների թոյլով ուժիւններ խնդրելու:

«Արաքս»ի անցեալ տարուայ երկրորդ գրքում զետեղած «Աշուալորմածի գերեզմանը» սխալմամբ վերագրած էինք պ. Ա. Պոյրի լուսանկարին, այն ինչ մենք օգտուել էինք պ. Ա. Դադեանցի լուսանկարից: «Երկայ տարուայ առաջին գրքում «Հայ կանայք հաց թիւնիս» նկարը գարձեալ պ. Դադեանցի լուսանկարից է պատրաստուած, որ մենք սխալմամբ չէինք յիշել:

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ «ԱՐԱՔՍԻ» ԱՐՏԱՍԱԿՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

Փոստային և հեռագրային զինաւոր վարչութեան կառավարչի պաշտօնական հրահանգի համաձայն, համարաւ 25, 1892 թուականի մայիսի 3-ից, արտասահմանից արդեւ չեն է հասարակ և պատուիլու նամակների միջոցաւ ուղարկել Ռուսաստան և աստական թղթագրամներ, ուստի այս պաշտօնական զեկուցման վերայ հրաւիրելով արտասահմանեան մեր գործակալների ուշադրութիւնը, նոյն և մասնաւոր կերպով մեղ դիմող բաժանորդաց, խնդրում ենք այսուհետեւ արտասահմանից «Արաքս»ի բաժանորդագները ուղարկել մեղ նոյն հասարակ և պատուիրած նամակների միջոցաւ միմայն օդարարութիւն թղթագրամներ: Եւրոպից և Բալկանեան թերակղզու պետութիւններից՝ Փրանսիական Փրանք կոչուած թղթագրամը կամ աւստրիական գուլդեն, իսկ Ամերիկայից՝ նաև դոլար:

Բացի այս եղանակ ուղարկելուց, կարելի է ուղարկել նաև դրամատների միջոցաւ, օր. Կրեդի Լիոնէի (Credit Lyonnais), եթէ այս կամ մի այլ գրամատուն, որտեղից ուղարկվում է զումարը, ճիւղեր ունին Պետերբուրգում:

«Արաքս»ի բաժանորդագինն է  
Ամերիկայի համար 2 դոլար, իսկ արտասահմանի միւս պետութիւնների համար 5 դո-լուն կամ 10 ֆրանք:

Անցեալ Հոկտեմբեր ամսին «Արաքսի» փերջին չորս գըր-քերի մէջ զետեղուած նկարներից, թուով իննուուն, պատրաս-տեցինք տռաջնին անգամ իր տեսակին մէջ ընտիր և շքեղ մի այլըոմ—նկարների ժողովածու՝ գեղարուեսաւալէս պատրաս-տած ոսկէկաղմի մէջ ամփոփած:

Նկարները այլքոմի մէջ առանձին բաժինների ենք պերածած՝

- ա. Այսը Ամոռի գահակալները.  
 բ. Օտար և հայ նկարիչների անուանի երկերը (նկարները)  
 շ. Հայ սրբավայրեր և հայկական ճարտարապետութիւն.  
 դ. Կը անաւոր հայ անձինք.  
 ե. Հայկական տիպեր.  
 զ. Հայկական տեօարաններ.  
 է. Բնութիւնը Հայաստանում:

Կազմի երեսի ծաղկանկարը նկարած է մեր երիտասարդ  
նկարիչ պ. Գրիգոր Գալբրիէլեանցը:

Պատրաստել էինք ընդամենը 100 օրինակ և զինն առանց ճանապարհածության նշանակած էինք 5 ռուբլի:

Այժմ այդ սյլը մներից մնում է միայն 6 օրինակ: Իւրաքանչյուրի գինն է այժմ ձանապարհածախող՝ 8 ռուրլի:

Նարունակ, մանաւանդ վերջերս, ամեն կողմից զիմում  
են խմբագրութեանս և տեղեկութիւն պահանջում; Թէ ար-  
գեօք ծախու կա՞ն «Արաքսի» նախորդ տարիների գրքերը և  
թէ այժմ որքան է նոյս արժէքը: Որպէս զի այսուհետեւ  
սահպուած ըլլինինք նորից ամեն մի զիմողին մասնաւոր  
գրութիւնով պատասխանել, նպատակայարմար դտանք այս  
գրքում նշանակել «Արաքսի» նախորդ տարիներից մնացած  
օրինակների թէ թիւը և թէ նոյս արժէքը.

*U. S. M. G. B. Report* 1887-1888.

Վաղին գիրքը հրատարակուելէ 1887 թ. նոյեմբեր ամսին,  
իսկ երկրորդ գիրքը՝ 1888 թ. մայիսին: «Օախու կայ երկու օրի-  
նակ, ոսկէկազմ, իւրաքանչիւր գիրքը առանձին կարմած:

15 n.

Ընդունակ է մասնագիրաց էլեկտր 490 օրինակ:

**Երեսրդ տարի 1889.**

|  |       |
|--|-------|
| Առաջին գիրքը Հրատարակուել է յունիսին, իսկ Երկրորդը<br>գեկտեմբերին:՝Օախու կայ 6 օրինակ անկազմ և 6 օր. ոսկեկազմ: |       |
| Տարեշրջանի գինն է անկազմ . . . . .   | 7 ռ.  |
| Ոսկեկազմի . . . . .  | 10 ռ. |

Տպագրած էինք 710 օրինակ:

**Երեսրդ տարի 1890.**

|   |       |
|---|-------|
| Առաջին գիրքը Հրատարակուել է 1890 թ. սեպտեմբեր ամ-<br>սին, իսկ Երկրորդը Հետեւեալ 1891 թ. յուլիսին. ուստի 1891<br>թուականի այս ըստ ընծայածը Հրատարակել ենք ի հաշիւ 1890<br>տարեշրջանի Երկրորդ գրքի. իսկ 1891 թուին այսպիսով «Վրաքսը»<br>տարեշրջան չէ ունեցած:՝Օախու կայ 6 օր. և 6 օր. ոսկեկազմ: |       |
| Անկազմ օրինակների գինն է . . . . .  | 7 ռ.  |
| Ոսկեկազմերի . . . . .   | 10 ռ. |

Տպագրած էինք 710 օրինակ:

**Զորբորդ տարի 1892.**

|   |       |
|---|-------|
| Առաջին գիրքը Հրատարակուել է սեպտեմբեր ամսին, իսկ<br>Երկրորդը գեկտեմբերին:՝Օախու կայ 7 օր. անկազմ, 7 օր. ոսկեկազմ: |       |
| Անկազմ օրինակների գինն է . . . . .  | 7 ռ.  |
| Ոսկեկազմերի . . . . .   | 10 ռ. |

Տպագրած էինք 1200 օրինակ:

**Հնագերորդ տարի 1893.**

|   |      |
|---|------|
| Առաջին գիրքը Հրատարակուել է սեպտ., իսկ Երկրորդը 1894<br>թ. փետրուարին:՝Օախու կայ 450 օր. անկազմ, 35 օր. ոսկեկազմ: |      |
| Անկազմ օրինակների գինն է . . . . .  | 3 ռ. |
| Ոսկեկազմերինը, սովորական թղթի վերայ . . . . .   | 6 ռ. |
| , , աւելի լնտիր թղթի վերայ . . . . .  | 8 ռ. |

Տպագրած էնք 1954 օրինակ:

**Վեցերորդ տարի 1894.**

|   |      |
|---|------|
| Առաջին գիրքը կը Հրատարակուի մայիսի վերջին ճոխ բովան-<br>դակութեամբ և աւելի շքելու հարուստ տպագրութեամբ, մանաւանդ<br>գեղարուեստական կողմից, և կը բաղկանայ մօտ յիսուն նկարներից և<br>մանրանկարներից: Երկրորդ գիրքը կը Հրատարակուի նոյեմբերին:<br>Տպագրվում է 2180 օրինակ: |      |
| Երկու գրքի բաժանորդագինն է . . . . .  | 3 ռ. |

,, , նոյեմբերի կազմով, իւրաքանչիւր գիրքը առանձին 5 ռ.

ԽՈՐԲԱԳԻՐԱԿԱՆԱՍ ՄԵջ ԱՏԱՅՈՒՄ ԵԵ ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աւոն Մէլքոն Հայուն. Ամուսնական խնդիրներ, Մասն Բ. Ծախուտ ապրանք, հրատարակութիւն Վ. Գ. Զարգարեան զբանն Պոլիս, տպարան Ն. Ճ. Արամեան, 1893.

Գ. Դահ. Մէլքոն-Հայուն. Ղայթմաղանց Միքելը (Ղազի մօլի արշաւանքներից), Մոսկովա, տպ. Մ. Բարիխուղարեանի, 1893.

Պէտրոս Հ. Մաճուռ-Հայուն. Բանաստեղծութիւններ. Ալեքսանդրապոլ, տպ. Աբրահամ Մալխասեանցի, 1892.

Ռաֆֆի Արծիւ Վասպուրականի (Խրիմեան Հայրիկ). Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893.

Վահան Գ. Զարդարեան. Գրացուցակ նոր հրատարակութեանց, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներու. Պոլիս, տպարդութիւն Գ. Պաղատալեանի. 1893. Հրատարակութիւն Վ. Գ. Զարգարեան զրտատն:

Գ. Մունքո-Հայուն. Ամուսիններ. Կոմեդիա հինգ արարուածով. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի 1893. Էջ 180, 8.

Գ. Զորելիսան. Կոմեդիա չորս գործողութեամբ, թարգմ. Յ. Ղարագեղեանց, Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1893, Էջ 164:  
Տէրքան Նաւառարդիսանց. Հայ ժողովրդական հեքիաթներ. ութերորդ գիրք. Թիֆլիս, տպ. Մ. Վարդաննեանցի 1894, Էջ 124, 8<sup>o</sup>:

Մարգարեան Կանայշանց. Ցուցակ Հայերէն ձեռագիրների Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր գպրանոցի, Թիֆլիս, 1893, տպ. Շարաձէի, 4<sup>o</sup> 4 եր.+75.

Տէղէսպէս. Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում 1892. Թիֆլիս, 1893, տպ. Խոտիննեանի եր. 109:

Minas Tehéraz, Professor M. R. A. S. Saiat-Nova, sa vie et ses chansons 8<sup>o</sup>, London, 1893.

Giunta Giunti. Das Haus Lusignan, Historische Skizze, Autorisirle Äberserung aus dem Italienischen, Triest, 1894.

H. Mappz. Новые материалы по Армянской Эпиграфикѣ. Ани, —Аламъ, —Мрень-Багарантъ-Еровандакерть. В. Талынъ, Спб. 1893.

Гр. А. Діевз. Армянский вопросъ въ Турціи. (Изъ переписки съ стамбульскимъ публицистомъ) Москва, 1893, Тип. Д. Иноzemцева.

Г. Асտօսաւուրյանը, Долина Блаженства, горская легенда. Тафлистъ, 16<sup>o</sup>, 21 стр. 1893.

«ԱՐԱՅՈՒ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵջ ՎԱՐԴԱՎԱՐՄ Են

ՌԱԶՋԻՆԻ ՀԵՂՅԱԿՈՒՐԵՆԵՐԸ.

|                                      |      |
|--------------------------------------|------|
| Սամուել Ա. Բ. Գ. զիրք.               | 3—,, |
| Դաւիթ բէկ. Ա. Բ. Գ. զիրք վերջաբանով. | 3—,, |
| Խենթ և Զալալէդղին                    | 2—50 |
| Կայծեր Բ. Հատոր.                     | 2—50 |
| Կայծեր Գ. Հատոր.                     | „—50 |
| Խաչագողի յիշատակարան Գ և Դ մաս.      | 1—50 |
| Հայ կինը և երիտասարդութիւնը.         | 1—50 |
| Կայէնի կտակը. Զախէր-Մազօխ            | 1—20 |
| Մինն այսպէս, մինն այնպէս.            | 1—,, |

Անանիայի Շիրակունւոյ Թացորդ բանից, ի լոյս ած

Ք. Պատկանեան, Ս.-Պետերբուրգ, 1877. . . 1—,,

Ղաղար Փարպեցւոյ թուղթը, Մոսկուայ 1853 Մ. Էմին. 1—20  
Ֆենելոն, Արկածք Տելեմաքայ, թարգմ. Հ. Մանուել

Զախարիսեան, պատկերազարդ տպագրութիւն. . 7—,,

Նշանարք մատենագրութեան Հայոց. Փ. Պատկանեան. „—75

Սերէս Եպիսկոպոսի ի Հերակլն Հրատ. Պատկանեանի. 2—,,

«Հանդէս պատմական և գրականական», ամեն մի գիրքը. 2—,,

Լեռենց. Բանաստեղծութիւններ. Ս.-Պետերբուրգ. . „—60

Ատրպետեան Յուշան, ողբերգութիւն Ս.-Պետերբուրգ. 1—,,

Չուրար. Վէպեր և պատկերներ. Ն. Նախիջեան. . . 1—,,

Կնոջ կոչումը, Յ. Ղարագեօվեանց. Թիֆլիս. . . . „—15

Ն. Գօգօլ. Վողեմի կալուածատէրներ. թարգմանու-

թիւն Յ. Աթանասեանի. Պետերբուրգ. . . . „—50

Քնարիկ մանկական, երգեր, պարերդներ և աղօթքներ

փոքրահասակ մանուկների համար ձայնադրեց.

Ղաղարոս քահանայ Յովսէփեան. զինն է. . . 1—50

Ներսէս Ե. Աշտարակեցու պատկերը ընտիր վեմատիս,

նկար Յովսաթամեանցի. . . . . . . . . . . . 2 „

Исторический памятникъ состоянія Армянской области въ эпоху ея присоединенія къ Россійской имперіи. И. Шопена, Петербургъ, 1842 г. 4<sup>0</sup>. 1237 лѣни. 4. 6 р.

Новый замѣтки на древнія исторія Кавказа и его обитателей. И. В. Шопена. Сиб. 1865 г. 501 лѣни. 4. 3 р.

Материалы для новой исторіи Кавказа съ 1722 по 1803 г. П. Г. Буткова. Три части 8 р. Вторая часть отдѣльно. 2 р.

Грузія и Арменія, три части, Муравьевъ. 5 р.

Сборникъ материаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа. Выпукъ шестой въ переплѣтѣ 2 р. 40 к.

Новѣйшія извѣстія о Кавказѣ. С. Броневскаго I и II. 1823 г. 352—465 стр. Москва 5 р.

Всеобщая исторія Степана Таронскаго-Асохика. пер. Эмина 3 р.

Арменская исторія М. Хоренскаго съ краткимъ географическимъ описаніемъ древней Арmenіи I, II т. Йосифа Ионисиніанъ 355, 242 стр. 6 р.

Обозрѣніе россійскихъ владѣній за Кавказомъ, въ статистическомъ, этнографическомъ и финансовыхъ отношеніяхъ. I, II, III и IV томы 410, 392, 400, стр. 1836 г. 5 р.

Путешествіе въ Имеретію 1 р. 50 к.

Кавказъ, путешествіе Александра Дюма, переводъ съ французскаго 2 выпуска 1861 г. 3 р.

Собрание высочайшихъ указовъ и актовъ относящихся до Лазаревскаго института 1839 г. 2 р.

Сборникъ свѣдѣній о Кавказѣ. Томъ I. Тифлисъ. 1871 г. 4 р.

Тоже. Томъ II. 1872 г. 4 р., Томъ 1873 г. 5 р.

Армянская географія VII в. Хоренскаго, текстъ и переводъ Патканова. 1 р. 50 к.

Изслѣдованіе о составѣ Армянскаго языка К. Патканова, 1869 г. 1 р. 50 к.

Исторія Монголовъ Июка Магакіи XIII вѣка Патканова, 1881 г. 2 р.

Материалы для изученія Армянскихъ нарѣчій Патканова.

Выпукъ I. Говор Нахичеванскій 1 р. 75 к.

Материалы для армянскаго словаря, вып. I и II, 1882, и 84. 1 р.

Исторія Монголовъ по Армянскимъ изслѣдованіямъ, выпускъ II. 1 р.

Объ ученіи Персидскихъ Маговъ. Г. Эзова. 1 р.

Любопытныя извлечения изъ древней исторіи Арmenіи Шаганъ Чербета. 1815 г. 5 р.

Дубровинъ, Н. Тысяча восемсотъ второй годъ въ Тифлисѣ, Спб. 1868. II. 1 р.

Березинъ, И. Н. Путешествіе по Дагестану и Закавказью съ картами, планами и видами замѣчательныхъ мѣстъ, Казань, 1489. II. 8 р.

## ԳՈՐԾԱԿԱՆԱՅԻԹԻ ԻՆՔ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԻՍԻ

Բացի սոորեւ ցուցակագրեալ անձերից, այլև և այլ քաղաքներում ևս կան խըմադրութիւնից մասնաւորապէս յանձնաբարեալ մի կարդ անձինք, որոնք դարձեալ ընդունում են «Երաժշտ» բաժանորդագրութիւնը:

|                  |  |
|------------------|--|
| Արտացիա.         | Պ. Խաչատրուր Մատանկողեանց.   |
| Ավերհան.         | Պ. Լեռն Ասվագուրեանց.  |
| Ազգաւունդուղուլ. | Արժ. Մեսրովը քահ. Գիւլումեանց.   |
| Ազգագիւղ.        | Պ. Կարապետ Բահաթթեան.  |
| Ազնամիլ.         | Արժ. Գաբրիէլ քահ. Թուելեանց.   |
| Առիաբարդ.        | Պ. Առաքել Ռոկանեանց.   |
| Առաջախան.        | Պ. Գերասիմ Ֆարմանեան.  |
| Բագու-           | Պ. Սարգիս Շիրաղեանց (գրավաճառանոցում).   |
| "                | Պ. Նիկողայոս Գովլաթեանց.   |
| "                | Պ. Սողոմոն Վրթանէսեանց.  |
| "                | Պ. Պ. Եղբարբ Մալխասեանք.   |
| Առ ժաղան.        | Պ. Նիկողայոս Դանիէլեանց.   |
| Բայուն:          | Պ. Մկրտիչ Մէջբամիուլեանց.  |
| "                | Պ. Քրիստափոր Մարտիրոսեանց.   |
| Գանձակ.          | Արժ. Սիմէօն քահ. Տէր-Խաչատրեանց.   |
| "                | Պ. Բժիշկ Ա. Համասփիւռ.   |
| Եկատերինովոյ.    | Արժ. Գարեգին քահ. Բաղդասարեանց.  |
| "                | Պ. Աւետիք Մամիկոնեան.  |
| "                | Պ. Յարութիւն Զօրեանց.  |
| Երևան.           | Պ. Աբգար Գուլամիրեանց.   |
| "                | Պ. Դմիտրի Պօպով.   |
| "                | Պ. Գէղէօն Աշարօնեանց.  |
| Եյսէ.            | Պ. Բժ. Անդրէաս Սալթիկեան.  |
| Թէֆէն.           | Կենդրոնական գրալաճառանոց.  |
| "                | Պ. Պ. Եղբարբ Ստ. և Յովակ. Գովլաթեանք.<br>Въ магазинъ готовыхъ платьевъ „МАНДЛЬ“. |
| "                | Պ. Միքատ Գետատարեանց.  |
| Իշտիլ.           | Տ. Սաթենիկ Զաքարեանց.  |
| Լաբնակայա...     | Պ. Մաեփան Առաքելեանց.  |

|                |   |
|----------------|---|
| Խաղբեմ:        | Պ. Բողդան Խուզավերդեան.   |
| Հարս.          | Արժ. Խորէն քահ. Սաամիոլցեան.  |
| "              | Պ. Կարապեան Յովչանէջեանց.   |
| Ղալար.         | Արժ. Գէորգ քահ. Մկրտումեանց.  |
| Մարդառակայա... | Պ. Սեղբակ Լուսիկեան.  |
| Մէլքոնովը      | Պ. Միքայէլ Քուշներեան.  |
| Մէրմ:          | Պ. Թարխան Տէր. Պետրոսեան.   |
| "              | Պ. Յովսէփ Յարութիւնեան.   |
| "              | Պ. Գաբրիէլ Միսիթարեանց.   |
| Մոլոկ.         | Պ. Միքայէլ Յովչաննիսեան (լուսանկար).  |
| Մոռինա...      | Պ. Մկրտիչ Էմանուէլեան Պոպով.  |
| Նոր-Նախիջևան.  | Արժ. Սարգիս քահ. Ասկերչեանց.  |
| "              | Պ. Կարապետ Թիմրեան.   |
| "              | Պ. Գէորգ Բեգելեան, ուսուցիչ.  |
| Շահաբեկ.       | Պ. Պօղոս Ներսէսեանց.  |
| Շուլանէր.      | Պ. Սարգիս Մելիք-Սարգսեան.   |
| Ուղար-Արտ.     | Պ. Նիկողայոս Տէր. Յովչաննիսեանց.  |
| Պէտրէջո-բժ.    | Խմբագրութիւն «Արաքսի» Հանգիսի.  |
| "              | Владимірській просп. 7, кв. 7.  |
| Բոսագով.       | Книжный магазинъ „Нового Времени“.<br>Միայն մայրաքարտում ստորագրուողների համար. |
| Եջէջեռողով:    | Պ. Մկրտիչ Խուզավերդեան Տаганрог. пр.  |
| Վաղարշապատ.    | Պ. Յովչաննէս Թիղլիանց.  |
| "              | Պ. Մարտիրոս Գնունի.   |
|                | Պ. Աղքաքանգր Բնունի:  |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԴՈՒՌԱԿԱՆԼՈՒԹԻՒՆՔ «ԱՐԱՔՍԻ»

Ա. Նըրէկան. — Նիշ-Եօք. Colleg Point, N. I. Պ. Յ. Աղարեան.  
 Անդրէս. — Մանզէովուր. Պ. Ա. Եալտաղծեան.  
 Բուլլարչիս. — Ռուսահոնէ. Պ. Գառնիկ Տէօքմէեան.  
 Եդէպոս. — Գահէրէ. Պ. Երուանդ Փափաղեան, Boîte Postale  
374.  
 Կիալբռա, Ֆանտոն-պառ. Պ. Մ. Սըմաղեան.  
 Պարսկահան. — Թօմուրէ. Պ. Աւետիս Սարգսեանց.

## ՆՈՒԻՐԱՏԱԿԱԽԹԻՒՆԵՐ

Սուրբ յիշել յարքել անցնել 1893 թուականին «Արտօն» գրեթեց մ մ օքնան  
նուիրառ էն այս հաստատելինեներն.

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. Պետրոս Քիրովանց.—Աստրախանու օրինրդաց դպրոցին.

ԲԵՇԴՈՒՆԻՑ. Գրիգոր Եղիշեանց.—Կողոքի դպրոցին,—Վաղարշապատի դպրոցին,—Եվլիիար գիւղի դպրոցին,—Ճեմարանի դրադարանին,—Ճեմարանի ուսուցչաց ընթերցարանին,—Ներեք մանկանց նշխարաց մատուռին ի Մավսա.

“ Անդրեան Մատուցելանց—Աղջիկ «Եղիկեան» դպրոցի դրադարանին  
Անդրեանցուրքի Յանձեւանց—Խուսձուքի հայոց դպրոցին.

ԿՐԻԱՌԱՎԱԿԱՆԵՑ ԿԱՅԱՐԱՆԻՑ. Սուրենան Քրիստոփուսուն Հալմեանց—Նորանա-  
խիջևանու ո. Թորոս եկեղեցու դպրոցին.

ԴԶԼԱՐԻՑ. Տիգրան Մ. Լազարեանց—Տեղւոյն հայոց ծխական դպրոցին.

ՄՈԶԴԻՆԿԻՑ. Յայշանեն Պետրոսեան Օնորեանց—Մոզդոկի դպրոցին.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ. Ազն. Արքի Էլե. Սորբանանց—Սղնախու օր. դպրոցին,—Աղիւանուր-  
Տէր-Դաւիթեանց—Գորիի գպրոցին, Յանձեւ Ներեւուանց—Մեղ ըիի գպրոցին.

ՎՈՐՈՇԵՖԻՑ. Սուրեան Տէր-Փանուանց—Եշտարակ գիւղի հայոց գպրոցին.

ԽՄԲԵՑԳՐՈՒԹԻՒՆԻՑ. Պետրոս քպի և Խոսկուայի հայ ուսանողներին,—Խուսձու-  
քի Նրիտարագրաց Ընթերցարանի ընկերութեան.

ԲԵՐԵՎԵՐԻՑ ՄԵԼ. ո. Առաւել Ծորուբեանց 1892. «Արտօն» բարեվանի հա-  
մար սուրբութեանց էր 33 օր. իսկ 1893 թ. բարեվանի 41 օքնանի, որոնց սուրբութեա-  
նին իրեւ խզից հասերեւ զանուան խթօս հայ հաստատաւիներին: Այս անքան հա-  
մարու տնիւ այդ սուրբութեանց բարեվանին:

Դամաւալու գիւղի գիւղացոց, Անդամաւալի, Դամաւալուի, Նորդի, Նիժի, Վար-  
դաշենի, Գերուսի գիւղական հայոց դպրոցներին, Ներեանի (Պայիանեան), Նորեայա-  
գինի, Զարաթաւլի հայոց դպրոցներին, Դորաւարի, Փարիզի, Ժենևայի, Լեյպցիգի և  
Արիացի հայ ուսանողներին, Փոքշանի, Բոդուշանի, Գալացի, Վառնայի հայոց գպրոց-  
ներին, Թիֆլիսի Էժանագին (2 օր), Մայրուէյի հայկակեան և Խուչզովյի «Անի» ընկե-  
րութեան գրադարաններին, Կեշառու, Ա. Ակամայ, Հաղպարծին, Գանձակի գոտառի  
և Թարգմանչաց, Տաթևի մենաստաններին, Հնչեւոյի հայոց եկեղեցու գպրին, Հորս օ-  
րինակ էլ յարգելի նուրիստուի արամադրութեան ներքոյ, բոլորը 33 օր. սոցա  
գարկուած է 1892 և 1893 տարեցրջանի գրեքը, իսկ 1893-ի համար աւելորդ ուժ-  
ատորագրուած օրինակները ուղարկուամ ենք. Լազուկէի, Թէլւակի, Քարվանսարայի, Կո-  
ղիրի, Ղարսի, Արդահանի և Քանաքեն գիւղի հայոց դպրոցներին և մի օր. Նրեանու  
Նորեայազիտական գնդի հայ զինուորներին:

Մի երեսաւերեւ հաստատաւիների անսունու նուիրառաշ գրեթեց միշտ այժմ է-  
ւոր զեղան+ սուրբութեան հասցեները զինուաց պատճեաւու, սուրբ ինդրառ էն+ նայ-  
ուն+ շն սոցացած, դիմու մեզ հաղորդեւով իրեւաց Տանրամասնօրին հասցեները:

1892 թ. Ա. Գրետան յեղած էնին+, որ մ անձի հայ անձնին+ հայ ընթերցող բառուար-  
քի անկարու Մանուկուած հայերէն ընթերցանաւինեց էր որպատեւու նորուարու-  
թեան մեր հանդիսին մ անձի բարուզ: Այս բաժանարդութեանց գումանը Համեմա-  
տեն որուի հինդ արբաւան միջոցան սուրբութեան էն+ անձինինի անձին օրինան «Արտօն»  
բարեվանի պարսկաց զանուան դպրոցներին և անձրուզ հաստատաւիներին միջ արբ-  
աւած: Խօնակուանինաւ այդ հաստատաւուած օրինանին և դուրականացած դպրո-

Հեղանք համար ինդրով և օտարիցում բեղային գույսութեայ ո. Ա-Ե-Գ-Ի-  
Ս-Ր-Շ-Ա-Ն-Ի-Ն այդ նեղութեալ յանց առանձիւն: Նուրբութեալ քրեւը (25 օր. 1892 թ.  
և 25 օր. 1983 թ.) այդ օրերը սովորեցին: Ուստի 1892 թ. բարելավանի քրեւը:

Խուրելիք առ այժմ թուում ենք մեր մասնացոյց արած հաստատու-  
թիւնները, որք են. Ապահանի, Արագայի, Ապարայի, Ապամատի, Հափթուանի, Փայաջուկի,  
Ղալսարի, Ըրառիլի և Խոսրովի հայ զարոցներան, Թէհրանի, Թափֆիլի, Թաշոի  
Հայոց ընթերցարանների, Աւրմոյ քաղաքի Նախիջևան կոչուած գիւղի դպրոցին:

Մնացեալ Խուրելիք սրինակների ցուցակը կը գետեղենք յաջորդ գորում:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**«ԱՐԱՐԱՏ»** կրօնական, բարոյական, պատմական, բանասիրա-  
կան և ազգային ամսագիր: Իլ: տարի: Տարեկան բաժանորդագինն է  
4 ուուրլ Հասցէն. Էշմակին: Վերականգնուած ամսագիր ամսագիր ամսագիր:

**«ՃԱՂԻԿ»** շաբաթաթերթ ազգային, գրական և քաղաքա-  
կան: Տարեկան բաժանորդագինն է 5 ուուրլի, Եւրոպիոյ Համար  
12 ֆրանկ, Կմերիկայի համար 3 դոլար: Հասցէն. Constantinople.  
M-r Hovnan Palacachian, Directeur du journal arménien «DZAGHIK».

**«ՀԱՆԴԵՍ ԱՍՍՈՐԵԱՅ»** բարոյական, ուսումնական և ա-  
րուեստգիտական ամսագիր: Իլ: տարի: Տարեկան բաժանորդագինն է  
10 ֆր. ոսկի=4 ուուրլի, իւրաքանչիւր թիւը արժէ 50 կոպէկ:  
VIENNE (Австрия). A la Rédaction de la Revue «HANTESS» VII<sub>2</sub>  
Mechitharistengasse, 4.

**«ՃԱՒԻՒՂԻ»** ազգային, գրականական և քաղաքական շաբաթա-  
թերթ: Ալ: տարի: Տարեկան բաժանորդագինն է Պարսկաստանում  
1 թուման, արտասահման 8 ֆրանք կամ 3 ռ.: Հասցէն. Téhéran  
(Персия). Rédaction du journal arménien «CHAVIGH».

**«ARA»** A journal of literature. And of Armenian politics and  
history. Edited and published by J. D. MELIK BEGLAR. For 12 Issues...  
Rupees 3 8, Post free DACCA, Bengal India

«Վարաքս»-ի տառերով ընդունում ենք տպագրելու զանազան  
պատուէրներ: «Վարաքս»ի 16 երեսի չափով ամեն մի տպագրական  
թերթի սոսկ շարուածքի վճարն է 22 ուուրլի, իսկ տպագրութեանը՝  
մինչև 2000 օր. 6 ռ. նոյնպէս մեզ մօտ տպագրուած Ո. Պատկանեանի  
երկասիրութիւնների գիրը վճարը թերթի շարուածքը արժէ 16 ռ. թէն  
մենք այդ գիրը անհամեմատ աւելի արժան գնով ենք տպագրած:

«Гюльбен»-ի Խոմբագրատանը վաճառվումէ մեր նկարիչու Գրիգոր Պարբելեանցի իւղաներկ խիստ փոքրադիր նկարը՝ Գիւլյուշի+ Հարուստան+ անէլիս Աշտարակի սուրբուուն, որի արտատիպ օրինակը զետեղած էինք «Гюльбен»-ի 1892 թ. գրքի գեղարուեստական բաժ-նում: Գիւնն է 50 ռուբլի:

Ու աճառվումէ Ու աղարշապատում՝ մեր լուսանկարչական գործարանում «Հարուստան+ Հայութինեաց» վերնագրով ճոխ այլընմերը: Խւրագանչիւր այլընմը բաղկանում է մօտաւորապէս հայկական զանազան քսան տեսարաններից մեծագիր գիրքով իրենց բացատրութիւններով և պատմական տեղեկութիւններով հանդերձ: Ո՞ինչև այժմ պատրաստած ենք վեց հատոր, իւրաքանչիւրի գիւնն է 10 ռուբլի: Ու երջին հաւաքածուն, որ պատրաստած ենք «Ի յէշտառի հայութիւնիկան համայնքային ընդունութիւն» 1892 թ., հային 3—5 ներկայացնումէ 20 մեծագիր լուսանկարներից... Զմիածինը և իւր շընակայրը: Ո՞եր հասցէն՝ Ո. Լ. Զմիածին. Ո՞ատթէոս Փափազեանց:



Персидские ковры, турецкая мебель, портьеры, халаты, бурки, и. т. д.  
Принимаются заказы на всѣ вышивки въ Средне-Азіатскомъ стилѣ,  
и на отдѣлку мужскихъ и дамскихъ қабинетовъ въ Персидскомъ,  
Кавказскомъ, Турецкомъ и Мавританскомъ вкусѣ.



ՀԱՅԿԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

— 100 20 —





Ա. ՄԵՍՐՈՊ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ Ա. ԹՈՎՄԱՅ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆԲՆ

Ա. ՄԵՏՐՈՊ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԵԿԵՂԵՑԻՆ, որի սեղանի բեմի տակ հանգչում են ոսկեզարու մեծ վարդապետի ոսկրները, գանվում է ո. Էջմիածնուց մի ժամհեռաւորութեան վերայ, վանքապատկան Օշական գիւղում:

Այս տաճարը կառուցանում է Վահան Ամսառունի հազարապետը «Ե պատրի-նատու-ց Տարծոյ առ-քի Հարդադեպին»: Երկար դարերի ընթացքում տաճարի նախկին շինութիւնը խախտը վում է, որի նորոգութեանը 1639 թուին ձեռնարկում է երջանկայիշատակ Փիլիպպոս կաթողիկոսը: Այնուհետև Գէորգ Դ. մեծագործ կաթողիկոսը, տեսնելով այս նուիրական տաճարի խարիսուլ վեճակը, որ վերաշնուրութիւնից յետոյ բոլորած էր 230 տարի, ձեռնարկում է հիմնովին վերանորոգելու այս սրբազն վայրի շինութիւնը: Ուստի հիմքից քանզելով, հնի աեղ կառուցանում է նորը բոլորովին նոր ձեր ճարտարապետութեամբ, ինչպէս որ ներկայացնում է մեր նկարը, որը պատաստած ենք պ. Մատթէոս Փափազեանի լուսանկարից:

Ա.գուլիս աւանում; որ գանվում է Երեանի նահանգի Նախիջեան զաւառում; կան 11 հկեղեցիներ, որոնց մէջ ամենից նշանաւորը ո. Թոմէս առաքէլույ Հանգն է, որը ըստ աւանդութեան Հայաստանի առաջին լուսաւորիչ Բարթուղիմէոսի շինած, որտեղ և նա թողած է իր Կումսի աշակերտին՝ իբրև յաջորդ իր առաքելական թեմի համար: Ինչպէս պատմում է մեր

Եկեղեցական Պատմութիւնը, Կումսից շարունակուեց առաքելական անընդհատ յաջորդութիւնը Մեծ և Փոքր Հայաստանում՝ թէ հալածանքների տակ, մինչեւ Հայաստանի կրկին Լուսաւորութիւնը ո. Գրիգորի ձեռքով. այս հանգամանքը առանձին նշանակութիւն է տուել Գողթան գաւառին իր Ապօւլիս զլիսաւոր քաղաքով, և այդ առաքելական նույիրագրութեան վերայ հիմնուելով՝ Գողթան գաւառը գարձաւ մի առանձին եպիսկոպոսական աթոռ, որ նախնի Հայաստանի 4 նախտահապիսկոպոսութիւնների շարքում պատուաւոր տեղ ունէր: Վանքի առաջին շինութեան և բնակութեան հանգամանքները յայտնի չեն մեր մատենազիրներից. իսկ արձանագրութիւնները վանքի նորոգութեան ժամանակներիցն են մնացել: Նոցանից նշանաւորը և Հնագոյնը (1694 թուից) եկեղեցու մեծ զրան ձակատին քանդակածն է. այսաեղ տեսնում էք Փրկչին Յարութիւնից ուժ օր յետոյ իր 11 աշակերտներին երեալիս և չը հաւատացող Թովմասի ձեռքով իր ծակուած կողքը շշափել տալիս (Յովհ. Աւետարան, ի. 26—29): Իսկ արձանագրութիւնը, որի պարունակութիւնը անշուշտ հնութեան կնիք է կրում, յայտարարում է, որ Կումսիի վիճակին է յանձնում Գողթան գաւառի ամբողջ հօտը, Աղուլիսը և իւր զաշտերը, Ցղնու և Ռամիս աւաները, և գիւղերը՝ Բուստ, Փառակա, Բուհրուտ, Տեղի, Շրջու և Մասրեան, Աղաշեցիկ, Դաստակ, Վանանդ, Տրունիս, Տնակերտ, Օբովանիս, Քաղաքիկ, «Անապատն հանդամիջայ, Վեռն» (Պ Գետացիկ, Գեղերեցիկ, Նունիս, Որդվատ): Արձանագրութիւնը՝ իբրև հաստատութիւն այդ իրողութեան՝ վերջում աւելացնում է, որ ինքը Լուսաւորիչ իր ձեռնագրով հաստատել է Բարգուղիմէոս առաքեալի այդ Շնոնուը վիճակը 305 թուականին: Երեի այս ամենը արձանագրուած պահպան էին ի վաղուց անտի վանքի գաւաղանագիրներում, ինչպէս այդ վկայում Սիւնեաց Պատմիչը՝ Ա. Օրբէլեան, որից վերցրած պէտք է լինեն նորոգողները և մոցրած իրենց արձանագրութեանն մէջ:



Тип. зд. Гоппе.

Օհովմայ Առաքելոյ Վանքը Վգուիսում.  
Մ. Փափազեանցի Լուսանկարից.

Монастырь Св. апостола Фомы въ Акулисѣ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

ՀՐ-Դ. «ԱՐ-Դ» ՀԱՆՐԵՖ

Изд. лим.-худ. обозр. „Аракс“.



[REDACTED]






Առագուղի հայկական խաչքարեր.  
Մ. Թադևանցի լուսանկարից.

Памятники въ Норадузѣ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.







Մի հրաշակերտ խաչքար.  
Ա. Դադիանցի ընտանկարից.

Армянский надгробный памятник.

Автотипия Ангерера въ Вѣнѣ.



## Ա. Ռ. Ա. Զ Ի Ն

ՏՊԱԻՈՒԹՈՒԹԻՒՆԵՐՍ

Ակսուեց վերջին ստուգումնն: Այս ստուգումից յետոյ բրոնատունները փակվում էին խւրաքանչեւրը առանձին փականքով և կալանաւորները մինչև լուսաբացը մնում էին փակուած:

Ստուգումը կատարում էր ենթասպան երկու զինուորի հետ: Մորա համար կալանաւորներին կարգով շարում էին երբեմն բազում և զալիս էր պահապան սպան: Բայց այս արարողութիւնը աւելի յաճախ կատարվում էր տնային ձեռով ստուգում էին բռնատունները մի առ մի: Սյժմ էլ այսպէս եղաւ: Մտուցողները յաճախ սխալվում էին, պակաս էին հաշվում, հեռանում էին և նորից վերադառնում: Վերջապէս խեղճ պահապանները հաշուեցին պրծան մինչև ցանկացած թիւը և կողպեցին բռնատունը: Նորանում տեղաւորվում էին երեսնի չափ կալանաւոր, որոնք բաւական սեղմ վէր էին թափուած թախտի վերայ: Դեռ վաղ էր քննելը: Խւրաքանչեւրը պարզ է, որ պէտք է մի որ և է բանով զբաղուէր:

Իշխանութեան կողմից բռնատանը մնում էր միայն ծեր զինուորը, որի մասին ևս արգէն առաջ յիշել եմ: Ամեն մի բռնատանը նշյնպէս կար կալանաւորներից մի աւագը, որին ինքը պլաց-մայեօրն էր նշանակում և ի հարկէ լաւ վարքի համար: Նաև յաճախ պատահում էր, որ աւագներն էլ բըռնը վում էր ստուգում էին բաւական ծանր չարութիւնների մէջ: այն ժամանակ նոցա ծեծում էին, իսկոյն պատիկների կարգն էին ձգում և տեղները ուրիշներին նշանակում: Բանից գուրս եկաւ, որ մեր բռնատան մեծը Ակիմ Ակիմիչն է, որը ի զարմանս իմ յաճախ գոռդոռում էր կալանաւորների վերայ: Կալա-

նաւորները սովորաբար պատասխանում էին ծաղըներով։ Ծեր զինուորը նրանից ինելք էր և ոչ մի բանի մէջ չէր խառնը-վում, իսկ եթէ պատահում էլ էր, որ երբեմն բերան էր բաց անում, այն էլ աւելի քաղաքավարութիւնից, խղճի մաք-րութեան համար։ Նա լուռ նստած էր իւր մահակալի վե-րայ և կօշեկ էր կարում։ Կալանաւորները համարեա ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում վերան։

Բանտային կեանքիս այս առաջին օրը ես մի դիտողու-թիւն արեցի ու յետոյ էլ համազուեցի, որ այդ ճիշտ էր։ Այսինքն, որ բոլոր ոչ-կալանաւորները՝ ով և լինէին, սկսած կալանաւորների հետ հէնց անմիջական կապ ունեցողներից, ինչպէս ձիաւոր պահնորդները, պահապան զինուորները, մի խօսքով բոլորը ընդհանրապէս, որոնք գոնէ մի որ և է զործ ունէին տաժանակիր կեանքի հետ, մի տեսակ չափազանցրած են նայում կալանաւորների վերայ։ Կարծես ամեն մի վայր-կեան անհանդստութեամբ սպասում են, որ կալանաւորը հի-մա որտեղ որ է կը յարձակուի նոցանից մէկի վերայ դա-նակը ձեռքին։ Բայց ամենից նշանաւորը այն է, որ իրենք կալանաւորները հասկանում էին, որ իրենցից վախենում են և այդ մի տեսակ սիրո էր տալիս նոցա։ Մինչդեռ կալանա-ւորների համար ամենալաւ մեծաւորը նա է, որը նոցանից չէ վախենում։ Եւ առհասարակ, չը նայելով սրտոտութեանը, կա-լանաւորներին շատ աւելի հաճելի է, երբ հաւատ են ընծա-յում նոցա։ Սորանով կարելի է մինչեւ անդամ զրաւել նոցա։ Թէպէտ և շատ հազիւ, բայց պատահում էր, իմ բանտում եղած ժամանակ, որ մեծաւորներից մէկը բանտն էր մտնում առանց պահնորդի։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ ազգում էր կալանաւորների վերայ և այն էլ լաւ կողմից։ Այդպիսի մի աներկիւղ այցելուն միշտ յարգանք էր յարուցանում գէ-պի ինքը և եթէ մինչեւ անդամ, իրօք, մի որ և է վատ բան պատահելու լինէր, նրա ժամանակը չէր պատահի։ Կալանա-ւորի ազգած վախը ամենուրեք է, ուր նոքա կան, և չզի-տեմ, ձշմարիտ, ինչիցն է այդ իսկապէս յառաջանում։ Դա ի հարկէ ունի մի փոքր հիմք, սկսած հէնց աւաղակ ճանա-

ըռած կալանաւորի արտաքին տեսքից բացի այդ, տաժանակիր բանտին մօտեցող ամեն մէկը զգում է, որ մարդկանց այդ ամբողջ կոյար իր ցանկութեամբ չէ ժողովուած այս-տեղ և ինչ միջոց էլ գործ դրուի, հօ չի կարելի կեն-դանի մարդուն դիակ դարձնել: Նորա մէջ վառ կը ման ըդ-գացմունքները, վը էմիսնդրութեան և կեանքի ծարաւը, կը ք-քերը և նոցա յագուրդ տալու պահանջները: Բայց այնու-ամենայնիւ ևս հաստատ հաւատացած եմ, որ կալանաւոր-ներից վախենալու բան չկայ: Այնքան էլ հեշտ և այն-քան էլ շուտ չէ յարձակվում մարդ դանակով մի ուրիշ մարդու վերայ: Մի խօսքով, եթէ վտանգը կարող է պատա-հել և եթէ նա երբ և իցէ պատահում է, ատրա և այդպիսի դժբաղդ դէպքերի սակաւութեանը նայելով, կարելի է ուղղա-կի եղբակացնել, որ այդ չնչին մի բան է: Ի հարկէ իմ խօսքս միայն գործը վճռուած կալանաւորների մասին է, որոնցից շատերը մինչև անգամ ուրախ են, որ վերջապէս բանտն են ձգել իրենց (այնքան լաւ է լինում երեմն նոր կեանքը), և հետեւաբար տրամադրուած են հանգիստ ու խաղաղ աւպելու և բացի այդ, իրենց միջի հէնց իսկապէս չարերին էլ շատ չեն թոյլ տալիս երես առնել: Իւրաքանչիւր մի տաժանակիր, որքան էլ նա համարձակ և յանդուզն լինի, բանտում ամեն բանից վախենում է: Դատապարտեալ կալանաւորի բանն ու-րիշ է: Սա ճշմարիտ որ ընդունակ է յարձակուելու կողմնա-կի մարդու վերայ հէնց այնպէս, առանց որ և է պատճառի, օրինակ՝ միայն նորա համար, որ նա վաղը պատժի է են-թարկուելու. բայց եթէ մի նոր բան մէջ կը նկնի, հետեւա-պէս և պատիժը կը ետաձգուի: Այստեղ մի պատճառ կայ, յարձակման նպատակն է փոխել իւր բազդը ինչպէս էլ որ լինի և որքան կարելի է շուտ: Ես մինչև անգամ գիտեմ մի այս տեսակ օտարօտի հոգեբանական դիակուած:

Մեր բանաի զինուորական բամնում մի կալանաւոր կար զինուորներից, որը զօկուած չէր կայքի իւրաւունքներից. դա երկու տարով ուղարկուած էր բանտ դատարանի վճռով: Սար սափելի ցանցառ և սաստիկ վախկոտ էր: Բնդհանրապէս ցան-

յանցառութիւնը և վախկոտութիւնը ռուս զինուորի մէջ շատ սակաւ են պատահում: Մեր զինուորի դէմքը միշտ այն-պիսի մի զբաղուած արայայտութիւն ունի, որ եթէ նո ցանկանար էլ ժամանակ չէր ունենայ յանցառութիւններ անելու: Բայց եթէ նա արդէն յանցառ է, դրեթէ միշտ ան-գործ է և երկչու: Դուտովը (կալանաւորի ազգանունը) լը-րացը վերջապէս իւր կարծ սայմանաժամը և նորից ան-ցաւ պատերազմող գումարտակը: Բայց որովհեաև բոլոր նորա նմանները, որոնք բանտն են ուղարկվում ուղղուելու համար, այնտեղ վերջնականապէս երես են առնում, ուստի սովորա-բար այնպէս է պատահում, որ նորա շատ-շատ մի երկու-երեք շաբաթ ազատութեան մէջ ֆալով նորից դատաստանի տակ են ընկնում և վերագանում են բանտը. բայց արդէն ոչ թէ երկու կամ երեք տարով, այլ տասն ու հինգ կամ քսան տարով մշտականների բաժնում: Այդպէս էլ եղաւ: Բանտից դուրս գալուց մի երեք շաբաթ անց Դուտովը գողութիւն էր արել փականը կոտրելով: Բայց այդ նա անկարդութիւն և լրութիւն էր արել. նորան դատի մատնեցին: Առաջեկայ պատժից չափից դուրս, վերին աստիճանի վախեցած, ինչ պէս մի ամենաթշուառ վախկոտ, նա նախընթաց օրը այն օրուայ, երբ պէտք է նորան ձիպոտների տակով անցկաց-նէին, յարձակուել էր դանակով կալանաւորների սենեակը մտնող պահնորդ սպայի վերայ: 'Ի հարկէ, նա շատ լաւ էր հասկանում, որ այդպիսի մի արարմունքով սասարիկ կը խրս-տայնի իւր գատավծիուը և տաժանակիր աշխատանքի պայ-մանաժամը, Բայց հէնց նրանումն էր հաշիւը, որ գէթ մի քանի օրով, մի քանի ժամով հեռացնի պատժի սարսափելի բոպէն: Նա այնքան վախկոտ էր, որ դանակով յարձակուե-լով սպայի վերայ, մինչև անգամ չէր վերաւորել նորան, այլ բոլորը ձեւ համար էր արել միայն նորա համար, որ մի նոր յանցանը դուրս գայ, որի համար նորան նորից սկսէին գատել:

Պատժի նախընթաց բոպէն 'ի հարկէ սարսափելի է գա-տապարտեալի համար և մի քանի տարուայ ընթացքում ես ա-ռիթ եմ ունեցել տեսնել բաւականի գատապարտեալներ, նոցա

օրհասի առւր նախընթաց օրը: Սովորաբար ես պատահում էի դասապարտուած կալանաւորներին հիւանդանոյում կալանաւորների կացարաններում, երբ պարկոծ էին լինում հիւանդ, որը բաւական յաճախ էր պատահում: Ամբողջ Խուսաստանում բոլոր կալանաւորներին յայտնի է, որ նոցա համար ամենազմոտ մարդիկը բժիշկներն են: Նրանք երբէք խարութիւն չեն դնում կալանաւորների մէջ, ինչպէս այդ յակամայից անում են դրսի մարդիկ, բացի զրեթէ միայն հասարակ ժողովրդից: Նա երբէք չէ մեղադրում կալանաւորին նորա յանցանքի համար, որքան էլ այդ սարսափելի լինի և ամեն բան ներում է նորան նորա կրած պատժի և առհասարակ թշուառութեան համար: Ի զուր չէ, որ ամբողջ Խուսիայում ժողովուրդը ոճիրը թշուառութիւն է կոչում, իսկ ոճրագործներին—թշուառականներ: Դա խորիմաստ սահմանումն է և կարեոր է մանաւանդ, որ անդիտակցաբար, բնազբմամբ է եղել: Իսկ բժիշկները, շատ գէպքերում ճշմարիտ ասլաստան են կալանաւորների համար, մանաւանդ գատապարտեալների որոնք աւելի խստութեամբ են պահպանվում, քան զործը վճռուածները: Եւ ահա գատապարտեալը հաշուելով իւր համար սարսափելի օրուան հաւանական պայմանաժամը, յաճախ հիւանդանոց է զնում, կամենալով գէթ փոքր ինչ հեռացնել ծանր ըոսպէս: Իսկ երբ նա նորից գուրս է զալիս, համարեա Ճիշտ իմանալով, որ օրհասական ժամը վաղն է, զրեթէ միշտ սաստիկ անհանդստութեան մէջ է լինում: Շտերը աշխատում են ծածկել իւրեանց զգացմունքները ինքնասիրութիւնից զրգուած, բայց անյարմար, կեղծ քաջասրառութիւնը չէ խարում նոցա ընկերներին: Բոլորը հասկանում են բանի էութիւնը և լոռում են մարդասիրաբար: Ես ծանաչում էի մի կալանաւոր երիտասարդ, որը զինուոր էր, մարդասպան և գատապարտուած ճիպոտների մի շարք հարուածներին: Նա այնքան էր վախեցել, որ պատժի նախընթաց օրը վճռեց խմել մի անօթ զինի, խառնելով նրա մէջ քթախոտ: Ի գէպ ասել, զինին միշտ լուս է ընկնում գատապարտուած կալանաւորի մօտ պատժից առաջ:

Նո բերվում է գեռ ժամանակից շատ առաջ, ձեռք է բերվում մեծ գումարով և զատապարտեալը աւելի շուտ կղոկի իրեն կէս տարով ամենաանհրաժեշտ բաներից, միայն թէ ժողովէ հարկաւոր գումարը  $\frac{1}{4}$  շոփ զինիի համար, որ խմէ այն՝ պատժից քառորդ ժամ առաջ: Առհասարակ կալանաւորների մէջ գոյութիւն ունի մի համոզմունք, որ գլուխը տաքացած մարդը այնքան ցաւ չի զգում մտրակի կամ փայտի հարուածներից: Բայց ես հեռացայ պատմութիւնից: Խեղծ տղան խմելով իւր մի կում զինին՝ ճիշտ որ՝ իսկցին հիւանդացաւ, նա սկսեց արիւն փսխել, և նրան տարան հիւանդանոց համարեա ուշագնաց: Եյդ ցաւը այն աստիճան խանդարեց նրա կուրծքը, որ մի քանի օրից յետոյ այնտեղ երեցան խսկական թոքախտի նշաններ, որից մեռաւ կէս տարուց յետոյ: Եյն բժիշկները, որոնք բժշկում էին նրան թոքախտից, չգիտէին թէ ինչեցն էր դա յառաջացել:

Բայց պատմելով յանցաւորների պատժից առաջ յաճախ պատահող փոքրողութեան մասին, ես պէտք է աւելացնեմ, որ միքանիսը նրանցից, ընդհակառակը, զարմացնում են դիտողին արտասովսր աներկիւղութեամբ: Ես յիշում եմ մի քանի օրինակներ քաջութեան, որը մի տեսակ անդպայութեան էր հասնում և այդ օրինակները քիչ չէին պատահում: Մանաւանդ յիշում եմ իմ հանդիպումը մի սարսափելի կալանաւորի հետ: Մի ամառային օր կալանաւորների կացարաններում լուր տարածուեցաւ, որ երեկոյեան պէտք է պատժեն հոչակաւոր աւազակ Օրլովին, որ փախստական զինուորներից էր և պատժից յետոյ կրքերեն կացարան: Տիւանդ կալանաւորները Օրլովին սպասելիս, պնդում էին, որ նրան խիստ կըպատժեն: Բոլորը մի տեսակ իրարանցման մէջ էին և ես էլ, խոստովանում եմ, նոյնպէս սպասում էի հոչակաւոր աւազակի երեալուն սաստիկ հետաքրքրութեամբ: Վաղուց է որ ես նրա մասին հրաշըներ էի լսել: Դա մի չարագործ էր, որի նմանը քչերը կդտնուին, դա մորթում էր սառնասրառւթեամբ և ծերերին, և մանուկներին, մի մարդ, որ ունիր կամքի սարսափելի ցժ և հպարտ զիտակցութիւն իւր այդ

ուժի: Նա մեղադրուած էր շատ սպանութեանց մէջ և դա-  
տապարտուած էր կանաչ ճիպոտների հարուածներին: Նո-  
րան արդէն երեկոյեան բերեցին: Կալանաւորների բնակա-  
րանում մութն ընկաւ և ճրագները վառեցին: Օրլովը հա-  
մարեա ուշագնաց էր, սարսափելի գունատ, խիտ, գձառուած  
ու սաթի պէս մաղերով: Նորա մէջքը ուռած էր ճիպոտ-  
ների հարուածներից և արիւնային—կապոյա գոյն ունէր:  
Ամբողջ գիշերը կալանաւորները նայում էին նորան, ջուրն  
էին փոխում, մի կողքից միւս կողքն էին դարձնում; գեղ-  
էին տալիս, կարծես հոդ տանելիս լինէին արիւնակից ազ-  
գականի կամ իրենց մի որ և է բարերարի համար: Միւս օրը  
նա կատարելապէս ուշքի եկաւ և մի երկու անգամ ման ե-  
կաւ բնակարանների մէջ: Եյդ բանը ինձ զարմացրեց: Նա  
հիւանդանոց մտաւ չափից գուրս թոյլ և տանջուած: Նա  
միանգամից ընդունել էր իւր համար որոշուած ճիպոտ  
ների հարուածների ամբողջ թուի կէսը: Բժիշկը դադարեց-  
նել էր տուել միայն այն ժամանակ, երբ նկատել էր, որ  
պատժի աւելի շարունակութիւնը անխուսափելի մահ էր,  
սպառնում յանցաւորին: Բայցի այդ Օրլովը կարծահասակ  
էր, թոյլ կաղմուածքի տէր և հալեց ընկած դատի եր-  
կար ենթարկուած լինելուց: Ով երբ և իցէ առիթ է ու-  
նեցել հանդիպելու դատի ենթարկուած կալանաւորներին,  
նա հաւանականորէն երկար ժամանակ մոռացած չի լինի  
նոցա տանջուած, նիշար ու գունատ գէմքերը, տենդոտ  
հայեցքները: Զընայելով դորան՝ Օրլովը շուտով առողջացաւ:  
Հստ երեսութիւն նորա ներքին, հոգեկան եռանդը խիստ օդ-  
նում էր բնաւորութեանը: Յիրաւի դա ոչ բոլորովին սովո-  
րական մարդ էր: Տեսաբը բութիւնից ես մօտ ծանօթա-  
ցայ նորա հետ և ամբողջ շաբաթ ուսումնասիրում էի նո-  
րան: Դրականապէս կարող եմ ասել. որ կեանքումս երբէք  
ես չեմ պատահել աւելի զօրեղ, աւելի երկաթի բնաւորու-  
թեան տէր մարդու, քան թէ նա էր: Ես արդէն մի անգամ  
ծօբուսկում տեսել եմ այդպիսի մի հռչակաւոր մարդ՝ աւա-  
ղակների մի նախկին գլխաւոր: Նա կատարեալ վայրենի

գաղան էր. և դուք նորա մօտ կանգնած լինելով, դեռ ա-  
նունը չը լսած, բնազգմամբ արդէն կրնախաղպայիք, որ ձեզ մօտ  
մի զարհուրելի արարած է գտնվում: Բայց նորա մէջ ինձ  
սարսափեցնումէր հոգեկան անզգայութիւնը: Կիրքը այն աս-  
աիճան գերազանցել էր նորա բոլոր հոգեկան յատկութիւն-  
ներից, որ դուք առաջին հայեացքից, նորա գէմքից կրտսե-  
նէիք, որ այդտեղ մնացել է մարմնաւոր բաւականութեանց  
միայն մի վայրէնի ծարաւ, ծարաւ մեղիութեան, մարմնա-  
հաճութեան: Ես հաւատացած եմ, որ Կօրինեւը (աւագա-  
կի անունը այգալէս էր) մինչեւ անգամ կը վերաւորէր և  
կրգողար վախից պատժի առաջ, չնայելով որ նա ընդու-  
նակ էր մորթելու մինչեւ անգամ առանց այլայլուելու: Նորա  
բոլորովին հակապատկերն էր ներկայացնում Օրլովը: Դա  
ներկայացնում էր յայտնապէս կատարեալ յաղթանակ մարմնի  
վերայ: Երեսում էր, որ այդ մարդը կարող էր անսահման  
տիրապետել իրեն, արհամարհում էր ամեն շարչարանք և  
պատիժ և ոչնչեց չէր վախենում աշխարհում: Նորա մէջ  
դուք տեսնում էք միմիայն անվերջ եռանդ, գործունէու-  
թեան ծարաւ, վրէժինդրութեան ծարաւ, նախազծած նր-  
պատակին համնելու ծարաւ: Ի միջի այլոց ես զարմացած  
էի նորա տարօրինակ գոռողութեան վերայ: Նա ամեն բանի  
վերայ էլ մի տեսակ չափազանցութեան հասցրած բարձրից  
էր նայում, բայց և երբէք ջանք չէր գործ ածում ուռել  
ու փքուել այլ դա, մի տեսակ ընականաբար էր: Ես  
կարծում եմ, չը կար աշխարհիս վերայ մի արարած, որ կարողա-  
նար ներգործել նորա վերայ միմիայն հեղինակութեամբ: Ամեն  
բանի վերայ նա նայում էր մի տեսակ անսպասելի անդորրու-  
թեամբ, կարծես չըլինէր աշխարհիս վերայ մի բան, որ կարողա-  
նար զարմացնել նորան: Եւ թէե նա լաւ հասկանում էր,  
որ միւս կալանատւորները յարգանքով են նայում նորա վերայ,  
բայց իրեն խսկի բարձր չէր պահում նոցա մօտ: Մինչ-  
դեռ սնափառութիւնը և մեծամտութիւնը յատուկ են հա-  
մարեա բոլոր կալանատւորներին առանց բայցառութեան: Նա  
բաւական խելօք էր և մի տեսակ տարօրինակ բայցասիրտ, թե-

պէտ և կրբէք շատախօս չէր: Իմ հարցերին նա ուղղակի պատասխանեց, որ սպասում է առողջանալուն, որպէս զի շուտով անցնի և մնացած պատիժը և որ նա սկզբից, պատժից առաջ վախենում էր, որ չի կարողանայ տանել այն, «բայց այժմ, աւելացրեց նա, աչքով անելով ինձ, բանը վերջացած է. կընդունեմ մնացած հարուածները և իսկոյն կուղարկեն խմբի հետ ներչենսկ, իսկ ես ճանապարհից կփախչես, անշուշտ կփախչեմ, այս, միսյն թէ շուտով մէջքս լաւանար: Եւ այդ բոլոր հինգ օրը նա անհամբեր սպասում էր, թէ երբ կարելի կլինի խնդրել հիւանդանոցից դուրս դալու: Մինչև առողջանալը նա երբեմն շատ զուարձնասէր էր և ուրախ: Ես փորձում էի խօսել նորա հետ իւր արկածների մասին: Նա միքիչ յօնքերը կիտում էր այդ հարցուփորձերիս ժամանակ, բայց միշտ սպասախանում էր անկեղծօրէն: Իսկ երբ հասկացաւ, որ ես մերձենում եմ նորա խզճին և կարողանում եմ նորան մի որ և է զզջման բերել նա նայեց ինձ վրայ մինչև այն աստիճան արհամարհանքով և գոռողութեամբ, որ կարծես թէ ես յանկարծ նորա աչքում մի ինչ որ փոքրիկ, անխելք երեխոյ դարձայ, որի հետ չի կարելի և խորհրդածել ինչպէս մեծերի հետ: Մինչև անզամբէսի ինձ մի ինչ որ ցաւակցութեան նման բան պատկերացաւ նորա գէմքի վերայ: Մի բոպէից յետոյ նա սկսեց ծիծաղալ ինձ վրայ պարզասիրտ ծիծաղով, առանց որ և է նութեան և ես հաւատացած եմ, որ մնալով մենակ, և յիշելով իմ խօսքերս կարելի է մի քանի անզամ սկսել էր ինքն իրեն ծիծաղալ ինձ վերայ: Վերջապէս նա արձակուեցաւ գեռոչ բոլորովին առողջացած մէջքով, և նոյնպէս զնացի այս անգամ արձակուելու թուղթ առնելու և հիւանդանոցից մեզ վեճակուեց միասին վերադառնալ ինձ դէպի բանտ, իսկ նորան դէպի բանտի մօտի թիկնապահների գունդը, ուր նա պահպանվում էր և տառաջ: Մնաս բարով տոկուց նո ձեռք տուեց ինձ և նորա կողմից այդ բարձր հաւատարմութեան նշան էր: Ես կարծում եմ նա այդ նորա համար արաւ, որովհետեւ շատ բաւական էր իրանով և ներկայ բոպէով: Իսկապէս նա չէր կարող չարհամարհել ինձ և անշուշտ պէտք է նայէր ինձ

վրայ, ինչպէս մի հնազանդուող թոյլ թշուառ և ամեն կողմից նորա առաջ ստոր արարածի վերայ: Հէնց միւս օրը նորան հանեցին կրկնակի պատժի...»

Երբ փակեցին մեր բոնատունը, սա յանկարծ ընդունեց մի առանձին տեսք՝ իսկական բնակարանի, ընտանեկան օճախի տէսք: Միայն հիմա ես կարողացայ տեսնել կալանաւորներին իմ ընկերներիս բոլորին որպէս տանը: Ցերեկը ենթասպաները, պահնորդները և առհասարակ մեծաւորները կարող են ամեն մի բոպէ գալ բանս, այդ պատճառով և բանտի բոլոր բնակիչները իրենց մի ուրիշ տեսակ են պահում: կարծես ոչ բոլորովին հանդիսա, կարծես մի տեսակ իրարանցման մէջ ամեն բոպէ մի բանի սպասելով: Բայց հէնց որ կողպեցին բոնատունը, բոլորը իսկցին հանդիսա տեղաւորուեցան ամեն մէկը իւր տեղը և գրեթէ իւրաքանչիւրը ձեռնամուխ եղաւ մի որ և է արհեստի: Քըռնատունը յանկարծ լուսաւորուեցաւ. իւրաքանչիւրը ունէր իւր մոմը և մոմակալը, մեծ մասամբ փայտեայ: Մէկը նստեց կօշեկ կարելու, մէկը մի որ և է շոր կարելու: Բոնատան ժանտահու օդը ժամից ժամ սաստկանում էր: Դատարկաշըջեկների մի խումբ մի անկիւնում թղթախաղի նստեցին վերջնիս համար սփռած խալիի առաջ: Համարեա իւրաքանչիւր բոնատանը կար այնպիսի կալանաւոր, որը պահում էր իւր մօտ մի արշինանոց մաշուած գորգի կտոր, մօմ և չափից դուրս իւրաստած թղթախաղեր: Այդ բոլորը միասին կոչվում էր «մէյդան»: Պահողը ստանում էր խաղացողներից տուրք՝ տանեսուհինդ կոպէկ մի զիշերուայ համար, գորանսվ և նա առետուր էր անում: Խտղացողները խաղում էին իրենց սովորական խաղերը: Քըռոր խաղերը վտանգաւոր խաղեր էին. ամեն մի խաղացող վեր էր թափում իւր առաջ պղնձէ փողերի մի կցյտ, բոլորը, ինչ որ կար նորա ջեբում, և վերջացնում էր թղթախաղը կամ բոլորովին տարուելով կամ ընկերներին տանելով: Խաղը զիշերուայ կիսին էր վերջանում, իսկ երբեմն մինչև լուսաբացն էր ձզվում՝ մինչեւ հէնց այն բոպէն, երբ բացվում էր բոնատունը: Մեր սկնեակում, ինչ-

պէս և բանտի բոլոր միւս բռնատներում միշտ կային աղբատներ, բայզուշներ, թղթախաղում տարուածներ, արբեցողներ, կամ հէնց այնպէս, բնութիւնից աղքատներ։ Ես ասում եմ «Բնութիւնից» և առանձնապէս շեշտում այդ գարձուածի վերայ։ Յիրաւի, ամեն տեղ, մեր աղգի մէջ, ինչ տեսակ կազմութեան մէջ էլ լինի, ինչ պայմանների մէջ էլ որ լինի, միշտ կան և կլինին միքանի տարօրինակ անձնաւորութիւններ, հեզ և յաճախ ոչ բոլորովին ծցը բայց որոնց բաղադր վեճակել է յաւիտեանս յաւիտենից աղքատ մնալ։ Նոքա միշտ «անտուն-անտէրներ» են, միշտ փնթի են, նոքա մոռացված և անբաղտացած մարդու արտայայտութիւն ունին և միշտ որ և է մէկի թևի տակեն ապրում, որև մէկի համար ծառայում են, սովորաբար գատարկապորտների կամ յանկարծակի հարստացածների և բարձրացածների ձեռքի տակ են գտնվում։ իւրաքանչիւր մի ձեռնարկութիւն, ամեն մի նախագաղափար նոցա համար հոգս է ու ծանրութիւն։ Նորանք կարծես ծնուած էլ լինին այն պայմանով, որ իրենք ոչինչ չկատեն և միայն ծառայեն, ապրին ոչ իրենց կամքով, այլ ուրիշ ծափ տալով պարեն, նոցա կոչումն է կատարել միայն ուրիշներ։ 'Ի կատարումն բոլորի, ոչ մի հանգամանք, ոչ մի յեղաշըջումն չեն կարող նորան հարստացնել։ Նորանք միշտ աղքատ են. ևս նկատել եմ, որ այդպիսի անձնաւորութիւններ լինում են ոչ միայն մի աղգի մէջ, այլ և բոլոր հասարակութեանց, գասակարգերի, կուսակցութեանց, պարբերական թերթերի, և ընկերութիւնների մէջ։ Այդպէս պատահում էր, որ ամեն մի բռնատանը, իւրաքանչիւր բանտում, հէնց որ կազմվում էր «մէյդանը», այդպիսիներից մէկը անսպատճառ լուս էր ընկնում ծառայելու։ Եւ առհասարակ, ոչ մի մէյդան չէր կարող կառավարուել առանց ծառայողի։ Նորան վարձում էին սովորաբար խաղացողները բոլորը միասին, ամբողջ գիշերով, մի շահի արծաթով, և նորա վլխաւոր պարաւականութիւնն էր ամբողջ գիշերը հսկել։ Մեծ մասամբ նա փետանում էր 6—7 ժամ մթութեան մէջ, նախասենեկում երեսուն աստիճանի ցրտում և

ականջը ձէնի պահելով իւրաքանչիւր մի թխթխոցին, իւրաքանչիւր ձայնին, ամեն մի քայլին բակում: Պլաց-մայեօրը կամ պահնորդները երբեմն գալիս էին բանտ, բաւական ուշ գիշերը ներս էին մտնում հանդարտ և տեղն ու տեղը բըռնում թէ խաղացողներին, թէ աշխատաւորներին և թէ զրաւում էին աւելորդ մոմերը որոնց կարել էր տեսնել զեռ բակից էլ: Գոնէ երբ յանկարծ զընդում էր նախասենեակի դռան կողպէքը, արգէն ուշ էր լինում թաքնուել մոմերը հանդցնել և պառկել թախտերի վերայ: Բայց որովհետեւ պահնորդ ծառայողը դորանից յետոյ լաւ քեօթակ էր ուտում «մէյլանից» այդ պատճառով և այդպիսի սխալման գէպքեր շատ սակաւ էին պատահում: Հինգ կոպէկը՝ ի հարկէ մի ծիծաղելի նշին վարձ է մինչև անդամ և՛ բանախ համար, բայց ինձ միշտ զարմացնում էր բանտուս վարձողների գաժանութիւնը և անխզութիւնը թէ այս և թէ ուրիշ բոլոր գէպքերում: «Փող ստացել ես ուրիշն, ծառայի՛ր», գա մի փաստ էր, որ չէր ընդունում ոչ մի առարկութիւն: Տուած կոպէկի համար վարձողը վերցնում էր ինչ որ կարող էր, վերցնում էր եթէ հնար է աւելի և զեռ գտնում էր, որ վարձուողին պարտաւորեցնում է: Հարբողը, քէֆ սիրողը աջ ու ձախ անհաշիւ փող շպրտողը անպատճառ իւր ծառայողի վարձից կտրում էր. և այս մի բանտում չէր, որ ես նկատեցի և ոչ «մի մէյլանի» վերայ:

Ստացի, որ բանատանը համարեա բոլորը մի մի բանի էին նստել: բացի խաղացողներից կային բոլորովին պարապ մարդիկ հինգից ոչ աւել, նոքա խիցին էլ պարկեցին քնելու: Իմ տեղս թախտերի վերայ հէնց ուղեղ գրան մօտ էր ընկնում: Թախտախ միւս կողքում զլուկը զլսիս զիմաց տեղաւորվում էր Ակիմ Ակիմիչը: Մինչև ժամի տասը կամ տասնումէկը նս բան էր անում, սոսնձում էր մի ինչ որ զանազանագոյն լապտեր, որ պատուէր էին տուել նորան քաղաքից բաւական լաւ զնով: Լապտերները վարպետութեամբ էր նա շինում, բանում էր շարունակաբար, առանց ընդհատուելու, իսկ երբ վերջացրեց աշխատանքը, մաքրասիրութեամբ հաւաքեց ա-

մեն բան, փոեց իւր մինդարը, ազօթեց Աստծուն և պարկեշտեամբ պարկեց իւր անկողնում:Պարկեշտութիւնը և կարզը նա հասցնում էր ըստ երևոյթին մինչեւ վերջին մանրակիառութեան. երեխ նա իրեն կիարծէր շափից գուրս խելօք մարդ, ինչպէս և առհասարակ բոլոր բժամիտ և սահմանափակ մարդիկ: Նա ինձ գիւր չեկաւ հէնց առաջին օրից, թէպէտ, յիշում եմ, այդ առաջին օրը ես շատ բան մտածեցի նորա մասին, և ամենից շատ զարմացայ, որ այդպիսի անձնաւորութիւնը փոխանակ կեանքի մէջ յաջողութիւն դանելու, բանտն էր ընկել: Վերջը ես քիչ առիթ չեմ ունենայ խօսելու Ակիմ Ակիմիչ մասին:

Բայց նկարագրեմ համառօտարար մեր ամբողջ բըռնատան կաղմութիւնը: Երկար տարիներ ինձ վիճակուած էր այնտեղ մնալու և այդ բոլորը իմ ապադայ կենակիցներս և ընկերներս էին: Հասկանալի է, որ ես դիտում էի նորանց անյառ՝ հետաքրքրութեամբ: Զախ կողմը իմ տեղից թախախ վերայ տեղաւորուած էր կովկասեան լեռնականների մի խումբ, որ ուղարկուած էին մէծ մասամբ գողութեան համար զանազան պայմանաժամերով: Նորանք էին. երկու լեղջի, մի չեշնցի և երեք գաղստանցի թաթարներ: Չեշնցին մի մռայլոտ և տիսուր արարած էր, համարեա ոչ որի հետ չէր խօսում և միշտ նայում էր շուրջը ատելութեամբ, բարկութեամբ և թունաւոր, ծաղրածու, չար ժպտով: Լեզգիներից մէկը արգէն ծերունի էր, երկար, բարակ, կզացած բթով ըստ երեսութիւն յայտնի աւազակ: Բայց գորա տեղ միւսը նուրրան, հէնց առաջին օրից իմ վերայ ամենաուրախալի, ամենասիրալի տպաւորութիւն արեց: Դա մի մարդ էր, գեռ ոչ ծերացած՝ միջակ հասակով, հերկուլէսի կավմուածքով, բոլորովին շէկ, բաց կապատիջն աչքերով, կեռաքիթ, չուխօնկի գէմքով և առաջուայ մշտական ձիով մանգալուց առաջացած ծռուած ոտքերով: Նորա ամբողջ մարմինը կտրատուած, վիրաւորուած էր նիզակներով և գնդակներով: Կովկասում նա խաղաղասէր էր, բայց շարունակ դնում էր ծածուկ կռուասէր լեռնեցիների մօտ և այնտեղից նոյս հետ միասին արշաւ անքներ էր

գործում նուսաց վերայ: Բանտում նորան բոլորը սիրում էին: Նա միշտ ուրախ էր, սիրալիք դէպի բոլորը, աշխատում էր անտրտունջ, հանգիստ ու պարզ թէպէտ յաճախ զոյրով էր նայում կալանաւորական կեանքի կեղտութեան և զաղըելութեան վերայ և վրդսվում էր կատաղելու չափ ամեն մի գողութիւնից և առհասարակ ամեն բանից, ինչ որ անաղնիւ էր, բայց տարաձայնութիւնների առիթ չէր տալիս, այլ միայն վրդովուած երես էր դարձնում: Նա ինքը իւր տաժանակութեան ամբողջ ընթացքում ոչ մի բան չը գողացաւ, ոչ մի վատ գործ չկատարեց, նա չափից դուրս տստուածապաշտ էր. աղօթքները կատարում էր սրբութեամբ: Մահմետականների տների նախնթաց պասերի ժամանակ պաս էր պաշում ինչպէս մի ֆանատիկոս և ամբողջ զիշերներ աղօթքի էր կանգնում: Նորան բոլորը սիրում էին և հաւատում նորա ազնվութեան. «Նուրրան առիւծէ», ասում էին կալանաւորները, այնպէս էլ նորա անունը «առիւծ» մնայ: Նա բոլորովին համողուած էր, որ բանդում որոշեալ պայմանաժամը լրանալուց յետ նորան կվերադարձնեն տուն՝ կովկաս և այդ յուսով էր միայն ապրում: Ինձ թվում էր, որ նա կմեռնէր, եթէ զրկուէր գորանից: Հենց առաջին օրը բանտում ես լաւ նկատեցի նորան: Անկարելի էր չնկատել նորա բարի, համակրելի դէմքը մնացած տաժանակիրների չար, մռայլուա և ծիծաղաշրժ դէմքերի մէջ: Իմ բանտ մտնելուս առաջին կիսաժամին նա մօտովս անցնելուց թփթփացրեց ուսերիս, բարեսիրտ ժպտով աչքերիս նայելով: Ես չկարողացայ սկզբից հասկանալ թէ ինչ էր նշանակում այդ. նա ոուսերէն շատ վատ էր խօսում: Շուտով գորանից յետ, նա նորից մօտեցաւ ինձ և նորից ժպտելով ընկերաբար զարկեց ուսիս: յետոյ կրկին ու կրկին նորից և այդպէս շարունակուեց երեք օր: Այդ նորա կողմից նշանակում էր, ինչպէս հասկացայ ես և իմացայ յետոյ, որ նորա մեղքը դալիս էր ինձ, որ նա զգում է, թէ որքան ծանրը է ինձ համար ծանօթանալ բանտի հետ, կամենում է ցցից տալ ինձ իւր ընկերութիւնը, խրախուսել ինձ և հա-

ւատացնել, որ ինքը խնամումէ ինձ: Բարի ու անմեղ նուրբա:

Դաղստանցի թաթարները երեք հոգի էին և բոլորն էլ հարազատ եղայրներ. նորանցից երկուսը արգէն հաստին առած էին, բայց երրորդը՝ Ալէյը ոչ աւել քսան երկու տարեկանից, իսկ տեսքով աւելի ջահել: Նորա տեղը թախտի վերայ իմ տեղիս կարգումն էր: Նորա գեղեցիկ, բաց, խելօք և միւնոյն ժամանակ բարեսիրտ-անմեղ գէմքը առաջին հայեացքից գէպի ինքը գրաւեց իմ սիրտս և ես այնպէս ուրախ էի որ բաղել նորան էր ուղարկել ինձ հարևան և ոչ ուրիշն: Նորա հոգին ամբողջովին արտայայտվում էր նորա սիրուն և, մինչեւ անդամ կարելի է ասել գեղեցիկ դէմքի վերայ: Նորա ժպիտը այնքան վստահ էր, այնքան պարզասիրտ երեխայական, մեծ սեօրակ աչքերը այնքան մեղմ, այնքան փաղաքշելի էին, որ ես միշտ զգում էի առանձին բաւականութիւն, մինչեւ անգամ թեթեռութիւն վշտիս և տիրութեանս նորան նայելով: Ես ասում եմ առանց չափազանցութեան: Հայրենիքում նորա մեծ եղայրը, (նա հինգ մեծ եղայր ունէր, մնացած երկուսը ընկել էին մի ինչ որ գործարան) մի անգամ հրամայեց առնել սուրը և ձիաւորուել որ միասին գնան մի ինչ որ ձանապարհորդութեան: Լեռնականների ընտանիքում յարգանքը գէպի մեծերը այնքան մեծ է, որ երեխան ոչ միայն չամարձակուեց, այլ մինչեւ անգամ և չմտածեց հարցնել ուր են նորա ուղեղորվում: Նորա էլ հարկաւոր չամարեցին յայտնել այդ նորան: Նորա բոլորը աւազակութեան էին գնում, մի հարուստ հայ վաճառականի ձանապարհը պահելու և կողոպտելու նորան. այդպէս էլ եղաւ. նորա անյան պահնորդների միջով, մորթեցին հային, և կողոպտեցին նորա ապրանքը: Բայց բանը բացուեց. նոցա վեցին էլ բըռնեցին, գատեցին, հաստատեցին յանցանքը, պատժեցին և ուղարկեցին Սիրիր տաժանակիր աշխատանքի: Ալէյի համար գատաստանի արած բոլոր զիջողութիւնը, այդ գատաստանի փոքրացրած պայմանաժամն էր. նա ուղարկուած էր չորս տարով: Եղայրները շատ էին սիրում նորան և աւելի շուտ հայրական քան եղայրական սիրով: Նա նորանց միսի-

թարութիւնն էր աքսորման մէջ և նոքա, որ սովորաբար  
մռայլոտ և տասուր էին լինում, միշտ ժպտում էին նորան  
նայելիս և երբ խօսում էին նորա հետ, (իսկ խօսում՝ էին նո-  
րա հետ շատ քիչ կարծես դեռ էլլի նորան երեխայ համա-  
րելով, որի հետ մի լուրջ խօսելու բան էլ չեն գտնում) նոցա  
խիստ գէմքերը բացվում էին և ես զուշակում էի, որ նոքա  
նորա հետ մի ինչ որ ծիծաղաշարժ, համարեա երեխայական բա-  
նի վերայ են խօսում, գոնէ նոքա միշտ իրարու էին նայում և  
բարեսրտութեամբ ծիծաղում էին, երբ պատահում էր, որ  
լսում էին նորա պատասխանը: Իսկ ինքը նա համարեա չէր  
համարձակվում նոցա հետ խօսակցութիւն սկսել. մինչեւ ուր  
էր հասնում նորա յարգանքը: Դժուար է երեւակայելլ թէ  
ինչպէս այդ երեխան իւր տաժանակրութեան ամբողջ միջո-  
ցում կարողացաւ պահպանել իւր սրտում այդպիսի մեղ-  
մութիւն, գոյացնել իւր մէջ այդպիսի խիստ ազնվութիւն,  
սրտակցութիւն, համակրելիութիւն, չկոպտացաւ և շանբա-  
րոյականացաւ: Դա ասենք զօրեղ և հաստատուն բնաւորու-  
թիւն էր, չնայելով բոլոր իւր ըստ երեսյթին մեզմութեան:  
Ես նորան լաւ ճանաչեցի վերջը: Նա կոյս էր, ինչպէս մի  
անարտա աղջիկ, և որ և է մէկի վատ, ցինիկական, կեղասոտ  
կամ անարդար, բռնի արարքը բանառում զարոյթի հուր էր  
վառում նորա գեղեցիկ աչքերի մէջ, որոնք այդ ժամա-  
նակ աւելի ևս գեղեցկանում էին: Բայց նա խուսափում էր  
կոխւներից և հայհայանքից, չնայելով որ առհասորդակ այն-  
պիսիներից չէր, որոնք թոյլ տային անպատուել իրենց տ-  
ռանց պատժի մնալու և գիտէր իրեն պաշտպանել: Բայց նա  
ոչ մէկի հետ կոխւ չէր արել. նորան բոլորը սիրում և փայ-  
փայում էին. սկզբում նա ինձ հետ միայն քաղաքավարի էր:  
Փոքր առ փոքր սկսեցի ես նորա հետ խօսել: Մի քանի ամ-  
սում նա սովորեց գեղեցիկ խօսել ուսերէն, որը չկարողա-  
ցան ձեռք բերել նորա եղբայրները իրենց տաժանակրու-  
թեան ամբողջ ընթայքում: Նա ինձ թուայ չափից դուրս  
խելօք երեխայ, չափազանց համեստ և քաղաքավարի և մին-  
չեւ անդամ շատ բանի մասին զատողութիւն տուող: Առհա-

սարակ, կ'ասեմառաջուց, ես համարում եմ Ալէյին հասարակ արարածներից շատ բարձր և յիշում եմ նորա հետ ունեցած հանդիպումն, ինչպէս ամենալաւ հանդիպումներից մէկը կեանքիս մէջ: Կան բնաւորութիւններ՝ ի բնէ այնքան գեղեցիկ, այն աստիճան օժտուած Աստուծուց, որ միայն այն միաբը, որ նրանք կարող են երբ և իցէ փոխուել դէպի վատը, մեղ անկարելի է թվում: Նոցա մասին դուք միշտ ապահով եք: Ես այժմ ել ապահով եմ Ալէյի մասին. ով գիտէ ուր է նա այժմ...»

Մի անդամ, իմ բանտն ընդունուելուցս արդէն բաւական ժամանակ յետոյ, ես պարկած էի թախտի վրայ և ինչ որ մի շատ ծանր բանի մասին էի մտածում: Ալէյը, որ միշտ բանում էր և աշխատասէր էր, այս անդամ ոչնչով զբաղուած էր, թէպէտ դեռ վաղ էր քնելու: Բայց նոցանում այդ ժամանակ մաշմեղական տօն էր և նոքա բան չէին անում: Նա պարկած էր, ձեռքերը զլիսատակին և նոյնպէս մի ինչ որ բանի մասին էր մտածում: յանկարծ նա հարցրեց ինձ.

— Է՞ս, քեզ համար հիմա շատ ծանր է: — Ես նայեցի նրան հետաքրքրութեամք և ինձ տարօրինակ թուաց Ալէյի այդ արագ շեշտակի հարցը, որը միշտ վայելուչ էր, միշտ զանազանող միշտ խելօք սրտով բայց աւելի ուշադրութեամք դիտելով, ես տեսայ նրա դէմքի վրայ այնքան վիշտ, այնքան չարչարանք՝ յիշողութիւններից յառաջացած, որ իսկոյն հասկացայ, որ հէնց իրեն համար էլ շատ ծանր էր, և այդ յատկապէս հէնց այդ բոպէին: Ես յայտնեցի նրան իմ ենթադրութիւնս: Նա հառաջեց և տխուր ժպտաց: Ես սիրում էի նրա ժպիտը, որ միշտ քնքուշ էր և անկեղծ: Բացի դրանից, ժպտալիս երեւում էին նրա երկու կարդ մարզարտաշը ատամները, որոնց գեղեցկութեանը կարող էր նախանձել աշխարհիս առաջին գեղեցկութիւն:

— Ի՞նչ է, Ալէյ, գու երեկի այս բոպէիս մտածում էիր՝ թէ ինչպէս ձեղ մօտ Դաղստանում տօնում են այդ տօնը: Երեկի այնտեղ լաւ է:

— Այս, ասաց նա հրճուանքով, և նրա աչքերը փայլեցին: — Իսկ դու ինչի՞ց զիտես, որ ես այդ բանի վերայ էի մտածում:

— Դեռ չիմանամմ էլ, — ի՞նչ է, այնտեղ այստեղից լահւ է:

— Օ, ինչի՞ ես այդ ասում...

— Ի՞նչ ծաղկներ կը լինին այժմ ձեր երկրում, որպիսի դրախտ...

— Օ՞-օխ, լաւն էն է՝ մի՛ ասա: Նա սաստիկ յուղուած էր:

— Լսի՛ ր, Ալէյ, դու քըր ունեցե՞լ ես:

— Ունեցել եմ, բայց քե՞ղ ինչ:

— Անշուշտ նա գեղեցկուհի է, եթէ նման է քեզ:

— Ի՞նչ նման է ինձ: Նա այնպիսի գեղեցկուհի է, որ ամբողջ Դաղստանումը հատը չըկայ: Ա՞խ, ինչպիսի գեղեցկուհի է քըրս: Դու նրա պէսը անսած չես լինի: Մայրս էլ գեղեցկուհի էր:

— Իսկ սիրում էր քեզ մայրդ:

— Ա՞խ, ի՞նչ ես ասում: Նա անպատճառ իմ դարդիցը կմեռնէր հիմի: Ես նրա սիրած որդին էի: Նա ինձ քրոջիցս էլ, ամենքից էլ շատ էր սիրում: Էս դիշեր երաղումս եկել էր՝ վերաս լալիս էր:

Նա լռեց և այդ երեկոյ էլ ո՛չ մի խօսք չը խօսեց: Բայց այդ ժամանակուանից նա ամեն անգամ աշխատում էր հետո խօսել թէպէտ ինքը յարգանքից, որ նա յայտնի չէ ինչի՞ համար տածում էր դէպի ինձ, երբէք առաջինը չէր խօսում: Բայց շատ ուրախանում էր, երբ ես դիմում էի նրան: Ես հարց ու փորձ էի անում նրան կովկասի, իւր առաջուայ կեանքի մասին: Եղբայրները չէին խանգարում նրան ինձ հետ խօսել և նրանց մինչեւ անգամ հաճելի էր այդ: Նրանք էլ տեսնելով, որ ես աւելի ու աւելի եմ սիրում Ալէյին, շատ աւելի քաղցրացան հետո:

Ալէյը օգնում էր ինձ բանելիս, բռնատներում՝ ինչով կարողանում էր՝ լաւութիւն էր անում ինձ, և երեսում էր, որ նրան շատ հաճելի էր զոնէ մի բանով էլ է թեթեացնել վիճակս և դիւր գալ ինձ. և նրա ինձ դիւր գալու այդ ջան-

քերի մէջ չըկար ոչ մի ստորացումն, կամ մի որ և է օդուտ  
ստանալու հակում, այլ ջերմ, ընկերական ղղացմունք, որը և  
նա չէր ծածկում ինձնից: Ի միջի այլոց նա շատ ձեռագործա-  
կան ընդունակութիւններ ուներ. նա սովորեց կարգին կարել  
սպիտակեղէններ, կարկատել կօշիկներ, և վերջը սովորեց, որ-  
քան կարող էր, ատաղձագործութիւն: Եղբայրները գոլում  
էին նրան և պարծենում նրանով:

— Լսի՛ր, Ալէյ, ասացի նրան մի անգամ, ինչի՞ համար  
դու ռասերէն զրել-կարգալ չես սովորում: զիտե՞ս՝ վերջը որ-  
քան այդ պէտք կը գայ քեղ այստեղ՝ Սիրիրումը:

— Շատ եմ ռւզում, բայց ուժնից սովորեմ:

— Քիչ կան այստեղ զիր իմացողներ: Ռւզումես, ես քեղ  
կըսովորեցնեմ:

— Ա՛խ, սովորեցրո՞ւ, խնդրում եմ, և նա մինչև անգամ  
մի քիչ վեր կացաւ թախտի վրայ և աղերսանքով ձեռները  
ծալեց, վրաս նայելով:

Մենք սկսեցինք հէնց միւս երեկոյից: Մօտս կար նոր  
կտակարանի ռասերէն թարգմանութիւնը, մի զիրք՝ որ ար-  
գելուած չէր բանառում: Առանց այբբէնարանի, միայն այդ գրո-  
բով, Ալէյը մի քանի շաբաթում հիանալի կարգալ սովո-  
րեց: Երեք ամիս անց՝ նա արդէն բոլորովին հասկանում էր  
գրաւոր լեզուն: Նա սովորում էր հուանկով, ողեառու-  
թեամբ:

Մի օր մենք նրա հետ լեռան քարոզը կարգացինք ամ-  
բողջ: Ես նկատեցի, որ զրա մէջ նա մի քանի կտորները կար-  
ծես առանձնապէս զգացուած էր արտասանում:

Ես հարցրի թէ՝ հաւանո՞ւմ է արդեօք նա իր կարգա-  
ցածը:

Նա նայեց ինձ արագ, և կարմիր գոյնը երեսին տուեց:

— Ա՛խ, հա՛, պատասխանեց նա, հա՛,—իսան սուրբ մար-  
գարէ է, իսան Աստուծոյ խօսքերն էր ասում: Ի՞նչ լաւ է:

— Իսկ ի՞նձն է քեղ ամենից աւելի զիւր զալիս:

— Ա՛յ, որտեղ նա ասում է. ների՛ր, սիրի՛ր, մի՛ զրկիր,  
թշնամիների՛դ էլ սիրիր: Ա՛խ, ի՞նչ լաւ է նա ասում:

Նա շուռ եկաւ դէպի եղբայրները, որոնք ականջ էին գնում մեր խօսակցութեանը, և տաք-տաք սկսեց մի բան ասել նրանց: Նրանք երկար և լուրջ խօսում էին իրար մէջ և զլսով հաստատական նշաններ էին անում: Ցետոյ լուրջ-բարեհամբոյր, այսինքն իսկը մահմետականի ժպիտով (որն ես այնպէս սիրում եմ և յատկապէս սիրում եմ այդ ժպիտի լուրջիւնը) դարձան դէպի ինձ ու հաստատեցին, որ իսան Աստուծոյ մարդարէ էր և որ նա մեծ հրաշքներ է զործել: Որ նա կաւից թուզուն է շինել փշել է վերան և նա թռել է... և որ նրանց զրքերում էլ զրուած է այդ: Այս ասելով, նրանք լիովին հաւատացած էին, որ ինձ մեծ բաւականութիւն են պատճառում՝ Խսային փառաբանելով իսկ Ալէյը բոլորովին երջանիկ էր, որ իր եղբայրները վճռեցին և ցանկացան ինձ այդ բաւականութիւնը պատճառել:

Գրութիւնը նշնպէս չափազանց յաջող գնաց: Ալէյը ձեռք բերեց թուզլթ (և չըթողեց՝ որ իմ փողով գնեմ), զրիներ, թանաք և մի երկու ամսուայ մէջ հիանալի զրել սովորեց: Այդ մինչև անգամ զարմացրեց նրա եղբայրներին: Նրանց հպարտութիւնն ու գոհունակութիւնը անսահման էր: Չդիտէին՝ ինչով երախտահատոյց լինեն ինձ: Աշխատանքների ժամանակ, եթէ պատահում էր որ միասին բանենք, նրանք մէկ-մէկու եակեց օգնում էին ինձ և այդ իրենց համար երջանկութիւն էին համարում: Ել չեմ խօսում Ալէյի մասին: Նա սիրում էր ինձ, գուցէ, այնպէս, ինչպէս իւր եղբայրներին: Երբէք չեմ մոռանայ՝ ինչպէս նա գուրս էր զնում բանտից: Նա տարաւ ինձ բռնատան ետեւը և այնտեղ փաթաթուեց վզովս ու լաց եղաւ: Առաջ ոչ մի ժամանակ նա ինձ չէր համբուրել ու չէր լաց եղել. «Դու ինձ համար այնքան լաւութիւն ես արել, այնքան,» — ասում էր նա, — «որ հայրս, մայրս այդքան չէին անի ինձ համար. գու ինձ մարդ չինեցիր. Աստուած կը վարձատրի քեզ իսկ ես երբէք չեմ մոռանալ քեզ»:

Ո՞րտեղ է, ո՞րաեղ հիմա իմ բարի, սիրելի, սիրելի Ալէյս...

Բացի Զերքէզներից մեր բռնատներում կային մի ամբողջ կոյտ լեհեր, որ բոլորովին առանձին ընտանիք էին կազմում, և համարեա հաղորդակցութիւն չունէին միւս կալանաւորների հետ: Ես արդէն ասացի, որ իրենց բացառիկ դիրքի, իրենց ատելութեան պատճառով գէպի տաժանակիր ոռւսները, նրանց՝ իրենց հերթին՝ բոլորը տառում էին: Նրանք վեց հոգի էին՝ հիւանդու, տանջուած անձնաւորութիւններ: Մի քանիսը դրանցից կրթուած մարդիկ էին, նրանց մասին առանձին և մանրամասն կիսուեմ յետոյ: Դրանցից էլ ես հէնց իմ բանտային կեանքի վերջին տարիներումս վերցնում էի այլ և այլ գրքեր: Իմ կարդացած առաջին գիրքը ինձ վրայ զօրեղ օտարօտի, մի առանձին տպաւորութիւն թողեց: Այդ տպաւորութիւնների մասին ես երբ և իցէ կրխուեմ առանձին: Ինձ համար նրանք չափից դուրս հետաքրքրական են. և ես հաւատացած եմ, որ շատերին նրանք բոլորովին անհասկանալի կրլինեն: Զը փորձած չի կարելի մի քանի առարկաների մասին զատողութիւն տալ: Մի բան միայն կասեմ, որ բարոյական զրկանքները բոլոր ֆիզիքական տանջանքներից ծանր են: Տաժանակրութեան գնացող ռամիկը իւր շրջանն է գալիս, մինչև անդամ՝ կարելի է աւելի զարգացած շրջանը, քան թէ ինքը: Նա կորցրել է՝ 'ի հարկէ' շատ բան,— ծննդավայր, ընտանիք, ամեն բան, բայց նրա շրջանը նոյնն է մնում: Կրթուած մարդը, որ օրէնքով միատեսակ պատժի է ենթարկվում ռամիկի հետ, յաճախ նրանից անհամեմատ աւելի բան է կորցնում: Նա պէտք է խեղտի իւր մէջ իւր բոլոր պահանջները, բոլոր սովորութիւնները, մտնի իւր համար մի անբաւարար շրջան, պէտք է սովորի շնչելու այն օդով... Դա ջրից աւազի վրայ դուրս բերուած ձուկն է... Եւ յաճախ օրէնքով ամենի համար էլ միատեսակ պատիժը նրա համար տաննապատիկ աւելի տանջողական է զառնում: Սա ճշմարտութիւն է... մինչև իսկ եթէ բանը միայն նիւթական սովորութիւններին վիրաբերէր, որ զոհել պէտք է:

Բայց լեհերը մի զատ ամբողջական կոյտ էին կազմում: Նրանք վեց հոգի էին և միասին էին: Մեր բռնատան բոլոր

տաժանակիրներից նրանք միայն մի ջհուդի էին սիրում, և  
կարելի է հենց միայն նրա համար, որ նա նրանց զուար-  
ձացնում էր: Ասենք՝ մեր ջհուդին նոյն իսկ միւս կալա-  
նաւորներն էլ սիրում էին. թէսէտ ամբողջապէս բոլո-  
րը առանց բացառութեան ծիծաղում էին նորա վրայ:  
Նա մեզանում մի հատ էր և ես միշտ անդամ հիմա  
չեմ կարող առանց ծիծաղի յիշել նորան: Ամեն անդամ,  
երբ նայում [էի նորան, միշտ միտս էր գալիս Գոգոլի եան-  
կիլ հրէան՝ Տարաս Բուլբայից, որը շորերը հանելով, որ-  
պէս զի գիշերը իւր հրէուհու հետ մտնի մի ինչ որ պահա-  
րանի մէջ, իսկոյն խիստ նմանեցաւ հաւի ճուտի: Մեր ջհուդ  
իսակ ֆօմիշը, ինչպէս ջրի երկու կաթիլ նման էր թեփրօ-  
տած ճուտի: Դա արդէն հասակն առած մարդ էր, մօտաւո-  
րապէս յիսուն՝ տարեկան, կարծ հասակով և թուլակաղմ, խո-  
րամանկ, բայց միւնոյն ժամանակ բոլորովին յիմար: Նա յան-  
դուգնէ [էր, և մէծամիտ, և միւնոյն ժամանակ սարսափելի  
վախկոտ: Նա ամբողջովին ծածկուած էր ինչ որ կնծիռնե-  
րով. և ճակատի, և այտերի վերայ կային կնիքներ, որոնք  
դաջած էին: Էշաֆօտի վերայ: Ես երբէք չկարողացայ հաս-  
կանալ [թէ ինչպէս նա կարողացաւ տանել մտրակի վաթ-  
սուն հարուածը: Նա եկել էր այստեղ՝ մեղաղրուած լինելով  
սպանութեան մէջ: Պահած ունէր այն րեցեպտար, որ ձեռք  
էին բերել նորա համար բժշկից իւր հրէաները էշաֆօտից  
անմիջապէս յետոյ: Այդ րեցեպտով կարելի էր ստանալ այն-  
պիսի քսելու դարման, որով երկու շաբաթուայ ընթացքում  
կարող էին նորա վերայի կնիքները ծնջուել: Բունատանը նա  
չէր համարձակվում գործածել այդ դարմանը և սպասում էր  
իւր տասներկուամիայ տաժանակրութեան պայմանաժամին,  
որից յետոյ, աքսոր ուղարկուելով անշուշտ մտադիր էր  
օգտուել այդ րեցեպտից: «Եթէ ոչ անկարելի կլինի ամուս-  
նանալ, ասաց նա միանգամ ինձ, իսկ ես անպատճառ ցան-  
կանում եմ ամուսնանալ»: Մենք նորա հետ լաւ ընկերներ  
էինք. նա միշտ հոգեկան ամենալաւ տրամադրութեան մէջ  
էր լինում: Նորա համար հեշտ էր տաժանակրութեան մէջ

ապրել. ինքը արհեստով ակնագործ էր. ծանրաբեռնուած էր քաղաքից տուած պատուերներով, ուր չկար ակնագործ և այդպիսով աղատուած ծանր աշխատանքներից: 'Ի հարկէ, նա միւնքն ժամանակ և վաշխառու էր և' ամբողջ բռնատանը տոկոսով կամ զրաւներով փող էր շահով տալիս: Նա եկել էր ինձանից առաջ և լեշերից մէկը նկարագրել էր ինձ մանրամասն նորա զալուստը: Դա մի չափազանց զուարձալի պատմութիւն է, որը ես յետոյ կպատմեմ: Իսակ Ֆօմիչի մասին դեռ շատ կիսուեմ:

Մեր բռնատան մնացած հասարակութիւնը կազմուած էր չորս ռուս հին աղանգաւորներից, ծերունիներից և «ընթերցողներից», որոնց մէջ էր և մի ծերունի Ստարագուբովսկիյ արուարձանից, մի երկու-երեք մռայլոտ մալուռուսներից, մի բարակ երեսով և բարակ քթով բսան եկեք տարեկան երիտասարդ տաժանակրից, որը արդէն՝ «ութ մարդ էր սպանել, կեղծ զրամ կտրողների խմբից, որոնցից մէկը մեր ամբողջ բռնատան զուարձացնողն էր և վերջապէս մի քանի մռայլոտ և տիսուր անձնաւորութիւններից, ածելուած և այլանդակուած, անխօս և նախանձոտ մարդկանցից, որոնք ատելութեամբ էին նայում իրենց շուրջը և մտադիր են այնպէս նայել, մռայլ կերպարանք առնել, լռել և ատել գեռ երկար տարիներ, այսինքն տաժանակրութեան ամբողջ ընթացքում: Այդ բոլորը միայն հարեւանցի կերպով անցաւ առաջիցս այդ առաջին, իմ նոր կեանքիս անմիշիթար երեկոյին, երևեցաւ ծուխի և մուրի, հայհոյանքների և այդ ժանգահոտ օդի մէջ, շղթաների զնդզնգոյի, անէծքների և անամօթ քրքիջների մէջ: Ես պարկեցի լերկ թախտի վերայ, գլխատակս զնելով իմ շորերը (գեռ բարձ շունէի), ծածկուեցի մուշտակովս, բայց երկար չկարողացայ քնել, չնայելով բոլորովին տանջուած էի և ջարգուած այդ առաջին օրուայ բոլոր հրէշաւոր և անսպասելի տպաւորութիւններից, բայց նոր կեանքս գեռ նոր էր սկսվում: շատ բան էր գեռ ապագայում սպասում ինձ, որի մասին ես երբէք չէի մտածել և որը չէի էլ նախագուշակում:

## Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Ա. Մ Ի Ս Լ

---

**Ի**մ բանտ մտնելուց երեք օր յետոյ ինձ հրամայուած էր աշխատանքի գնալու։ Շատ լաւ յիշում եմ այդ աշխատանքի առաջին օրը, չնայելով որ այդ օրուայ ընթացքում չպատահեց ինձ հետ ոչինչ առանձին անսովոր բան, գոնէ աչքի առաջ ունենալով իմ դրութեան մէջ առանց այն էլ անսովոր երեղյթը։ Բայց դա էլ նոյնպէս առաջին տպաւորութիւններից մինն էր և ես դեռ շարունակում էի ամեն բանի վերայ անյագաբար նայել։ Այդ բոլոր երեք օրերը ես անցկացրի ամենածանր տպաւորութիւնների ներքոյ։ «Ահա իմ թափառմանս վերջը. ես բանտում եմ» — կրկնում էի ես ամեն բոլով։ — ահա իմ ապաստարանս շատ երկար տարիների, ահա իմ անկիւնս, ուր ես մտնում եմ այդպիսի անվատահայտութեան դրույթու զգացմունքներով... Բայց ովկ դիտէ, կարող է պատահել որ երբ երկար տարիներից յետ ստիպուած լինիմ թողնել նորան, դեռ ցաւեմ նորա համար... աւելացնում էի ես ոչ առանց խառնուրդի այն չարախինդ զգացման, որը երբեմն այնտեղ է հասնում, որ պահանջ է զգացվում գիտմամբ նորոգել վէրքը կարծես ցանկանալով հիանալ իւր ցաւով, կարծես իրօք գժբաղդութեան մեծութեան գիտակցութեան մէջ կայ զուարձութիւն։ Այն միտքը, որ ես մի ժամանակ կարող եմ ափսոսալ այդ անկիւնի համար, հենց ինձ սարսափ էր ազդում. ես այն ժամանակ էլ հէնց նախաղդում էի, թէ մինչ ի՞նչ հրեշտաւոր աստիճան յարմարուող է մարգս։ Բայց այդ դեռ հեռու էր, իսկ առժամանակ այժմ իմ շուրջս բոլորը ինձ թշնամական էին և սարսափելի, թէպէտ և ոչ բոլորը, բայց ի հարկէ ինձ այդպիս էր թվում։ Այն վայրենի հետաքրքրութիւնը, որով նայում էին ինձ վերայ

իմ նոր տաժանակիր ընկերներս, նոցա սաստկացրած գտժանութիւնը ազնուական նորեկի հետ, որը յանկարծակի երեացել է նոցա հասարակութեան մէջ, կոպտութիւնը, որը երբեմն քիչ էր մնում ատելութեան հասնի, այդ բոլորը մինչ այն աստիճան տանջել էր ինձ, որ ես ինքս էի ցանկանում շուտով աշխատանք, որպէս զի միայն աւելի շուտով ճանաչեմ և իմանամ իմ ամբողջ գժբաղդութիւնս միանգամից, որպէս զի սկսեմ ապրել ինչպէս և նոքա բոլորը, որպէս զի շուտով բոլորի հետ մի շաւդի մէջ ընկնեմ: Ի հարկէ, ես այն ժամանակ շատ բան չէի նկատում և չէի կասկածում, թէ ինչ կար հէնց իմ քթի տակ: Թշնամական երեցիթների մէջ ես դեռ ոչինչ ուրախալի բան չէի գուշակում: Ասենք, մի քանի սիրալիք, քաղցր անձեր, որոնց ես պատահեցի մինչեւ իսկ այդ երեք օրը, առ ժամանակ ինձ սաստիկ քաջալերեցին: Ամենից քաղցր և սիրալիք էր ինձ հետ Ակիմ Ակիմիչը: Մնացեալ տաժանակիրների մթնած և ատելի գէմքերի մէջ ես անկարող եղայ չնկատել նոյնպէս միքանի բարի և ուրախ գէմքեր: «Ամեն տեղ կան վատ մարդիկ, իսկ վատերի մէջ և լաւերը»—շտապում էի այդպէս մտածել ի մսիթարութիւն ինձ,—ովզ զիտէ: Գուցէ այդ մարդիկ բոլորովին վատ չեն մինչեւ այն տափիճան, այն ճանաչներից, որոնք ճանաչել են բանտից գուրսը»: Ես այդ մտածում էի և ինքս էլ շարժում զլուխս իմ մտքիս վըայ, իսկ մինչդեռ, Աստուած իմ եթէ ես միայն այն ժամանակ զիտնայի, թէ ի՞նչ տափիճանի ուղեղ էր այդ միտքը:

Աշա օրինակ, այդտեղ կար մի մարդ, որին միայն շատ երկար տարիներ անցնելուց յետոյ ես ճանաչեցի կատարելապէս, մինչդեռ նա ինձ հետ էր և միշտ ինձ մօտ համարեա իմ տաժանակիրութեանս ամբողջ ընթացքում: Դա կարանաւոր Սուշելովն էր: Հէնց ինչպէս սկսեցի խօսել այժմ այն տաժանակիրների մասին, որոնք չուր չեն միւսներից, իսկոյն ակամայից յիշեցի նորան: Նա ինձ ծառայութիւններ էր անում: Ես ունէի էլի մի ուրիշ ծառայութիւններ անող: Ակիմ Ակիմիչը դեռ հէնց սկզբից, առաջին օրերից ծանօթացրեց

ինձ կալանաւորներից մէկի՝ Յովսէփի հետ, ասելով, որ նա ամսական երեսուն կոպէկով կեփէ ինձ համար ամեն օր առանձին կերակուր, եթէ արդէն ինձ այդքան զգուելի է արքունականը և եթէ միջոցներ ունիմ սեպհական ճաշ պատրաստել տալ: Յովսէփը այն չորս խոհարարներից մէկն էր, որոնց նշանակում էին կալանաւորները ընտրովի մեր երկու խոհանոցների համար, չնայելով որ, ասենք, և իրենց ազատ կամքին էր թողնուած ընդունելով թէ չէ այդպիսի ընտրութիւնը, իսկ ընդունելուց յետոյ էլ կարելի էր թէկուզ հենց միւս օրը հրաժարուել: Խոհարարները այդպէս էլ արդէն չէին գնում բանելու, և նորանց ամբողջ պարտականութիւնը կայսնում էր հաց թխելու և ապուր եփելու մէջ: Դոցա մեզ մօտ ոչ թէ խոհարարներ էին անուանում, այլ խոհարարուհիներ, բայց ոչ թէ արհամարհելով նոցա. ևս առաւել, որ խոհանոցի համար ընտրվում էին բան հասկացող և ըստ կարելոյն ազնիւ մարգիկ, այլ այնպէս սիրալիր հանաբով, որից մեր խոհարարները երբէք էլ չեն վիրաւորվում: Յովսէփը համարեա միշտ ընտրվում էր և համարեա մի բանի տարի շարունակ նա միշտ եփող էր եղել և հրաժարվում էր երբեմն ժամանակով, երբ որ արդէն նորան չափից դուրս տիրում էր վիշտը և դորա հետ միասին և զինի անցկացնելու հակումը: Նա հազուազիւտ աղնվութեան և հեղութեան տէր մարդ էր, չնայելով որ եկել էր մաքսանենգութեան համար: Դա այն մաքսանենգն էր, բարձրահասակ ու առողջակազմ: Որի մասին ես արդէն յիշել եմ: Ամեն բանից և մանաւանդ ձիպոտի հարուածներից վախեցող հեղլ խօսքին խօսք չպատասխանող ամենի հետ սիրալիր, ոչ ոքի հետ երբէ+ չկուտած, բայց որը չէր կարող զինի չքերել չնայելով իւր ամբողջ վախկոտութեան, այլ միայն մաքսանենգութեան հակումից: Նա միւս խոհարարների հետ միասին նոյնպէս զինիի առուտուր էր անում. թէպէտ ի հարկէ ոչ այն չափով, ինչպէս օրինակ Գագինը, որովհետեւ համարձակութիւն չունէր մեծ չափով րիսկ անելու: Այդ Յովսէփի հետ ես միշտ սիրով էի ապրում: Իսկ ինչ վերաբերում է միջոցներին սեպ-

Հական կերակուր ունենալու, գորա համար շատ քիչ բան էր հարկաւոր: Ես սխալուած չեմ լինի, եթէ ասեմ, որ ամսական ինձնից կերակրի համար գնում էր ընդամենը մի մանէթ, ի հարկէ բացի հացից, որը արքունական էր և երբեմն ապուրից, եթէ ես արդէն շատ քաղցած էի լինում, նայելով, իմ զցուանքիս այդ կերակրից, որը վերջը ասենք համարեա բոլորովին անցկացաւ: Սովորաբար ես առնում էի օրեկան մի ֆունտ տաւարի միս. իսկ ձմեռը տաւարի մսի դրուան քան մեզանում մի գրօշ արժէր: Մսի համար գնում էր շուկայ ծեր զինուորներից մէկը, որոնցից մեր բռնատներից իւրաքանչիւրում մի մի հատ կարգի վերայ հսկելու, և որոնք իրենք յօժարակամ յանձնն էին առնում ամեն օր շուկայ գնալ կալանաւորների համար բան առնելու և դորա համար համարեա ոչինչ վարձատրութիւն չին վերցնում և եթէ վերցնում էին, էն էլ մի որևէ շատ չնչին բան: Այդ անում էին նոքա իրենց սեպհական հանգստութեան համար, ուրիշ կերպ նոքա անկարող կլինէին երկար ֆնալ բանառում: Այդպիսով նոքա բերում էին բանտ ծխախոտ, Ղալմուխի չոյ, տաւարի միս, սպիտակ հաց և այլն, բացի միայն գինուց: Գինու մասին նոցա չին խնդրում, թէպէտ և երբեմն հիւրասիրում էին նոցա դորանով: Յովսէփը պատրաստում էր ինձ համար մի քանի տարի շարունակ միշտ հէնց մի և նոյն կտոր տապակած տաւարի միար: Իոկ թէ ինչպէս էր նա արդէն տապակում գառուրիշ հարց է և բանը դրանումն էլ չէր: Զարմանալի է, որ ես Յովսէփի հետ մի քանի տարուայ ընթացքում երկու խօսք չեմ խօսացել: Նաև անդամ եմ խօսակցութիւն բաց արել նորա հետ, բայց նա ինչ որ անընդունակ էր խօսակցութիւնը շարունակելու. պատահում էր որ ծիծաղում էր, կամ պատասխանում «այո», «ոչ» և հէնց այդքան միայն: Մինչեւ անգամ օտարօտի էր թվում նոյնել այդ եօթնամեսյ հերկուլէսի վերայ:

Բայց բացի Յովսէփից ինձ օդնող մարդկանցից էր և Սուշիլովը: Ես չկանչեցի և չընտրեցի նորան: Նա ինքը մի կերպով գտաւ ինձ և եկաւ ինձ մօտ, մինչեւ անդամ չեմ յի-

շում ե՞րբ և ի՞նչպէս այդ կատարուեց: Նա սկսեց ինձ համար լուացը անել: Բռնատան յետեր դրա համար յատկապէս մեծ լուացքի փոս կար շինուած: Այդ փոսի վերայ արքունական տաշտերի մէջ և լուացվումէր կալանաւորների սպիտակեղէնը: Բացի գորանից Սուշելովը ինքն էր գտնում հազար ու մի զանազան պարտականութիւններ, որպէս զի հաճելի լինի ինձ: Կրակի վերայ էր դնում իմ թէյամանը, գնում էր զանազան յանձնարարութիւններ կատարելու, փնտրում էր մի որևէ է բան ինձ համար, կարկատելու էր տանում իմ բաճկոնակս, ամիսը չորս անդամ իւղ էր քսում իմ կոշիկներիս, այդ բոլորը կատարում էր շտապով՝ կարծես Աստուած գիտէ թէ ինչ պարտականութիւններ կային նորա վերայ դրուած, մի խօսքով՝ բոլորովին կապեց իւր բազդը իմիս հետ, իւր վերայ առաւ բոլոր իմ գործերը: Նա երբէք չէր ասի օրինակ «գուգ այսքան շապիկ ունէք, ձեր բաճկոնը պատըռտուած է և այլն» այլ միշտ «մենք հիմա այսքան շապիկ ունենք, մեր բաճկոնը պատըռտուած է» և մի այդպէս էլ նայում էր աչքերիս, կարծես իւր ամբողջ կեանքի գլխաւոր կոչումն էր գարձել այդ: Արհեստ կամ ինչպէս կալանաւորները ասում են ձեռագործ չունէր նա ոչ մի՛, և հէնց իմանաս ինձանից էր միայն ձարում մի քանի կոպէկ: Ես վճարում էի նորան որբան կարողանում էի, այսինքն գրոշներով: Նա միշտ լուռ շնորհակալ էր լինում: Նա չէր կարող որևէ է մէկին չժառայել և թվում էր, որ ինձ ընտրել էր յատկապէս նորա համար, որ ես ուրիշներից աւելի վարուող էի, և աւելի ազնիւ վարձատրութեան վերաբերմամբ: Նա այնպիսիներից էր, որոնք երբէք չկարողացան հարստանալ և դրստուել և որոնք մեզանում յանձն էին առնում պահապան կանգնել «մայդաններին», կանգնելով ամբողջ զիշերներով նախասենեակում ցրտի տակ, ականջը ձէնի պահելով բակի ամեն մի թրիսկոյին, որպէս զի չլինի թէ պլաց-մայօրը դայ, և դորա համար ստանում էին հնդական կոպէկ համարեա ամբողջ զիշերուայ համար և զանցառութեան դէպքում կորցնում էին բոլորը և մեղքով էին պատասխանում: Ես արդէն

դոյցա մասին խօսել եմ: Այդպիսի մարդկանց բնաւորիշ կողմերն են—ոչնչացնել իրենց անձնաւորութիւնը՝ միշտ, ամեն տեղ և համարեա բոլորի առաջ, իսկ ընդհանուր գործերում խաղալ մինչեւ անդամ՝ ոչ երկրորդական դեր: Այդ բոլորը արդէն նոյցա համար խիստ բնական է: Սուշելովս մի շատ խեղճ՝ տղայ էր, բոլորովին լուռ և ստորացած, մինչեւ անդամ մօռացուած թէպէտ և նորան ոչ ոք չէր խփում մեր մէջ այլ այնպէս, բնութիւնից մօռացուած: Իմ խիղճս, չզիտեմ ինչու, միշտ գալիս էր նորա վերայ: Ես մինչեւ անգամ նայել չէի կարողանում նորա վերայ առանց այդ զգացմունքի, իսկ ինչի՞ համար էի խղճում, ես ինքս էլ չէի կարող պատասխանել: Նորա հետ խօսել ես նոյնպէս չի կարողացայ, նա նոյնպէս չզիտէր խօսել և երեսում էր որ այդ նորա համար մի մեծ աշխատանք էր և նա միայն այն ժամանակ էր խօսում, երբ խօսակցութիւնը վերջացնելու համար մի բան տալիս էիր նըրան անելու, կամ խնդրում էիր մի որևէ է տեղ զնալ: Ես մինչեւ անգամ վերջապէս համոզուեցայ, որ գորանով նորան բաւականութիւն եմ պատճառում: Նա հասակով ոչ բարձր էր ոչ կարճ, ոչ գեղեցիկ և ոչ տգեղ, ոչ խելօք և ոչ յիմար. ոչ ջտհիլ և ոչ պառաւ, մի փոքր չետո, մասամբ էլ շէկ: Նորա մասին չափազանց որոշ ոչ մի բան չէր կարելի ասել երբէք: Մի բան միայն, նա ինչպէս թվում էր ինձ և որքան ես կարողացայ հասկանալ պատկանում էր այն ընկերութեան, որին և Սիրոտկինը, և պատկանում էր միմիայն իւր մոռացուածութեան և լոռութեան համար: Նորա վերայ կալանաւորները երբեմն ծիծաղում էին և դիմաւորը նորա համար, որ նա Ճանապարհին, Սիրիր գնացող բաժնի հետ գալուց փոխուել էր և փոխուել էր մի կարմիր շապկի ու մի մանէթ փողի համար: Ահա այդ նշին գնի համար, որով նա իրեն ծախել էր, նորա վերայ և ծիծաղում էին կալանաւորները: Փոխարինուել կնշանակէ փոխել որ և է մէկի հետ անունը, հետեասպէս և վիճակը: Որքան էլ հրաշալի է թվում այդ բանը, բայց նա Ճիշտ է և իմ ժամանակը նա դեռ զցութիւն ունէր կատարելապէս սագեր ուղարկուող կալա-

նաւորների մէջ, որը սրբագործուած էր աւանդութիւններով և որոշուած յայտնի ձեւերով։ Սկզբում ես բոլորովին չէի կարողանում այդ բանին հաւատալ. թէպէտ և վերջապէս ստիպուեցայ հաւատալ ակն յայտ իրողութեան։

Ահա զա ինչպէս է կատարվում։ Ճանապարհվում է օրինակ Սիրիր կալանաւորների մի խումբ գնում են ամեն տեսակից՝ և՝ տաժանակրութեան և՝ գործարաններում բանելու և աքսոր գնում են միասին։ Ճանապարհին մի որ և է տեղ թէկուղ հէնց Պերմնկի նահանգում զրկուողներից մէկն ու մէկը ցանկանում է փոխուել միւսի հետ։ Օրինակ մի որ և է Միխայլով, եղեռնագործ, կամ մի ուրիշ մեծ յանցանքի համար զրկուածը գտնում է, որ երկար տարիներով տաժանակրութեան գնալ իրեն համար ձեռնտու չէ։ Ենթադրենք, որ նա խորամանկ, փորձուած մէկն է, բանին տեղեակ է, ահա և՝ նա դիտում է նոյն խումբի մէջ որ և է մէկին աւելի հասարակ, մոռացուած, անխօս, և որին համեմատաբար աւելի քիչ պատիժ է որոշուած, կամ գործարան մի բանի տարով, կամ աքսոր, կամ մինչեւ անդամ տաժանակրութեան, միայն աւելի կարծ ժամանակով։ Վերջապէս գտնում է Սուշելովին։ Սուշելովը ազնուականների մօտ ծառայողներից է և ուղղակի աքսոր է ուղարկուած, գնում է արգէն նա հազար հինգ հարիւր վերստ տեղ՝ ի հարկէ առանց մի կոպէկի, որովհետեւ Սուշելովի մօտ երբէք չէ՝ կարող լինել մի կոպէկ. գնում է տանջուած, բեղարած, միմիայն արգունական պտշարով առանց մի քաղցր կտորի գոնէ հարեւանցի կերպով. միմիայն արքունական շորերով, բոլորին ծառայելով չնչին սև կոպէկների համար։ Միխայլովը սկսում է խօսել Սուշելովի հետ, մօտենում է, մինչեւ անդամ ընկերանում է և վերջապէս մի որ և է էտապի ժամանակ հիւրասիրումէ նորան զինով։ Վերջապէս առաջարկում է նրան՝ չի յանկանայ արգեօք փոխուել։ Ես այսինքն Միխայլովը ահա այս, այս պատճառսվ գնում եմ տաժանակրութեան ոչ տաժանակիր—բանտի այլ մի «առանձին բաժանմունք» նա թէեւ բանտ է, բայց առանձին՝ և աւելի լաւ հետևապէս։— Առանձին բա-

ժանմունքի մասին, նորա գյուղթեան ժամանակ, մինչև անդամ վարչութեան մէջ էլ բոլորը զգիտէին մինչև անգամ թէ-կուղ օրինակ Պետերբուրգում: Դա մի այնպիսի անջատ ու առանձին անկիւն էր, Սիբիրի անկիւններից մէկում և այնքան սակաւամարդ, (իմ ժամանակ այնտեղ մօտ եօթանասուն մարդ չարկ, որ գժուար էր և նորա յետքը գտնել: Ես յետոյ պատահում էի Սիբիրում ծառայած և նորան ճանաչող մարդկանց, որոնք առաջին անգամն էին լռում ինձանից «առանձին բասանմունքի» գյուղթեան մասին: Օրինադրքի մէջ դորա մասին ընդամենը վեց տող է խօսուած» Հիմնվում է այս ինչ տաժանակիր- բամողի մէջ Առանձին բասանմունք, ամենազլիսաւոր յանցաւորների համար մինչև Սիբիրում ամենածանր տաժանակիր աշխատանքի բացուելը»: Մինչև անդամ կալանաւորները իրենք այդ բաժանմունքը չգիտէին, ի՞նչ բան է, մշտական է, թէ ժամանակաւոր: Պայմանաժամ չէրոր ոշուած, ասուած էր,—մինչև ամենածանր տաժանակիր աշխատանք բաց անելը. այդքան միայն. հետեաբար շարունակ տաժանակրութիւն: Զարմանալու չէ, ոչ Սուլիշովը և ոչ էլ մէկը խմբից այդ չգիտէր, առանց բացառութեան և իրեն զգկուած Միխայլովին, որը միայն գաղափար ունէր առանձին բաժանմունքի մասին՝ դատելով իւր յանցանքի համեմատ, որը շափազանց ծանր էր և որի համար երեք թէ չորս հազար վերստ էր կտրել հետեաբար հօ լաւ տեղ չեն դրկի նորան: Իսկ Սուշելովը աքսոր էր գնում, էլ ինչ կայ դրանից լաւ «չես ցանկանում փոխուել Սուշելովի զլուխը տաքացած է, բարի հոգի է լցուած գոհունակութեամք դէսլի իրեն շցող Միխայլովը և այդ պատճառով չէ վստահանում մերժել: Բացի այդ նա լսել է արդէն խմբի մէջ որ փոխուել կարելի է, որ միւսները փոխվում են, հետեապէս անսովոր և չառւած բան այդտեղ ոչինչ չկայ: Համաձայնվում են: Անխիզ Միխայլովը օգտուելով Սուշելովի անսովոր պարզութիւնից առնում է նորա անունը մի կարմիր շապկով և մի ռուբլի արծաթով, որը հէնց այնտեղ վկաների առաջ տալիս է նրան: Միւս օրը Սուշելովը ար-

գէն հարբած չէ, բայց նորան նորից խմեյնում են, և բացի այդ վատ է յետ կանգնել. ստացուած մի ռուբլի արծաթը արդէն ծախսուած է զինու վերայ, նոյնպէս և կարմիր շապիկը մի փոքր անցնելուց յետոյ: Զես ուղում, փողը տուր: Իսկ ո՞րաեղից գանէ Սուշիլովը մի ամբողջ ռուբլի արծաթ: Իսկ եթէ չի տայ՝ ընկերութիւնը կտտիպէ տալ. այդ բանի վերայ խիստ են հսկում ընկերութեան մէջ: Բացի դորանից, եթէ մի խօստում տուել ես, ուրեմն կատարի՛ր և այդ կտտիպէ ընկերութիւնը. եթէ ոչ կաշին կհանեն: Կը ծեծեն մէկէլ տեսար, կամ ուղղակի կտպանեն: գոնէ կտպառնան:

Եւ ճշմարիտ, եթէ ընկերութիւնը հէնց մի անդամ գոնէ այդպիսի դէպքում երես տայ, այնուշետե և անուանափոխութեան սովորութիւնը կվերջանայ: Եթէ կարելի կլինի խօստում և արուած ածուրդը քանդել արդէն փողն առնելուց յետոյ այնուշետե էլ ով կկատարէ այն: Մի խօսքով այնտեղ ընկերութեան ընդհանուր գործ է. այդ պատճառով և խումբը շաա խիստ է այդ գործի վերաբերմամբ: Վերջապէս Սուշիլովը տեսնում է, որ արդէն խնդրելով բան շինել չի կարելի և վճռում է բոլորովին համաձայնուել: Յայտարարվում է ամբողջ խմբին. այնուշետե այդտեղ էլ ում պէտք է նոյնպէս ընծաներ են տալիս, գինի են խմեյնում: Եթէ կարիք կայ. նորանց համար ի հարկէ միեւնոյնն է. Մի խայլովը թէ Սուշիլովը կնստի ստանի պոչին. իսկ գինին արդէն խօսւած է, հիւրասիրել պրծել են, հեաւաբար և նորանց կողմից էլ լուսութիւն պէտք է: Հէնց առաջին էտապում օրինակ կանցում են անուններով, հերթը հասնում է Միխայլովին:

«Միխայլով» Սուշիլովը ձայն է տալիս «ես իմ» «Սուշիլով» Միխայլովը ձայն է տալիս «այստեղ եմ» և այսպէս շարունակում են գնալ: Էլ այնուշետե ոչ մի խօսք չլինի այդ մասին: Տոքոլսկում աքսորուածներին կարգերի են բաժանում «Միխայլովին զրկում են աքսոր, իսկ Սուշիլովի աւելի շատ թուով ուղեկիցներով ճանապարհում են գէպին առանձին բաժաննունք: Այնուշետե էլ բողոք տալ անհնարին է.

Եւ իսկապէս ինչո՞վ կարելի է ապացուցանել: Քանի տարիներ կը ձգուի այդ գործը. գորանից յետոյ էլ ի՞նչ կլինի դեռ: Վերջապէս որտեղից գտնի վկաներ, եթէ լինի էլ կմերժեն: Հետեւանքը գարձեալ այն կմնար, որ Սուշիլովը մի ռուբլու մի կարմիր շապիկի համար ընկաւ «առանձին բաժանմունք»:

Կալանաւորները Սուշիլովի վերայ ծիծաղում էին, ոչ թէ նորա համար, որ նա փոխել է իւր պատիմը չնայելով որ թեթև աշխատանքը ծանրի հետ փոխողի վերայ առհաստրակ արհամարհանը են տածում ինչո՞ս իւրաքանչիւր գուցչած յիմարի, այլ նորա համար, որ նա վերցրել էր միայն մի կարմիր շապիկ ու մի ռուբլի: Դա արդէն չափից դուրս չնչին վարձ է: Սովորաբար փոխվում են մեծ զումարներով գարձեալ ի հարկէ համեմատաբար գատելով: Վերցնում են մինչեւ անդամ մի քանի տասնեակ մանէթներ: բայց Սուլիշովը այնպէս անխօս էր, անդոյն ու բոլորի համար չնչին արարած, որ նորա վերայ մինչեւ անդամ ծիծաղելու առիթ տեղի չէր ունենում:

Երկար ապրեցինք մէնք Սուշիլովի հետ արդէն մի քանի տարի: Փոքր առ փոքր նա խիստ կապուեց ինձ հետ, և ես չի կարող այդ չնկատել այնպէս որ ես ես խիստ ընտելացայ նորան: Բայց մի անդամ—երբէք չեմ կարող ներել ինձ այդ,—նա մի ինչ որ բան չէր կատարել իմ խնդրին համաձայն, մինչ գեռ նոր էր ինձանից փող ստացել, և ես այնքան կոպիտ գոնուեցայ, որ ասացի, «այ, տեսնում էք, Սուլիշովի փողը գուք առնում էք, իսկ գործը չէք կատարում». Սուշիլովը ճայն չհանեց, վաղեց իմ գործիս բայց ինչ որ յանկարծ տիսրեց. Անցաւ երկու օր, ես մտածում էի. անկարելի է որ գորա պատճառը իմ խօսքերը լինին:

Գիտէի, որ մի կալանաւոր Անտոն Վասիլեվը խստօրէն պահանջում էր նորանից մի ինչ որ կոպէկանոց պարտք. երեխ փող ըսւնի ասացի, ու վախենում է ինձնից խնդրել: Երրորդ օրը ես ասում եմ նորան. «Սուշիլով, գուք կարծեմ ինձանից փող էիք կամենում խնդրել Անտոն Վասիլեկ համար, առէք ուրիշ»:

Այդ ժամանակ ես նստած էի թախտի վերայ, Սուշիլո-  
վը կանգնած էր իմ առաջ: Նա երեխ շատ զարմացաւ, որ  
ես ինքս առաջարկեցի նորան փողը ինքս յիշեցի նորա նեղ  
դրութիւնը, ևս առաւել, որ վերջին ժամանակները նա իւր  
կարծիքով արդէն չափից դուրս շատ էր վերցրել ինձանից,  
այնպէս որ և յուսաւ չը համարձակվում, որ ես էլի կտամ  
նորան: Նա նայեց փողի վերայ, յետոյ ինձ, յանկարծ շուռ  
էկաւ և գնաց: Այդ բոլորը ինձ շատ զարմացրեց: Ես կնացի  
նորա յետեկից և գտայ բոնատների քամակը: Նա կանգնած  
էր բանտի տախտակէ պատի մօտ, երեսը դէպի պատը, զլու-  
սեղմած դորան և ձեռքով ընկած դորա վերայ: Շուշիլով  
ի՞նչ է պատաշել ձեղ հարցրի ես նորան նա չնայեց ինձ և  
ես, 'ի մեծ զարմանս. իմ, նկատեցի, որ նա պատրաստ է լաց  
լինելու: «Դուք՝ Ալէքսանդր Պետրովիչ... կարծում էք....  
սկսեց նա ընդհատուող ձայնով և աշխատելով ուրիշ կողմ  
նայել որ ես ձեղ... փողի համար եմ... իսկ... ես... է է հ».  
այդ ժամանակ նա նորից շուռ եկաւ դէպի պատը, այնպէս,  
որ ճակատն էլ խփեց նորան և ի՞նչպէս էր հեկեկում... առա-  
ջին անգամ էի ես տիսնում տաժանակրութեան մէջ լաց ե-  
ղող մարդ: Տաղիւ կարողացայ միսիթարել նորան և թէպէտ  
նա այնուհետեւ, աւելի եռանդով սկսեց ծառայել ինձ եթէ  
այդ հնարաւոր է հոդ տանել ինձ վերայ, բայց մի քանի,  
չնին համարեա անըմբոնելի նշաններից ես նկատեցի, որ նո-  
րա սիրաը երբէք չէ կարող ներել ինձ իմ արած յանդիմա-  
նութիւնը: Իսկ մինչդեռ միւսները ծիծաղում էին նորա վե-  
րայ կծում էին նորան ամեն մի յարմար դէպքում, հայհոյում  
էին երբեմն խիստ, բայց նա ապրում էր նորանց հետ սի-  
րով և ընկերաբար և երբէք չ' ը վերավորվում: Այս, շատ  
գժուար է լինում մարդու ճանաչել մինչև իսկ երկար տա-  
րիներ ծանօթ լինելուց յետոյ:

Աչա թէ ինչու առաջին հայեացքից տաժանակրութիւ-  
նը չկարողացաւ ներկայանաւ աչքիս այն խիսկան տեսքով  
որով ներկայացաւ վերջը: Աչա թէ ինչու և ես ասացի, որ  
եթէ նայում էլ էի ամեն բանի վերայ այնպիսի անյառդ, խիստ

ուշադրութեամբ, յամենայն գէպս չկարողացայ նկատել շատ  
բան, որ հէնց իմ քթիս տակն էր: Բնականաբար ինձ զար-  
մացնում էին սկզբում խոշոր երեսյթները, սուր աչքի ընկ-  
նող, բայց կարելի է դոցա էլ ես ճշմարտութեամբ չէի նկա-  
տում և իմ սրտում թողնում էին միայն ծանր անյուսալի  
տիսուր տպաւորութիւն: Այդ բանին շատ նպաստեց իմ հան-  
դիպումը Առևի հետ. որ նոյնպէս կալանաւոր էր և ինձնից  
ոչ շատ առաջ բանտ եկած: Սա առանձին ճնշող տպաւորու-  
թիւն թողեց ինձ վերայ իմ տաժանակրութեան եկած առա-  
ջին օրերը: Ես ասենք զիտէի էլ գեռ մինչեւ բանտ մանելը  
որ այնտեղ կհանդիպեմ Առևին: Նա թունաւորեց իմ այդ առա-  
ջին ծանր օրերը և սաստկացրեց հոգեկան տանջանքներս:  
Զեմ կարսղ լուել նորա մասին:

Դա մի ամենազգուելի օրինակ էր, ցոյց տուող թէ  
մինչեւ որ աստիճան կարող է մարդ ստորանալ և անազ-  
ուանալ և մինչեւ ի՞նչ աստիճան կարող է սպանել իւր մէջ  
ամեն մի բարյական զգացում, առանց չարչարանքի և առանց  
ապաշխարութեան: Առև մի ազնուական դասից երիտասարդ  
էր, որի մասին ես մտսամբ յիշում եմ, ասելով որ նա հաս-  
ցնում էր մեր պլաց-մայօրին այն բոլորը, ինչ որ կատար-  
վում էր բանտում և ընկեր էր նորա ազատաւոր զինուորի  
Ֆեղիայի հետ: Ահա նորա համառօտ պատմութիւնը: Ոչ մի  
տեղ չաւարտելով ուսման ընթայըը և կռուելով Մոսկուա-  
յում ծնողների հետ, որոնք վախեցել էին նորա անբարդյա-  
կան վարքից, նա եկաւ Պետերբուրգ. և որպէս զի փող ձեռք  
բերէ: վճռել էր մի ստոր մատնութիւն անել, այսինքն ծա-  
խել տասն մարդու արիւն. որպէս զի անյապաղ բաւականու-  
թիւն տայ իւր անյագ ծարաւին գէպի ամենակոպիտ և ան-  
բարյական զուարձութիւնները, որոնց նա կարիք էր ըզ-  
գում, հրապուրուելով Պետերբուրգով, քաղցրաւենիների խա-  
նութներով, անառականոցներով: Մինչեւ այն աստիճան ստո-  
րացել էր, փոքր 'ի շատէ հասկացող լինելով վստահացել էր  
մի այդպիսի անմիտ ու յիմար գործ կատարելու: Նորան շու-  
տով բռնեցին իւր մաանութեան մէջ նա խառնել էր անմե՛ն

մարդկանց մի ուրիշներին էլ խաբել էր, դրա համար նորան  
ուղարկեցին Սիրիր մեր բանտը, ասս տարով նա դեռ շատ  
ջահել էր. կեանքը դեռ նոր էր սկսում նորա համար: Կա-  
րելի էր կարծել որ այդպիսի սոսկալի փոփոխութիւնը նո-  
րա վիճակի մեջ պէտք է ազգէ, յառաջացնէր նորա բնաւո-  
րութեան մէջ մի որ և է ընդդիմութիւն մի որ և է զգալի  
փոփոխութիւն: Բայց նա առանց ամենափոքր շփոթութեան  
ընդունեց իւր նոր վիճակը, առանց մինչեւ հայ ամենաչնչին  
դզուանիցի, չվրդովուեց նորա առաջ բարոյապէս, չլախեցաւ  
ոչ մի բանից, բացի միայն բանելու անհրաժեշտութիւնից, և  
նորանից, որ պէտք է բաժանուէր քաղցրաւենիների խանութ-  
ներից և անառականոցներից: Մինչեւ անգամ նորան թվում  
էր, որ տաժանակը կոչումը բաց էր անում նորա ձեռքերը  
դեռ աւելի մէծ ստորութիւններ ու կեղտոտութիւններ ա-  
նելու: «Տաժանակիրը արդէն տաժանակիր էլ պէտք է լինի.  
Եթէ տաժանակիր է, հետեապէս և կարելի է ստորութիւն-  
ներ անել և ամօթ չէ»: Բառ առ բառ այդ նորա կարծիքն  
է: Ես այդ ցած արարածի մասին յիշում եմ, ինչպէս մի ֆէ-  
նօմէնի մասին: Մի քանի աարի ևս ապրել եմ մարդասպան  
ների, անբարոյականների և յայտնի չարագործների հետ, բայց  
դրականապէս ասում եմ, դեռ երբէք կեանքիս մէջ ես չեմ  
պատահել այդպիսի կատարեալ բարոյական անկման, այդպի-  
սի վճռական անբարոյականութեան և այդպիսի լալիրշ ստորու-  
թեան, ինչպէս էին այդ յատկութիւնները Ա-եի մէջ: Մեղա-  
նում կար մի հայրասպան, աղնուական դասից, ես արդէն յի-  
շել եմ նորա մասին, բայց շատ նշանների և փաստերի շնոր-  
հիւ ես համոզուեցայ, որ մինչեւ անգամ նա էլ անհամեմատ  
աւելի աղնիւ և մարդու վայել է քան թէ Ա-եը: Բանտային  
կեանքիս ամբողջ ընթացքում ես նայում էի Ա-եի վերայ, իբ-  
րև մի ինչ որ մսի կառի, որ ունէր ատամներ և փոր և  
անյագ ծարաւ դէպի ամենակոպիտ, ամենաանասնական մար-  
մբնաւոր բաւականութիւնները: Այդ բաւականութիւններից  
ամենաչնչին և ամենացանկալին յադուրդ տալու համար նա  
ընդունակ էր ամենայն սառնասրատութեամբ սպանել մոր-

թել, մի խօսքով պատրաստ էր ամեն բանի, միայն թէ այս բոլորը ծածուկ մնար: Ոչինչ չեմ չափազանցացնում, ես շատ լաւ էի ճանաչում Ա-ևին: Դա մի օրինակ էր թէ մինչև որտեղ կարող է հասնել մարդու միայն մարմնական կողմը, որը ներսից զապուած չէ ոչ մի չափով, ոչ մի օրինականութեամբ: Եւ որբան զգուելի էր ինձ համար նայել նորա մշտական ծիծաղաշարժ ժպտին: Դա մի հրեշ էր, բարոյական կլանչութեամբ:

Աւելացրէք դրա վերայ և այն, որ նա խորամանկ էր և խելօք, գեղեցիկ, մինչև անդամ մի փոքր կրթուած, ունէր ընդունակութիւններ: Ո՛չ լաւ է հրդեհ, ժանդախտ, սովո՞ք քան այդպիսի մարդը հասարակութեան մէջ: Ես արդէն ասացի, որ բանտում ամեն բան այնպէս փշացած էր, որ լրտեսութիւնն ու մատնութիւնը ծաղկած էին, և կալանաւորները ընաւ չին բարկանում դրա համար: Ընդհակառակը, Ա-ևի հետ նրանք բոլորը խիստ բարեկամ էին և Հետը անհամեմատ աւելի բարեկամաբար էին վարվում, քան մեզ հետ:

Իսկ մեր հարբած մայօրի նրան արած շնորհները նրանց ազբում կշիռ և նշանակութիւն էին տալիս նրան: Ի միջի այլոց նա մայօրին հաւատացրեց, թէ նա կարող է կենդանագիրներ նկարել (կալանաւորներին հաւատացնում էր որ թիկնապահ զօրքի մէջ հարիւրապետ էր եղել), և նա պահանջեց, որ նրան ուղարկեն իւր տունը աշխատելու՝ ի հարկէ որ նկարի իր պատկերը: Այստեղ ահա նա մօտիկացաւ սպասաւոր Ֆէլիկայի հետ, որ շատ մեծ աղքեցութիւն ունէր իւր տիրոջ վերայ և հետևապէս և բոլորի ու ամեն բանի վերայ բանտում: Ա-ևը հէնց մայօրի պատուէրով լրտեսում էր մեզ, իսկ երբ սա՝ զլուխը տաքացած՝ ժամանակ նրան ապտակում էր, իրան լրտես և մատնիչ անուանեց: Պատահում էր և շատ յաճախ, որ իսկոյն ծեծից յետոյ մայօրը նստում էր աթոռի վրայ և հրամայում էր Ա-ևին շարունակել պատկերը: Մեր մայօրը, երեխ իսկապէս հաւատում էր, որ Ա-ևը նշանաւոր նկարիչէ, համարեա հաւասար Բրիւլովին, որի մասին նա էլ էր լսել բայց և այնպէս՝ իրեն իրաւունք էր համարում ապտակ խփել նրան, իբրև

թէ, այն պատճառով, որ թէսլէտ և այժմ էլ նոյն նկարիչն ես, բայց տաժանակիր ես, և մինչեւ անգամ եթէ Բրիւլովն էլ լինես, այնուամենայնիւ ես քո իշխանաւորդ եմ, և հետեապէս ինչ կցանկանամ, այն էլ կանեմ քեզ: Ի միջի այլոց նա ստիպում էր Ա.-եին հանել իւր կօշեկները. և գուրս տանել ննջարանից զանաղան անօթներ, և զարձեալ երկար ժամանակ հաւատացած էր որ Ա.-եր նշանաւոր նկարիչ է: Պատկեր նկարելն անվերջ, համարեա ամբողջ տարի տեեց: Վերջապէս Մայօրը համկացաւ, որ նորան խարում են, և կատարելապէս համոզուելով, որ պատկերը ոչ թէ վերջանում է, այլ ընդհակառակը, օրէցօր, քանի գնում է իր նմանութիւնը կորցնում է, բարկացաւ, ծեծեց նկարչին և իբրև պատիժ ուղարկեց նրան բանար հասարակ աշխատանքի: Ա.-եր ըստ երեւութիւն ցաւում էր այդ մասին, նրա համար և ծանր էր տղատ օրերից, մայօրի սեղանի մնացորդներից, Ֆէզկայից և բոլոր զբոսանքներից, որ նրանք երկուսով ստեղծուած էին իրենց համար մայօրի խոհանոցում: Գոնէ մայեօրը Ա.-վին հեռացնելուց յետոյ գաղարեց հալածելուց Մ.-ին, — այն կալանաւորին, որին Ա.-վը անընդհատ զբարսում էր նորա առաջ, և ահա թէ ինչու: Մ.-ըն Ա.-վի բանտը գալու ժամանակ մենակ էր: Նա շատ տխուր էր լինում, ոչ մի կապ չ'ունէր մնացած կալանաւորների հետ, նըրանց վերայ սարսափով ու զլուանքով էր նայում, չէր նկատում և աչքաթող էր անում նոցա մէջ այն ամենը, որ կարող էր նորա վերայ հաշտեցնող ներգործութիւն ունենալ և չէր համաձայնում նրանց հետ: Սրանք նոյն տաելութիւնով էին պատասխանում նրան: Առ հասարակ բանտում Մ.-ի պէս մարդկանց գրութիւնը սարսափելի է: Ա.-վի բանտըն ընկնելու պատճառը Մ.-ին յայտնի չէր: Ընդհակառակը Ա.-վը՝ զլիսի ընկնելով թէ ում հետ գործ ունի իսկոյն հաւատացրեց նրան, թէ ինքը աքսորուած է մատնութեանը բոլորովին հակառակ մի բանի համար, համարեա մի և նոյն բանի ինչ համար որ ինքն է աքսորուած: Մ.-ն չափից գուրս ուրախացաւ, որ ընկեր, բարեկամ գտաւ: Նա ինսա-

մում էր նրան, տաժանակրութեան առաջին օրերը մսիթարում նրան, ևնթազրելսվ որ նա շատ տանջուելիս կըլինի, տուեց նրան իւր ունեցած վերջին դրամները, կերակրում էր նրան, բաժանեց նրա հետ իւր ամենակարեսոր իրերը: Բայց Ա.-վը իսկոյն ատելութիւն զգաց դէպի նա հէնց նրա համար՝ որ նա ազնիւ էր, նրա համար՝ որ այնպիսի սարսափով էր նայում ամենայն ստորութեան վրայ, հէնց նրա համար՝ որ բոլորովին նման չէր իրեն, և ինչ որ Մ.-ն առաջուայ խօսակցութիւններում ատել էր նրան բանտի և մայեօրի մասին, Ա.-վը բոլորը դէպք եղածին պէս շտապեց մայեօրին հասցնել: Մայեօրը գրա համար սարսափելի ատեց և շարչարում էր Մ.-ին, և եթէ բանտապետի աղղեցութիւնը ըլլինէր, նրա զլուխը մի վտանգ կըքերէր: Իսկ Ա.-վը, ոչ միայն չէր ամաչում՝ երբ յետոյ Մ.-ն իմացաւ նրա ստորութիւնը, այլ նոյն իսկ սիրում էր հանդիպել նրան և վերան ծաղրով մտիկ անել: Այդ նրան ըստ երեսյթին զուարձութիւն էր պատճառում: Ինքը Մ.-ն ինձ մի քանի անդամ մատնացոյց էր անում այդ: Այս ստոր արարածը յետոյ փախաւ մի կալանաւորի և մի ձիաւոր պահնորդի հետ, բայց այդ փախուստի մասին ես յետոյ կրխօսեմ: Նա ինձ էլ էր քծնում սկզբում, կարծելով՝ որ ես չեմ լսել նրա պատմութիւնը: Կրկնում եմ, նա իմ տաժանակրութեանս առաջին օրերը թունաւորեց աւելի միծ թախծութիւնով: Ես զարհութեցի այն սարսափելի ցածութիւնից ու ստորութիւնից, ուր զլորեցին ինձ, որի մէջ յայնուեցայ ես: Ես կարծեցի որ այստեղ ամեն բան էլ այդպէս ցած է և ստոր: բայց որխալվում էի, — ես դատում էի բոլորին Ա.-վի չափով:

Այդ երեք օրը ես թախծութեամբ քաշ էի դալիս բանտումը, պարկում էի թախտիս վրայ, ինձ տուած արքունական քաթանից տուեցի շապիկներ կարելու Ակիմ Ակիմիչից ցոյց առւած մի վստահելի կալանաւորի, ի հարկէ փողով (ամեն մի շապիկը մի քանի գրոշով), ճարեցի ինձ համար, Ակիմ Ակիմիչի թախանձագին խորհրդով, ծալովի դոշակ (քաթանով պատած թաղիքից), չափազանց նուրբ, ինլպէս իւղա-

բլեթ, և բրդով լցրած բարձ՝ սարսափելի կոշտ, սովորած ըլ  
լինելուց: Ակիմ՝ Ակիմիչը խիստ հոգ էր տանում այդ բոլոր  
իրերը ինձ համար սարքելու և ինքն էլ մասնակցում էր դը-  
րան, իւր ձեռքով կարեց ինձ համար վերմակ արքունի հին  
մահուղի կտորտանքներից, որ հաւաքել էի իմ՝ ուրիշ կա-  
լանաւորներից զնած՝ մաշուած վարտիկներից և բաժկոննե-  
րից: Արքունի իրերը՝ որոշեալ ժամանակը լրանալուց յետոյ՝  
դառնում էին կալանաւորի սեփականութիւն. այդ բաները  
իսկոյն ծախվում էին հէնց բանտում և որքան էլ իրը մա-  
շուած լինէր, էլի յօյս էր տալիս մի որ և է զնով ծախուելու:  
Այդ բոլորի վրայ ես սկզբում շատ էի զարմանում: Առհա-  
սարակ գա իմ առաջին ընդհարմար ժամանակն էր ժողո-  
վարդի հետ: Ես ինքս յանկարծ դարձայ նոյնալիսի ուսմիկ,  
նոյնալիսի տաժանակիր, ինչպէս նրանք: Նրանց սովորու-  
թիւնները, գաղափարները, կարծիքները կարծես նոյնալիս,  
իմը դարձան, գոնէ ձեւականօրէին, օրէնքով, թէպէտ խկա-  
պէս ես համաձայն չէի այդ բոլորին: Ես զարմացած էի  
ու շփոթուած, կարծես առաջ չէի էլ կասկածում գրանց  
զցութիւնը, կամ լսած էլ չէի գրանց մասին, ընայելով, որ  
և զիտէին և էլ լսել էի: Բայց իրականութիւնը բոլորովին  
այլ տպաւորութիւն է անում, քան զիտենալը և լսածները:  
Կարո՞ղ էի, օրինակ, ես առաջ զէթ երբ և իցէ կասկածել  
որ այդպիսի իրերը, այդպիսի հնացած հագուստները կարող  
են նոյնալիս. բան համարուել բայց այ, հօ այդ հնացած հա-  
գուստներից վերմակ կարեցի ինձ համար: Երեակայել անգամ  
գժուար էր, թէ ինչ տեսակից էր կալանաւորների հագուս-  
տի համար որոշուած մահուղի: Տեսքով նա կարծես ճշմարիտ  
որ նման էր հաստ, զինուորների մահուղի, բայց գեռ մի քիչ  
մաշուելուց յետոյ ցանց էր գառնում և խայտառակ կերպով  
ճղճղում էր: Ասենք մահուղէ շորը տալիս էին մի տարի  
ժամանակով: բայց այդ ժամանակամիջոցն էլ գժուար էր  
զլուխ հանել: Կալանաւորը բանումէ, ծանր բաներ է կրում  
իւր վերայ, շորերը քսքսվում են և շուտով քրբրվում: Իսկ  
մուշտակները տալիս էին երեք տարի ժամանակով և սովո-

բարար այդ բոլոր ժամանակի ընթացքում ծառայում էին թէ իրեւ հագուստի, թէ վերմակի և թէ տեղաշօրի տեղ: Բայց մուշտակները պինդ են. չընայելով որ հազուաղէպ բան էլ չէր երրորդ տարուայ, այսինքն ժամանակամիջոցի վերջում տեսնել որ և է մէկի վերայ հասարակ քաթանով կարկատած մուշտակ: Զընայելով գրան, շատ մաշուածները մինչև անգամ որոշուած ժամանակամիջոցը լրանալուց յետոյ ծախվում էին վաթսուն կամ մինչև իսկ եօթանասուն կոպէկ արծաթով. իսկ տաժանակրութեան մէջ այդ մեծ փող է: Փողը հօ,— ևս արդէն խօսել եմ դրա մասին—բանտում ահազին նշանակութիւն, զօրութիւն ունէր: Հաստատ կարելի է ասել, որ այն կալանաւորը, որ բանտում ձեռին փողմող ունէր, բոլորովին չունեցողից տասնապատիկ քիչ էր տանջվում, թէև վերջինս նոյնպէս ապահովուած էր արքունի ամեն բանով: Եւ ինչի՞ն է պէտք նրան փող ունենալ որպէս դատում էր մեր իշխանութիւնը: Նորից կրկնում եմ, որ եթէ կալանաւորները զրկուած լինէին իւրեանց փողն ունենալու ամենայն հնարաւորութիւնից, նրանք կամ կը խելագարուէին, կամ ճանճի նման կըսատկէին (չընայելով որ նրանք ամեն բանով ապահովուած էին), կամ վերջապէս անլուր եղեռնագործութիւնների անձնատուր կը լինէին,—մի քանիսը թախծից, ուրիշները, որ մի կերպ շուտով զլխատուած և ոչնչացած լինին, կամ մի որ և է կերպով իւրեանց «բաղդը փոխնեն» (տեխնիքական լարձուած): Իսկ եթէ կալանաւորը՝ զրեթէ արիւն քրտինքով ձեռք բերելով իւր կոպէկը, կամ վճռելով վերջինս ճարելու համար անսովոր՝ և յաճախ գողութեան ու աւաղակութեան հիտ լծորդուած՝ խորամանկութիւնների դիմել միենցն ժամանակ անխելքութեամբ ու այդպիսի երեխայական անմտութեամբ վատնում է նոցա, այդ ամեննեին չի ապացուցանում, որ նա փողը չի գնահատում, թէև առաջին հայեացքից այդպէս երեար: Կալանաւորը փողի ագահ է տենգոտութեան, խելագարութեան չափ, և եթէ իրօք տաշեղի նման փողերը շպրտում է քէֆ անելիս,—այն բանի համար է շպրտում, ինչ որ փողից մի աստիճան բարձր է համարում: Իսկ փողից

ի՞նչն է բարձր կալանաւորի համար:— Ազատութիւնը կամ գէթ ազատութեան մի ցնորդը: Իսկ կալանաւորները խիստ ցնորարաններ են: Այդ մասին մի քանի բան ես յետոյ կրպատմեմ, բայց,—խօսքը տեղն եկաւ՝ ասեմ,—կրծաւատան, որ ես տեսել եմ ժամ գործիք ժամանակով աքսորուածներ, որոնք հինգ ինձ ասում էին, շատ հանդիսա, սյսպիսի բառեր՝ օրինակ. «այ սպասի՛ր, Աստուած տայ մի ժամանակս լրանայ, էն ժամանակ».... «Կալանաւոր» բառի ամբողջ իմաստը նրանակում է կամքից զուրկ մարդ, իսկ փող վատնելով նա արդէն իր կամքով է զործում: Զը նայելով ամեն տեսակ կնիքներին, շղթաներին ու բանտի ատելի ձողերին, որ սքողում են կալանաւորից լոյս աշխարհը, նրան՝ գաղանի պէս՝ վանդակի մէջ փակում, նա կարող է ճարել զինի, սյսինքըն՝ շատ խստիւ արգելուած մի վայելք, ճաշակել ելակ, մինչև անդամ երբեմն (թէև ոչ միշտ) կաշառել մերձաւոր իշխանաւորներին և մինչև իսկ ենթասպային, որոնք ըլտեսնելու կրտան որ նա լուծում է օրէնքը և կարգը: Մինչև անգամ դեռ կարող է բացի այդ՝ հպարտանալ նրանց առաջ, իսկ կալանաւորը խիստ սիրում է այդ, սյսինքն պարծենալ ընկերների առաջ և մինչև անդամ հաւատացնել իրեն, ժանեաւածանակ, որ անհամեմատ շատ ունի կամք և իշխանութիւն, քան թվում է, մի խօսքով՝ կարող է կերուխում, անկարգութիւններ անել անպատճել մէկին մինչև հողի հետ հաւասարեցնելը, և ապացուցանել նրան, որ այդ բոլորը նա կարող է, որ ամեն բան «մեր ձեռքումն է», սյսինքն համոզել իրեն այն, ինչ որ մտածել անդամ անկարող է խեղձ մարզը: Ի դէմ՝ ահա թէ ինչու՝ գուցէ՝ կալանաւորների մէջ մինչև անդամ հարրած ժամանակ՝ մի ընդհանուր հակումն է նկատվում մեծամառութեան, պարծենկոտութեան և սեփական անձը ծիծաղաշարժ և ամենամիամիտ՝ թէև խաբուսիկ՝ կերպով փառաբանելուն: Վերջապէս այդ բոլոր կերուխումերի մէջ կայ մի ինքնավստահ քայլ այդ ամենը կեանքի գէթ որ և է ստուերը, ազատութեան գէթ հեռաւոր ուրուականն է պարունակում իւր մէջ: Իսկ ի՞նչ չես տայ ազատութեան

Համար: Ո՞ր միլիոնատէրը, եթէ նրա կոկորդը թոկով սեղմէին, չէր տայ իւր բոլոր միլիոնները մի կում օդի համար: Զարմանում են երեխն իշխանաւորները, որ ահա՝ կալանաւորի մէկը ապրում էր իրեն համար մի քանի տարի այնպէս խոնարհ, օրինակելի, գովելի վարքի համար մինչև իսկ տասնապետ էին շնորհ և մէկ էլ տեսար՝ ոչ գէս, ոչ գէն՝ կարծես զիւոտեց, սկսեց չարութիւններ, քէֆեր, անկարգութիւններ անել և մէկ էլ յանկարծ քրէական յանցանք գործել յանդգնեց կամ բացարձակ կերպով բարձր իշխանութեան պատիւը ըստ պահեց, կամ մէկին սպանեց, կամ բոնաբարեց և այլն: Նայում են վերան և զարմանում: Մինչդեռ գուցէ այդ յանկարծակի բոնկման բոլոր պատճառը այն մարդու մէջ, որից ամենից քիչ կարելի էր սպասել այդ բանը, — անձնաւորութեան մի թախծալի տենդային վեշտն է իւր անձի մասին, իւր զոյութիւնը, իւր ստորացած անձնաւորութիւնը ցոյց տալու տենչն է, որ յանկարծ երեան է զալիս և մինչև կատաղութեան, վայրենութեան, մինչև միտքը պղտորուելու, հիւանդուտութեան աստիճանին է հասնուս: Գուցէ զաղաղում կենդանի թազուածը և զարթնածը այդպէս է բաղկում իւր կափարիչը և ջանք է անում գէն ձգել այն, թէպէտ՝ ի հարկէ բանականութիւնը կարող էր համոզել նրան, որ նրա բոլոր ջանքերը ունայն կրծնան: Բայց բանն էլ նրանումն է, որ այգանդ բանականութեանը հարցնող ըսկայ. այգանդ միայն ցնցումներ են: Դեռ ի նկատի առնենք, որ անձնաւորութեան գրեթէ ամենայն անձնի շխան արտայայտութիւն կալանաւորի մէջ՝ յանցանք է համարվում, իսկ այդ գէպը ում նրա համար բնականաբար բոլորը մէկ է՝ արտայայտութիւնը մեծ լինի թէ փոքր: Եթէ բանը խմելումն է՝ լաւ խմել, եթէ յանդուգն քայլ պէտք է անել՝ ամեն բանի, թէկուզ մարզասպանութեան, յանդգնել: Եւ սկսելն է միայն բանը. յետոյ կը հարբի մարդը, մինչև իսկ յետ կացնել չե կարելի: Ուստի և ամեն կողմից լաւ կըլինի բանը այգանդ ըստ հասցնել: Ամենքի համար էլ լաւ կըլինի:

Սյո՞ն, բայց ի՞նչպէս անել այդ:

## Ա Ռ Ա Զ Ի Ն Ա Մ Ի Ս Լ

---

**Բ**անտը մտնելիս՝ մօտս փորք ինչ փող կար: Վախենաւ-  
 լով՝ որ կը խեն՝ ձեռքիս քիչ ունէի, բայց, յամենայն դէպս, մի  
 քանի մանէթ պահել էի, այսինքն սոսրնձել Աւետարանի կաղ-  
 մի մէջ, որ կարելի էր բանտը բերել: Սյդ զիրքը՝ մէջը սո-  
 սրնձած փողերով՝ ընծայեցին ինձ դեռ Տօրօլսկում նրանք,  
 որոնք նոյնպէս տանջուել էին աքսորանքի մէջ և որա ժա-  
 մանակը տասնամեակներով էին արգէն հաշվում, որոնք սո-  
 վորել էին իւրաքանչիւր դժբաղդ մարդու մէջ տեսնել իրենց  
 եղբօրը: Սիրիրում կան և զրեթէ երբէք չեն հատնում քա-  
 նի մի անձինք, որոնք կարծես իրենց կեանքի կոչումը տես-  
 նում են «դժբաղդների» եղբայրական հոգատարութեան, դէ-  
 պի նոցա բոլորովին անշահասէր, սուրբ կարեկյութեան և  
 յաւակյութեան մէջ, իրրե դէպի իրենց հարազատ դաւակ-  
 ները: Չեմ կարող այստեղ համառօտարար չը յիշել մի հան-  
 դիպումն: Այն քաղաքում՝ ուր զտնվում էր մեր բանտը, ազ-  
 րում էր մի կին՝ այրի նաստասիա իվանովիան: Ի հարկէ,  
 մեզանից ոչ ոք, բանտում եղած ժամանակ, չոկարողացաւ նը-  
 րա հետ անձամբ ծանօթանալ: Կարծես նա իւր կեանքի խոր-  
 հուրդը ընարել էր աքսորուածներին օդնելը, բայց ամենից  
 տւելի մեզ վրայ էր հոգ տանում: Արդեօք պատահէ՞լ էր նրա  
 ընտանիքի մէջ մի որ և է, նման դժբաղդութիւն, կամ յատ-  
 կապէս նրա հսմար թանգագին և սրտին մօտ՝ մարդկանցից մէ-  
 կը չարչարուել էր նոյնպիսի յանցանքի համար, միայն թէ  
 նա կարծես մի առանձին բազդ էր համարում կատարել մեզ  
 համար այն բոլորը, ինչ որ միայն կարող էր: Շատ բան նա,  
 'ի հարկէ, չէր կարող նա շատ աղքատ էր: Բայց մէնք բան-  
 տում նստած զգում էինք, որ այնտեղ՝ բանտից գուրս՝ մենք

ունենք մի ամենաանձնուէր ընկեր: 'Ի միջի այլոց, նա մեղ  
յաճախ հաղորդում էր լուրեր, որոնց կարիքը մենք խիստ  
էինք զգում: Դուրս գալով բանտից և ուղեորուելով մի ուրիշ  
քաղաք, ես կարողացայ նրան այցելել և անձամբ ծանօթանալ  
հետը: Նա ազլում էր մի ինչ որ արուարձանում, իւր մօտիկ  
ազգականներից մէկի մօտ: Նա ոչ ծեր էր՝ ոչ էլ ջահել, ոչ  
գեղեցիկ էր և ոչ տգեղ, մինչև անգամ չէր կարելի իմանալ՝  
խելօք էր նա, կրթուամծ էր: Միայն նրա մէջ նկատվում էր  
իւրաքանչիւր քայլում մի անսահման բարութիւն, հաճոյը  
պատճառելու, թեթեութիւն տալու, ձեզ համար անպատճառ  
մի որ և է դիւրեկան բան կատարելու անյաղթելի ցանկու-  
թիւն: Այդ բոլորը պարզ երեսում էին նրա մեղմ, բարի հա-  
յեացքի մէջ: Բանտի մի ուրիշ ընկերոջ հետ ես նրա մօտ  
համարեա մի ամբողջ երեկոյ անցկացրի: Նա հէնց նայում  
էր մեր աչքերին, շտապում էր ծիծաղել, երբ մենք ծի-  
ծաղում էինք, շտապում էր համաճայնուել մեր ասած ա-  
մեն բանի հետ, դէս ու դէն էր ընկնում մող մի որ և է  
բանով ինչով որ կարող էր՝ հիւրասիրելու: Բերեցին թէյ,  
նախաճաշիկ, ինչ որ քաղցրեղէն, և եթէ նա հաղարներ էլ  
ունենար, երեի ուրախ կը լինէր նորա համար միայն, որ  
կարող կլինէր աւելի լաւ հաճոյը պատճառել մեղ և մեր  
բանտում մնացած ընկերների վիճակը թեթեացնել: Մնաս  
բարեի ժամանակ նա բերեց մեզ համար մի մի սիզարա-  
ման՝ իյիշատակ: Այդ սիզարամանները նա ինքն էր պատ-  
րաստել (Աստուած զիսէ արդէն, թէ ո՞նց էին գրանք պատ-  
րաստուած), երենները պատել էր զունաւոր, Ճիշտ այնպիսի  
թղթով, որով պատում են համառօտ թուաբանութիւնների  
կաղմերը՝ մանկական դպրոցների համար, (ով զիտէ, կարելի է  
գրա համար իրէք մի որ և է թուաբանութիւն էր պէտք ե-  
կել): Երկու ծխատուփներն էլ զեղեցկութեան համար, շուր-  
ջանակի պատաժ էին բարակ, ոսկեգոյն թղթի շրջազարդե-  
րով, որի զնելու համար կարելի է նա յատկապէս խանութ  
էր զնացել: «Այ, դուք հօ ծխում էք, ուրեմն կարելի է պէտք  
զայ ձեղ», ասաց նա, կարծես թէ վախվիսելով ներողութիւն

էր խնդրում իւր նուերի համար։ Ասում են, (ես այդ լսել եմ կարդացել), որ ամենամեծ սէրը գէպի մերձաւորը միենոյն ժամանակ և ամենամեծ եսասիրութիւն է։ Բայց այդտեղ ի՞նչ եսասիրութեան բան կար, ես բնաւ չեմ հոսկանում։

Բանտը մտնելիս մօտս թէւ ամենեին շատ զըկար փող, բայց ես մի տեսակ չի կարողանում այն ժամանակ լուրջ զայրանալ այն տաժանակիրների վրայ, որոնք բանտային կեանքիս զրեթէ՝ առաջին ժամերը՝ արդէն ինձ մի անգամ խաբելուց յետոյ՝ բոլորովին միամիտ կերպով զալիս էին երկրորդ, երրորդ, և մինչև իսկ հինգերորդ անգամ ինձանից պարտք վերցնելու։ Բայց մի բան պարզ խոստովանվում եմ. ինձ չափից դուրս զայրացնում էր, որ այդ բոլոր մարդիկ իրենց միամիտ խորամանկութիւններով անպատճառ պէտք է, ինչպէս թուումէր ինձ, պարզամիտ ու խենթ համարէին ինձ և վերաս ծիծաղէին, հէնց նրա համար, որ ես հինգերորդ անգամ նրանց փող էի տալիս։ Նրանց անշուշտ պէտք է թուէր, որ ես որս եմ գատնում նրանց խաբեբայութիւնների, և եթէ, ընդհակառակը, նրանց մերժէի ու յետ վանէի, հաւատացած եմ որ նրանք ինձ անհամեմատ աւելի կըսկսէին յարգել։ Բայց որքան էլ զայրանում էի, սակայն մերժել այնուամենայնիւ՝ չի կարողանում։ Իսկ զայրանալս այն պատճառով էր, որ այդ առաջին օրերը լուրջ ու խնամով մտածում էի թէ ինչպէս և ի՞նչ զիրք պէտք է ես ինձ տամ բանտում, կամ աւելի լաւ ասած, ի՞նչ զիրք պէտք է բռնեմ ես նրանց մէջ։ Զգում էի ու հասկանում, որ այդ շրջանը ամբողջ բոլորովին նոր էր ինձ համար, թէ ես բոլորովին խաւարի մէջ եմ, և թէ խաւարի մէջ չի կարելի այնքան տարի ապրել։ Պէտք էր պատրաստուել։ Ի հարկէ՝ ես վճռեցի, որ ամենից առաջ պէտք է շիտակ վարուել, այնպէս, ինչպէս ներքին զգացմունքը և խիղճն են թելազրում։ Բայց ես զիտէի նոյնպէս, որ դա միմայն սիրուն խօսք է, իսկ իմ առաջ այնուամենայնիւ երեան կրգայ բոլորովին անսպասելի մի իրականութիւն։

Եւ այդ պատճառով, չընսցելով բռնատանը տեղաւորուելու մանր հոգսերին, որոնց մասին ես արդէն յիշել եմ, և որոնց մէջ ինձ խառնում էր առանձնապէս Ակիմ Ակիմիչը, չը նայելով, որ նրանք մասամբ զուարձացնում էին ինձ, այնուամենայնիւ սարսափելի, սիրա կրծող վիշար հետզետէ աւելի ու աւելի տանջում էր ինձ: «Մեռեալ տուն», ասում էի ինքս ինձ, երբեմն նայելով, մութն ընկնելիս, մեր բռնատան պատշգամբից կալանաւորներին, որոնք արդէն դարձել էին աշխատանքից և ծցլքաշ էին գալիս բանափ բակի հրապարակուս, բռնատունից խոհանոց, խոհանոցից բռնատուն: Նայում էի նրանց և գէմքերից ու շարժումներից աշխատում իմանալ թէ ի՞նչ մարդիկ են նրանք և ի՞նչ բնաւորութիւնների տէր են: Իսկ նրանք անցուգարձ էին անում առաջիս մուայլուած ճակատով, կամ արդէն բոլորովին ուրախագէմ (այդ երկու տեսակները ամենից շատ են պատահում և համարիեա բնորոշումն տաժանակրութիւնը), հայհոյում էին իրար, կամ պարզապէս խօսում էին, և կամ վերջապէս ըզբօնում էին միայնակ, կարծես թէ մտալքաղ, հանգարտ, ծանրութեամբ, մի քանիսը յօդնած և անտարբեր տեսքով, ուրիշները (մինչև անդամ և այստեղ) մէծամիտ վեհութեան արտայայտութեամբ, զլսարկները ծուռը դրած, մուշտակները վերաները ձգած, յանդուգն, խորամանկ հայեացքով և լսիրշ ժպիտը բերնին: Այդ բոլորը իմ շըջանն է, իմ այժմենան աշխարհը, — մոտածում էի ես, — որի հետ, ուզեմ չուզեմ՝ պէտք է ապրեմ.... Ես մէկ փորձ արեցի հարցուփորձ անել և տեղեկութիւններ ստանալ նրանց մասին Ակիմ Ակիմիչը, որի հետ թէյ խմել շատ էի սիրում, որ մենակ չըլինեմ: Միջանկեալ ասեմ, թէյը այդ առաջին օրերը համարեա միակ կերակուրս էր: Ակիմ Ակիմիչը չէր հրաժարվում թէյ խմելուց և ինքն էր դնում մեր շինած, ծիծաղելի, թիթեղեայ փոքրիկ ինքնաեռը, որը տուել էր ինձ բանեցնելու Մ.-ն: Ակիմ Ակիմիչը խմում էր սովորաբար մի բաժակ (նա ունէր և բաժակներ), խմում էր լուռ և վսեմ կերպով, վերագարձնելով ինձ այն շնորհակալութիւն էր յայտնում և խկոյն սկսում

էր շինել էր իմ վերմակը: Բայց ինչ որ ինձ հարկաւոր էր խմանալ, նա չքարողացաւ հազօրգել և մինչև տնդամ չը էլ հասկանում թէ ինչի՞ համար ես այլքան հետաքրքրվում եմ մեզ շրջապատող և մեզ ամենից մօտ տաժանակիրների բնաւորութիւններով և լսում էր ինձ մինչև անդամ մի տեսակ ժամկետով, որը շատ լաւ միտքս է: Ոչ, մտածեցի ես, ինչպէս երեսում է, պէտք է ինքս փորձեմ, և ոչ հարցուփորձ անեմ:

Չորրորդ օրը, ինչպէս և այն անդամ, երբ ես գնում էի շղթայուելու, կալանաւորները վաղ առաւտանան շարուեցին երկու կարդ պահականոցի տուած, բանտի գարպասի մօտ: Առաջեկից, երեսները գէսլի դարսլասը, և յետեից կանգնած էին զինուորները լցրած հրացաններով: Զինուորը իրաւունք ունի արձակել հրացանը կալանաւորի վերայ, եթէ նա կը մտածէ փախչել նրանից, բայց միևնույն ժամանակ և պատասխանատու է իր հրացանաձգութեան համար, եթէ այդ արել է ոչ ամենաանհրաժեշտ գէպքում: Նոյն է և տաժանակիրների բացարձակ խոռվութեան ժամանակ: Բայց ում մը առաքովը կ'անցնէր յայտնապէս փախչել: Եկան ճարտարագէտ ըսպան, կոնդո-կառը, նոյնպէս և ճարտարագէտ ենթասպանները և զինուորները, աշխատութիւնների վերայ հսկողները: Անունները կարգացին. կալանաւորների այն մասը, որ կար անելու սենեակներն էր գնում, ամենից առաջ էր ճանապարհ ընկնում: Նրանց հետ սկի գործ էլ չ'ունէր ճարտարագիտական իշխանութիւնը: Նրանք աշխատում էին իսկապէս բանտի համար և կարում այնտեղի շորերը: Յետոյ գնում էին դորձատունները, և ապա սովորական հաստարակ աշխատանքի: Քսան հոգի ուրիշ կալանաւորների թվում գնացի և ես: Բերգի յետեռում, սառած գետի վերայ, երկու արքունական նաւեր կային, որ անպէտք լինելու պատճառով հարկաւոր էր քակել որ գոնէ հնացած փայտեղէնը զուր չկորչէր: Ասենք այդ ամբողջ հնացած նիւթը շատ քիչ բան, համարեա ոչինչ արժէր: Քաղաքում փայտը չնչին գնով էր ծախվում և շրջակայքում անտառներ շատ կային: Ուղարկում էին զրեթէ

միոյն նրա համար, որ կալանաւորները ձեռները ծալած չը նստեն, ինչ որ իրենք կալանաւորներն էլլաւ հասկանում էին: Այդպիսի աշխատանքին նրանք միշտ գանդաղութեամբ էին ձեռնարկում, և զրեթէ բոլորովին այլ բան էր լինում, երբ աշխատանքը ինքն ըստ ինքեան կարգին, զին ունեցող բան էր լինում, և մանաւանդ՝ երբ կարելի էր լինում դասով ստանալ: Այդ դէպքում նրանք կարծես մի բանով ոգերգում էին և թէպէտ զրանից նրանք ոչ մի օգուտ չէին տեսնի, բայց ևս ինքս եմ տեսել՝ ուժասպառ էին լինում, որ շուտ և լաւ պրծնեն, մինչեւ անդամ նրանց ինքնասիրութիւնը այդտեղ մի տեսակ շօշափվում էր: Իսկ իսկական աշխատանքի ժամանակ, որը աւելի ձեխ, քան կարեռութեան համար էր կատարվում, դժուար էր դասով ինդրել, այլ պէտք էր աշխատել մինչեւ թմրկահարութիւնը, որը կանչում էր տուն տուաւոտուայ տասնումեկ ժամին: Օրը տաք էր և մառախլապատ. ձիւնը քիչ էր մնում հալուէր: Մեր խումբը ամբողջ ուղեսորուեց բերդի յետեկի գետափը՝ փոքր ինչ զնզգնացնելով շղթաները, որոնք թէե ծածկուած էին շորերի տակ, բայց այնուամենայնիւ բարակ ու սուր մետաղական ձայն էին հանում իւրաքանչիւր քայլափոխին: Մի երկու-երեք մարդ մեղանից բաժանուեցին դէպի պահեստը անհրաժեշտ գործիքներ բերելու: Ես զնում էի բոլորի հետ միասին և մինչեւ անզամ կարծես զուարթացայ, —ցանկանում էի շուտով տեսնել և իմանալ: Թէ ի՞նչ աշխատանք է այդ: Ինչ տեսակ բան է այդ տաժանակիր աշխատանքը, և ինչպէս եմ բանելու կեանքիս մէջ տուածին անգամ:

Յիշում եմ բոլորը ամենամանրամասն կերպով: Ճանապարհին պատահեց մեզ մի ինչ որ քաղաքացի փոքրիկ միրուքով, կանգնեց և ձեռքը տարաւ զրպանը: Մեր խմբից անմիջապէս բաժանուեց մի կալանաւոր, հանեց զլիսարկը, ընդունեց ողորմութիւնը՝ հինդ կոպէկ և արագ դարձաւ ընկերների մօտ: Քաղաքացին խաչակնեց երեսը և շարունակեց իւր ճանապարհը: Հէնց այն առաւօտ այդ հինդ կոպէ-

կով սպիտակ հաց գնեցինք և հաւասար բաժանեցինք մեր  
ամբողջ խմբի մէջ:

Կալանաւորների այդ ամբողջ խմբի մէջ մի քանիսը  
ըստ սովորականին խօժոռադէմ էին և չքիսուկան, միւսները  
անտարբեր և դանդաղիոտ, մի քանիսն էլ ծոյլ զրոյց էին  
անում իրար մէջ: Մէկը սարսափելի կերպով ուրախացած էր,  
ինչ որ բանի վերայ երդում էր և քիչ էր մնում պարեր  
ձանապարհին, ամեն մի թռիչք անելիս զընդզընդացնելով  
շղթաները: Դա հէնց նոյն միջահասակ ու ամրակաղմ կալանաւորն էր, որը իմ բանտում լինելուս առաջին առաւօտք ջրի  
մօտ լուացուելու ժամանակ կոփւ արեց մի ուրիշի հետ այն  
պատճառով, որ վերջինս համարձակուել էր անմտութեամբ  
պնդել իւր մասին, որ նա է թառլան-զուշը: Այդ ուրախ  
պատանուն Սկուրատով էին կօչում: Վերջապէս նա սկսեց երգել  
մի ինչ որ զուարթ երգ, որից ես յիշում եմ յանկերդը.

Առանց ինձ, ինձ պսակեցին՝  
Ես ջրաղացումն էի եղել

Միայն քեամանչէն էր պակաս:

Նրա արաւատովոր ուրախ հոգեկան տրամադրութիւնը  
'ի հարկէ մեր խմբից մի քանիսի մէջ զարոյթ զարթեցրեց,  
մինչեւ անգամ համարես անպատճութիւն համարեցին:

— Էլի զռաց, ասաց նախատելով մի կալանաւոր, որին  
ասենք սկի չէր էլ վերաբերում դործը:

— Հէնց մի երգ միայն գիտէր գայլը, էն էլ ուրիշի բերնից է խլել, տուլացի, նկատեց մռայլոտներից մի ուրիշը խա-  
խոլի արտասանութեամբ:

— Ասենք թէ ես տուլացի եմ, խսկոյն վրայ բերեց Սկու-  
րատովը, ինքդ ի՞նչ ես. կերածդ խօ տուլաշի միս էր ձեր  
Պոլտաւայումը:

— Իուրս տուր, ինքդ ի՞նչ էիր ուտում: արեխով ապուր  
էիր խպշտում:

— Հիմի խօ կասես նուշ ու նաբաթ են ուտացնում: ա-  
ւելացրեց երբորդը.

— Ես, ըղորդ որ, ախարէր, քնքուշ մեծացած մարդ եմ—  
պատասխանեց մի թեթև հառաչելով Սկուրատովը, կարծես  
փոշմանելով, որ քնքոյշ է մեծացել և դիմելով ամենքին առ-  
հասարակ ու ոչ ոքին մասնաւորապէս—հէնց էն երեխայու-  
թիւնից նուշ ու չամիչով և շարմաղ-հացով եմ դաստարակուել  
(այսինքն գաստիարակուել): Սկուրատովը դիտմամբ աղա-  
ւազում էր խօսքը), հալալ ախարէրտինքս այժմ էլ զեռ  
Մոսկուայում իրենց գուրքանն ունեն, անցորդների շուկայում  
ճանձ են բոնում,—հարստացող վաճառականներ են:

— Իսկ դու ինչ էիր ծախում:

— Ե՛հ, մենք էլ զանազան յատկութիւններով ենք յա-  
ռաջ եկել: Ահա, այն ժամանակ աղպէր, ես ստացայ առա-  
ջին երկու հարիւր...

— Մի՞թէ երկու հարիւր ռուբլի, վրայ պրծաւ հետաքրք-  
քրուող մէկը, որ մինչև անգամ ցնցուեց լսելով այգքան փո-  
ղի անուն:

— Ոչ սիրելի բարեկամ, ոչ երկու հարիւր ռուբլի, այլ  
երկու հարիւր Ճիպոտ: Ղուկաս, է՛յ Ղուկաս:

— Ում համար էլ որ Ղուկաս լինիմ, բայց քեզ համար  
Ղուկաս Կուզմիչ եմ, ակամայից խօսեց մի փոքրիկ, բարակ-  
մարակ կալանաւոր սրածայր քթով:

— Դէ թող Ղուկաս Կուզմիչ լինի, ջշաննամի դեռը,  
էտպէս էլ թող լինի:

— Ում համար էլ Ղուկաս Կուզմիչ լինիմ, քեզ համար  
բիձա եմ:

— Դէ՛ քո հէրն էլ անիծած, բիձայի էլ, խօսել չարժէ քեզ  
հետ, մինչդեռ մի լաւ խօսք էի ուղում ասել: Այսպէս ահա  
թէ ոնց պատահեց, որ Մոսկվայում երկար չկացայ, վերջին  
անգամ տասնուշինդ մտրակի հարուած ուտեցրին ու զուրս  
զըկեցին, ահա՝ ես....:

— Բայց ինչի՞ համար զըկեցին, է՛..., խօսքը կտրեց մէ-  
կը, որ հետաքրքրութեամբ հետեւում էր պատմածին:

Քէֆ մի անիր, լաւ բան սիրիր, տխորժակդ հարստու-  
թեան մի տար, այ թէ ինչու. այնպէս որ ես չըկարողացայ ախ-

պէր Մոսկվայում մի լաւ հարստանալ: Բայց շատ, շատ-շատ  
էի ուզում, որ հարստանամ է... էլ էնպէս մէկ սրտով ու-  
զում էի՝ որ էլ չըգիտեմ թէ ոնց ասեմ:

Նատերը ծիծաղեցին. Սկուրատովը ըստ երևոյթին ա-  
զատակամ սրախօսներիցն էր, կամ աւելի՝ լաւ աստծ՝ խեղ-  
կատակներից, որոնք իրենց համար պարտականութիւն էին  
դրել ուրախացնել իրենց մռայլ ընկերներին, և ի հարկէ, բա-  
ցի հայհոյանքից ուղեղ՝ ոչինչ բան չէին ստանում: Նա մի  
առանձին և յայտնի տիպերիցն էր, որոնց մասին գուցէ ես  
առիթ ունենամ դեռ խօսելու:

— Հենց այժմ էլ քեզ կարելի է սամուրի տեղ մորթել  
նկատեց Ղուկաս Կուզմիչը, տեսնում ես, մէնակ շորերը հա-  
րիւր ուրբլի արժեն:

Սկուրատովի հագինը մի շատ հնացած, մաշուած մուշ-  
տակ էր, որի վրայ ամեն կողմից աչքի էին զարնում կար-  
կատանները: Նա բաւականին սառնասրտութեամբ՝ բայց ու-  
շադրութեամբ՝ նայեց նորան ոտքից զլուխ:

— Բայց գորա փոխարէն զլուխս թանկագին է, ախակէր,  
զլուխս, պատախաննեց նա—Հենց Մոսկվայից հեռանալիս  
էլ ես նրանով էի մսիթարվում, որ զլուխս հետո կըգայ:  
Մնաս բարեաւ, Մոսկվա, շնորհակալութիւն բաղնիքիցդ, ա-  
զատ օդիցդ բայց լաւ բուրդս զղեցին, է՛ իսկ մուշտակին  
նայելդ զուր է, սիրելի բարեկամ:

— Ձե՞ս ուզի, որ քո զլխին թամաշայ անենք:

— Հենց նրա զլուխն էլ իրենը չէ, այլ ողորմութիւն  
է տուած, նորից մէջ ընկաւ Ղուկասը: Այս զլուխը նորան  
Տիւմէնում ողորմութիւն են առւել, երբ խմբի հետ անցնում էր:

— Ի՞նչ է, չլինի գու, Սկուրատով, արհեստ ունեիր:

— Ի՞նչ արհեստ տօ, շուն ման ածող էր, զամփոներ  
էր քաշ տալիս, նրանց բերնից ոսկորները խլում, նկատեց  
խոժոռադէֆներից մէկը—աչա նորա բոլոր արհեստը:

— Ես ճշմարիս որ հենց ուղում էի փորձել կօշեկ կա-  
րել—պատախաննեց Սկուրատովը, բոլորովին չըլսելով սուր  
նկատողութիւնը, բայց հենց մի զոյդ միայն կարեցի:

— Ե, յետո՞յ, դնեցի՞ն:

— Դէ, գուրս եկաւ մէկը, որը՝ ինչպէս երեսւմէ՝ Աստը-  
ծուց էլ չէր վախենում, հօրն ու մօրն էլ չէր յարգում, Տէրը  
նորան պատժեց՝ դնեց:

— Իսկ յետոյ նորից աշխատեցի՝ արդէն այստեղ շարու-  
նակում էր չափից գուրս սառնասրտութեամբ Սկուրատովը.

— Ստեփան Ֆիօդորիչ Պօմօրցեվի կօշիների երեսը փոխեցի:

— Ե, նա ինչ բաւական մնաց:

— Զէ, ախպէր, բաւական ըքմնաց, էնքան հայհցեց, որ  
հազար տարի էլ հերիք էր ինձ. զեռ էլի ծնկով մի լաւ էլ  
զարկեց ինձ յետեկից: Եատ բարկացաւ—ախ, վայ իմ փուչ  
օրիս, տաժանակիր կետնքիս:

Համբերելով մի փոքր ինչ  
Սկուլկի մարդն բակն ընկաւ...

Յանկարծակի վեր քաշեց նա նորից և սկսեց թռչկոտե-  
լով ոտքերը գետնին դոփել:

— Ե, անշնորք մարդ, մրժմրթաց իմ կողքիս խախօլը,  
գառն արհամարհանքով աչքերը ոլորելով վրան:

— Անօգուտ մարդ է, նկատեց մի ուրիշը վճռական և  
լուրջ եղանակով:

Ես բոլորովին չէի հասկանում, թէ ինչի՞ն են Սկուրա-  
տովի վրայ բարկանում, և առհասարակ էլ ինչի՞ն բոլոր ու-  
րախները ինչպէս այդ արդէն կարողացայ նկատել այդ ա-  
ռաջին օրերը, կարծես մի տեսակ արհամարհուած էին: Խա-  
խօլի և միւսների բարկութիւնը ես վերագրում էի անձնա-  
ւորութիւններին: Բայց զրանք անձնաւորութիւններ չէին.  
բարկութիւնը նորա համար էր, որ Սկուրատովը չէր կարո-  
ղանում պահպանել իրեն, որ նա իւր անձնական արժանի-  
քը արտայայտող խիստ կեղծ տեսք չունէր, որով մինչև պե-  
գանտութեան աստիճանը վարակուած էին բոլոր կալանա-  
ւորները, մի խօսքով նորա համար, որ նա, հէնց նոցա իրենց  
ասածով, «անօգուտ» մարդ էր: Բայց և այնպէս, բարկա-  
նում էին ոչ ամեն ուրախների վրայ և ամենի հետ այնպէս  
վատ չէին վարվում՝ ինչպէս Սկուրատովի և նորա նմանների

հետ. նայելով թէ ով ի՞նչպէս էր թոյլ տալիս իրա հետ վարուելու. պարզամիտ և բարեսիրտ մարդը իսկոյն արհամարհանքի էր ենթարկվում. այդ բանը ինձ մինչև անգամ՝ ասլշեցրեց. բայց կային և ուրախներից այնպիսիները, որոնք կարողանում էին և սիրում էին կծել սրան նրան և ոչ ոքի օր չէին տալիս. նրանց ստիպուած էին յարգել: Տէսց այստեղ այդ խմբի մէջ կար այդ տեսակ սրատաժներից մէկը, բայց իսկապէս մի զուտարձասէր և ամենազիւրեկան մարդ, որին այդ կողմից ես արդէն վերջը ճանաչեցի, աեսօք և բարձրահասակ երիտասարդ, մեծ խալը թշին և կոմիկական արտայայտութիւնը դէմքին, բայց որը բաւական գեղեցիկ էր և հասկացող: Նրան պիօներ էին՝ կոչում, որովհետեւ նամի ժամանակ ծառայում էր պիօներների մէջ, իսկ այժմ առանձին բաժանմունքի մէջ էր գտնվում: Նրա մասին գեռ ևս առիթ կունենամ շատ խօսելու:

Սակայն բոլոր «ծանրաբարոները» այնպէս բորբոքուող էին, ինչպէս ուրախութեան վրայ զայրացող խախօլը: Ծաժանակրութեան մէջ կային մի քանի մարդիկ, որոնք ձրգառում էին առաջնութեան, ամեն բան գիտենալու, սրամտութեան, բնաւորութեան, խելքի: Դրանցից շատերը, յիրաւի, խելօք բնաւորութեան տէր մարդիկ էին և իրաք էլ հասնում էին իրենց ձգառուներին, այսինքն առաջնութեան և որոշ բարոյական ազդեցութեան իրենց ընկերների վրայ: Դրար հետ այդ խելացիները յածախ խիստ թշնամիներ էին և դրանցից ամեն մէկը ունէր բազմաթիւ ատելիներ: Մնացած կալանաւորների վրայ գրանք վեհանձնաբար և մինչև իսկ զեջողաբար էին նայում, անտեղի վէճեր չէին յարուցանում իշխանութիւնը լաւ աչքով էր նայում նրա վրայ, և աշխատանքների ժամանակ իբրև կարգադրիչներ էին հանգիստ նում և նրանցից ոչ մէկը, օրինակ չէր սկսի կռիւ գցել երդերի համար: Այդպիսի նշնին բաների համար նրանք չէին ստորանում: Դրանք բոլորը ամբողջ տաժանակրութեան ընթացքում ինձ հետ խիստ քաղաքավարի էին, բայց ոչ բոլորովին շատախօս, կարծես այդ էլ գարձեալ իրենց արժանա-

ւորութիւնը գնահատելով: Դրանց մասին նոյնպէս տոլիթ կունենամ աւելի մանրամասն խօսելու:

Եկանք ափը: Յածում՝ գետի վրայ սառած ջրի մէջ՝ կանդնած էր հին նաւակը, որը պէտք էր քանդել: Գետի միւս կողմը կապուտին էր տալիս գաշտը: Տեսարանը մուսայլու էր և անապատային: Ես սպասում էի, որ աշա, բոլորն էլ վրայ կընկնեն բանելու, բայց սկի չին էլ մտածում այդ մասին: Մի քանիսը նստեցին ափումը ընկած գերանների վրայ. Համարեա բոլորը դուրս հանեցին կօշկի միջից ծխախոսի քըսակները տեղական ծխախոտով, որ ծախվում էր շուկայում տերեւով, ֆունտը երեք կոպէկ և կարճ թրլիսի չուբուխները փոքրիկ, իրենց շինած, ծխաքարչները վաժեցին. ուղեկից զինուորները շղթայանման շրջապատեցին մեզ և ամենատաղտկալի արտայայտութիւնը դէմքներին՝ սկսեցին հսկել մեզ:

— Ե՞ն, էզ զործի հնարողին ի՞նչ ասեմ, տեսնես ում մտքովն է անցել էզ նաւակի կոտրելը, խօսեց մէկը կարծես ինքն իրեն, առանց ոչ ոքի դիմելու: Տաշեղներ են հարկաւորուել, ի՞նչ է:

— Ով որ մեզնից չի վախենում, հենց նրա մտքովն էլ անցել է, նկատեց միւսը:

— Ուր են դիմում էդ զիւղացիները, մի փոքր յետոյ հարցրեց առաջինը, 'ի հարկէ չը նկատելով առաջուայ հարցի պատասխանը և ցըլց տալով հեռվում մի խումբ զիւղացիների, որոնք մի տեղ գնում էին իրար յետելից այդ կոխոտուած ձիւնի միջով: Բոլորը ծոյլ-ծոյլ շուռ եկան դէպի այն կողմը և պարտապութիւնից սկսեցին նրանց ծաղրել: Գիւղացիներից մէկը՝ վերջինը՝ զնում էր մի շատ ծիծաղտշարժ ձեռվ՝ թւերերը բացած և զլուխը մի կողքը ծռած, զլիսին էլ գրել էր մի երկար զիւղացու զլիսարկ երկար քօլօղի նման: Նրա ամբողջ գծագրութիւնը ամբողջովին դրոշմվում էր սպիտակ ձիւնի վրայ:

— Տես հըլա՛, ախաղէր Պետրովիչը ոնց է փաթաթուել նկատեց մէկը ծաղրելով զիւղացիների արտասանութիւնը: Բանն այն է, որ կալանաւորները առհասարակ նայում էին

գիւղացիների վրայ փոքր ինչ բարձրից, թէև նրանց կէսը գիւղացիներիցն էին:

— Տղե՛րք, ետևինին նայեցէք, ո՞նց է ման գալիս, կարծես բողկ է ցանում:

— Նա շատ կախողութիւն է երեսում, փող շատ ունի երեխ, նկատեց երրորդը:

Թոլորը ծիծաղեցին, բայց դարձեալ մի տեսակ թոյլթոյլ կարծես ակամայից: Այդ միջոցին մօտեցաւ հաց ծախողը՝ մի աշխոյժ և ընկած դուրս եկած կնիկ. ողօրմօւթիւն ստացած հինգ կոպէկով նրանից բոքոն գնեցին և հէնց այդտեղ հաւասար բաժանեցին իրար մէջ:

Զահել պատանին, որը բանտում հաց էր ծախում, վերցրեց մի քսանի չափ և սկսեց թունդ վեճել, որ երեք հատ աւելի ստանայ և ոչ երկու, ինչպէս սովորական կարգն էր, բայց հաց ծախողը չէ՛ր համաձայնում:

— Դէ՛, բայց էն բանից չե՞ս տայ:

— Էլ ի՞նչ ես ուզում:

— Այ ի՞նչ որ միները չե՞ն ուտում:

— Այ քոս ընկնի ջանդ, ճշաց կինը և ծիծաղեց:

Վերջապէս երեսեցաւ և աշխատանքների վրայ հսկող ենթասպան՝ Ճիպոտը ձեռքին:

— Էյ, ձեղ հետ եմ, ի՞նչ էք վեր փաթուել, սկսեցէք:

— Ի՞նչ է, Խվան Մատվէիչ չի կարելի մի դաս տաք, խօսեց վերահսկիներից մէկը, հանգարու վեր բարձրանալով տեղից:

— Ի՞նչ առաջ չասացիք, այ քո դասը՝ նաւակը հանիր ջրից:

Վերջապէս մի կերպ վեր կացան և իջան դէսլի գետը, հաղիւ թրե տալով ոտները: Խսկոյն յայտնուեցան խմբի մէջ և «կարգադրիները» գոնէ խօսքով: Բանից դուրս եկաւ, որ հարկաւոր չէ նաւակը զուր տեղը կոտրտել այլ պէտք է ըստ կարելւոյն ամբողջ պահել զերանները, և մանաւանդ լայնութեամբ ձգուած փամփշտակալները, որոնք իրենց ամբողջ երկարութեամբ փայտէ մեխերով ամրացրած էին նաւակի տակին,—մի երկար ու ձանձրալի աշխատանք:

— Այս գեռ առաջ-առաջ պէտք է այդ գերանը կուրս քաշել դէ հի ապա տղերք, սկսեցէք, — նկատեց մէկը, որը ոչ կարդագրիչ էր, ոչ էլ վերահսկող այլ ուղղակի հասարակ բանուոր, չըխօսկան և հանդարտ մի մարդ, որ մինչև այժմ լուռ էր, և կռանալով զրկեց հաստ գերանը՝ սպասելով օգնականների: Բայց ոչ ոք չոփնեց նրան:

— Հա, ո՞նց չէ, վեր կը բաշես. ոչ թէ դու, որ քո մեծ հէր արջն էլ գայ, նա էլ չի բարձրացնի, մոմուաց մէկը ատամների տակ:

— Ուրեմն, ի՞նչ անենք ախպէր, ո՞նց սկսենք բաս, ես չեմ հասկանում... ասաց տարակուսած մէջ ընկնողը և թողնելով գերանը՝ վեր բարձրացաւ:

— Բոլոր բանը հօ դու անելու չես... ի՞նչ մէջ ընկար:

— Երեք հաւի մի Ճիշտ կուտ բաժանել չի կարող, իսկ էստեղ առաջինն է ուղղում...

— Ես հօ ոչինչ չի անում, ախպէր, արգարանում էր շուարածը, ես միայն հէնց էնպէս....

— Ի՞նչ է, ուղղում էք զառ քաշեմ ձեղ վրայ, էլի ի՞նչ է թէ աղ դնել կը հրամայէք ձմեռուայ համար, — ձայն տուեց կրկին վերակացուն՝ շուարած նայելով քսան զլիսանի ամբոխի վրայ, որը չը զիտէր, թէ ո՞նց սկսէ զործը: Դէ՛հ, սկսեցէք շուտով:

— Շուտովից էլ աւելի շուա հօ չի կարելի, իվան Մատվէյին:

— Դէ՛ զու էնպէս էլ ոչինչ չես շինում, է՛յ, Սավելիեվ: Շատախօս Պետրովիչ քեզ եմ ասում, ի՞նչ ես կանգնել, աշընք ես ման ածում՝ ի՞նչ է... սկսի՞ր:

— Բաս ես ի՞նչ կարող եմ անել մենակ...

— Դէ՛ մի դաս տուէք է՛, իվան Մատվէյին:

— Ասացի, որ դաս չի կարելի. դուրս քաշեր նաւակը և դնաւ տուն, սկսեցէք:

Վերջապէս սկսեցին, բայց դանդաղկոտ, ակամայ, անշընորհք:

Մինչեւ անդամ տհաճութեամբ էր մարդ նայում այդ

Հաստուպինդ բանուորների առողջ խմբի վրայ, որոնք կարծես բոլորովին տարակուասել էին, թէ ո՞նց սկսեն գործը: Հենց նոր էին ուղում սկսել առաջին, ամենափոքր փամիշտակալը հանել բանից գուրս եկաւ որ նա կոտրուելու վրայ է: «Ինքն իրեն է կոտրվում», այդպէս էին արդարանում վերակացուի առաջ. հետևապէս չի կարելի այդպէս բան անել, պէտք է սկսել մի ուրիշ կերպ: Սկսուեց երկար ու բարակ դատողութիւն իրենց մէջ, թէ ո՞նց սկսեն ուրիշ կերպ, ի՞նչ անհն: Ի հարկէ հետզետէ բանը հասաւ հայհցանքի և ըսպառնում էր դեռ աւելի հեռու գնալ... վերակացուն նորից ձայն տուեց և թափ տուեց Ճիպոտը, բայց փասփշտականները նորից կոտրավում էին: Վերջապէս բանից գուրս եկաւ, որ կացինները քիչ են և որ պէտք է այլ ևս մի որ և է գործիք բերել: Խսկոյն և եթ զրկեցին երկու պատանիներ պահհորդների ուղեկցութեամբ բերդը գործիք բերելու և մինչեւ նրանց զալը, բոլոր մնացածները ամենահանգիստ կերպով նստուեցին նաւակի վրայ, հանեցին ծխաքարշները և նորից սկսեցին ծխել:

Վերջապէս վերակացուն թքեց բարկանալով:

— Է՛հ, ձեզանից աշխատանքը չի դողայ, Է՛հ, մարդիկ էք էլի, մռմռաց նա բարկութեամբ, թափ տուեց ձեռքը և շարժելով փայտը՝ գնաց դէպի բերդը:

Մի՛ժամից յետոյ եկաւ կոնդուկտօրը: Առանց վրդովուելու լսելով կալանաւորներին, նա յայտարարեց, որ դաս է տալիս՝ հանել էլի չորս փամիշտակալ բայց այնպէս, որ նորա չուկոտին, այլ ամբողջ դուրս դան, բացի դրանից, որոշեց բանդել նաւակի մի մէծ մասը, և այդ բոլորից յետոյ նոր կարող են նորա արդէն տուն գնալ: Դասը մէծ էր, բայց Աստուած իմ ո՞նց սկսեցին նոքա, ո՞ւր մնաց ծուլութիւնը, ո՞ւր տարակուասնքը: Թը լիսկթը լիսկացին տապարները, սկսեցին հանել փայտէ մեխերը: Մնացածները տակից անց էին կացնում հասաւ ձողեր և ձնշելով նրան քսան ձեռքով շուտով և փարպեսութեամբ գուրս էին հանում փամիշտակալները, որոնք այժմ, 'ի ղարմանս իմ, դուրս էին դալիս բոլո-

բովին ամբողջ և անվեաս: Աշխատանքը եռումէր: Յանկարծ  
բոլորը մի տեսակ խիստ խելօքացան: Ոչ մի աւելորդ, խօսք,  
ոչ մի հայհցանք, ամեն մէկը գիտէր ի՞նչ ասել ի՞նչ անել  
ուր կանգնել ի՞նչ խորհուրդ տալ: Թմբկահարութիւնից  
ուղիղ կէս ժամ առաջ տուած գասը վերջացած էր և կալա-  
նաւորները գնացին տուն յողնած, բայց բոլորովին բաւական,  
թէպէտ և աշխատածները մի որ և է կէս ժամ էր նշանա-  
կուած ժամերից: Բայց ինձ գալով, ես նկատեցի մի՛ առանձ-  
նայատկութիւն: ուր էլ որ խցկուէի ես աշխատանքի ժա-  
մանակ նրանց օգնելու, ամեն տեղ աւելորդ էի, ամեն տեղ  
խանգարում էի, ամեն տեղ համարեա հայհցանքով դուրս  
էին անում ինձ:

Մի որ և է ամենավերջին զզզզուածը, որը հէնց ին-  
քըն էլ վատ բանուոր էր, և չէր համարձակվում ձայն հա-  
նել միւս իրենից աւելի աշխոյժ և հասկացող տաժանակիր-  
ների մօտ, նա էլ իրաւունք էր համարում գոռալ ինձ վրայ  
և գուրս անել ինձ եթէ ես նրա մօտ էի կանգնում, այն  
պատրուակով, որ ես նրան խանգարում եմ: Վերջապէս աշ-  
խոյժներից մէկը ուղղակի ասաց ինձ կոպտաբար, «ուր էք  
խցկում, կորէք այստեղից, ինչը էք մէջ ընկնում» քանի որ  
ձեզ չեն խնդրում»:

— Խաթի մէջ է ընկել խսկոյն վրայ բերեց մի ուրիշը:

— Դու, ամենից լաւն է, մի թաբախ վերցրու—ասաց ինձ  
մի երկրորդը, և զնա փող հաւաքիր եկեղեցի շինելու և թու-  
թունիդ համար փողը հանելու համար, թէ չէ սա քո տեղը չէ:

Ստիպուած էի առանձին կանգնել: իսկ առանձին կանգ-  
նել, երբ բոլորը բանում են, մարդ մի տեսակ ամաչում է: Բայց  
երբ իրօք այնպէս էլ եղաւ, որ ես հեռացայ և կանգնեցի նա-  
ւակի ծայրին, խսկոյն ձայն տուեցին,—ահա թէ ինչպիսի  
բանուորներ են առել ի՞նչ անես նրա հետ. ոչինչ չես կարող:

Այդ բոլորը՝ ի հարկէ գիտմամբ էր, որովհետեւ բոլորին  
մլսիթարում էր այդ պէտք էր մուննաթ ծախել վաղեմի աղ-  
նուականի վրայ և ի հարկէ նորա ուրախ էին որ առիթը  
ներկայացաւ:

Այժմ շատ հասկանալի է, ինչպէս ես արդէն առաջ էլ ասացի, թէ ինչք բանտը մանելիս առաջին հարցս էր՝ ի՞նչ պէս պահեմ ինձ, ի՞նչ դիրք տամ ինձ այդ մարդկանց առաջ։ Ես նախազգում էի, որ յաճախ կունենամ նոյնպիսի ընդհարումներ նոյա հետ, ինչպէս այժմ, աշխատանքի ժամանակ։ Բայց չը նայելով ոչ մի ընդհարման, ես վճռեցի չը փոխել իմ վարուղութեան ձեր, որ մասամբ արդէն կշռել էի այդ ժամանակ։ Ես գիտէի, որ դա արդարացի է։ Յատկապէս ես վճռեցի, որ ինձ պէտքէ պահեմ ըստ կարելւոյն պարզ և անկախ, երբէք մի առանձին ցանկութիւն չըցցոյ տալ նրանց հետ մօտենալու, բայց և չըմերժել, եթէ իրենք կըցանկանան մօտենալ։ Երբէք չըվախենալ նրանց սպառնալիքներից և ատելութիւնից և ըստ կարելւոյն, այնպէս ցոյց տալ իբր թէ չեմ նկատում այդ։ Երբէք չըմօտենալ նրանց հետ, մի քանի յայտնի կէտերում, և չը խրախուսել նրանց մի քանի յատկութիւնները և սովորութիւնները, մի խօսքով, որ ինքս առանձին ցանկութիւն չը ցոյց տամ նրանց լիակատար ընկերակցութեանն արժանանալու։ Ես առաջին հայեացըից հասկացայ, որ նրանք հինգ առաջինը կարհամարհէին ինձ այդ բանի համար, բայց և այնպէս նըրանց հասկացողութեամբ (ես այդ իմացայ ճշտութեամբ վերջը) այնուամենայնիւ ես պարտաւոր էի նրանց առաջ պահպանել և յարդել մինչեւ անդամ իմ ազնուական ծագումըս, այսինքն ծանր ծախել, կոտրառուել արհամարհել նրանց, փռնկտալ ամեն մի քայլափոխում, նազ ծախել։ Յատկապէս այդպէս էին հասկանում նրանք ազնուականութիւնը։ Նրանք 'ի հարկէ կըհայհոյէին ինձ դրա համար, բայց իրենց մէջ գարձեալ կը յարդէին։ Այդպիսի դերը ինձ սազ չէր գալիս. ես երբէք չեմ եղել այնպիսի ազնուական, ինչպէս նրանք էին հասկանում այդ, բայց դրա փոխարէն ես խօսք տուեցի ինձ որ երբէք ոչ մի զիջումով չըստորացնեմ նոյա առաջ ոչ իմ կրթութիւնս և ոչ էլ իմ մտածողութեանս եղանակը։ Եթէ ես նրանց հաճոյանալու համար սկսէի քսուել նրանց, համաձայնել նրանց հետ, մտերմանալ և ընդունել նրանց

զանազան «յատկութիւնները», որպէսզի նրանց համակրութիւնը գրաւեմ, իսկոյն կենթագրէին որ ես այդ անում եմ վախից, երկշռութիւնից և արհամարհանքով կրվարուէին ինձ հետ: Ա-ևը օրինակ չէր. նա յաճախում էր մայեօրի մօտ և նրանք իրենք վախենում էին նրանից: Միւս կողմից ես չէի էլ ցանկանում նրանց առաջ բօղարկել ինձ սառը և անմատչելի բաղաքավարութեամբ, ինչպէս անում էին լեհերը: Ես շատ լաւ էի տեսնում այժմ, որ նրանք ինձ նրա համար են արհամարհում, որ ես կամենում էի բանել ինչպէս և իրենք, չէի նազ ծախում և չէի կոտրավում նրանց առաջ, և թէև ես հաստատ գիտէի, որ յետոյ նրանք ստիպուած կը լինին իրենց կարծիքը փոխել իմ մասին, բայց այնուամենայնիւ, այն միտքը որ նրանք այժմ իրրե թէ իրաւունք ունեն ինձ արհամարհելու, կարծելով որ ես աշխատանքի ժամանակ ցանկանում էի հաճոյանալ նրանց, այդ միտքը ստատիկ վրդովում էր ինձ:

Երբ, երեկոյեան, կէսօրուայ աշխատանքը վերջանալուց յետոյ, ես վերադարձայ բանտը, յոզնած ու չարչարուած, սարսափելի վիշտը նորից պաշարեց ինձ: «Քանի հաղար այդպիսի օրեր կան գեռ առաջս—մտածում էի ես—բոլորն էլ այդպէս, միևնոյն տեսակ»: Լուռ, արդէն մթնովը, թափառում էի ես մենակ բռնատների յետել, տախտակապատի տակով և յանկարծ տեսայ մեր նարիկին, որը ուղիղ գէպի ինձ էր վագում: Նարիկը մեր բանտային շունն էր, այնպէս ինչպէս լինում են վաշտերի, մարտկոցների և զումարտակների շներ: Նա ապրում էր բանտում; շատ վաղ ժամանակներից, ոչ ոքին չէր պատկանում, բոլորին տէր էր համարում, և կերակը վում էր խոհանոցից գէն ձգուած կտորներով: Դա մի բաւականին մեծ շուն էր, ու ու սոլիտակ բծերով, բակում սովորեցրած, ոչ էլ շատ պառաւ, խելօք աշքերով և աղուամազ պօչով: Ոչ ոք չէր փայփայում նրան, ոչ ոք ոչ մի ուշազրութիւն չէր գարձնում վրան: Դեռ հէնց առաջին օրից ես շոյեցի նրան և ձեռքովս հաց տուի: Երբ ես շոյում էի, նա կանգնում էր հնազանդ, սիրալիր նայում էր ինձ և 'ի նը-

շան բուռականութեան մեղմիկ շարժում էր պոչը: Այժմ երկար ժամանակ ըստեմնելով ինձ որը մի քանի տարիների ընթացքում առաջինն էր մտածել փայփայել նրան, վաղում էր և փնտուում ինձ բոլորի մէջ, և գտնելով բռնատների յետեր՝ ոռնալով վաղեց դէպի ինձ: Էլ ըզդիտեմ արդէն, թէ ի՞նչ կատարուեց իմ մէջ, բայց ես վրայ ընկայ նրան համբուրելու, գրկեցի նրա զլուխը. նա էլ առջեկի ոտներով թռաւ իմ ուսի վրայ, և սկսեց լիզել երեսս: «Ահա ուրեմն այն ընկերը, որին զբկում է ինձ բաղզը», — մտածեցի ես, և ամեն անգամ, երբ յետոյ՝ այդ առաջին ծանր և մռայլ ժամանակները, ես վերագառնում էի աշխատանքից, ամենից առաջ, գեռ ոչ մի տեղ ըստած, ես շտապում էի բռնատների յետեր, իմ առաջեց վաղող և ուրախութիւնից կնձկնձացող Շարիկի հետ, գրկում էի նրա զլուխը, և համբուրում հայ համբուրում նրան, և ինչպիսի քաղցր ու միենայն ժամանակ և տանջող-դառն զգացմունք էր կտրատում սիրտս: Եւ յիշում եմ, մինչեւ անգամ ինձ հաճելի էր մտածել կարծես թէ սլարծենալով ինքս իմ առաջ հէնց իմ տառապանքներովս, որ ահա, ամբողջ աշխարհում միայն մի արարած է մասցել այժմ ինձ համար, որը սիրում է ինձ, կապուած է ինձ հետ, իմ ընկերը, իմ միակ բարեկամը, իմ հաւատարիմ շունը՝ Շարիկը:





ՀԱՅՈՎԱՆ

ՏԵՍՐԱԿԱՆ

ՆԵՐ





Тип. эд. голла.

### Մեծ Արարատի դադարթը Արալիխից.

Видъ Большаго Араката съ Аралиха.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հեղու. «Արմատ» հանդիսէ.

Изд. арх.-суд. обозр. „Армсб“.







Վարագավանք Վանքը համանուն լեռան վերաբէ.  
Նկար Կ. Կրիսից կու.

Варакский монастырь въ Турецкой Армении.

Автотипія Ангерера въ Вене.

Հրատակ Անգերեր Վարագավանք

Տար 1890

Изд. лим.-тех. обозр. „Аракс“.





ԱՐԱՔՈՒԻ

ԳԵՂԱՐՈՒԻԵՍՏԱԿԱՆ

ԲԱԺԻՆԸ

---



Ծովական կանոնը, Տէլեւութէն.



ԱՌԵՎԵՏԻ, ՍԱՆՑԻՈՆ.—ՏԵՐԵՆԴՐԸ Բակով: ՅՈՎՀԵՆՆԵԿԱՆ ԵՑՎԵՑՈՎՈՒԹԻՒՆ.—ԱԶԵՂ  
ՔԱՐԵՎՈՒՄ ԱՇԽԱՏՈՒՄ: ՀԵՆՐԻԿՈ ՍԵՄԻՐՈՒՄՈՒԿԻ: —ՊՐԵՒՆՆ ԵԼԵՎԻՆԻՒՄ ՔԵՆԵՐԻՒՆ: ԹՈՒՄՑԵՆ:—  
ԸՐԱԿԵՐՈՒՄ ԵՐ Է ՊՐԵՄԵՐՆՈՒՄ: ՊԼԱԿԻՈՒԹՈՒՍ: —ՀԱՅՈՒ, յայտ և էր: ՕԲԵՐ: —ԽԱՐՀՐԴՐՈՒՄ ՀԱ-  
ՖՐԻՒ: ԱՌԵՎԵՏԻ: —ՅԵՎԵՐ ԱՏՈՎՈՒՄ: Վ. Ա. ՀԵՆ. Ա. Պ. ՈՒ. Փ. —ԳԵՎԵՆԻՒՐ: ՏԻՇԵՎԵՆԴԱՐՓ, Յայն քանայի:



«Արաբս»-ի ներկայ տարուայ առաջին գրքում մենք արդէն  
համառօտակի ծանօթացը ինք մեր ընթերցողներին նկարիչներից  
մեծագոյնի, հուշակաւոր Ուաֆայէլ Ուանցիոյի, կենսագրութեան և  
գործերի հետ և միևնոյն ժամանակ զետեղեցինք նաև նորա  
«Ոիքստոսի Տիրամայրը» կոչուած նկարի պատճենը: Այս նկարը  
նորա կատարելագոյն գործն է համարվում: Այժմ դնում ենք նրա  
միւս հուշակաւոր «Տիրամայրը», որը յայտնի է «Տիրամայրը բազիած»՝  
անունով (Madonna della sedia): Ասուածամօր և Յիսուս մանուկի  
երեսին պատկերացրած աստուածային անարատութիւնը դասում է  
այս պատկերը մեծ նկարչի լաւագոյն գործերի շաբաթ:



«Ահեղ բողէն ովէիտանոսուն» մեր անուանի հայրենակից ուսուց-  
շապետ Ա. Վ. Վազովսկու հսկայական՝ իր մեծութեամբ՝ և աչեղ՝ իր  
տպաւորութեամբ՝ պատկերներից մինն է: Անջատուած ու լեռնա-  
նըման հսկայ ալիքների միջին՝ ովկիանոսի ահադին ու անծայր  
տարածութեան վերայ մի մեծ եռակայմ նաւ, որ շրջապառը ա-  
լիքների հետ համեմատելիս մի չնչին խաղալիք է թվում, զան-  
գաղ ընկղմվում է ովկիանոսի անդունդը: «Աաւից ովկիանոսը ձր-  
գուած մարդիկն ու անասունները գեռ մնում են ջրի երեսին և

վերջին ճիգերն են թափում՝ մաքառելով ահարկու տարերքի գէմ։  
Ի՞այց ահա ահեղ բոպէն հասնում է և այլ ևս փրկութիւն չը կայ  
նորանց։ Այսօւան այս յուսահատութիւնը, խեղտուողների անյու-  
սութիւնը—ահա այն գդացմունքները, որ տպաւորում է նկարը։  
1890 թուականին այս նկարը ի տես դրուած էր Պետերբուրգի  
Գեղարուեստից Շեմարանի ցուցահանդիսում, այնուհեաւ մեր ա-  
նուանի նկարչի այլ բազմաթիւ նկարների հետ ուղարկուեցաւ Փա-  
րիզ, որտեղ նա բովանդակ մամուլի սքանչացմամբ լի գովասնք-  
ներին արժանացաւ, իսկ ներկայումս Պետերբուրգի կայսերական  
թանգարաններից մինի սեփականութիւնն է կազմում։



«Ֆրենան Ելեսինեան պօներին» անուանի նկարիչ Հե-  
միրադսկու վերջին և կատարելագոյն գործերից մինն է, որը չորս  
տարի առաջ մեծ աղմուկ հանեց Պետերբուրգում, և որը Ծագաւոր  
Կայսրը գնել է կայսերական թանգարանի (Էրմիտաժ) համար։ Հըո-  
շակաւոր հելլենացի գեղեցկուհին՝ Փրինան, կապար ծախող մի  
կնոջ դուստրն էր, որը շահաւետ չըհամարելովիւր մօր պարագմուն-  
քը՝ 16 տարեկան հասակում գնաց Վթէնք քաղաքը։ Երիտասարդ  
բանաստեղծ Լվուսիկլէսի միջոցաւ, որը մի անգամ տեսել էր Փրի-  
նային լողանալիս քաղաքից հեռու Փէսպի գիւղում և հիացել էր  
նորա աննման կազմուածքով, գեղուհին յայտնի եղաւ ամբողջ  
Վթէնքում, որտեղ և շուտով շատ լաւ կարգաւորուեց։ Վթէնացիք  
գեղեցկութիւնը գնահատել գիտէին, ուստի և հոշակաւոր գեղու-  
հուն շատ էին սիրում. Փրինան յաղթանակներ էր տանում, նրա  
շուրջը միշտ ման էին գալիս լիւրաւոր երկրպագուներ։ «Նա գեղե-  
ցիկ էր և երեկք արուեստական միջոցների չէր գիտում։ Մաքուր  
ջըում ամեն օր լողանալ ահա այն ամենը, ինչ որ պէտք էր նրա  
գեղեցկութեան համար։

Ասում են, որ գեղանին զարմանալի վայելուչ էր պահում  
իրան, թէ՛ թատրոնում և թէ՛ այլ տեղերում։

Վիայն մի անգամ նա փոքրիկ անպատեհ մի բան արեց։ Եղե-  
սինում, Պոսիտոնի տօնին էր պլդ։ Փրինան շրջապատող նաժիշտ-  
ների օգնութեամբ պարզ ի պարզոյ մերկանում է բովանդակ ազ-  
նուամիտ բաղմութեան առաջ և պատրաստում ծովում լողանալու։

Իոլոր բազմութիւնը՝ ծեր թէ գեռահաս, զմայլած հիանում է նրա արտասովոր գեղեցիկ մարմնովը։ Ոմանք՝ լուս սրանչացման մէջ՝ աշք չեն հեռացնում նրանից, իսկ միւսները աղմուկով ողջունում են նրան և ծափահարում։ Ահա այդ վայրկեանը նիւթ է գարձել Ապելքս և Անմիրադուկի նկարիների համար. վերջինի պատճէնը մենք տալիս ենք այս գրքում։

Երկրորդ անգամ բազմութիւնը տեսաւ նրան դաժարանում ոտից գլուխ մերկ։ Անդադրուած լինելով աստուածներին անարդելու համար, նրան բերեցին ատենի առաջ, որտեղ նորա փաստաբան ձևապերիտը՝ գէն ձգելով նրա վերայի զգեստը և գառնալով դատաւորներին՝ ասաց, թէ այդպիսի գեղուհին, որ իր գեղեցկութեամբ Աստղիկին (Աներա) է հաւասարվում, չի կարող յանցապարտ լինել այն ոճրագործութեան մէջ, որի համար նրան մեղադրում են, և դատաւորները շլացած նրա գեղեցկութիւնից՝ արդարացրին նրան։ Այդ բոպէն գեղեցիկ կերպով դուրս է բերել անուանի Փրանսիացի նկարիչ Ժէրոմը իւր յայտնի «Գրինան դատաւորաց ատեանում» պատկերի մէջ։

Անմահ աթենացի քանդակագործ Պիրակսիտէլը առաջարկութիւն արեց Գրինային, բայց նրանք շուտով ջոկնուեցին միմեանցից։ Քանդակագործը թեթևամիտ էր. իւր անուանի Աստղիկ արձանի համար նիւթը վերցրեց Գրինայի մարմնը, իսկ ժպիտը գողացաւ մի նորատի ստրկուհու կարմիր շրթունքներից։ Եւ Գրինան չըկարողացաւ հոչակաւոր քանդակագործին ներել այդ վիրաւորանքը։

Գրինան ահագին հարստութեան տէր դարձաւ։ «Վա առաջարկում էր իր հաշուով վերաշնել յայտնի ծուռ բէ քաղաքը, որ աւերել էին մակեդոնացի զօրքերը։ Իաց նրա առաջարկութիւնը մերժուեց մեծամիտ աթենացիներից, որովհետեւ Գրինան պնդում էր, որ վերականգնուելի քաղաքի դռների վերայ փորագրուի։

Քանդէց Ալեքսանդրը և շնէց Թրինան։

Գեղուհին մեռաւ 55 տարեկան հասակում։



«Խորհրդական համբարձու» Փրանսիացի նկարիչ Ժան (Օ)բերի գողացիկ գործն է։ Դեռատի՝ մանկական հասակից հազիւ դուրս եկած աղջիկը խանդաղատանքով ականչ է գնում թռչունների եր-

գին՝ առանց նկատելու ծառի ետեր պահուած սիրոյ աստծուն, որ  
ղեկավարում է այդ երգեցողութիւնը, որը աննկատելի կերպիւ  
ծնեցնում է մատաղ հոգու մէջ նրան անծանօթ սիրոյ զգացմունքը:



«Հաւատի; յոյն և ուն» Ա. Պլոկի որսոի նկարը կարող է ծառա-  
յել իբրև օրինակ գերմանական խիստ գպրոցի՝ թէ՛ գողտրիկ ըո-  
վանդակութեան և թէ՛ նկարի անպայման կանոնաւորութեան կող-  
մից: Երեք մատաղ գեղեցիկ կանանց դէմքերի արտայայտութիւն-  
ները այնքան պարզ են, որ և առանց ստորագրութեան գուշա-  
կում էք, թէ ի՞նչ գաղափարի նշանակն է ներկայանում նրանցից  
իւրաքանչիւրը: Խոաչը կրող աղջկայ դէմքի խիստ և միենոյն ժա-  
մանակ զմայլած արտայայտութիւնը ի հարիէ հաւատիքն է, մանուկը  
գրկած գեռասի կնոջ անդորր փափիկութեամբ ու գեղեցկութեամբ  
լի դէմքը և կենսական ոյժով լի ձեւերը, ոիլոյ գաղափարի լիա-  
կատար արտայայտութիւնն է, որ նկարիչը ի զուր է լրացրել մի  
խիստ սիրուն սիրոյ հրեշտակով, որ բոնած ունի կնոջ ոտքից,  
ըստ որում առանց դորան էլ արդէն հասկանալի է լինում սիրոյ  
արտայայտութիւնը. ինչոր մի բանի ակնկալութեամբ լի աչքե-  
րով հեռուն նայող միւս աղջկայ հայեացքն արդէն կատարելապէս  
մարմնացած յոյն է:



«Յաճառ- Ահուրը», յայտնի ֆրանսիացի նկարիչ Էկոնէլ Ուու-  
այէի նկարը, պատկանում է ֆրանսիական դպրոցի այն բազմաթիւ  
պատկերների կարգին, որոնք գողտրիկ ձեւերով պատկերացնում են  
սիրոյ յաւերժ թարմ նիւթը: Ոիրոյ շարաձճի աստուածը, Վալուը,  
փեշերից բոնած զուով քաշ է տալիս ու անում գեռահաս կոյ-  
սին,—որ մակոյից իջել է ջրի ափը,—գէպի նրան անծանօթ վա-  
յելքների ու տանջանքների աշխարհը: Վեղուհու գիմագրութիւնը  
թոյլ է և զգում ես, որ փոքրիկ շարաձճին է տանելու յաղթանակը:



«Սէրը հաշուի է ուսուցնեցնո՞» թռումանի և «Յոյն կանայ»  
Տեշենդորֆի՝ գերմանացի նկարիչների երկու հիանալի պատկեր-  
ներ են, որոնք մի առանձին սիրով իրենց նկարների նիւթը վեր-  
ցնում են հինգասական աշխարհից, որը հնար է տալիս նրանց  
ներկայացնել կնոջ գեղեցկութեան կատարելագոյն ձևերը, որոնք  
այժմ համարեա կորել են նորաձեռութեան պահանջների համեմատ  
մարդկային մարմինի այլանդակուելու շնորհիւ:



Վահմեդն ասած է, որ մարդս ստեղծուած լինելով Աստու-  
ծոյ պատկերի և նմանութեան համեմատ, պարտական է ինամբ  
տանել իր կերպարանքի վերայ՝ նորան բարեձեռութիւն տալ: Խակ  
մեր ժամանակակից կեանքում էլ շատ սիրուն դէմքերի մասին  
խօսելիս՝ ասում են «աստուածային գեղեցկութիւն»: Այս պատճա-  
ռով հասկանալի է, որ սիրուն դէմքը ամեն ժամանակներում իրեն  
է բաշել մարդկանց հայեացքները, ոգեսորել է բանաստեղծներին  
և գեղարուեստագէտներին:

Ո՞ի քանի նկարիչներ իրենց մասնագիտութիւնն են դարձել  
կանացի սիրուն գլուխներ կամ գլխանկարներ նկարելը, որոն-  
ցով ձգնել են արտայայտել գեղեցկի մասին իրենց իդէալը: Պրանց  
կարգին է պատկանում և գերմանացի նկարիչ Անդրելլու Ազլի,  
որի նկարի պատճէնը զետեղում ենք այս գրքում: Հպարտ գեղու-  
զուհու կրակոտ հայեացքը ցոյց է տալիս նրա հարաւային ծագու-  
մը և կարծես ձգտում է բորբոքել նայողի սիրուլ:

Լ. Մ.

«Արաբս»-ի այս գրքի գանազան երևաներում զետեղած մանրանկարներից «Եղեա-  
նը Անգրկովկասում» եր. 32, Կովկասեան տեսարան, բանաստեղծութեան տակ, եր. 112:  
Հայկական սայլ եր. 119, խմբ. «Արաբս»-ի ճակատանկարը, եր. 135 և «Հայկական տե-  
սարաններ» բաժնի շապկի նկարը նկարնել է պ. Գրիգոր Դարրիելանցը, իսկ «Հայ-  
կական ճալուարապետութիւն» բաժնի շապկի նկարը և նոյն բաժնի բնագրի սկզբի  
հայկական հիւսուածքը նկարած է պ. Պողոս Տէր-Աստուածատիեան:

«Նորին Ահշափառութեան հանդիսաւոր մուաքը Աշղաբշապատում» և «Ճին  
Զուզայի գերեզմանատունը Արաբսի ափում» նկարները պատրաստած ենք պ. Մար-  
տիրոս Դադեանցի Ըւստանկարներից:





Գարուն, նկար՝ Ուլուկին.






ՏԻՐԱՌԱՐԵ ԲՈՅԱՆԻ, ԿԿԱՐ ԾԱՓՎԵԼ ՍԱՆՑԻՈՆԻ.

Рафаэль Санціо. — *Madonna della sedia.*

Автотипія Ангерера въ Вѣнѣ.






ԱՅՎԱԶՈՎԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԻ, ԽԿՄ Յ. ԱՎԱԶՈՎԻՉԻ.

И. К. Айвазовский. — Океанъ.







ТИП. ЗД. ГОЛЛЕ

ФРІНІАШ ВІДЕНОВІШІШІ СОУЕРІНІ, 14ЧІР 2. 1611РІЧІЧІ.


Г. Семирадскій. — Фріна на праздникѣ Поссейдона въ Элевзисѣ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Художн. «Північ» 1611 рік.

Изд. літ.-худ. обозр. „Аракчеев“.








Тип. З. Г. Гомпс

ԱՐՈՒԵՍՏ ԱԵՐ Է ԶԱՐԵՑՆՈՒԻՆ. ՆԿԱՐ. Թ. ԹՈՒՄԱՆԻՆ.

II. Туманъ. — Искусство развиваетъ любовь.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.





ЧЕРНЯХОВСКИЙ

СИНИС, ЗЕЗУ ԵՒ ՍԵՐ, ՆԿԱՐ Բ. ԹԼՈՎԳՈՐԾԻ.

Б. Плокгорстъ. — Вѣра, надежда и любовь.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.






Фото В. Гончарова

ЗИШИЛ ШИЛЫГЕ, ЧУЧУЛ Л. ПОЛЯВЬЯН.

Л. Руаз. — Настойчивый Амуръ.

Автотипия Аингерера въ Вѣнѣ.





ТИП. ЗД. ГОРГ.

ԽՈՐՀՈՎԻԿ ՀԱՄԵՐԳ, ՆԿԱՐ Ժ. ՕԲԵՐԻ.

І. Оберъ — Таинственный концертъ.

Автотипія Ангерера въ Венѣ.





ԳԼԻԱԿԱՐ, ԽԱՐ Վ. ԿՈՅԼԻՔ.  
Вильгельмъ Вольфъ.— Головка.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

